

ՇՈՂՈՄ-ԱԼԵՅԽԵՄ

ԿԱԹՆԱՎԱՃԱՌ ՏԵՎՅԵՆ

Արտատպւած է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964:
Ռուսերէնից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

«ԱՆԱՐԺԱՆՍ ՅԱՄԵՆԵՑՈՒՆՑ»

(Կաթնավաճառ Տեվյէի նամակը հեղինակին)

Իմ սիրելի և թանկագին բարեկամին՝ ռեբ Շոլոմ-Ալեյխեմին, թող աստված ձեզ, ձեր կնոջը և զավակներին առողջություն և բարեկեցություն պարգևի: Եվ թող անբաժան լինի ձեզանից ուրախությունն ու մխիթարությունը ամեն տեղ և ամենուր՝ որտեղ ոտք դնեք, հավիտյանս հավիտենից ամեն:

«Անարժան յամենեցունց» պետք է ասեն ես՝ արտահայտվելով մեր նախահայր Հակոբի բառերով, որոնցով նա դիմեց տեր աստծուն, երբ արշավանքի էր պատրաստվում Եսավի դեմ... Բայց միգուցե դա այնքան էլ տեղին չլինի, ուստի ներողամիտ եղեք, խնդրում եմ: Ես հասարակ մարդ եմ, դուք, իհարկե, ինձնից լավ գիտեք, ինչ ասել կուզի: Ապրում ես, ներքի ինձ աստված, գյուղում կոպտանում ես, ժամանակ էլ չես ունենում, որ մի գրքի նայես կամ թե սուրբ գրքից մի գլուխ կրկնես... Դեռ լավ է, որ ամառը, երբ Բոյբերիկի ամառանոցներն են գալիս Եգուպեցի հարուստները, հնարավոր է լինում երբեմն հանդիպել որևէ ուսումնական մարդու ու նրանից մի խելացի խոսք լսել: Հավատացեք, հիշել այն օրերը, երբ դուք ապրում էիք ինձ մոտ, անտառում և ականջ էիք դնում իմ անմիտ շատախոսություններին, դա ինձ համար ուզածդ վաստակից թանկ է: Զգիտեմ, որն է իմ արժանիքը, որ դուք գլուխ եք ցավեցնում մի այնպիսի փոքր մարդու հետ, ինչպիսին ես եմ, գրում եք նամակներ և դեռ պատրաստվում եք անունս էլ ցուցադրել գրքի մեջ և մատուցել ինձ՝ որպես մի համադամ խորտիկ, ասես թե ո՞վ լինեմ ես: Եվ մի՞թե իրավացի չեմ, եթե գոչեմ «անարժան յամենեցունց»: Ընչո՞ւ է, ես ձեր անկեղծորեն նվիրված բարեկամն եմ, և թող աստված ինձ տա այն ամենի հարյուրերորդականը թեկուզ, ինչ ցանկանում եմ ձեզ: Դուք, կարծում եմ, ինքներդ էլ կարող էիք տեսնել, թե ես որքան ջանք էի թափում ձեզ համար դեռևս այն երանելի ժամանակներում, երբ վարձել էիք մեծ ամառանոցը. հիշո՞ւմ եք: Այդ ես չէի՞ միթե, որ ձեզ համար հիստունով կով գնեցի, որը առնվազն հիսունհինգով էլ չէին տա: Իսկ այն, որ հենց երրորդ օրը սատկեց, ես դրանում մեղավոր չեմ: Ախր հենց երկրորդ կովն էլ, որ ես գնեցի ձեզ համար, նա էլ սատկեց... Դուք շատ լավ գիտեք, թե դա որքա՞ն վշտացրեց ինձ, ես այն ժամանակ գլուխս ուղղակի կորցրել էի: Այդ ես չէի՞, որ այնքան ճիգ ու ջանք էի թափում, որ ձեզ համար ինչ որ բերում էի, լինի ամենալավը, և թող աստված օգնական լինի ինձ և ձեզ այս Նոր տարվա գալստյամբ, որպեսզի ձեզ մոտ լինի այնպես, ինչպես աղոթքն է ասում. «Նորոգեա զավուրս իմ, զի ծեր եմ...» Եվ թող աստված օգնի իմ գործերում, որ թե՛ ես, և թե իմ ձին ողջ լինենք, որ կովերս առատ կաթ տան, որ ես հետագայում էլ կարողանամ հավատով ու ազնվությամբ ծառայել ձեզ, բերել պանիր ու յուղ և՛ ձեզ, և՛ Եգուպեցի հարուստներին, թող աստված նրանց հաջողություն տա և ամենայն բարիք: Իսկ ինչ վերաբերում է ձեր աշխատանքին ու այն պատվին, որ ցույց եք տալիս ինձ ձեր գրքով, ապա ես մի անգամ ևս կրկնում եմ՝ «անարժան յամենեցունց»: Արդյոք չափից ավելի մեծ պատիվ չէ՞ ինձ համար, որ ամբողջ աշխարհը հանկարծ իմանա, որ Բոյբերիկի այն կողմում, Անատոլիայի մոտ ապրում է մի մարդ՝ կաթնավաճառ Տեվյէն: Բայց դուք, պետք է ենթադրել, գիտեք ինչ եք անում, կարիք չկա, որ ձեզ խելք ու խրատ սովորեցնեմ. թե ինչպես գրեք, դուք ավելի լավ գիտեք, իսկ մնացած բաներում լիովին վստահում եմ ձեր ազնվագույն բնավորությանը, քանի որ այնտեղ, Եգուպեցում կաշխատեք, որպեսզի ինձ այդ գրքից ինչ-որ բան հասնի: Հիմա այդ բանը, գիտեք, շատ տեղին կլինեք, որովհետև շուտով արդեն մտնալու եմ հարսանիքի մասին — աղջկաս պետք է պսակեմ, և եթե աստված հաջողի, ինչպես դուք եք ասում, ապա թերևս երկուսին միանգամից... Իսկ առայժմ ողջ և առողջ եղեք և միշտ երջանիկ, ինչպես ամբողջ սրտով ցանկանում եմ ձեր ամենալավ բարեկամը՝ **Տեվյէն**:

Հա՛: Գլխավորը մոռացա: Երբ որ գիրքը պատրաստ կլինի և ձեր մտքով կանցնի ինձ մի քիչ փող ուղարկել, բարի եղեք ուղարկել Անատոլիա, այնտեղի մագործի անունով: Ձմռանը երկու

նշանավոր օր ունեւ — մեկը աշնանը, նախքան աստվածածնի տոնը, իսկ մյուսը Նոր տարվա մոտերքը, այնքանով, որքանով որ այդ օրերը անց եւ կացնում քաղաքում: Իսկ նամակները պարզապէս կարող եք ուղարկել Բոյբերիկ, իմ անունով: Գրեցեք այսպէս՝ «Հանձնել պարոն Տեվլին, կաթնեղենի հրեային»:

1895

ԲԱՆՏԸ ԲԵՐԵՑ

Զարմանալի պատմություն այն մասին, թե ինչպէս կաթնավաճառ Տեվլեն՝ ընտանիքով ծանրաբեռնված մի աղքատ մարդ, հանկարծ երջանկանում է շնորհիվ մի արտասովոր դիպվածի, որ արժանի է նկարագրության: Պատմել է ինքը՝ Տեվլեն և բերվում է բառ առ բառ:

«Ի հողոյ բարձրացուցանէ զաղքատն և ի նեխմանէ զթշուառն» (Սաղմոս)

Գիտեք ինչ, պանէ Շուլմ-Ալեյխեմ, եթե բախտավորություն է վիճակված, այն ինքն իրեն տունդ կմտնի: Ինչպէս ասում են՝ «Եթե բախտդ բերեց, ապառաժ քարին էլ գնաս, կկանաչի»: Եվ այդ դեպքում պետք չէ ոչ խելք, ոչ հունար: Իսկ եթե աստված չանի, հակառակն է, այստեղ արդեն՝ ասես-չասես, թեկուզ տրաքվես, կօգնի այնքան, որքան ձյունը: Ինչպէս առածն է ասում՝ «Վատ ձիուն ոչ խրատը կօգնի, ոչ մտրակը»: Մարդս աշխատում է, չարչարվում, հոգին բերանով դուրս է գալիս, հենց կուգես, մեղա քեզ, տեր աստված, պատկիր ու շունչդ փչիր: Բայց հանկարծ չգիտես ինչից և ինչպէս հաջողությունը թափվում է ամեն կողմից... «Եղիցի՝ մխիթարութիւն և փրկութիւն հրեից»: Այս խոսքերը ձեզ բացատրելու հարկ չկա, բայց նրանց միտքը այս է — քանի հոգիդ մարմնումդ է, քանի թեկուզ մի երակդ բաբախում է, իրավունք չունես հուսահատվելու: Դա ես իմ փորձից գիտեմ: Եվ իսկապէս, ինչպէ՞ս պատահեց, որ ես ձեռք գարկեցի իմ հիմիկվա գործին: Ո՛չ տատս, ո՛չ էլ տատիս տատը երբեք կաթնավաճառությամբ չեն զբաղվել: Այո՛, արժեր իսկապէս, որ դուք լսեիք այս պատմությունը սկզբից մինչև վերջ: Ես մի բուպե կնստեմ ահա այստեղ, ձեզ մոտ, կանաչի վրա, իսկ ձին այդ ընթացքում թող խժո՛ի իր համար: Ինչպէս ասում են «Հոգի ամենայն արարածոց» — ախր սրան էլ է աստված ստեղծել:

Մի խոսքով, դա կլինէր հոգեգալստյան¹ մոտերքը, այսինքն՝ որ սուտ չասեմ՝ էդ տոնից մեկ կամ երկու շաբաթ առաջ... Բայց կարող է և էդպէս մի շաբաթ հետո, լավ չեմ հիշում: Մի մոռացեք, որ այսպէս թե այնպէս, այդ դեպքի վրայով առաջին տարին չէ, որ գլորվում է, այլ ուղիղ ինն տարի, եթե ոչ կլոր տասը, բայց գուցե թերևս մի բան էլ ավելի:

Ես այն ժամանակ բոլորովին էլ այն չէի, ինչ հիմա եմ, այսինքն, իհարկե, նույն Տեվլեն եմ, բայց և այնպէս նույնը չեմ, ինչպէս ասում են՝ էլի են պառաւն է, միայն գլխաշորն է ուրիշ: Ինչո՞ւ, կհարցնեք դուք: Շատ պարզ. ես այն ժամանակ, ձեզանից հեռու լինի, տկլորի մեկն էի, մուրացկան... Չնայած, մյուս կողմից էլ, եթե անկեղծ ասեմ, ես հիմա էլ հարուստ չեմ: Ես և դուք միասին կարող ենք ցանկանալ այս ամառ այնքան վաստակել, որքան ինձ պակասում է Բրոդսկու²

հարստությանը հասնելու համար... Բայց համեմատած նախկին վիճակիս հետ, կարող եմ ասել՝ հարուստ եմ: Ունեմ սեփական ձի՝ իր սայլով, ունեմ, աչքով չտամ, երկու կթու կով և մի հատ էլ

¹ Հոգեգալստյան տոն կամ հնգետասան — հրեաների կրոնական տոնը, զատկվա հաջորդ օրվանից հաշված հիսուներորդ օրը:

² Բրոդսկի — մեծահարուստ հրեա, շաքարի գործարանատեր Կիևում, հեղափոխությունից առաջ:

ծանրած, որ այսօր-վաղը կծնի: Եթե զանգատվեմ, մեղք գործած կլինեմ. ամեն օր տանը թարմ կաթ կա, յուղ, պանիր, թթվասեր, և ամենն էլ մեր աշխատանքով ձեռք բերած, որովհետև ամբողջ ընտանիքով աշխատում ենք, ոչ ոք ձեռքերը ծալած չի նստում: Կինս կովերն է կթում, աղջիկներս պուտուկներն են բաժանում, կարագ հարում, իսկ ես ինքս էլ, ինչպես տեսնում եք, դեռ լույսը չծագած գնում եմ շուկա, անցնում եմ Բոյբերիկի բոլոր ամառանոցները, հանդիպում սրան նրան, այն մյուսին, Եգուպեցի ամենամեծ հարուստներին... Երբ խոսում ես մարդու հետ, զգում ես, որ դու էլ այսպես թե այնպես մարդ ես աշխարհի երեսին և ոչ թե մի չուլախ յաբու... Իսկ երբ գալիս է շաբաթ օրը, ի՞նչ ասել կուզե: Շաբաթ օրը ես ոնց որ թագավոր: Սուրբ գիրքը դնում եմ առաջս, աչքի եմ անցնում Հնգեմատյանի գլուխներից մեկը, մի քիչ կարդում եմ «Խրատք հարցն», մի քիչ սաղմոսը, սա, նա, հինգերորդը, տասներորդը... Նայում եք ինձ, պանե Շուրմ-Ալեյխեմ, և ձեզ ու ձեզ երևի մտածում՝ «չէ՛, այս Տեվլեն այնքան էլ պարզամիտը չէ...»:

Մի խոսքով, ինչի՞ մասին էի սկսել պատմել: Հա՛... Ես այն ժամանակ աղքատ էի, օրական երեք անգամ կնոջս ու երեխեքիս հետ, ասածու օգնությամբ քաղցից մեռնում էի, չհաշված ընթրիքը: Եզան նման աշխատում էի, անտառից գերան էի կրում կայարան, պատահում էր, մի լիքը սայլ տանում էի և ամաչում եմ ասեմ, երկու տասնհինգ կոպեկանոց էի ստանում և այն էլ ոչ ամեն օր... Ու այդպիսի վաստակով շնորհ արեք, կշտացրեք մի տուն լիքը հացակերներ, աչքով չտամ, դրան էլ ավելացրած ձին, որ գործ չունի ոչ մի տեսակի խոսքի ու բացատրության հետ — կերակրիր ամեն օր՝ առանց որևէ առարկության, և վե՛րջ:

Բայց թե աստված էլ հենց դրա համար է: Չէ՞ որ նա, ինչպես ասում են. «զկերակրո՛ղն և զլցուցանողն է ամենեցուն», և կառավարում է աշխարհը իմաստությամբ... Տեսնում է նա, որ մի կտոր հաց աշխատելու համար հոգիս դուրս է գալիս, ասում է՝ «Տեվլե, դու երևի կարծում ես, որ ամեն ինչ վերջացած է, որ աշխարհի վերջը եկել է, որ երկինքը փուլ է գալիս: Ա՛յ թե հիմարի գլուխն ես հա՛, Տեվլե, այն էլ ինչպիսի: Ահա՛, կտեսնես, եթե աստված կամենա, հաջողությունը մեկ անգամից կգա, այ, այսպես՝ դեպի ձախ շրջան կանի ու իսկույն ևեթ եղած քունջն ու պուճախը կլուսավորվի»: Ստացվում է ճիշտ և ճիշտ, ինչպես աղոթքումն է ասված. «Ումա՛նք ամբառնան և այլք խոնարհին», — մեկը ձիով է գնում, մեկն էլ ոտքով է քարշ գալիս: Գլխավորը — ապավինելն է, պետք է ապրել հույսով և միայն հույսով: Եվ եթե մի առժամանակ ստիպված ես դառնության բաժակից ըմպել, ապա մենք՝ հրեաներս, հենց դրա համար էլ ստեղծվել ենք... Իզուր չէ, որ ամբողջ աշխարհը մեզ նախանձում է... Ինչի՞ համար եմ այս բանն ասում: Ասում եմ, որովհետև աստված իր ողորմածությունից ինձ էլ բաժին հանեց... Դուք միայն ականջ արեք, թե ինչեր են լինում աշխարհիս երեսին:

Մեկ անգամ ամռանը, երեկոյան դեմ գնում եմ անտառով, դատարկ սայլով տուն եմ դառնում: Գլուխս քարշ եմ գցել, հոգիս ճնշվում է, ասես կատուները սիրտս առել են ճանկերի մեջ: Ձիս հագիվ է ոտքերը քարշ տալիս, թեկուզ հենց դանակը դիր բկին... Ուտերդ շարժի՛ր, այ թշվառական, ասում եմ ես: Տիրոջդ հետ մեկտեղ վերանաս աշխարհից: Դու էլ իմացիր, թե ինչ է նշանակում ամառվա երկար օրով պաս պահելը՝ քանի որ Տեվլեի ձին ես:

Չորս բոլորս լուրջուն է, մտրակիս հանած ամեն մի ձայնը անտառում արձագանք է տալիս: Արեգակը իջնում է, օրը հանգչում: Ծառերի ստվերները անսահմանորեն երկարում են: Մթնում է: Տխրություն է իջնում: Գլխիդ մեջ զանազան մտքեր են սողոսկում, վաղուց մեռած-գնացած մարդկանց կերպարանքները կանգնում են աչքիդ առաջ: Տունդ ես հիշում՝ դարդով լիքը, ուր խավար է, անձկություն, երեխաները, աստված տա հիվանդության երես չտեսնեն, տկլոր, ոտաբորբիկ, աչքները ճամփին սպասում են իրենց աշխատավոր հորը, որ տուն պիտի գա. սպասում են՝ թե արդյոք չի՞ բերի մի ամբողջ թարմ հաց, հետն էլ գուցե և կարկանդակ: Իսկ նա՛ իմ պառավը,

պարզ է, ինչքան չլինի կնիկարմատ է ու քրթմնջում է՝ «երեխեք եմ բերել շարել նրա համար, էն էլ յոթը: Սատանեն ասում է, ներիք ինձ աստված, հենց տար թափիր գետը»: Ոնց է, լա՞վ բան է այսպիսի խոսքեր լսելը:

Բայց մենք ախր, սոսկ մարդ ենք մինչև մեր ուղն ու ծուծը: Խոսք ու զրույցով փորդ չի կշտանա: Տառելի կերար, սիրտդ թեյ է ուզում, իսկ թեյի համար շաքար է պետք, իսկ շաքարը, ասում եք, Բրոդսկու մոտ է...

— Մի կտոր հաց որ պակաս ուտեմ,— ասում է կինս,— ոչինչ, փորս չի բողոքի, բայց որ առավոտը մի բաժակ թեյ չխմեմ, չեմ դիմանա, որովհետև երեխեն ամբողջ գիշեր ծծում է:

Բայց և այն հանգամանքը, որ դու հրեա ես, մոռանալ չի կարելի, արևը թեքվում է մայրամուտ... Աղոթքը, չնայած այժմ չէ, ոչ մի տեղ չի փախչի, այդուհանդերձ աղոթելու ժամանակն է... Ճիշտ է, այնտեղ աղոթել կլինի՞: Դե, պատկերացրեք, երբ հարկավոր է անշարժ կանգնել, ձին հակառակի նման պոկվում է տեղիցն ու խելառի նման թռչում... Դու է վագում ես սայլի ետևից, սանձերը ձգում ու երգում. «Աստվա՛ծ Աբրահամու, և աստվա՛ծ Իսահակայ, և աստվա՛ծ Յակոբայ...» Լա՛վ աղոթել է, խոսք չկա: Եվ արի ու հակառակի նման էլ ուզում ես ջերմեռանդ, տաք-տաք աղոթես, որ միգուցե սիրտդ թեթևանա...

Կարճ ասած, վագում եմ սայլի ետևից ու երգում ճիշտ այնպես, ինչպես սինագոգում (թող կողքին հիշված չլինի), «Ամենայն արարածք առատաձեռնությամբ քո՛վ կեցցեն», այսինքն՝ ամեն այն ինչ քո ստեղծածն է... «գոր առնե գովստն յուր առաջի ննջեցելոց...», այսինքն՝ նույնիսկ նրա առջև, որ արդեն գերեզմանումն է...

«Ախ, մտածում եմ ես, մեր կյանքը մի խոր գերեզման է, և մենք էլ տանջվում, տրորվում ենք աշխարհի երեսին: Եզուպեցի հարուստներից չենք, որոնք ամբողջ ամառը անց են կացնում Բոյբերիկի ամառանոցներում, ուտում են, խմում, յուր ու մեղրի մեջ լող տալիս: Ա՛խ տեր իմ երկնային թագավոր, ո՞ր մեղքիս համար եմ քաշում այս ամենը: Մի՞թե ես էլ այնպիսին չեմ, ինչպես բոլորը, «տե՛ս գթշվառություն մեր»: Այսինքն՝ տես մեր տանջանքները, նայիր, թե ոնց ենք չարչարվում, և պաշտպանիր մեզ, աղքատներին, որովհետև քեզանից բացի, ոչ ոք չկա, որ պաշտպանի: «Բժշկեա զմեզ զի ապաքինեսցուք»: Մեզ դեղ ու ճար արա, հիվանդություններն էլ հեռու տար: «Օրհնեա զմեզ...»: Տուր մեզ լավ տարի, որ հացը առատ լինի՝ և վարսակը և գարին, և ցորենը... Չնայած մյուս կողմից էլ ինձ նման մի ջրատարին դրանից ի՛նչ օգուտ: Իմ ձիու համար մեկ չի՞, ասենք՝ վարսակը էժան է, թե թանկ է:

Բայց թե մեզ չի տրված ամենաբարձրյալի գործերը քննելը, իսկ հրեան առավել ևս պետք է ամեն ինչ ընդունի անտրտունջ և կրկնի՝ «սրանով էլ գոհ ենք», երևի աստված այդպես է կամեցել: Իսկ հերետիկոսները, շարունակում եմ ես, րիստոկրատները», որոնք ասում են՝ աստված չկա, կիսայտառակվեն, երբ ներկայանան այնտեղ... խիստ կտուժեն, քանզի նա «կործանողն է թշնամեաց»,— կիստուգի հարյուրապատիկ: Նրա հետ հանաք անել չի կարելի, պետք է նրա հետ յուրա գնաս, աղաչես, պաղատես, «ողորմա՛ծ հայր, լո՛ւր ձայնից մերոց» — լսիր մեր լացն ու կոծը, գթա մեզ, խղճա կնոջս ու երեխեքիս, նրանք տկլոր են, անոթի: Վարձք արա, կարեկցիր քո սիրելի ժողովրդին, ինչպես մի ժամանակ սուրբ տաճարում, երբ քահանան և ղևտացիները...: Եվ հանկարծ ոչ այս, ոչ այն, ձիս կանգ առավ: Ես իսկույն ևեթ աղոթքի մնացած մասը կարճ կապեցի, աչքերս բարձրացրի և տեսնեմ թավուտի միջից դեպի ինձ են գալիս ինչ-որ տարօրինակ երկու արարած, հագնված են ոնց որ ոչ մարդավարի... «Ավագակնե՛ր են», վայրկենապես անցավ մտքովս: Բայց թե իսկույն ուշքի եկա՝ «թո՛ւ, Տեվյե, հիմարի գլուխ: Այսքան տարի անվերջ գնում-գալիս ես անտառով, և՛ գիշերը, և՛ ցերեկը, ի՛նչ պատահեց, որ աչքիդ հանկարծ ավագակներ երևացին»:

— Վյո՛ւ,— գոչեցի ես ձիուն, սիրտ առա մի քանի անգամ, որպես թե ոչինչ էլ չեմ նկատել, ձիուս հարվածեցի:

— Հարգելի՛ս: Լսեցեք, քեռի՛,— դիմում է ինձ այդ արարածներից մեկը կանացի ձայնով ու թաշկինակը թափահարում:— Ապա, մի բռպե կանգ առեք, մի փախեք, մենք ձեզ ոչ մի վատություն չենք անի:

«Ըհը՛, չար ոգի է, մտածեցի ես, բայց և նույն բռպելին ինքս ինձ ասում եմ՝ սարսաղի մեկը: Հանկարծ որտեղի՞ց հայտնվեցին ոգիներն ու սատանեքը»: Ձիս կանգնեցրի: Մի լավ նայեցի, տեսնեմ, չէ, կնանիք են: Մեկը տարեց է, մետաքսե գլխաշոր ունի, մյուսը ավելի ջահել է, կեղծամով: Երկուսով էլ կարմրատակած ու քրտնամլած:

— Բարի երեկո՛ւ, ա՛յ քեզ հանդիպում,— ասում եմ ես բարձրաձայն և նույնիսկ որպես թե ուրախացած:— Ի՞նչ կիրամայեք: Եթե ուզում եք որևէ բան առնել, ոչինչ էլ չունեմ, բացի դատարկ փորիս ծակոցներից ու սրտիս ցավերից՝ մի շաբաթ առաջ, կան նաև հոգսեր, գլխացավանքներ և ամեն տեսակի նեղություններ, չոր հաց կրծելով օր մթնեցնել, դառնություններ ու փորձանքներ, ինչպես որ կուզեք, թե հատ-հատ, թե միանգամից:

— Լռեցե՛ք, սպասեցե՛ք,— պատասխանում են նրանք:— Մի սրան նայեցեք, ոնց է վրա տալիս: Սալյապանին մի խոսք որ ասես, կրակը կընկնես: Մենք ոչինչ էլ չենք ուզում առնել,— ասում են նրանք,— մենք միայն ցանկանում էինք ձեզ հարցնել, թե չգիտե՞ք արդյոք որն է այստեղ Բոյբերիկ տանող ճանապարհը:

— Բոյբերիկ տանո՞ղ,— հարցրի ես կեղծ ծիծաղելով:— Ինձ համար դա նույնն է, եթե հարցնեիք, օրինակի համար, թե ես գիտե՞մ, որ իմ անունը Տեվլե է:

— Այ թե ի՛նչ,— ասում են նրանք:— Ձեզ անվանում են Տեվլե՞: Բարի երեկո, ռեք Տեվլե: Մենք չենք հասկանում, թե ինչ կա այստեղ ծիծաղելի: Մենք տեղացի չենք, մենք Եգուպեցից ենք և ապրում ենք Բոյբերիկի ամառանոցում: Դուրս եկանք, որ մի քիչ զբոսնենք, և ահա, համարյա առավոտից մինչև հիմա պտտվում ենք այս անտառում... Եվ հանկարծ մենք լսում ենք, որ ինչ-որ մեկը երգում է անտառում: Սկզբում մտածեցինք, թե աստված մի արասցե, ավազակներ են: Բայց երբ մոտիկից տեսանք, որ դուք հրեա եք, սրտներս մի քիչ հանգստացավ: Հասկանո՞ւմ եք:

— Հա՛, հա՛, հա՛, լա՛վ ավազակ եք գտել,— պատասխանում եմ ես:— Դուք լսած կա՞ք հրեա ավազակի պատմությունը. այդ ավազակը հարձակվել էր անցորդների վրա և պահանջել մի պտղունց բոնոթի: Ուզո՞ւմ եք լսել, կարող եմ պատմել...

— Պատմությունը թողնենք հաջորդ անգամվան: Ավելի լավ է մեզ ցույց տայիք Բոյբերիկ տանող ճանապարհը:

— Բոյբերիկ տանող ճանապա՞րհը: Շնո՛րի արեք: Բայց ախր սա հենց Բոյբերիկ տանող ճանապարհն է: Եթե դուք նույնիսկ չցանկանաք էլ Բոյբերիկ գնալ, միննույն է, այն ճանապարհը ուղղակի կտանի այնտեղ:

— Հապա ինչո՞ւ եք լռում:

— Իսկ ինչ,— ասում եմ,— գոռա՞մ:

— Որ այդպես է,— ասում են նրանք,— դուք հավանաբար կգիտենաք, արդյոք հեռո՞ւ է Բոյբերիկը:

— Մինչև Բոյբերիկ,— պատասխանում եմ ես,— հեռու չէ, մի քանի վերստ է։ Այսինքն՝ հինգ-վեց կամ յոթ, միգուցե և ութ։

— Ութ վե՛րստ,— ճշացին կանայք միաձայն՝ ձեռքները կոտրատելով և լացակուսած։— Ներեցեք, այդ ի՞նչ եք ասում։ Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ասում։ Ութ վերստը հանաք բան չէ։

— Դե ինչ կարող եմ անել,— պատասխանում եմ ես։ Եթե ինձանից կախված լինեք, միգուցե ես այդ տարածությունը կրճատեի։ Մարդ արարածը ամեն ինչ պետք է այս աշխարհում ճաշակի։ Ճանապարհին դրանից ավելի դժվար բաներ են պատահում։ Երբեմն ցեխի միջով քարշ գալով բարձրանում ես սարը, և այդ էլ հենց շաբաթ օրվա նախօրեին, անձրևը ձաղկում է երեսդ, ձեռքերդ փայտանում են, քիչ է մնում քաղցից մեռնես, դա բավական չէ, մեկ էլ տեսնում ես սոնին կոտրվեց...

— Դուրս եք տալիս անկապ-անկապ, տակից-գլխից,— ասում են նրանք։— Ուղիղն ասած, երևում է խելքներիդ գլխներիդ չէ։ Ի՞նչ եք մեզ «Հազար ու մեկ գիշերների» առակներն ու հեքիաթները պատմում։ Մենք այլևս ուժ չունենք, ոտքի վրա չենք կարողանում մնալ։ Ամբողջ օրը մի բաժակ սուրճով բիշիից բացի նշխար չենք դրել բերաններս, իսկ գուք զանազան հեքիաթներ եք պատմում։

— Դա ուրիշ բան է,— պատասխանում եմ,— թե որ փորդ դատարկ է, խաղն ու պարը ինչի՞դ պետքն է։ Թե ինչ բան է ցուրտը, այդ էլ գիտեմ, կարող եք չպատմել, իսկ բիշիով սուրճը արդեն մի տարի կլինի, ինչ աչքս չի տեսել։

Եվ պատկերացնում եմ այդտեղ մի գավաթ տաք սուրճ՝ կաթով, թարմ կարկանդակով ու ուրիշ համադամ ուտելիքներ... «Ասացեք խնդրե՛մ։ Տեսեք, թե սիրտն ինչ ուզեց, ինչպիսի նրբակիրթ դաստիարակություն՝ սուրճ, կարկանդակն էլ հետը... Իսկ եթե մի շերտ հացի հետ տառեխ լինեք, ինչ է, փորդ կցավե՞ր»։ Բայց սատանան գետնի տակն անցնի, հակառակի նման ձեռք չի քաշում։— Սուրճի հոտ եմ առնում,զգում եմ կարկանդակի համը, թարմ, խրթխրթան կարկանդակի, բերնիս ջուրը գնում է...

— Գիտե՞ք ինչ, ռեբ Տեվյե,— դիմում են ինձ կանայք։— Քան թե այստեղ կանգնենք, լավ չի՞ լինի, որ նստենք ձեր սայլը, իսկ դուք էլ նեղություն քաշեիք մեզ հասցնեիք տուն, Բոյբերիկ։ Դուք ի՞նչ կասեք։

— Այ բարով եկա՛ք,— ասում եմ,— ես Բոյբերիկից եմ վերադառնում, իսկ ձեզ հարկավոր է գնալ Բոյբերիկ։ Այդ ո՞նց կլինի։

— Դե ի՞նչ կա որ,— պատասխանում են նրանք,— չգիտե՞ք ինչ անել։ Տղամարդը և այն էլ գիտուն տղամարդը, էլք կգտնի. նա կշրջի լծաձողերը և կգնա եկած ճանապարհով։ Մի անհանգստացեք, ռեբ Տեվյե, հավատացած եղեք, եթե մեզ բարեհաջող տուն հասցնեք, այն ժամանակ թող աստված մեր գլխին այնքա՛ն հիվանդություններ թափի, որքան որ դուք այս գործից կտուժեք...

«Սրանք ինձ հետ ինչ-որ տարօրինակ լեզվով են խոսում,— մտածեցի ես։— Ինչ-որ երկդիմի խոսքերով»։ Եվ գլուխս են սողոսկում մեռելներ, վիուկներ, ծաղրածուներ ու չարքեր։ «Հիմարների թագավոր, ասում եմ ես ինքս ինձ։ Ի՞նչ ես կոճղի նման կանգնել մնացել։ Սողա սայլի նստատեղը, մտրակով վախեցրու ձիուն ու թռի՜ր՝ ուր աչքդ կկտրի»։ Բայց թարսի նման, անկախ իմ կամքից, բերանիցս դուրս է թռչում.

— Բարձրացեք սայլը։

— Սրանք այս լսելուն պես չստիպեցին երկար ու բարակ խնդրել... Ես էլ նրանց ետևից բարձրացա իմ տեղը, շրջեցի լծաձողը ու սկսեցի ձիուն մտրակել «Մե՛կ, ե՛րկու, ե՛րեք – գնացի՛նք »։ Բայց թե ոնց

կգնաս: Սա ինչ բան է: Ձին տեղից չի շարժվում, կուզես մորթիր: «Է՛, մտածում եմ ես, հիմա պարզ է, ինչ պտուղ են սրանք: Թե ո՞ր սատանան գլխիս տվեց կանգ առնել ճանապարհի մեջտեղն ու կնանիքի հետ զրույց քոքել...»:

Հասկանո՞ւմ եք: Չորս բոլորը՝ անտառ, լռություն, գիշերը վրա է հասնում, իսկ այստեղ ինչ-որ երկու արարած, կինարմատի կերպարանքով... Եվ երևակայությունների մեջ ընկա: Միտքս եկավ սայլապանի պատմությունը, որը մի անգամանտառով գնալիս ճանապարհին վարսակով լիքը մի պարկ է տեսնում: Սայլապանը չի ծուլանում, իջնում է ցած, պարկը առնում է ուսը, մազ է մնում, որ պորտն էլ դուրս ընկնի, բայց մի կերպ բերում գցում է սայլի վրա և շարունակում գնալ: Մի վերստի չափ գնացած է լինում, ձեռքը գցում է պարկին, իսկ պարկը՝ թե դրել ես, արի տար: Ո՛չ պարկ կա, ո՛չ վարսակ: Սայլի վրա պառկած է մորուքավոր մի այծ: Սայլապանն ուզում է այծին ձեռք տալ, իսկ նա լեզուն մի արշին դուրս է գցում, քրքջում ու չքանում:

— Ինչո՞ւ չեք քշում,— հարցնում են ուղեկիցներս:

— Ինչու չեմ քշո՞ւմ,— ասում եմ,— տեսնում եք, թե ինչու, ձին չի ուզում պարել, հավես չունի:

— Իսկ դուք նրան,— ասում են կանայք,— մտրակով հասկացրեք: Դուք չե՞ք որ մտրակ ունեք:

— Շնորհակալ եմ խորհուրդի համար,— ասում եմ ես,— շնորհակալ եմ, որ հիշեցրիք: Բայց ցավն այն է, որ իմ կտրիճը այդպիսի բաներից չի վախենում: Նա վարժվել է մտրակին, ինչպես ես՝ աղքատությանը...

Հանաք եմ անում, հասկանո՞ւմ եք, բայց վախից լեղիս ջուր է կտրել:

Մի խոսքով, ինչ երկարացնեմ, սրտիս ամբողջ բարկությունը թափեցի խեղճ ձիուս վրա: Վերջ ի վերջո աստված գթաց, ձին տեղից շարժվեց, սկսեցինք գնալ. գնում ենք անտառով, մեր ճանապարհով:

Զգում եմ, որ գլխիս մեջ մի նոր միտք է ծագում՝ «ա՛խ Տեվլե, հայվանի մեկն ես, ինչպես որ սկսվեց քո անկումը, ինչպես որ աղքատացար, այդպես աղքատ էլ կմնաս: Խելքիդ տուր, այսպիսի հանդիպում ախար հարյուր տարին մեկ անգամ է պատահում, ինչո՞ւ հենց սկզբից նեթ չխոսեցիր, որպեսզի գիտենայիր, թե՝ «որքանով», այսինքն՝ ինչքան կստանաս: Ախր ոնց ուզում ես, դատիր, կուզես խղճմտանքի տեսակետից, կուզես մարդավարության, կուզես ըստ օրինի կամ ինչպես որ կուզես, նման գործից փող աշխատելը, ուղիղն ասած, մեղք չէ: Եվ ինչու չօգտվել, եթե բախտդ բերել է: Ձին կանգնեցրու, է՛շի գլուխ, և առանց կոտրատվելու նրանց ասա — այսպես ու այսպես. «Այսքան կտաք, լավ, չեք տա, ուրեմն ներող եղեք, եթե ձեզ խնդրեմ որ սայլից իջնեք»: Բայց մյուս կողմից էլ մտածում եմ, դու իսկապես որ էշի մեկն ես, Տեվլե: Դու չգիտե՞ս, որ արջի մորթին անտառում չեն ծախում: Ինչպես մեր գյուղացիք են ասում, ջուր չտեսած՝ ոտներդ հանում ես...

— Ինչո՞ւ ավելի արագ չեք քշում,— ասում են իմ ուղեկիցները՝ քաշելով ետևիցս:

— Իսկ ո՞ւր եք այդպես շտապում: Կամաց կգնաս, շատ կգնաս,— պատասխանում եմ ես ու աչքիս տակով նայում նրանց. կարծես թե ոչինչ, կանայք են, ինչպես բոլոր կանայք, մեկը մետաքսե գլխաշորով է, մյուսը կեղծամով: Նստել նայում են իրար ու քչիչում:

— Դեռ շա՞տ կա,— հարցնում են նրանք:

— Այնքան, ինչքան այնտեղից մինչև այստեղ,— պատասխանում եմ ես:— Այ, հիմա կիջնենք սարնիվար, իսկ հետո կբարձրանանք սարնիվեր, հետո նորից կիջնենք, նորից կբարձրանանք և

միայն այդ ժամանակ կհասնենք մեծ զառիթափը ու ճանապարհը հենց այստեղից, շիփ-շիտակ կձգվի մինչև Բոյրերիկ...

— Սայլապան եմ ասել, հա՛:

— Ինչքան էլ նենգն է,— ասում է մյուսը:

— Հապա ինչ էիր սպասում:

— Ոնց որ մի քիչ էլ ցանցառ է...

«Դե, իհարկե, ցանցառ եմ, մտածում եմ ես, որ թույլ եմ տալիս քթիցս բռնած ման ածեք»:

— Իսկ, սիրելի կանայք, զորօրինակ, որտե՞ղ կհրամայեք ձեզ ցած թափել:

— Ի՞նչ է նշանակում,— ասում են,— «ցած թափել»:

— Մեր սայլապանների լեզվով այդպես է ասվում,— բացատրում եմ ես:— Մեր բարբառով դա նշանակում է — ո՞ւր հասցնեմ ձեզ, երբ բարով-խերով ամենաբարձրյալի ողորմածությամբ ողջ և առողջ տեղ հասցնեմ: Ինչպես ասում են՝ լավ է երկու անգամ հարցնես, քան մեկ անգամ շփոթես:

— Ա՛յ, ահա թե ի՛նչ: Դուք,— ասում են նրանք,— բարի եղեք մեզ հասցնել մինչև կանաչ ամառանոցը, որ անտառի մյուս կողմում է, գետի մոտ: Գիտե՞ք որտեղ է այդ:

— Ինչու չպիտի իմանամ,— ասում եմ,— Բոյրերիկը հենց հաշվիր թե իմ տունն է: Երանի այնքան հազար ունենայի, ինչքան որ գերան եմ կրել այնտեղ: Ա՛յ, հենց անցյալ ամառ կանաչ ամառանոցը երկու սաժեն փայտը տարա միանգամից: Ամառանոցը վարձել էր Եգուպեցից եկած մի ինչ-որ միլիոնատեր. նա երևի հարյուր կամ միգուցե հենց երկու հարյուր հազար կունենար:

— Նա հենց հիմա էլ է ամառանոցը վարձել,— պատասխանում են կանայք, նայում են միմյանց ու փսփսում՝ ինչ-որ քմծիծաղ տալով:

— Ներեցեք,— ասում եմ ես,— երբ որ մի այսպիսի պատմության մեջ ենք ընկել, ապա միգուցե դուք այդ հարուստի հետ մի որևէ առնչություն ունեք... Եվ եթե այդպես է, ապա բարի լինեիք ինձ համար խոսեիք, միջնորդեիք: Ո՛վ է իմանում, գուցե նրա մոտ մի որևէ գործ կամ պաշտոն գտնվի ինձ համար, դե քի՛չ գործ կա: Ա՛յ, ես մի ջահել մարդ եմ ճանաչում, հենց մեր ավանից էլ հեռու չի ապրում, անունը Բարոյել է... Մի անպետքի մեկն էր: Բայց դու բախտը տես, ինչ-որ կերպ խցկվում է մի հարուստի մոտ, և հիմա արդեն գլխավոր է, ինչպես ասում են՝ վերի արտի ցորեն. շաբաթական համարյա քսան ռուբլի փող է վաստակում, միգուցե և քառասուն... Ո՛վ է իմանում: Մարդկանց բախտը բերում է... Կամ թե խոսքի օրինակ վերցնենք մեր մսագործի փեսային, ոչ մի բանի պակաս չունի, բայց ի՛նչ օր ու արև կունենար, թե որ Եգուպեց չգնար: Ճիշտ է, սկզբում քիչ դարդ ու ցավ չտեսավ, մի քանի տարի տանջվեց, տրորվեց, մազ մնաց սովից մեռնի: Բայց հիմա, աստված տա՝ ես էլ նրանից վատ չլինեմ, տունը փող է ուղարկում: Նա նույնիսկ ուզում էր կնոջն ու երեխեքին էլ տանել, բայց ցավն այն է, որ նրանց արգելված է այնտեղ ապրել: Կհարցնեք, թե հապա ոնց է այնտեղ մենակ ապրում: Շատ պարզ — նահատակվում է... Բայց... սպասեցե՛ք, ասում եմ, սպասեցե՛ք: Ամեն ինչն էլ վերջ ունի — ահա ձեզ գետը, ահա և մեծ ամառանոցը...

— Եվ թափով առաջ քշեցի հենց առմուտքը: Մեզ տեսնելուն պես իրար խառնվեցին, ճիչ, աղմուկ, ուրախություն: «Վա՛յ յոստի ջան: Մայրի՛կ: Մորաքո՛ւյր: Կորուստը գտնվե՛ց. Աչքներդ լո՛ւյս: Տեր իմ աստված, որտե՞ղ էիք: Մենք զլուխներս կորցրել էինք... Մարդիկ ենք ուղարկել ամեն կողմ, որ բոլոր

ճանապարհները նայեն... մտքներովս ինչե՞ր ասես որ չէր անցնում: Գայլե՛ր, ավազակնե՛ր, աստված փրկի, ազատի: Ի՞նչ էր պատահել»:

— Պատահել է հետաքրքիր պատմություն, մոլորվել էինք անտառում, գնացել հասել էինք աստված գիտի թե ուր, տասը վերստ հեռու: Հանկարծ մի մարդ ենք տեսնում... Ի՞նչ մարդ: Դե, մի ինչ-որ թշվառականի մեկը, ձիու հետ... Հազիվ համոզեցինք...

— Օ՛, տեր իմ աստված, ինչպիսի՜ տառապանք: Մեն ու մենակ, առանց ուղեկցի: Այս տեսակ էլ բա՛ն: Դեռ շնորհակալ եղեք ասածուց...

Մի խոսքով, լամպը դուրս բերեցին պատշգամբը, սեղանը ծածկեցին ու սկսեցին քարշ տալ բերել տաք ինքնատեղ, սկուտեղներով՝ թեյը, շաքարը, մուրաբեք, ձվածեղ, կաթնահունց թարմ, անուշահոտ, ապա ամեն տեսակի ճաշեր — արգանակ՝ յուղը երեսին մի թիզ կանգնած, տապակած միս, սագի միս, չտեսնված գինիներ, օղիներ... Քաշվել եմ մի կողմ ու մտիկ եմ տալիս, թե ոնց են ուտում ու խմում Եգուպեցի հարուստները, աստված փրկի նրանց չար աչքից: «Վերջին շապիկն էլ գրավ կդնեմ, մտածում եմ ես, մենակ թե հարուստ լինեմ»: Կհավատա՞ք որ ասեմ, ինձ թվում էր, թե այստեղ ինչ-որ սեղանից ընկնում էր հատակին, հերիք կաներ երեխեքիս և այն էլ մի ամբողջ շաբաթ: Ողորմա՛ծ աստված: Դու չե՞ր մեծ ես, արդարադատ: Սա ի՞նչ կարգ է, որ մեկին տալիս ես ամեն ինչ, իսկ մյուսին՝ ոչինչ. մեկին բաժին ես հանում կաթնահունցը, մյուսին եգիպտական պատիժներ³. Բայց և այնպես, մյուս կողմից էլ, մտածում եմ, դու համենայն դեպս շատ հիմարն ես, Տեվլե: Սա ի՞նչ է նշանակում: Դու սկսում ես ասածուն ցուցմունքներ տալ, թե աշխարհը ո՛նց կառավարի: Եթե նա այդպես է համարում նշանակում է, այդպես էլ պիտի լինի: Որովհետև, եթե ուրիշ կերպ լիներ, ապա ուրիշ կերպ կդասավորվեր: Իսկ այն հարցին, թե իսկ ինչո՞ւ ուրիշ կերպ չէ, կա միայն մի պատասխան — «մեք ստրուկք եաք» — և ուրիշ ոչինչ: Հենց հրեան էլ դրա համար է աշխարհի երեսին: Իսկ հրեան պետք է ապրի հույսով ու հավատով — հավատա ասածուն և հուսա, որ մի որոշ ժամանակ հետո, եթե աստված կամենա, ամեն ինչ կփոխվի դեպի լավը...»:

— Ներեցեք, իսկ ո՞ւր է այդ մարդը, — հարցրեց ինչ-որ մեկը: — Արդեն գնա՞ց, սարսաղի մեկը:

— Աստված չանի, — պատասխանեցի ես: — Ոնց կգնամ առանց հրաժեշտ տալու: Բարև՝ ձեզ, բարի՝ երեկո: Աստված օրհնի սեղանակիցներին: Բարի ախորժակ: Անուշ լինի:

— Եկեք այստեղ, — ասում են նրանք ինձ: — Ինչո՞ւ եք կանգնել այդտեղ, մթության մեջ: Գոնե թույլ տվեք մի տեսենք, թե ինչ մարդ եք դուք: Գուցե մի թաս օղի կխմեք:

— Մի թաս օղի՞, խնդրե՛մ, — պատասխանում եմ: — Ո՞վ կհրաժարվի թասից: Ինչպես սուրբ գրքումն է ասված: «Միոյն վասն ողջութեան, միոյն վասն հանգստութեան ոսկերաց»: Ասել կուզի, գինին՝ գինիով, իսկ աստվածն էլ իրեն կարգին... Լեխաի՛մ⁴

, ասում եմ ես և դատարկում թասը: Աստված տա, որ միշտ հարուստ ու երջանիկ լինեք: Եվ թող հրեաները հրեա մնան: Եվ թող բարձրյալն աստված նրանց առողջություն և ուժ տա, որ դիմանան բոլոր փորձանքներին ու վշտերին:

— Ինչպե՞ս է ձեր անունը, — դիմում է ինձ ինքը, տանտերը, վայելչատես մի մարդ երմուկան⁵ գլխին: Ամուսնացա՞ծ եք: Իսկ երեխաներ ունե՞ք: Շա՞տ են:

³ Եգիպտական պատիժներ — տասը պատիժ, որոնցով, համաձայն աստվածաշնչի ավանդության, աստված պատժեց Եգիպտոսի փարավոնին, որը չէր ցանկացել ազատել հրեաներին:

⁴ Ողջ լերուք (հրեերեն):

— Երեխանե՞ր,— պատասխանում եմ:— Մեղք կլինի որ գանգատվեմ: Եթե ամեն մի երեխաս, ինչպես հավատացնում է ինձ իմ Գոլդան, միլիոն արժե, ապա ես Եգուպեցի ամենամեծ հարուստից էլ հարուստ եմ: Միայն ափսոս, որ աղքատությունը հարստության ընկերը չէ և ծուռն էլ շիտակին ազգական չէ... Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Որ գտոն օրն բաժանե ի լի օրէ»,— ով որ փող ունի, նրա կյանքն էլ ուրախ է անցնում: Հրեն ահա, Բրողսկին փող ունի, իսկ ես՝ աղջիկներ: Իսկ աղջիկները հո գիտեք, մեծ միսիթարություն են — նրանց տերը չի խնայ: Բայց ոչինչ: Մենք ամենքս աստծու տակին ենք, այսինքն՝ նա իրեն համար նստած է վերևում, իսկ մենք ցածում տանջվում ենք: Տանջվում ենք, չարչարվում, գերան ենք կրում, հապա ի՞նչ պիտի անես: Ինչպես ասված է՝ «Ձուկ չեղած տեղը խեցգետինն էլ է ձուկ...»: Ամենամեծ չարիքը ուտելն է: Իմ տատը, աստված հոգին լուսավորի, ասում էր. «Թե փորս ուտել չպահանջեր, գլուխս ոսկու մեջ կլիներ...»: Դուք ներող եղեք, թե որ շատ խոսեցի... Չկա ավելի ուղիղ բան, քան ծուռ սանդուղքը և ավելի բութ բան, քան սուր խոսքը, նամանավանդ, երբ անոթի փորիդ մի թաս գցում ես...

— Մարդուն ուտելիք տվեք,— ասաց հարուստը:

Եվ իսկույն նեթ սեղանի վրա հայտնվեց ամեն ինչ, ինչ լեզուդ կպտտի: Ձուկ, միս, տապակած հավ, պորտիկներ⁶, լյարդ...

— Մի որևէ բան կուտե՞ք,— հարցնում են ինձ:— Ձեռքներդ լվացեք:

— Հիվանդին,— պատասխանում եմ,— հարցնում են, իսկ առողջին՝ տալիս: Բայց թե շնորհակալ եմ: Մի թաս օղին էլի ոչինչ, բայց սեղան նստել, ուտել, խմել, երբ տանը կին ու երեխեք ունես, աստված նրանց առողջություն տա... Եթե ձեր բարի կամքը այն է, որ ինձ...

Մի խոսքով, երևում է հասկացան, թե ինչ եմ ակնարկում և սկսեցին դեպի սայլը քարշ տալ, որը՝ թխվածք, որը՝ ձուկ, տապակած միս, հավ, որը՝ թեյ ու շաքար, բղուղով ճարպ, բանկայով մուրաբա:

— Սրանք կտանեք տուն,— ասում են նրանք,— ձեր կնոջն ու երեխաներին նվեր: Իսկ հիմա թույլ տվեք իմանալ, թե որքան կհրամայեք վճարել ձեր աշխատանքի համար:

— Ներեցեք,— պատասխանում եմ,— ո՞նց թե. ուրեմն ե՞ս պիտի հրամայեմ: Թող լինի այնքան, որքան ձեր բարի կամքը կթելադրի... Միգուցե համաձայնության գանք... Ինչպես ասում են՝ մի չերվոնեց ավելի, մի չերվոնեց պակաս... Մուրացկանը դրանից չի աղքատանա:

— Ո՛չ,— դժգոհում են նրանք:— Մենք ցանկանում ենք ձեզանից լսել, ոեք Տեվլե: Մի՛ վախեցեք: Դրա համար, աստված մի արասցե, ձեր գլուխը չեն կտրի:

«Ո՛նց անեմ, մտածում եմ ես, էս վատ եղավ. ասեմ՝ մի ռուբլի, չի լինի, միգուցե կարելի է երկու ռուբլի ստանալ: Ասեմ՝ երկու — երկյուղալի է. նրանց աչքում մի խելագարի մեկը կերևամ, «ինչի՞ համար է, կասեն, երկու ռուբլի ուզում»:

— Երեքանո՞ց...— թռավ հանկարծ լեզվիցս և բոլորը միանգամից այնպես քրքջացին, որ քիչ մնաց գետինը մտնեմ:

— Ներողամիտ եղեք,— ասում եմ ես:— Գուցե այն չասացի, ինչ պետք էր: Ձին որ չորս ոտք ունի, նա էլ է սայթաքում, իսկ մարդը իր մի հատիկ լեզվով...

⁵ Փոքրիկ թասակ, որ հրեաները դնում էին գլխարկի տակից. վաղեմի ազգային սովորություն:

⁶ Հավի կամ այլ թռչնի փորի փափուկ մաշկը:

Իսկ նրանք ավելի թունդ են ծիծաղում: Ուղղակի փորները բռնել են:

— Բավական է ծիծաղեք,— ասաց տանտերը, և կողքի գրպանից դուրս քաշելով մեծ քսակը, այնտեղից հանեց, դուք ինչքան եք կարծում գործօրինակ: Ապա գուշակեցեք: Տասանո՛ց: Կարմիր, կրակի նման, տա աստված, որ ես էլ այդպես կարմրաթուշ լինեմ ձեզ հետ միասին, և ասում է:— Սա իմ կողմից, իսկ դուք, երեխեք, տվեք ձեր ունեցածից, որքան կցանկանաք...

Մի խոսքով, էլ ինչ ասեմ: Սեղանն են թռչում հնգանոցներ, երեքանոցներ և ռուբլիանոցներ. ձեռքերս ու ոտներս դողում էին, կարծում էի չեմ դիմանա, ուշքս կգնա՝ ցած կընկնեմ:

— Դե, ինչո՞ւ եք կանգնել,— դիմում է ինձ հարուստը:— Հավաքեցեք ձեր փողերը ու աստծու օգնությամբ ճամփա ընկեք ու գնացեք ձեր կնոջ ու երեխաների մոտ:

— Թո՛ղ աստված հարյուրապատիկը հատուցի ձեզ:— Թո՛ղ դուք տասնապատիկը, հարյուրապատիկ ունենաք: Հաջողություն և շատ ու շատ ուրախություններ:

Եվ սկսեցի երկու ձեռքով հավաքել փողերը ու առանց հաշվելու, միջո՞ց կար հաշվելու, խոթել գրպաններս:

— Բարի գիշե՛ր,— ասում եմ:— Ողջ և առողջ եղեք, աստված երջանկություն տա ձեզ, ձեր զավակներին և զավակների զավակներին և ձեր ամբողջ ազգուտակին:

Գնում են դեպի սայլը: Բայց այդ ժամանակ ինձ է մոտենում հարուստի կինը, նա, որ մետաքսե գլխաշորով էր, և ասում է.

— Սպասեցե՛ք, ռեբ Տեվյե: Դուք ինձնից կստանաք առանձնահատուկ նվեր: Կամոքն աստծո, վաղը եկեք: Ես մի գորշ կով ունեմ: Կար ժամանակ, որ նրա նմանը չկար, քսանչորս չափ կաթ էր տալիս: Բայց աչքով տվեցին և այլևս չի կթվում... Այսինքն՝ կթվում է... Այսինքն՝ կթվում է, բայց կաթ չի տալիս...

— Աստված ձեզ երկար կյանք տա,— պատասխանում եմ:— Կարող եք չանհանգստանալ: Ձեր կովն ինձ մոտ կկթվի էլ, հալա կաթ էլ կտա: Իմ պառավը շատ հունարով է, չեղած տեղից արիշտա է փռում, հինգ մատներով էլ ձվածեղ է եփում, հրաշքով շաբաթ օրվա պատրաստություն է տեսնում և դմբուզներով էլ երեխեքին քնեցնում է... Ներող եղեք, ասում եմ, թե որ ավելորդ բաներ ասացի: Բարի գիշեր, հաջողություն եմ ցանկանում, միշտ այդպես առողջ ու երջանիկ լինեք:

Դուրս եկա բակը, գնացի սայլիս մոտ, ձեռքս գցեցի ձիուն, ձի չկա: Ա՛խ, սա ինչ փորձանք էր, որ եկավ գլխիս: Նայում եմ չորս կողմս — ա՛յ քեզ պատուհաս, թե դրել ես, արի տար. չկա ու չկա:

«Է՛, Տեվյե, լավ ընկար ծուղակը»: Եվ միտքս է գալիս մի պատմություն, որը օրերից մի օր կարդացել էի գրքում, թե ինչպես չար սատանան մի աստվածապաշտ մարդու գրավում տանում է քաղաքից դուրս մի ապարանք, ուտեցնում է, խմեցնում, իսկ հետո թողնում մի կնոջ հետ մենակ: Իսկ այդ կինը դառնում է մի վայրի գազան, գազանը՝ կատու, կատուն՝ հրեշ... «Տես հա՛, Տեվյե, ասում եմ ինքս ինձ, արդյոք քթիցդ բռնած քեզ չե՞ն տանում»:

— Ի՞նչ եք դեսուդեն ընկնում: Ի՞նչ եք փնթփնթում,— հարցնում են ինձ:

— Բա ի՞նչ անեմ...— ասում եմ ես,— սա ի՛նչ դժբախտություն էր, կյանքս խավարեց: Փորձանքի մեջ ընկա, իմ ձին...

— Ձեր ձին ախոռումն է,— պատասխանում են ինձ։— Նեղություն քաշեք, մտեք ախոռը:

Ներս եմ մտնում ու նայում, իսկապես, ազնիվ խոսք: Պատկերացնո՞ւմ եք, կանգնած է իմ կտրիճը տիրոջ ձիերի հետ և գլուխը խրած վարսակի մեջ ո՛նց է խժռում՝ աշխարհը մոռացած:

— Ա՛յ խելքի պուտուկ,— ասում եմ ես նրան, լսո՞ւմ ես, գնալու ժամանակն է: Միանգամից վրա քշելն էլ մի բան չէ, ավել պատառից օգուտ չկա...

Ինչ երկարացնեմ, դրան մի կերպ համոզեցի, գոհ և ուրախ ճամփա ընկանք դեպի տուն: Ես նույնիսկ տոնական շարական էի երգում: Իսկ ձիս անճանաչելի էր դարձել, կարծես մի ուրիշ կաշվի մեջ մտած լինեք: Վազում էր մտրակին չսպասելով: Երբ տուն հասա, արդեն ուշ էր, կնկանս արթնացրի:

— Տոնդ շնորհավո՛ր,— ասում եմ,— աչքդ լո՛ւյս, Գոլդա:

— Աչքալուսանքդ ինչի՞ համար է,— զարմանում է կնիկս:— Դա ինչ ուրախություն է եկել վրադ, ա՛յ իմ գովական կերակրողս: Չլինի՞ թե հարսանիքից ես գալիս կամ թե ծննդից, ա՛յ իմ ոսկի աշխատավոր:

— Երկունս էլ միասին են. այդտեղ քեզ համար և հարսանիք կա, և ծնունդ: Համբերիր, ա՛յ կնիկ, հիմա գանձ կտեսնես,— ասում եմ ես:— Բայց նախ և առաջ արթնացրու երեխեքին, թող այդ խղճուկներն էլ վայելեն Եգուպեցի հարուստների խորտիկներից:

— Թե ցնդել ես, թե խելքդ թոցրել, թե ցնորվել ես, թե գժվել: Խելառ-խելառ դուրս ես տալիս, մեղա՛ տեր աստված,— պատասխանում է կնիկս ու բարկանում, անեծք է, որ գլխիս է թափում, ինչպես հատուկ է կնիկարմատին:

— Կնիկ ես է՛,— ասում եմ,— կնիկ էլ կմնաս: Իզուր չէ Սողոմոն իմաստունն ասել, թե հազարավոր կանանց մեջ մի խելքը գլխին կնիկ չգտա: Գոնե լավ է, որ շատ կնիկ ունենալը հիմա մոդա չի...

Դուրս եկա դուռը, սայլից հանեցի այն ամենը, ինչ տվել էին և շարեցի սեղանին: Իմ ոհմակը հենց որ կարկանդակները տեսավ, հենց որ մսի հոտն առավ, հարձակվեց. թշվառականները ասես սոված գայլեր լինեին: Խլխում են, ձեռքները դողում է, ատամները աշխատում են... Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Եվ ճաշակեցի՛ն...»: Իսկ դա նշանակում է՝ վրա տվեցին մորեխի նման: Աչքերս նույնիսկ արցունքակալեցին...

— Դե պատմիր տեսնեմ,— դիմում է կնիկս ինձ,— այդ ո՞ւմ տանն է աղքատների համար ճաշկերույթ եղել կամ ինչ-որ խնջույք... Եվ ինչի համար ես էդպես ուրախացել:

— Սպասի՛ր, Գոլդա,— ասում եմ,— ամեն ինչ կիմանաս: Դու ինքնաեռը փայտ գցիր, բոլորով միասին սեղան նստենք, մի-մի բաժակ թեյ խմենք, ինչպես կարգն է: Մարդս թաք մի անգամ է աշխարհ գալիս, ոչ թե երկու: Նամանավանդ հիմա, երբ ունենք սեփական կով, որն օրական քսանչորս չափ կաթ է տալիս, վաղը կամոքն աստծո, կբերեմ: Ահա՛, Գոլդա, ասում եմ ես ու գրպաններիցս դուրս թափում թղթադրամները:— Ահա, փորձիր գուշակել, թե որքան փող ունենք:

Ես նայեցի կնկանս — կանգնել է սփրթնած, մեռելի նման, լեզուն պապանձվել է, մի խոսք անգամ չի կարողանում ասել:

— Աստվա՛ծ քեզ հետ, Գոլդա, սրտիս հատոր, ասում եմ ես, ինչի՞ վախեցար: Չլինի թե կարծում ես այդ փողերը գողացել եմ կամ թալանել: Թո՛ւ: Դու իսկի ամոթ ունե՞ս: Ինչքա՞ն ժամանակ կլինի, որ իմ կնիկն ես: Մի՞ թե դու կարող ես իմ մասին այդպիսի բան մտածել: Հիմա՛ր, ախր այդ փողերը

ազնվորեն վաստակած փողեր են, որ ձեռք են բերված իմ սեփական խելքով ու աշխատանքով: Ես, ասում եմ, երկու մարդ եմ փրկել մեծ վտանգից: Եթե ես չլինեի, աստված գիտի, թե ինչ կպատահեր նրանց:

Մի խոսքով, սկզբից մինչև վերջ պատմեցի ամբողջ պատմությունը և սկսեցինք հաշվել փողերը, հաշվել ու նորից հաշվել: Ստույգ հաշվով ստացվեց երկու անգամ տասնութ⁷ և մեկն էլ ավելի: Ընդամենը դուք ունեք ոչ ավելի, ոչ պակաս, քան երեսունյոթ ռուբլի...

Կնիկս նույնիսկ լաց եղավ:

— Ինչո՞ւ ես լալիս, հիմա՞ր կնիկ:

— Բա ինչ անեմ, որ լաց չլինեմ,— պատասխանում է,— երբ լացս գալիս է: Միբոլս լցվել է, աչքերս շաղվել: Մեռնե՛մ ասածու գործությանը, ասում է, ես զգում էի, որ դու այսօր մի բարի լուր կբերես: Ես չեմ հիշում, որ երբևէ Ցեյտլ տատիս, աստված ոսկորներիս հանգստություն տա, երազում տեսած լինեմ: Քնած եմ ու հանկարծ տեսնում եմ՝ մի կովկիթ թափեթափ կաթ: Ցեյտլ տատս, աստված հոգին լուսավորի, կովկիթը գոգնոցով ծածկած բերում է, որ աչքով չտան, իսկ երեխեքը գոռում են. «Մայրիկ, մոնի՛»:

— Դու կաց, հոգիս, մի շտապիր, մի՛ վազիր առաջ,— ասում եմ ես:— Ցեյտլ տատը թող իրեն համար դրախտումը քեֆ քաշի, դրանից մեզ որևէ օգուտ կլինի՞, չգիտեմ: Բայց եթե տեր աստված կարողանա մի այնպիսի հրաշք կատարել, որ մենք կով ունենանք, արդեն՝ հավանաբար ինքն էլ հենց կջանա, որպեսզի այդ կովը կարգին կով լինի: Դու ավելի լավ է, Գոլդա, սրտիս հատոր, խորհուրդ տաս, թե այս փողերը ի՞նչ անենք:

— Ավելի լավ է դու ասես, Տեյլե, ի՞նչ ես մտադիր անել այսքան փողով:

— Ո՛չ,— ասում եմ ես,— դու ասա. ի՞նչ ես կարծում, մենք ի՞նչ կարող ենք անել այսքան կապիտալով:

Եվ մենք սկսեցինք մտածել ամեն ձևով՝ այսպես այնպես, երկար ու բարակ գլուխ ցավեցնել, դնել ու վերցնել աշխարհում եղած փեշակները: Եվ մենք ինչո՞վ միայն չգրադվեցինք այդ գիշեր: Գնեցինք երկու գույգ ձի և տեղնուտեղը վաճառեցինք թանկ գնով: Բոյբերիկում գնեցինք նպարեղենի խանութ, կարճ ժամանակում ծախծխեցինք ամբողջ ապրանքը և իսկույն նեթ բացեցինք կտորեղենի խանութ: Գնում ենք անտառ, որպեսզի մեր մրցակցից փող պոկենք, ու հեռանանք: Փորձում ենք Անատովկայում կապալով վերցնել մսի հարկը⁸, փող ենք տալիս շահով...

— Խելքդ գցե՞լ ես ինչ է,— զայրանում է կնիկս:— Ուզում ես ամբողջ փողը քոռուփուչ անել ու դատարկ նստել քո մի թաք մտրակո՞վ:

— Իսկ դու կարծում ես հացահատիկի առևտուր անելն ու հետո կտոր ընկնելը դրանից լա՞վ է: Քի՞չ մարդ կա,— ասում եմ,— որ ցորենի առևտրից սնանկացել է: Գնա մի լսիր, թե ի՞նչ է կատարվում Օդեսայում:

⁷ Տասնութ թիվը և նրա բազմապատիկները ըստ հրեական ժող. հավատալիքի համարվում են երջանիկ թվեր, այնքանով, որքանով որ հին հրեական «կյանք» բառի տառերի քանակը հավասար է տասնութի:

⁸ Հատուկ հարկ «կոշիդյան» մսի համար՝ (այսինքն՝ այն անասունի կամ թռչունի միսը, որը հատուկ մորթված և պատրաստված է ըստ հրեական հավատի (ցարիզմի օրոք այդ հարկը տրվում էր կապալով, կապալառուն դա զանձում էր հրեա բնակչությունից, որից հատկապես տուժում էին չքավորները):

— Շա՛տ պետքս է քո Օդեսան,— պատասխանում է նա,— ոչ իմ պապերս, ոչ էլ ապուպապերս ոտք չեն դրել Օդեսա, և իմ երեխեքն էլ ոտք չեն դնի, քանի որջ եմ ու շունչ կա փորումս:

— Հապա ի՞նչ ես ուզում,— հարցնում եմ ես:

— Ինչ եմ ուզո՞ւմ,— ասում է նա,— ես ուզում եմ, որ դմբո չլինես ու հիմար բաներ դուրս չտաս:

— Դե՛, իհարկե,— պատասխանում եմ ես:— Հիմա խելքի տոպրակ ես... Ո՛վ որ հարյուր ռուբլի ունի, նա ամենքից խելացի է: Հարստությունը հալա նոր է ձեռքներս անցել, և արդեն աշխարհի մեջ սրանից խելացի չկա... Միշտ էլ այսպես է լինում:

Կարճ ասած, մենք մի քանի անգամ կովեցիներ ու հաշտվեցիներ և որոշեցիներ վերջապես, այն գորշ կովին, որ ինձ խոստացել էին, մի կով էլ ավելացնել, այսինքն՝ մի կթու կով էլ գնել:

Դուք, իհարկե, կհարցնեք — իսկ ինչո՞ւ կով և ոչ ձի: Դրան ես կարող եմ պատասխանել — իսկ ինչո՞ւ ձի, և ոչ կով: Բոյբերիկը, հասկանո՞ւմ եք, մի այնպիսի տեղ է, որտեղ ամառը գալիս են Եգուպեցի բոլոր հարուստները, որքանով որ նրանք՝ Եգուպեցի հարուստները, մանկությունից վարժված են, որպեսզի միսը, ձուն, հավը, սոխը, պղպեղը և ամեն ինչ ու ամեն բան հենց ուղղակի նրանց բերանը տանեն ինչո՞ւ, ուրեմն, որն է մեկն էլ նրանց սեղանին պանիր, թթվասեր, յուղ և նման բաներ չմատակարարի: Եգուպեցիները սիրում են ուտել, իսկ փողն էլ նրանց համար՝ հեչ, ոնց որ զիրիլ, նշանակում է, կարելի է ապրանքը հեշտությամբ վաճառել և լավ էլ վաստակել: Գլխավորն այն է, որ ապրանքը ապրանք լինի: Իսկ այնպիսի ապրանք, ինչպիսին իմն է, դուք Եգուպեցումն էլ անգամ չեք ճարի: Թող աստված ինձ՝ ձեզ հետ միասին, այնքա՛ն երջանկություն տա, քանի անգամ որ շատ ու շատ պատվավոր պարոններ, նույնիսկ քրիստոնյաներից, խնդրել են ինձ, որ իրենց համար թարմ մթերք տանեմ:

«Մենք, ասում են նրանք, լսել ենք, որ դու, Տեվյե, ազնիվ մարդ ես, չնայած քրիստոնյա չես...»:

Կարծում ես, թե յուրայիններիցդ կլսե՞ս այդպիսի հաճոյախոսություն: Թեկուզ ինչ էլ լինի, նրանցից մի բարի խոսք անգամ չես լսի: Նրանք միայն մի բան գիտեն, քթները խոթեն այնտեղ, որտեղ իսկի պետք չէ: Տեվյեի մոտ կով տեսան, տեսան նոր սայլ և սկսեցին գլուխները ջարդել, թե որտեղի՞ց է: Արդյոք այդ Տեվյեն կեղծ դրամների առևտուր չի՞ անում: Արդյոք թաքուն սպիրտ չի՞ եփում: Հա՛, հա՛, հա՛: Ջարդեցե՛ք գլուխներդ, անուշ լինի: Կհավատա՞ք, որ ասեմ, դուք համարյա առաջին մարդն եք, որին մանրամասն պատմեցի այդ ամբողջ պատմությունը...

Բայց ինձ թվում է, որ շատ խոսեցի: Խստապահանջ մի լինեք: Պետք է գործի մասին էլ մտածել: Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Ամենայն հավք զհետ իւրոյ երամին», այսինքն՝ թող ամեն մարդ իր գործով զբաղվի: Դուք՝ ձեր գրքերով, ես էլ իմ կճուճներով ու պուտուկներով... Միայն մի բան եմ ուզում ձեզանից խնդրել, պանե Շոլոմ-Ալեյխեմ, որ իմ մասին գրքերում չգրեք: Իսկ եթե գրեք, գոնե անունս չնշեք:

Ողջ և առողջ եղեք, ցանկանում եմ ձեզ ամենայն հաջողություններ:

1895

ՔԻՄԵՌԸ

«Բազում խորհուրդք են ի սրտի մարդոյ», այսպես է կարծեմ ասված սուրբ գրքում: Բացատրել ձեզ, ոեք Շոլոմ-Ալեյխեմ, թե այդ ինչ է նշանակում, կարծես թե կարիք չկա: Բայց մենք մի առած ունենք.

«Արագավազ ձիուն էլ է մտրակ հարկավոր և իմաստուն մարդուն էլ խրատ է պետք»։ Ո՛ւմ մասին եմ այդ ասում։ Հենց իմ մասին, եթե ես մի քիչ ավելի խելացի լինեի, կգնայի մի բարեկամի մոտ, կպատմեի նրան ամեն ինչ, ինչպես որ էր, և, իհարկե, այսպես հիմարաբար չէի խրվի։ Բայց թե «Կյանքն էլ, մահն էլ լեզվից է կախված», այսինքն՝ եթե աստված ցանկանում է պատժել մարդուն, նրան նախ և առաջ խելքից է զրկում։ Այս էլ քանի-քանի անգամ միտք եմ անում ինքս ինձ. խելքիդ տուր, Տեվյե, ա՛յ էջի գլուխ։ Ախր դու, ասում եմ, սարսաղ մարդ չես, այդ ո՞նց եղավ, որ թույլ տվեցիր քեզ մատների վրա խաղացնեն։ Եվ այն էլ այնպե՛ս հիմարաբար։ Քեզ ի՞նչ կպակասեր, օրինակի համար, հիմա՝ այժմյան թեկուզ ոչ մեծ վաստակիդ դեպքում։ Չե՞ որ քո կաթնամթերքը անուն ունի ամեն տեղ և ամենուր՝ և Բոյբերիկում, և Եգուպեցում, և որտեղ որ ուզես... Ինչքա՛ն լավ և բերկրալի կլինեիր, եթե քո փողերը սուսուփուս վեր ընկած մնային սնդուկում, ամենախոր տեղում, և ոչ ոք չիմանար այդ մասին։ Որովհետև, ասացեք խնդրեմ, ում ինչ գործն է, թե Տեվյեն փող ունի՞, թե չունի։ Իսկապես ասած, ինչ է, շա՛տ էին հետաքրքրվում այդ նույն Տեվյեով, երբ նա քարշ էր գալիս հողոց ու մոխրոց, երբ տանջվում էր, տրորվում, երբ կնոջ ու երեխեքի հետ օրական երեք անգամ սովից մեռնում էր, չհաշված ընթրիքին։ Այդ հետո՞, երբ տեր աստված աչքը գցեց իր Տեվյեին, հանկարծ երջանկացրեց, ու Տեվյեն մի կերպ իրեն վրա հավաքեց և մի երկու արծաթ ռուբլիանոց ետ գցեց սև օրվա համար, նրա մասին ամեն տեղ և ամենուր սկսեցին խոսել, ու նա դարձավ արդեն «ռեբ Տեվյե» — հանա՞ք բան է։ Եվ թե ինչքա՛ն բարեկամներ լույս ընկան՝ թիվ ու համար չկա։ Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Ամենեքեան սիրելիք են, ամենեքեան մաքուրք...», մի խոսքով, «Տերը թե գոյալով է տալիս, մարդիկ տակառներով են վրա վազում...»։ Ամեն մեկը մի խորհրդով մեջ է ընկնում, մեկը առաջարկում է կտորեղենի կրպակ, մեկը՝ նպարեղենի, մյուսը տուն է առաջարկում, երկրորդը՝ կավվածք, երրորդը՝ անտառ, հացահատիկ կամ թե աճուրդով առևտուր...

— Եղբա՛յր,— աղաչում եմ ես,— հեռու կացեք ինձանից։ Դուք չարաչար սխալվում եք։ Դուք, միգուցե, կարծում եք, թե ես Բրողսկի եմ։ Տա՛ր աստված, որ մենք բոլորս ունենայինք այնքան, որքան ինձ պակասում է ունենալու երեք հարյուր, նույնիսկ երկու հարյուր, և նույնիսկ հարյուր հիսուն։ Ուրիշի ունեցվածքին նայելիս, ասում եմ, մարդու աչքերը պեծին են տալիս։ Բոլորին էլ թվում է, թե մյուսի մոտ ոսկի է շափաղ տալիս, բայց մոտ է գնում, տեսնում է՝ պղնձե կոճակ է։

Կարճ ասած, իրենց արածն արեցին, աչքով տվեցին, ա՛յ տեսնեմ դրանք ոչուփուչ լինեն, աստված ինձ մի փորձանք ազգական ուղարկեց, հա՛, այն էլ ասեմ, որ այդ ազգականը այնքանով էր ազգական, որքանով որ, ամոթ է ասել, մեր շունը նրանց բազուկի մարգում էնիք էր արել... Մենախեմ-Մենդլ էին ասում, քամի կուլ տվող, անասելի փչան, խառնակիչ, սատանան գիտի թե ինչ։ Օձիքիցս բռնեց ու գլուխս տարավ ցնորքներով, փչոցներով, օճառի պղպջակներով։ Դուք հավանաբար կհարցնեք. ո՞նց թե, ես Տեվյեն լինեմ ու Մենախեմ-Մենդլի ծուղա՞կը ընկնեմ։ Դրան ես կպատասխանեմ — այդպես էր երևի վիճակված։ Ապա լսեցեք։

Մեկ անգամ, ինչպես պատահեց, ձմռան մոտերքը գնացի Եգուպեց, հետս էլ մի քիչ ապրանք տարա, այդպես քսան ֆնտից վայ թե ավել կլինեիր, թարմ յուղ, ի՛նչ յուղ, մի երկու կարգին պարկ շոռ, ոսկի՛, ոչ թե շոռ, աստված մեզ երկուսիս այդպիսի կյանք տա։ Դե, դուք ինքներդ էլ եք հասկանում, որ իմ ապրանքը հենց տեղնուտեղը թոցրին, մի փշրանք էլ չթողեցին։ Ես դեռ չէի էլ հասցրել լինելու իմ ամառային բոլոր հաճախորդների՝ Բոյբերիկ եկող ամառանոցավորների մոտ, որոնք իմ գալուն սպասում էին այնպես, ինչպես մեսիայի գալուն։ Այո՛, և զարմանալու բան չկա։ Մի՞թե Եգուպեցի վաճառականները, թեկուզ պայթեն էլ, կարող են այդպիսի ապրանք տալ։ Դե, ինչ ասեմ ձեզ, դուք լավ գիտեք։ Ինչպես մարգարեն է ասում՝ «Թող այլք գովեն զքեզ», — լավ ապրանքը գովելու կարիք չունի...

Մի խոսքով, մաքուր ծախեցի վերջացրի ամեն ինչ, ձիուն խոտ գցեցի և գնացի քաղաքում ման գալու: «Մարդ արարեալ է ի հողոյ», բոլորս ժողովուրդ ենք, բոլորս մարդ ենք, ուզում ես նայել աստծու աշխարհին, օդ շնչես, հիանաս հրաշքներով, որ Եզուպեցը ցուցադրում է խանութների լուսամուտներում, կարծես ասելով, նայելը՝ նայիր ինչքան սիրտդ ուզում է, բայց ձեռք չտաս — չհամարձակվես: Եվ ահա կանգնած եմ ես մի մեծ պատուհանի առջև, որի ետևում դասավորված են կիսաիմպերիալներ, արծաթե ռուբլիանոցներ, բանկային տոմսեր և պարզապես ասիգնացիաներ, նայում եմ ու մտածում. «Տե՛ր իմ աստված: Երանի ունենայի տասներորդը այն ամենի, ինչ գտնվում է այստեղ, էլ ի՞նչ կուզեի: Եվ ո՞վ կարող էր ինձ հետ համեմատվել: Նախ և առաջ մեծ աղջկա սկսակերի, հինգ հարյուր ռուբլի էլ օժիտ կտայի, հաշված նվերները, հագուստեղենն ու հարսանեկան ծախսերը. ձիս ու սայլը կծախեի, կովերն էլ հետը, կտեղափոխվեի քաղաք, սինագոգում մշտական տեղ կգտնեի արևելյան պատի մոտ, կնոջս համար էլ, աստված նրան առողջություն տա, մի շար մարգարիտ կառնեի, աղքատներին փող կբաժանեի՝ ինչպես կաներ կայքի ու գույքի տեր ունևոր մարդը. սինագոգը թիթեղապատել կտայի, որ կտուրը ծակ չմնար ինչպես հիմա է, երբ նայում ես, ասում ես, ուր որ է փուլ կգա. երեխանց համար մի որևէ վարժարան շինել կտայի, աղքատների համար հիվանդանոց կբանայի, ինչպես որ գոյություն ունի ամեն մի կարգին քաղաքում, որպեսզի աղքատները սինագոգի դատարկ հատակին քարշ չգային: Սրիկա Յանկլին էլ դուրս կանեի թաղման ընկերությունից, հերիք է, ինչքան հասարակության փողերով օղի կոնծեց ու տոժժիկ կերավ...»:

— Խաղաղություն՝ և՛ ձեզ, ո՛րք Տեվլե,— լսում եմ հանկարծ ետևիցս:— Ո՞նց եք, ո՞նց չեք:

Թեքվում եմ ու նայում. երդում կուտեմ, ինչ-որ ծանոթ է:

— Բարև ձեզ,— պատասխանում եմ,— որտեղի՞ց եք:

— Որտեղի՞ց: Կասրիլովկայից: Ձեր ազգականն եմ,— ասում է:— Ճիշտ է, ոչ այնքան մոտիկ. ձեր կինը՝ Գուլդան, ինձ մորաքրոջ աղջիկ է գալիս չորրորդ պորտից, այսինքն՝ տատիս տատի հալալ թոռն է:

— Թույլ տվեք,— ասում եմ ես:— Դուք միգուցե Բորուխ-Գերշի փեսան եք, Լեյա-Դվոսյայի ամուսնու:

— Կարծես թե գուշակեցիք,— պատասխանում է նա:— Ես Լեյա-Դվոսյայի Բորուխ-Գերշի փեսան եմ, իմ կնոջ անունը Շեինե-Շեինդլ է, որը Լեյա-Դվոսյայի Բորուխ-Գերշի աղջիկն է: Հիմա ձեզ համար պա՞րզ է:

— Սպասեցե՛ք,— ասում եմ ես:— Ձեր գոքանչի տատը՝ Սորե-Ենտան, և իմ կնոջ մորաքույրը՝ Ֆրումե-Ջլատան, որպես թե հալալ հորեղբոր աղջիկներ են եղել, իսկ դուք, եթե չեմ սխալվում, ամուսնացած եք Բորուխ-Գերշի, այսինքն Լեյա-Դվոսյայի ամուսնու միջնեկ աղջկա հետ: Բայց բանը նրանումն է, որ մոռացել եմ, թե ձեզ ինչպես են անվանում, ձեր անունը թե՛լ է մտքիցս: Ձեր իսկական անունն ի՞նչ է:

— Ինձ,— պատասխանում է նա,— անվանում են Մենախեմ-Մենդլ, Լեյա-Դվոսյայի ամուսնու՝ Բորուխ-Գերշի փեսա, ինձ այդպես են անվանում տանը, Կասրիլովկայում:

— Այդ դեպքում Մենախեմ-Մենդլ, թանկագինդ իմ,— ասում եմ ես նրան,— քեզ հատուկ պատիվ է վիճակվել: Ասա՛ ինձ, թանկագին Մենախեմ-Մենդլ, ի՞նչ ես անում այստեղ, ինչպե՞ս են ապրում քո աներն ու գոքանչը: Ինչպե՞ս են գործերդ, ինչպե՞ս է առողջությունդ:

— Է՛,— պատասխանում է նա,— առողջությունիցս, փառք ասածու, գանգատավոր չենք, ապրում ենք կամաց-կամաց: Բայց ա՛յ, ինչ վերաբերում է գործերիս, ուրախ բան չեմ կարող ասել:

— Աստված ողորմա՛ծ է,— ասում եմ ես ու նայում նրա հագուստին. հալ չկա վրան, իսկ ոտնամանները, ներեցեք, բերանները բաց արած՝ շիլա են խնդրում...— Դե, ոչինչ: Աստված մեծ է: Գործերդ, պետք է կարծել, կարգի կգան, ջուրդ ճամփա կընկնի: Գիտես ինչ, ասում է՝ «Ունայնություն ունայնութեանց», փողերը կլոր են, հիմա այնտեղ են, վաղը՝ այստեղ, միայն թե ողջություն լինի: Իսկ գլխավորը՝ հույսն է: Պետք է հուսալ: Իսկ այն, որ վիճակված է լինում դառնության բաժակից ըմպել, ախր հենց դրա համար էլ հրեան գոյություն ունի: Ինչպես ասում են՝ «Եթե զինվոր ես, դե ուրեմն վառողի հոտն էլ քաշիր»: Իսկ ընդհանրապես, ասում եմ, մեր ամբողջ կյանքը երազ է... Դու, Մենախեմ-Մենդլ, հոգիս, ավելի լավ է՝ պատմես, թե այդ ոնց եղավ, որ հանկարծ հայտնվեցիր Եգուպեցում:

— Ի՞նչ է նշանակում «հայտնվեցիր»,— պատասխանում է նա:— Արդեն մեկուկես տարի է, ինչ այստեղ սուսիկ-փուսիկ տափ եմ արել...

— Այ թե ի՛նչ,— ասում եմ ես:— Ասել կուզի դու տեղացի ես, Եգուպեցի բնակիչ:

— Սը՛ս,— ֆշտացրեց նա՝ չորս կողմը նայելով:— Այդպես բարձր մի խոսեք, ռեբ Տեվյե: Տեղացին՝ տեղացի եմ, բայց դա մնա մեր մեջ...

Կանգնել ու նայում եմ դրան, ոնց որ կնայեն մի կիսախելագարի:

— Այդ ի՞նչ բան է,— հարցնում եմ:— Դու փախստակա՞ն ես: Թաքնվում ես Եգուպեցում, շուկայի մեջ:

— Մի հարցնեք,— ասում է նա,— ռեբ Տեվյե: Այդ ամենը ճիշտ է, դուք երևի չգիտեք Եգուպեցի կարգերն ու օրենքները... Գնա՛նք,— առաջարկում է նա,— և ես ձեզ կպատմեմ թե ինչ է նշանակում լինել տեղացի և միևնույն ժամանակ՝ ոչ-տեղացի...

Ու նա ինձ մի երկար-բարակ պատմություն արավ, թե ոնց են մարդիկ այստեղ չարչարվում...

— Ինձ լսիր, Մենախեմ-Մենդլ,— ասում եմ ես:— Արի մեկ օրով գնանք գյուղ, ինձ մոտ: Կհանգստանաս, ոսկորներդ կդինջանան: Մեզ հյուր կլինես և այն էլ ցանկալի հյուր: Պառավա շատ կուրախանա:

— Մի խոսքով, համոզեցի. գնում ենք: Հասանք տուն — ի՛նչ ուրախություն: Հյուր է եկել: Այն էլ ի՛նչ հյուր: Հալալ մորաքրոջ թոռը՝ չորրորդ պորտից: Հանաք բան հո չի՞: Քոնն է, օտար չի: Եվ սկսվեց խոսք ու զրույցը. ինչ կա չկա Կասրիլովկայում, ոնց է քեռի Բորուխ-Գերշը: Ոնց է մորաքույր Լեյա-Դվոյան, քեռի Յոսլ-Մենաշեն: Ինչ է անում մորաքույր Դոբրիշը: Ոնց են նրանց երեխեքը: Ով է մեռել: Ով է պսակվել: Ով է բաժանվել: Ում ինչ է ծնվել, ում կնիկն է երեխով:

— Ախր ինչ բան ունես, այ կնիկ,— ասում եմ,— ուրիշի հարսանիքների ու ծնունդների հետ: Դու ավելի լավ կանես, մի բան բերես ուտենք: «Ամենայն սովյալք գացցեն...»: Թե որ փորս անոթի է, խաղն ու պարը ինչի՞ս պետքն է: Եթե կաղամբապուր կա, շատ լավ, եթե չկա, կաթնահունցն էլ վատ չի, կամ թե շոռով կարկանդակ՝ յոտը վրան լցրած, կամ հենց բլիթը, կամ նազուքը... Ինչքան կարող ես շատ բեր, մենակ թե շուտ բեր:

Կարճ ասած, ձեռքներս լվացինք ու առք-փառք, ինչպես կարգն էր կերանք:

— Կե՛ր, Մենախեմ-Մենդլ,— ասում եմ ես,— քանզի աշխարհս անցավոր է, «Ունայնութիւն ունայնութեանց», ինչպէս ասել է Դավիթ թագավորը⁹, աշխարհում ճշմարտություն չկա, կեղծիքից բացի: Իսկ առողջությունդ, ասում էր իմ Նեխամա տատը, որ խելքով կնիկ էր, աստված հոգին լուսավորի, առողջությունդ էլ, բավականությունդ էլ, ասում էր, ամանիդ միջին ման արի...

Հյուրս, որի ձեռքերը նույնիսկ դողում էին, մի գլուխ գովում էր կնոջս շնորհքը և երդվում, որ նույնիսկ չի էլ հիշում, թե մեկ էլ երբ է կերել այդպիսի հրաշալի կաթնապուր, այդպիսի համեղ կարկանդակներ ու կաթնահունց:

— Հիմար բաներ ես ասում,— պատասխանում եմ ես,— եթե ուտեիր նրա արիշտայով ապուրը, կարտոֆիլով կամ բրնձով կարկանդակը, այն ժամանակ կիմանայիր, թե ինչ բան է դրախտը՝ երկրի վրա:

— Եվ այդպէս, կերանք, աղոթք արեցինք և զրուցեցինք ամեն մեկս ինչպէս ընդունված է, ես իմ գործերից, նա՝ իր գործերից: Ես սրա մասին, նրա մասին, հինգերորդի, տասներորդի, իսկ նա՝ Օդեսայից, Եգուպեցից, այն մասին, որ ինքը արդեն մի տասը անգամ եղել է «և ձիու վրա և ձիու ոտների տակ», այսօր հարուստ, վաղը՝ աղքատ. հետո նորից փողատեր, հետո նորից քոռ ու փոշման դատարկ նստած... Զբաղվել էր այնպիսի տարօրինակ, խելքից ու մտքից հեռու գործերով, որ կյանքումս լսած չկայի, ինչ-որ՝ «գոս» և «բես», «ակցիա-շմակցիա»: «Պոտիվիլով», «Մալցև-Շմալցև», աստված գիտի թե ինչ: Իսկ հաշիվը թե ինչպիսի խելագար գումարների էր հասնում — տասը հազար, քսան հազար... Փողը ոնց որ տաշեղ:

— Ես քեզ ճիշտն ասեմ, Մենախեմ-Մենդլ,— ասում եմ ես նրան,— այն, ինչ դու պատմում ես քո այդ չտեսնված գործերի մասին, դա, իհարկե, ճարպկություն է պահանջում և հունար... Բայց մի բան լավ չեմ հասկանում. այնքանով, որքանով որ գիտեմ քո կնոջը, ինձ խիստ զարմացնում է, թե նա ոնց է թույլ տալիս քեզ այդպէս թրև գալ, և ոնց է որ ավելին հեծած չի վագում քեզ մոտ...

— Ա՛խ,— պատասխանում է նա թառանչ քաշելով:— Այդ մասին, ռեբ Տեվյե, լավ է չհիշեցնեք ինձ... Հենց այսպէս էլ նրա ձեռքից քիչ տառապանք չեմ քաշում... այնպէս որ, երբ հիշում եմ՝ մեկ դող է գալիս վրաս, մեկ՝ տաքություն... Եթե լսեիք, թե նա ինձ ինչե՛ր է գրում, դուք ինքներդ կասեիք, որ ես ճշմարիտ եմ: Բայց այդ բոլորը հեչ բան է, դեկնիկարմատն էլ հենց դրա համար է, որ մարդուն գերեզման քշի: Դրանից դժվար բաներ էլ կան: Բացի կնոջիցս, ախար ես դեռ զոքանչ էլ ունեմ: Նրա մասին կարիք չկա, որ պատմեմ: Դուք ինքներդ էլ նրան գիտեք:

— Մի խոսքով,— ավելացնում եմ ես,— ինչպէս ասում են՝ ամեն տեսակիցն էլ ունես. «Եվ խալավոր, և զովավոր, և չալպտորիկ...», խոցը խոցի վրա, իսկ դրանից վերն՝ թարախի փուչիկ:

— Միանգամայն ճիշտ է, ռեբ Տեվյե: Դուք այդ չափազանց ուղիղ ասացիք: Խոցը խոց է, բայց թարախի փուչիկը ամեն տեսակի խոցից էլ վատթար է:

Մի խոսքով, լեզվներիս ենք տալիս այսպէս մինչև ուշ գիշեր: Գլուխս սկսեց պտտվել այդ բոլոր տեսակի պատմություններից ու խենթ ու խելառ գործերից, այդ հազարներից, որ մեկ թռչում են վեր, մեկ տապալվում՝ ցած, շշմեցի՝ Բրոդսկուն վայել հեքիաթային հարստությունից... Դրանից հետո այդ ամբողջ գիշերը երագումս երևում էին Եգուպեցի կիսաիմպերիալներ, Բրոդսկին, Մենախեմ-Մենդլը իր զոքանչի հետ... Եվ միայն հաջորդ առավոտյան, վերջապէս, ամեն ինչ պատմեց, ինչ որ մտքում կար: Բանն ինչո՞ւմն է:

⁹ Այս ասացվածքը վերցված է աստվածաշնչից և ոչ մի առնչություն չունի Դավիթ թագավորի հետ: Տեվյեն հիշատակում է Դավիթ թագավորին իր ասածը հեղինակավոր դարձնելու համար:

— Այնքանով, որքանով որ,— ասում է նա,— փողը հիմա մեզ մոտ, Եզուպեցում ոսկուն հավասար է, իսկ ապրանքը թռել է ցած, ապա դուք, ռեֆ Տեվյե, կարող եք ներկա դեպքում մի ահագին գումարի տեր դառնալ, իսկ ինձ էլ շատ օգնած կլինեիք, ուղղակի մեռած տեղից հարություն կտայիք:

— Տղավարի ես դատում,— պատասխանում եմ ես:— Դու կարծում ես Եզուպեցի փողերն ու կիսահիմարիալները ի՞նչ մոտ են: Մարսա՛դ: Տա աստված, որ ես և դու մինչև գատիկ այնքան վաստակենք, որքան իմ ունեցածը պակասում է Բրոդսկու ունեցածից:

— Դե, իհարկե, ես ինքս էլ եմ հասկանում... Բայց դուք կարծում եք դրա համար մե՞ծ փողեր են հարկավոր: Տվեք ինձ մի հարյուրանոց, և ես նրանից երեք-չորս օրվա ընթացքում ձեզ համար կդարձնեմ երկո՛ւ հարյուր, երե՛ք հարյուր վե՛ց հարյուր, յո՛թ հարյուր, և ինչու ոչ հազա՛ր...

— Շատ էլ հնարավոր է,— ասում եմ ես,— որ հենցայնպես ստացվի, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Օգուտն ընդ ձեռամբ իմով, այլ գրպանն իմ յայն կոյս գետոյն...»: Այդ բոլորը լավ է, եթե գործի մեջ դնելու մի բան ունեն: Իսկ ի՞նչ անել, երբ թեկուզ մի հարյուր էլ չունեն: Եվ ահա ստացվում է այն, որ «Ձոր միայն ինքն եկ և ինքն միայն գացցե՛», այլ կերպ ասած, մրից կելնենք, մրջուրը կընկնենք...

— Թողեք, ռեֆ Տեվյե,— ասում է նա,— հարյուր ռուբլի ձեզ մոտ կգտնվի: Ձեր վաստակով, ձեր բարի անունով, աչքով չտամ...

— Իսկ ի՞նչ օգուտ անունից,— ասում եմ ես,— անունը, իհարկե, լավ բան է, բայց փոր չի կշտացնի, ցավոք սրտի, անունն իմն է, փողերը՝ Բրոդսկունը... Եթե կուզես ճիշտը իմանալ, իմ ունեցած-չունեցածը հազիվ թե հարյուրի հասնի և այն էլ ասեմ, որ տանը հազար ծակուծուկ կա, որ դրանով պիտի հոգամ. նախ և առաջ աղջկաս պիտի մարդու տամ...

— Հենց խոսքն էլ այդ մասին է,— ընդհատում է նա ինձ,— ռեֆ Տեվյե, ախար մի մտածիր, էլ ե՞րբ կպատահի այդպիսի մի առիթ, որ դուք գործի մեջ դնեք միայն և միայն հարյուր, և ստանաք, կամոքն ասածո այնքան, որ կարողանայիք աղջիկներիդ մարդու տալ և դեռ մի բան էլ մնար:

Եվ նորից սկսեց չաչանակի նման խոսել ու խոսել երկար ու բարակ, գնա քեզ՝ ուղիղ երեք ժամ: Նա սկսեց ինձ բացատրել, թե ինչպես մի ռուբլուց ստանում են երեք, երեքից՝ տասը: Նախ և առաջ, ասում է նա, տալիս են հարյուր ռուբլի և պատվիրում են առնել տասը հատ... Ես արդեն մոռացել եմ, թե դա ինչպես էր կոչվում, հետո սպասում են մի քանի օր, մինչև որ այդ բանը թանկանում է... Այդ ժամանակ ինչ-որ տեղ հեռագիր են տալիս և կարգադրում են վաճառել, իսկ դրանից ստացված գումարով՝ գնել երկու անգամ շատ... Հետո դրա գինը նորից է բարձրանում և նորից են հեռագիր տալիս, և այդպես այնքան ժամանակ, մինչև որ մեկ հարյուրը չի դառնում երկու, երկուսը՝ չորս, չորսը՝ ութ, իսկ ութը՝ տասնվեց: Հրաշք, ուրիշ ոչինչ: Նա ասում էր, որպես թե Եզուպեցում այնպիսիներին է տեսել, որոնք հենց վերջերս ոտաբոքիկ էին ման գալիս, դրանք միջնորդներ էին, ծառաներ, որոնց դեսուդեն էին վազացնում... Իսկ հիմանրանք սեփական տներ ունեն, քարաշեն պալատներ, կնանիքին էլ արտասահմաններն են ուղարկում բուժվելու, փորները մաշեցնելու... Իսկ իրենք Եզուպեցում ռետինե ակների վրայից չեն իջնում, ոչ ոքի բանի տեղ չեն դնում, ոչ ոքի ճանաչել չեն ուզում:

Մի խոսքով, էլ ինչ երկարացնեմ, խելքս մտավ, և այն էլ հաստատապես: Մտածում եմ՝ աշխարհում ինչ ասես, որ չի կատարվում: Ով գիտե, գուցե հենց ճակատագիրն է ինձ մոտ ուղարկել սրան: Ախր, ահա ամեն օր լսում եմ, թե ինչպես են մարդիկ Եզուպեցում իրենց հինգ մատների օգնությամբ հարստանում: Ես ինչո՞ւ եմ նրանցից վատ: Մենախեմ-Մենդլը ոնց որ թե սուտասան չի, հո իրենից

չի՞ հնարում այդ հրաշքները: Եվ ո՞վ է իմանում, մտածում եմ ես, իսկապես՝ բախտի անիվը հանկարծ դեպի աջ պտտվի, և Տեվյեն օր ծերության մարդամեջ դուրս գա: Եվ իսկապես, մինչև ե՞րբ տանջվես, հալումա՞շ լինես: Գիշեր ու ցերեկ էլ ուրիշ բան չգիտես, ձի ու սայլ, յուղ ու պանիր... Քեզ եմ ասում, ժամանակն է, որ դու էլ հանգստանաս, մարդավարի ապրես, ուրիշներից ետ չմնաս, շուտ-շուտ գնաս սինագոգ, ձեռքդ առնես սուրբ գիրքն ու նստես... Այդ ամենը շա՛տ լավ, իսկ ինչ կանես, եթե մի որևէ բան պատահի և, ինչպես ասում են, այդ բոլորը ուրիշ կողմ շրջվի, գլխավայր ընկնի ոնց որ քարը: Բայց և այնպես, ինչու չհուսալ, որ ամեն ինչ բարեհաջող կլինի:

— Իսկ դու ինչ կասես, Գուդա, հավանո՞ւմ ես նրա ծրագիրը:

— Ի՞նչ կարող եմ ասել,— պատասխանում է նա:— Ես գիտեմ, որ Մենախեմ-Մենդլը պատահական մարդ չի և քեզ չի խաբի: Նա, աստված մի արասցե, ոչ դերձակներից է, ոչ էլ կոշկակարներից: Նա շատ պատվավոր հոր զավակ է, և պապն էլ նույնպես սուրբ կյանք էր վարում. գիշեր ու ցերեկ կույր տեղով, գրքերն առած նստում էր: Իսկ Ցեյտլ տատը հանգիստ նրա ոսկերացը, նա էլ հասարակ կնիկ չէր...

— Լեզվին տալը սկսե՞ց, ախր քո ասածը ոչ գյուղին է վերաբերում, ոչ քաղաքին: Խոսքը գործի մասին է, իսկ նա իր Ցեյտլ տատին առել-անցել է, որ բլիթներ էր թխում պապի հետ, իսկ այդ պապն էլ, օղու թասը ձեռքին էն աշխարհը գնաց: Կնիկարմատը, կնիկարմատ էլ կմնա: Իզուր չի Սողոմոն իմաստունն ասել, թե ամբողջ աշխարհը ման եկա, մի խելքը գլխին կնիկ չգտա...

Կարճ ասած, որոշվեց ընկերություն հիմնել. ես տալիս եմ փողը, Մենախեմ-Մենդլը կազմում է նախահաշիվը, իսկ ինչ որ աստված տա, հավասար կլիսում ենք:

— Հավատացե՛ք ինձ,— ասաց Մենախեմ-Մենդլը,— ռեբ Տեվյե, աստծու օգնությամբ, ես որպես մի կարգին մարդ, ազնվությամբ կվճարեմ և հույս ունեմ, որ դուք ինձանից կստանաք փո՛ղ, փո՛ղ և փո՛ղ...

— Ամե՛ն,— պատասխանում եմ ես:— Եվ նույնն էլ ձեզ եմ ցանկանում: Աստված ասածդ լսի: Մենակ թե մի բան չեմ հասկանում, թե Վասկա կատուն ոնց պիտի գետն անցնի: Այսինքն, հասկանո՞ւմ ես... Ես այստեղ, դու՝ այնտեղ... Ախր փող ասածդ քաղցր բան է... Դե մի՛ նեղանա, առանց ետին մտքի եմ ասում: Հիշո՞ւմ ես մեր նախահայր Աբրահամի¹⁰ խոսքերը. «Ոյք վարէին արտասուտք՝ ցնծութեամբ հնձեսցեն...»: Այսինքն թե՛ լավ է նախապես խոսենք, քան հետո արցունք թափենք...

— Ա՛խ, վեր թռավ նա:— Միգուցե դուք ստացակա՞ն եք ուզում: Խնդրե՛մ, մեծ ուրախությամբ:

— Սպասիր մի,— ասացի ես:— Եթե գործին մոտենանք հակառակ կողմից, ապա երկուսից մեկը, եթե ուզենաս վիզս կտրել, ստացականն ի՞նչ կօգնի: Ինչպես թալմուդն է ասում. «Ոչ թե մուկն գողանայ, այլ բույնն մկան...»: Ոչ թե ստացականն է վճարում, այլ մարդը: Դե, ինչ պիտի անես: Թե մի ոտքով եմ խրված, երկու ոտքով կխրվեմ:

— Հավատացե՛ք ինձ,— նորից ասաց նա:— Իմ ազնիվ անունով երդվում եմ ձեզ, ռեբ Տեվյե: Աստվա՛ծ փրկի ազատի: Ձեզ խաբելու, ռեբ Տեվյե, մտադրություն չունեմ: Աստված մի՛ արասցե: Իմ մտքում միայն մի բան է — ազնվորեն, ազնվորեն ու արդարամտորեն բաժանել ձեզ հետ հավասար, մխիալ առ մխիալ ձեզ՝ կես, ինձ էլ՝ կես, ինձ՝ հարյուր, ձեզ էլ հարյուր, ձեզ՝ երկու հարյուր, ինձ էլ երկու հարյուր, ինձ՝ երեք հարյուր, ձեզ էլ երեք հարյուր, ինձ՝ չորս հարյուր, ձեզ էլ չորս հարյուր, ինձ՝ հազար, ձեզ էլ հազար...

¹⁰ Բերված տողը Սաղմոսից է, և ոչ մի կապ չունի նախահայր Աբրահամի հետ:

Մի խոսքով հանեցի իմ մի քանի ռուբլին, երեք անգամ հաշվեցի, ձեռքերս դողում էին, կանչեցի պառավիս որպես վկա, մի անգամ էլ հասկացրի Մենախեմ-Մենդլին, որ դրանք արյուն-քրտինքով վաստակած փողեր են և տվեցի նրան ու պատվիրեցի՝ դնի կողքի գրպանն ու կարի, որ աստված մի արասցե, ճանապարհին չգողանան: Պայմանավորվեցինք, որ՝ ոչ ուշ, քան հաջորդ շաբաթ ինձ մանրամասն կգրի ամեն ինչի մասին և հաշտ ու խաղաղ մնաս բարով ասացինք, սրտալի պաշ-պողշտի արինք, ինչպես վայել է ազգականներին:

Նա գնաց, բայց ինձ, հենց որ մենակ մնացի, վրա տվեցին ամեն տեսակի մտքերը, պարզապես աչքերս բաց երազների մեջ եմ, և բոլորն էլ այնպես քաղցր, որ ուզում էի շարունակվեն, վերջ չունենան: Ինձ պատկերանում էր երկաթե ցանկապատերով մի մեծ տուն՝ քաղաքի կենտրոնում — ամբարներով, մառաններով, ցախատնով, բերնեբերան ամեն տեսակի բարիքով լիքը: Իսկ տանտիրուհին բանալիների կապոցը գոտուց քարշ արած, հսկում է քունջ ու պուճախին — դա իմ կինն է՝ Գոլդան, բայց նրան ճանաչել անգամ չի կարելի, իսկապես, միանգամից ուրիշ կերպարանք է ստացել, դարձել է մի խանում՝ կրկնակի կզակով, վզին գցած մարգարիտներով: Գնում է գալիս շորորալեն ու տեղի-անտեղի ծառաներին շշպոում: Երեխեքս հագնված են ոնց որ տոն օրը, մատը մատին չեն տալիս, անբան ու անգործ պոլթի են տալիս: Բակում հավ ու ճվի, բաղ ու սագի ձեռքից տեղ ու դադար չկա: Տանս միջին ամեն ինչ փայլում է, վառարանում կրակ կա, ընթրիք է պատրաստվում, իսկ ինքնաեղ Ֆշշում է, ինչպես մի դաժան մեղսագործ: Սեղանի գլխին բազմած է ինքը, տանտերը, այսինքն՝ Տեվեն, խալաթը հագին, թասակը գլխին, շուրջը նստոտած են մի խումբ պատվավոր մարդիկ և բոլորը սիրաշահում են նրան. «Թույլ տվեք, ռեբ Տեվեն». «Ներողամիտ եղեք, ռեբ Տեվեն...» Ա՛յ, մտածում եմ ես, գրողի ծոցը գնա փողն էլ, հալա փողի ապուպապն էլ»:

— Այդ ո՞ւմ ես հայիոյում, — հարցնում է ինձ Գոլդան:

— Ոչ ոքի, — պատասխանում եմ: — Հենց էնպես մտքով էի ընկել... Մարդու բոլոր մտքերն էլ հիմարություն են, հերվա եկած ձյուն... Դու ինձ ասա, Գոլդա, հոգիս, դու չգիտե՞ս, թե նա ինչ առևտուր է անում, նա, էլի, քո ազգականը, Մենախեմ-Մենդլը:

— Այ դու բարով եկա՛ր, — ասում է կնիկս, — թող բոլոր չար երազները, որ տեսել եմ երեկ գիշեր, երեկ չե՛մ եկել գիշեր և մի ամբողջ տարի, թշնամուս գլխին կատարվի: Մարդու հետ նստել գիշերներ է լուսացրել, խոսել է, խոսել, իսկ հետո դարձել է ինձ ու ասում, թե ի՞նչ առևտուր է անում: Ախր չե՞ որ դուք իրար հետ մի ինչ-որ գործ բռնեցիք:

— Հա՛, ճիշտ է, — պատասխանում եմ ես, — գործ բռնելը, բռնեցինք, բայց թե ի՞նչ գործ, թեկուզ սպանես էլ, չեմ կարող ասել: Գլխումս ոչ մի բան չի մնացել, հասկանո՞ւմ ես... Բայց թե քո բանը չի, մեկը մյուսի հետ կապ չունի, մի անհանգստանա, կնիկ ջան, բան էլ չկա: Միրտս գուշակում է, որ մենք օգուտ կանենք, էն էլ կարգին օգուտ: Ասա «ամե՛ն», սեղանին դիր բարիքն ամեն:

Այնինչ անցնում է մի շաբաթ, երկրորդը, երրորդը, իմ կոմպանյոնից նամակ չկա ու չկա: Ցնդվել եմ, գլուխս կորցրել, չգիտեմ ինչ անեմ: Չի կարող պատահել, որ նա պարզապես մոռանում է գրելը, նա շատ լավ գիտի, թե մենք ոնց ենք իրենից մի որևէ տեղեկության սպասում: Բայց և իսկույն մի ուրիշ բան է անցնում մտքովս. իսկ ես ի՞նչ կանեմ, եթե նա, օրինակի համար, ամբողջ սերուցքը քաշի և ինձ ասի՝ թե, ոչ մի օգուտ չարեցի: Դե գնա գլուխդ քարովը տուր: «Բայց չի կարող պատահել, ասում եմ ինքս ինձ, ո՞նց թե: Ես նրա հետ վերաբերվեցի մարդավարի, ինչպես կվարվեն ամենամոտիկ, ամենահարազատ մարդու հետ, թող աստված ինձ տա այն ամենը, ինչ ես եմ նրան ցանկանում: Մի՞թե նա իմ գլխին այդպիսի օյին կխաղա»:

Բայց տեղնուտեղը մի ուրիշ միտք էլ է ծագում. դե օգուտ անելու մասին արդեն մոռացել էի, օգուտն իրեն գլուխն ուտեր: Ջաղացը կորցնողը չախչախի ետևից ման չի գա: Թո՛ղ աստված իմ ունեցածս ինձ թողնի, ուրիշ բան պետք չի: Շան դող եմ տալիս

ու ինքս ինձ ասում՝ «Այ հիմար ծերուկ, իշտահիդ քացախ, այ էշի գլուխ, հարյուր ռուբլով կարող էիր երկու այնպիսի ձի առնել, որ աշխարհը չի տեսել, և սայլդ էլ կփոխեիր ձողավոր ֆուրգոնով...»:

— Տեվյե, ախր հեշ մի բանի մասին չես մտածում,— ասում է կնիկս:

— Այսինքն, ոնց թե չեմ մտածում,— ասում եմ:— Գլուխս մտածմունքից պայթում է, իսկ սա թե՛ չես մտածում...

— Կա-չկա,— ասում է,— ճանապարհին նրա հետ մի փորձանք է պատահել: Կամ ավագակներն են հարձակվել ու մինչև վերջին թելը պլոկել տարել, կամ, աստված մի արասցե, հիվանդացել է, կամ, աստված հեռու տանի՝ մեռել...

— Էլ ինչեր կհնարես, հոգի ջան,— ասում եմ ես,— ոչ դես, ոչ դեն, ավագակներ, հա՞:

Բայց ինքս, ի միջի այլոց, մտածում եմ՝ դե, ինչ է, ճանապարհ գնացող մարդու գլխին քի՞չ փորձանք կարող է գալ:

— Արդեն դու այդպես ես,— ասում եմ,— մտքովդ ոչ մի լավ բան չի անցնի...

— Նրանց ընտանիքը,— ասում է կնիկս,— հենց եղպես է, մայրը, թող մեզ համար բարեխոս լինի աստծու առաջ, հենց վերջերս ջահել-ջահել մահացավ. երեք հատ էլ քույր ուներ, աստված հոգիները լուսավորի, և ինչ. նրանցից մեկը դեռ ազապ աղջիկ էր, որ մեռավ, երկրորդը՝ ընդհակառակը, հասցրել էր ամուսնանալ, բայց ինչ-որ մեկ անգամ մրսում է բաղնիսում ու շատ չանցած հոգոցն հանգուցելոց լինում, իսկ երրորդն էլ, հենց առաջին երեխու վրա գծվում է, տանջվում, տրորվում և հոգին աստծուն ավանդում:

— Դե ինչ կա որ, Գուլյա,— մենք ամենքս էլ մեռնելու ենք: Մարդ ասածդ ու ատաղձագործ ասածդ մեկ բան են. ատաղձագործը ապրում է, ապրում է ու մեռնում, մարդս էլ նույնը...

Միով բանիվ, որոշեցինք, որ ես գնամ Եգուպեց: Այդ միջոցում մի քիչ ապրանք էր հավաքվել, պանիր, յուղ, թթվասեր: Ապրանք եմ ասում — առաջին տեսակի: Ձին լծեցի և «թողին զՄուկոտ», այսինքն՝ մա՛րջ դեպի Եգուպեց: Գնում եմ, բայց հոգիս, կարող եք արդեն պատկերացնել, ուրախ չե, տխուր է. մենակ գնում եմ անտառով, ի՞նչ երևակայությունների մեջ ասես, որ չեմ ընկնում, ի՞նչ մտքեր ասես, որ գլխովս չեն անցնում:

Այ թե հետաքրքիր բան կլինի, մտածում եմ ես, տեղ եմ հասնում ու սկսում եմ հարցուփորձ անել իմ կտրիճի մասին, և ինձ ասում են՝ «Մենախիմ-Մե՞նդլը, պա՛, պա՛, պա՛, մի տեսնեք ոնց է ոտքի կանգնել, դրստվել: Հիմի նրան մոտիկ գնալ չեք կարող: Մեփական տո՛ւն: Կառքով է ման գալի՛ս: Որ տեսնեք, չեք ճանաչի»: Եվ ահա ես պատկերացնում եմ թե ինչպես եմ սիրտ անում և ուղղակի նրա տունը գնում: «Տպրո՛ւ, ասում են ինձ, կանգ առ, և արմունկը դեմ են անում կրծքիս: Ո՞ւր ես խցկվում, քեռի, ի՞նչ ես կորցրել, որ քիթդ խոթում ես»: Ախր ես օտար մարդ չեմ, ասում եմ, նրա ազգականն եմ: Նա իմ կնոջ տատի տատի թոռն է գալիս: «Շնորհավորում ենք ձեզ, պատասխանում են: Շա՛տ հաճելի է: Միայն թե, դուք կարող եք այստեղ, դռան տակին էլ սպասել, ձեզ ոչինչ չի պատահի...»: Գլխի եմ ընկնում, որ հարկավոր է դռնապանի բերանը քաղցրացնել. առածն ասում է՝ ակներդ չլուղես, ճամփա չես գնա... Եվ բարձրանում եմ հենց իրեն մոտ: «Բարիաջողում, ասում եմ, ռեք Մենախեմ-Մենդլ»: Բայց ի՛նչ: Պատասխան տվողս ո՞վ է, բարես առնողն ո՞վ է: Նույնիսկ չի էլ ճանաչում: «Ի՞նչ եք ուզում», հարցնում է: Քիչ է մնում ուշքս գնա, ցած ընկնեմ: «Այսինքն՝ ոնց թե, ասում եմ ես: Ձեր ազգականն եմ, չե՞ք ճանաչում: Իմ անունը Տեվյե է»: «Ինչպե՞ս, ասում է, Տեվյե՞. մի այդպիսի անուն հիշում եմ...»: «Լո՞ւրջ եք ասում, հարցնում եմ ես: Ուրեմն հիշո՞ւմ եք: Իսկ արդյոք

չէ՞ք հիշում, ասում եմ, իմ կնոջ կարկանդակները, բլիթներն ու կաթնահունցները: Ապա ջանացեք հիշել...»: Բայց այդ միջոցին ինձ պատկերանում է մի բոլորովին ուրիշ տեսարան — ներս եմ մտնում Մենախեմ-Մենդլի մոտ, իսկ նա ուրախ ու սիրալիր տեղից վեր է կենում, գալիս ինձ ընդառաջ. «Հյուր է եկել: Ինչպիսի՞ հյուր: Նստեցեք, ռեք Տեվլե, ինչպե՞ս եք: Ինչպե՞ս է կինդ: Ես ձեզ վաղուց էի սպասում: Հաշիվներս մաքրելու ժամանակն է»: Եվ մի գլխարկ լիքը կիսախմպերիալներ է լցնում առաջ: «Սա շահույթն է, ասում է, իսկ հիմնական կապիտալը մնում է գործառնության մեջ: Ինչքան վաստակենք, հավասար կկիսենք, մաս առ մաս, ինձ՝ հարյուր, ձեզ՝ հարյուր, ինձ՝ երկու հարյուր, ձեզ՝ երկու հարյուր, ինձ՝ երեք հարյուր, ձեզ՝ երեք հարյուր, ինձ՝ չորս հարյուր, ձեզ՝ չորս հարյուր...»:

Ես մտքիս մեջ ընկած ննջել էի և չէի նկատել, որ իմ թառվանը դուրս է եկել ճանապարհից, ու անիվը դեմ է առել ծառին... Կարծես ետևիցս խփեցին, աչքերիցս կայծեր թռան: «Սրանով էլ գոհ եմ, մտածում եմ, շնորհակալ եմ, որ գոնե սոնին չի կոտրվել»:

Հասա Եգուպեց, առաջին հերթին ապրանքս ծախծխեցի, ինչպես միշտ, գործս շուտ ավարտեցի, միով չարի ու երբ վերջացրի, գնացի փնտրելու կոմպանյոնիս: Ման եմ գալիս մի ժամ, երկու ժամ, երեք, «Իսկ մանկիկը չկա ու չկա» — ինչ-որ չի երևում: Սկսեցի կանգնեցնել մարդկանց, հարցուփորձ անել:

— Արդյոք չէ՞ք տեսել, չէ՞ք ճանաչում Մենախեմ-Մենդլ անունով մի մարդու:

— Մենախեմ-Մենդլը,— պատասխանում են,— կերավ կրենդելը¹¹ ... Աշխարհի երեսին էնքան Մենախեմ-Մենդլ կա՝

— Դուք երևի ուզում եք նրա ազգանո՞ւնն իմանալ: Գաղափար չունեմ: Նույնիսկ նրա ծննդավայրում, այսինքն՝ Կասրիլովկայում, եթե կուզեք իմանալ, նրան հենց այդպես էլ, իր գոքանչի անունով՝ անվանում են Լեյա-Դվոսյայի Մենախեմ Մենդլ: Դեռ ավելին, նրա աները, որ արդեն տարիքն առած մարդ է, նա էլ է կոչվում Լեյա-Դվոսյայի Բորուխ-Գերշ: Եվ նույնիսկ ինքն էլ, այսինքն՝ Լեյա-Դվոսյան էլ է կոչվում, Լեյա-Դվոսյա. Լեյա-Դվոսյայի ամուսին՝ Բորուխ-Գերշի կին... Հիմա հասկացա՞ք:

— Հասկանալը հասկացա՞նք,— ասում են նրանք:— Բայց դա դեռ քիչ է: Գործի անունն ի՞նչ է, ինչով է զբաղվում այդ ձեր Մենախեմ-Մենդլը:

— Ինչով է զբաղվո՞ւմ,— պատասխանում եմ,— նա այստեղ կիսախմպերիալների առևտուր է անում, հետո ինչ-որ՝ «բես»¹²-մես»: Պոտիվիլով¹³, հեռագրեր է դրկում ինչ-որ տեղեր՝ Պետերբուրգ, Վարշավա...

— Ըհը՛,— ծիծաղից կոտորվում են նրանք,— կա-չկա սա նա է, որ հերվա ձյունով առևտուր է անում: Այդ դեպքում նեղություն քաշեք անցնել մյուս կողմը, այնտեղ այդ տեսակ նապաստակներից շատ են վազվզում, ձերն էլ նրանց մեջն է...

«Ինչքան ապրես, այնքան բան կտեսնես, մտածում եմ ես:— Ինչ-որ նապաստակներ, հերվա ձյուն...»:

Անցա մյուս մայթը, իսկ այնտեղ ասեղ գցելու տեղ չկա, ոնց որ տոնավաճառ: Նեղվածք է, անց կենալու ճար չկա: Մարդիկ խելագարների նման գնում են, գալիս, հրմշտոց, իրարանցում... Բոլորը խոսում են, բղավում, ձեռքները թափահարում: «Պոտիվիլով», «Պինդ կաց, պինդ», «Ես քեզ

¹¹ Կրենդել—թխվածք:

¹² Բես — գների իջեցում, գոս — գների բարձրացում:

¹³ Պոտիվիլով — ենթադրվում է՝ Պոտիլով, Պոտիլովյան գործարանի արժեթղթերը:

կրնեցնե՞մ»: «Գրավական է կոխել բուռը», «Հ՛ը, չլինի՞ թե քոր է գալիս», «Ինձ կուրտած¹⁴ է հասնում», «Քոստոյի մեկը», «Գլուխդ կփշրեմ», «Թքիր դրա սփաթին», «Մեկ էս կողմը նայիր, աղաչում եմ, մորթեցին», «Սպեկուլյանտիս նայեք», «Կոտր ընկած», «Գյաղա», «Գրողի ծոցը գնա հերդ»:

Տուրուդմփոցի հոտ է գալիս: «Եվ չվեաց Հակոբ», ասացի ինքս ինձ:— Արանքը ճղի, Տեվյե: Փասսփուսեդ հավաքիր գնա, թե չէ քեզ էլ բաժին կհասնի... Է՛, մտածում եմ ես:— Աստված հայր է, Շմուել-Շմելկեսը՝ նրա ծառան, Եգուպեցը քաղաք է, իսկ Մենախեմ-Մենդլն էլ լավ աշխատավոր... Սա է այն տեղը, որտեղ բախտ են որսում, կիսախմպերիալներ: Եվ սա նրանց մոտ կոչվում է գործով զբաղվել: Վա՛յ քեզ, Տեվյե՝ քո բռնած գործով:

Ես կանգ առա մի մեծ պատուհանի առջև, որի ետևում երևում էին շատ ու շատ շավարներ, և հանկարծ ապակու մեջ տեսա իմ թանկագին ազգականի արտացոլումը: Հենց որ նրան տեսա, քիչ մնաց սիրտս պայթեր, մազ մնաց շունչս փչեմ: Թո՛ղ իմ և ձեր թշնամին այն կերպարանքը չունենար, ինչ կերպարանք որ ուներ Մենախեմ-Մենդլը: Սերթուկը ո՞րն է, ոտնամանը ո՞րն է: Հապա դեմքը: Տե՛ր իմ աստված, գերեզմանից հանած մեռելը դրանից լավ է: «Դե՛, Տեվյե, մտածեցի ես: Կամ խեր է, կամ շատ է, կամ էլ ոչնչից ոչինչ: Բանդ բուրդ է: Փողերդ կորան, քոռ ու փուչ եղան: Ոնց որ ասում են՝ «ոչ արջ բերինք, ոչ էլ փայտ»: Ոչ ապրանք, ոչ փող, միայն և միայն դառնություն»:

Երևում է, նա էլ իրեն կորցրեց: Կանգնել ենք երկուսով, ոնց որ քար կտրած, ուժ չունենք մի խոսք ասենք, և իրար ենք նայում արլորների նման, կարծես ցանկանալով ասել. «Երկուսով էլ թշվառացա՛նք: Մեզ մի բան է մնում, մաղախն առնենք, ընկնենք դռնեղուռ, ողորմություն հավաքենք»:

— Ռե՛ք Տեվյե,— ասում է նա՝ հագիվ լսելի ձայնով, իսկ արցունքները խեղդում են կոկորդը:— Ռե՛ք Տեվյե: Անբախտ մարդը, գիտեք ինչ, լավ կլինի, որ իսկի աշխարհ չգա, քան թե այս տեսակ պիտի ապրի... Ինձ պետք է կախել, ասում է, ինձ պետք է չորս կտոր անել, թիքա-թիքա անել...— Եվ այլևս ոչ մի բառ չի կարողանում ասել:

— Ի՞նչ խոսք,— ասացի ես,— Մենախեմ Մենդլ, այդպիսի բանի համար քեզ պետք է պառկեցնել հենց այստեղ, Եգուպեցի հրապարակի մեջտեղում և առանց խնայելու մի լա՛վ քոթակ տալ, այնպիսի քոթակ, որ քո Ցեյտլ տատին այն աշխարհում տեսնես: Ապա մի լավ մտածիր, թե դու ինչ արեցիր, վերցրիր ու կործանեցիր մի ամբողջ ընտանիք, մեր ու մանուկ անդանակ մորթեցիր, որոնք ոչ մի մեղք չունեն: Ասա, ես հիմա ո՛նց երևամ նրանց աչքին, ի՞նչ ասեմ կնկանս ու երեխեքիս: Չէ, պիտի ասես, դահի՛ճ, ավազա՛կ, մարդասպա՛ն...

— Ճիշտ է՛,— քրթմնջում է նա՝ հենվելով պատին:— Քո ասածն է, ռեք Տեվյե: Ազնի՛վ խոսք...

— Դժոխքի փայ դառնաս դու, հայվանի մեկը, դժոխքն էլ է ափսոս քեզ նմանի համար:

— Ճիշտ է, ռեք Տեվյե: Ամենն էլ ճիշտ է... Ազնի՛վ խոսք... Քան թե այսպես ապրել, ռեք Տեվյե... Թե որ այսպես պիտի ապրել...— Կրկնեց նա ու գլուխը կախեց:

Կանգնել ու նայում եմ նրան, թշվառականին, նայում եմ, թե ոնց է կանգնել պատին հենված, գլուխը քաշ գցած, գդակը թեքած մի կողմ ու նրա ամեն մի հոգոցը, ամեն մի տնքոցը սիրտս կտոր-կտոր է անում:

— Չնայած,— ասում եմ,— եթե այդ գործին մյուս կողմից մոտենանք, այդ դեպքում, ախր, միանգամայն պարզ է, որ դու միգուցե իսկի մեղք էլ չունես: Եթե դատենք ինչպես պետքն է, ապա

¹⁴ Կուրտած — պարզև, որ տրվում է միջնորդին:

երկուսից մեկը — դու նույնպիսի կոմպանիոն ես, ինչպես և ես, շահույթը պիտի հավասարապես բաժանեինք: Ես փող եմ դրել, դու՝ քո հնարամտությունը: Վա՛յ ինձ: Դու, իհարկե, ոնց որ ասում են՝ նկատի ունեիր «Վասն կենաց և ո՛չ մահո», բայց եթե այդ բոլորը ի չիք դարձան, նշանակում է այդպես է վիճակված, ինչպես ասված է՝ «Մի պարծիր ավուրբ, որ գալոց է» — մարդս ենթադրում է, աստված կարգադրում: Հենց թեկուզ վերցրու իմ արհեստը: Կարելի է կարծել, թե դրանից ավելի հաստատուն գործ չի կարող լինել, բայց արի տես, որ հակառակն է: Եվ քանի որ աստծու կամքն էր, որ այդպես լինեք, ապա անցյալ աշնանը, հեռու քեզանից, կովս, որը ամենաքիչը թեկուզ հենց մորթեի, հարյուր հիսունից պակաս փող չէր հանի, սատկեց, իսկ ետևիցն էլ՝ թառլան հորթուկը, որ նույնիսկ քսան ռուբլով էլ չէի տա: Բայց թե ոչինչ չես կարող անել: Ինչքան ուզում ես խելքիդ գոռ տուր, օգուտ չունի, եթե բախտդ չի բերում, ծովի մոտ էլ գնաս, ծովն էլ կցամաքի... Ես քեզ նույնիսկ չեմ էլ հարցնի, թե ուր են փողերս: Ես ինքս հասկանում եմ, թե որտեղ են նրանք, արյուն-քրտինքով դատած իմ փողերը, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Թղթի ես վերածել, հերվա եկած ձյան... Եվ ո՛վ է մեղավոր, եթե ոչ ես ինքս: Թույլ տվեցի, որ գլուխս պտտեցնեն, հեշտ վաստակած հաց էի ուզում, մեծ-մեծ օգուտներ... Փողը, ախպեր ջան, պետք է վաստակել դառը դատելով, արյուն-քրտինքով: Քե՛զ պետք է ծեծել, Տեվյե, հենց քե՛զ, այնքան, մինչև հոգիդ փչես: Բայց հիմա ինչ օգուտ իմ աղաղակից: Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Եվ արտասվեաց կոյսն»: Ողբա՛, կոծա՛, թեկուզ տրաքվի՛: Խելքն ու զոջումը, այդ երկու բաները միշտ էլ շատ ուշացած են գալիս, Տեվյեի ճակատին հարստանալ չի գրված: Ինչպես առածն է ասում՝ էն աղքատ Կիկոն ես, աղքատ Կիկոն էլ կմնաս: Երևում է, աստված է այդպես սահմանել. «Աստուած ե՛տ, աստուած էառ», իսկ դա պետք է այսպես հասկանանք, ասում եմ, գնանք, ախպերս, մի-մի թաս զցենք...

Այսպես ուրեմն, պանե Շոլում-Ալեյխեմ, իմ բոլոր երազները հօդս ցնդեցին: Եվ կարծում եք, թե շա՞տ վշտացա, որ փողերս կորցրի: Անկեղծ ասած, ոչ: Չէ՞ որ մեզ հայտնի է, թե ինչ է գրված սուրբ գրքում. «Եվ զարծաթ իմ և զոսկի իմ», այսինքն թե՛ փողը հեչ բան է, գլխավորը մարդն է, այսինքն, որ մարդը մնա մարդ: Ես միայն վրդովվում եմ, որ իմ ոսկե երազը վերջացավ: Կուզեի, ա՛խ ինչքան կուզեի հարուստ լինել, թեկուզ մի բռնեի: Բայց թե ոչինչ չես կարող անել: Ասված է՝ «Կամօքն քոյ ոչ կեցցես», քո կամքով չես ոտնամաններդ մաշում: Քո գործը, Տեվյե, ասում է աստված, պանիրն ու յուղն է, և ոչ թե դատարկ երազանքները: Իսկ հապա ցավը, հույսը: Դա էլ իր կարգին: Որքան շատ է դարդն ու ցավը, այնքան մեծ է հույսը, որքան աղքատ ես, այնքան շատ ես ապավինում... Քանզի...

Բայց ինձ թվում է, որ այս անգամ մի քիչ շատ խոսեցի: Ժամանակն է գնալու, գործով զբաղվելու, ինչպես ասում են, ամեն մարդ իր ցավն ունի:

Ողջ եղեք և միշտ երջանիկ:

1899

ՀԻՄՆԿՎԱ ԵՐԵԽԵՔԸ

Ես սա ձեր այն խոսքի վրա եմ պատմում, որ ասացիք՝ «Հիմիկվա երեխեքը»... «Աճեցուցի զգաւակունս իմ և սնուցի...»: Հեշտ է ասել՝ երեխաներ ծնիր, չարչարվիր, զոհվիր նրանց համար, զօր ու զիշեր աշխատիր... Իսկ հանուն ինչի: Անվերջ մտածում ես — ոնց անեմ, ոնց չանեմ, դե, իհարկե, ամեն մարդ ըստ իր ունեցվածքի ու կարողության: Ես Բրոդսկուց շատ հեռու եմ, բայց ինձ երբեք էլ ոչնչություն չեմ համարել, որովհետև ես ինքս էլ պատի ծակից դուրս եկածներից չեմ և, ինչպես կնիկս է ասում, աստված նրան առողջություն տա, ո՛չ կոշկակարից ենք ծագել, ո՛չ էլ դերձակից... Ահա, ես էլ մտածում եմ, որ աղջիկներս ինձ կփրկեն: Ինչո՞ւ: Նախ և առաջ՝ աստված ինձ սիրուն

աղջիկներ է բաշխել, իսկ սիրուն երեսը, ինչպես ինքներդ եք ասում, օժիտի կեսն է: Երկրորդ՝ ես ինքս էլ, կամոքն աստծո, նախկին Տեվյեն չեմ, ինչ որ մի ժամանակ էի, և կարող եմ ձեռք գցել ամենալավ փեսացուն անգամ, նույնիսկ Եգուպեցից. այդպես չէ՞: Միայն թե աշխարհում գոյություն ունի աստված, աստված՝ գթության և կարեկցության, ահա նա էլ ցույց է տալիս իր հրաշքները, ինձ նետելով մեկ ցուրտը, մեկ տաքը, շարտում է մեկ վերև, մեկ ներքև: «Տեվյե, ասում է նա, գլխիցդ դուրս գցիր հիմարությունները և թող ամեն ինչ գնա իր ընթացքով...»: Ահա, լսեցեք խնդրեմ, թե ինչեր են պատահում աշխարհում: Իսկ ո՞ւմ հետ են պատահում ամեն տեսակի պատմությունները: Իհարկե, մի այնպիսի հաջողակ մարդու հետ, ինչպես Տեվյեն է:

Բայց թե կարիք չկա երկար ու բարակ պատմելու, դուք, ենթադրում եմ, հիշում եք, իհարկե, իմ ազգականի՝ Մենախեմ-Մենդլի, ոչուփուչ լինի նա, պատմությունը և երևի հիշում եք նաև կիսախմբերիալներով և «Պոտիվիլովյան» արժեթղթերով Եգուպեցում կատարած իմ և նրա փայլուն գործերը: Թո՛ղ իմ բոլոր թշնամիների գլուխը հենց այդ փորձանքը գա: Այն ժամանակ ինչքա՛ն էի մտածում, հոգիս դուրս էր գալիս, ասում էի՝ Տեվյե, վերջապես թարկ կտաս կաթնավաճառությանը:

— Հիմարի՛ գլուխ,— ասում է մի օր իմ պառավը:— Հերիք է տանջվես, գործին դրանով չես օգնի: Օգուտդ մենակ այն կլինի, որ հալումաշ կլինես: Ասենք թե ավագակները հարձակվել են վրադ ու փողդ տարել... Ավելի լավ է,— ասում է,— գնաս Անատովկա, մսագործ Լեյզեր-Վոլֆի մոտ, դու նրան,— ասում է,— շատ հարկավոր ես...

— Բանն ինչո՞ւմն է: Ի՞նչ պատահեց, որ ես նրան հանկարծ պետք եկա: Եթե,— ասում եմ,— մեր մոխրագույն կովի համար է կանչում, թող այդ հիմարությունը գլխիցը հանի:

— Էլ ո՞նց կլինեք,— ասում է կնիկս,— այդ կովի տված կաթը ո՛րն է, յուղն ու պանիրը ո՛րն է:

— Բանը դրանում չէ,— ասում եմ ես:— Հենց այնպես: Առաջինը՝ ո՞նց կարելի է նրա նման կովը մորթել: Մարդու սիրտ չի դիմանա... Մեր սուրբ գրքումն ասված է...

— Բավական՛ն է, Տեվյե: Ամբողջ աշխարհը,— ասում է նա,— գիտի, որ դու սուրբ գիրքը անգիր գիտես: Լսիր ինձ՝ քո կնկան, վեր կաց գնա Լեյզեր-Վոլֆի մոտ: Ամեն անգամ հինգշաբթի օրերը, երբ մեր Ցեյտլը գնում է նրա խանութը միս առնելու, հանգիստ չի տալիս, հայտնիր հորդ,— ասում է,— որ գա ինձ մոտ. նա ինձ շատ է պետք...

Մի խոսքով, դե մի անգամ էլ գոնե պետք է կնկա ասածին ականջ կախել, այդպես չէ՞: Թող տվեցի, որ խելքից լիմոն քամի և վեր կացա ու գնացի Լեյզեր-Վոլֆի մոտ, Անատովկա, որ երեք վերստի վրա է մեզանից: Եվ, իհարկե, տանը չգտա:

— Որտե՞ղ է,— հարցնում եմ ինչ-որ մի ծուռքթանի կնկա, որը սենյակում պարապ-սարապ պոլթի էր տալիս:

— Սպանդանոցում,— պատասխանում է,— առավոտից էնտեղ է, եզ են մորթում: Հրես ուր-որ է կգա...

Ման եմ գալիս Լեյզեր-Վոլֆի տնով մեկ ու նայում սարք ու կարգին: Տունը, աչքով չտամ, լիությունից տրաքվում է, աստված իմ բարեկամներին դրանից պակաս չտա — պահարանում տեղ չկա պղնձե ամանեղենի ձեռքից, որ հարյուր հիսունով չեն տա, ինքնատե և նորից մի ուրիշ ինքնատե և պղնձի մատուցարան և մի հատ էլ Վարշավայի ջուլիտ արծաթե մոմակալ, ոսկեջրած թասեր, բաժակներ և յոթտեղանի ձուլած մոմակալ և ամեն տեսակի ային-օյին, թիվ ու համար չկա «Երկնայի՛ն թագավոր,— մտածում եմ: Ե՞րբ պիտի աչքս տեսնի, որ իմ երեխեքն էլ այսքան հարստություն

ունենան, աստված նրանց առողջություն տա: Մսագործի բախտը բերում է: Հերիք չի, որ այսքան հարուստ է, հերիք չի, որ թաք երկու աղջիկ ունի, նրանք էլ արդեն մարդու գնացած, ինքն էլ որբնայրի...»

Վերջապես աստված ողորմաց, դուռը բացվեց, ու ներս մտավ Լեյզեր-Վոլֆը զայրացած, շանթ ու որոտ թափելով մորթողի գլխին: Մորթողը նրա գլխին փորձանք է բերել միսը անպետք է համարել, գրողի ծոցը գնա նա, անմման, սարի պես եզր մի ինչ-որ դատարկ բանի համար, տրեֆա¹⁵

է համարել. ման է եկել, ման եկել, թոքի վրա քորոցի գլխի մեծության մի ինչ-որ քերծվածք է գտել, ա՛յ գետնի տակն անցնի նա:

— Բարիաջողում, ռեբ Տեվյե,— ասում է նա:— Սա ի՞նչ բան է, ոչ մի կերպ չեմ կարողանում ձեզ կանչել: Ինչպե՞ս եք, ինչպե՞ս չեք, ի՞նչ եք անում:

— Դե ոնց ասած,— պատասխանում եմ,— կարծես թե գործ անում ենք, բայց թե տեղից չենք շարժվում... Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Ո՛չ զխայթ քոյ, և ո՛չ զմեղր քոյ»,— ոչ փող կա, ոչ առողջություն, ոչ էլ մի լուրջ հանգստություն:

— Մեղք եք գործում, ռեբ Տեվյե,— ասում է նա,— համեմատած անցյալի հետ, ինչ որ էիք մի ժամանակ, հիմա դուք հարուստ եք:

— Թող աստված ինձ և ձեզ այնքան տա,— պատասխանում եմ,— որքան որ չունեմ: Թալմուդում,— ասում եմ ես,— գրված է. «Ասկակուրդո դեմասկանտո դեկուրնոսե դեֆարսմախտո...» — իսկ ինքս մտածում եմ՝ դե գնա քիթդ ջարդիր, ա՛յ կաշի քերթող, ախար որևէ տեղ դրա նման մի բան ասված կա՞: Աշխարհի երեսին իսկ նման բառեր կա՞ն:

— Դուք,— ասում է նա,— անվերջ գիտության հետ եք: Ձեզ համար, ռեբ Տեվյե, շատ լավ է, որ ձեր խելքը հասնում է մանր տառերից: Բայց թե ինչի՞ պետք է իմաստությունն ու ուսումը: Ավելի լավ է եկեք մեր գործից խոսենք: Նստեցե՛ք, ռեբ Տեվյե:— Եվ հրամայում է: Թե՛յ:

Տեղնուտեղը, ասես գետնի տակից, բուսնում է ծուռքթանին, քամու նման թոցնում է ինքնատեղ ու հայդա՝ խոհանոց:

— Հիմա,— ասում է Լեյզեր-Վոլֆը,— երբ մենք մենակ ենք, դեմ-դիմաց նստած, կարելի է գործի մասին խոսել: Իսկ գործը, հասկանո՞ւմ եք, ահա թե որն է. ես վաղուց էի ցանկանում ձեզ հետ խոսել, ռեբ Տեվյե, ես ձեր աղջկան արդեն մի քանի անգամ պատվիրել եմ, խնդրել, որ դուք նեղություն քաշեիք, գայիք ինձ մոտ... Պատկերացնո՞ւմ եք, ինձ դուր է եկել...

— Գիտեմ,— կտրում եմ նրա խոսքը,— թե ով է ձեզ դուր եկել, մենակ թե իզուր տեղն էք չարչարվում, բան չի դուրս գա, ռեբ Լեյզեր-Վոլֆ, բան չի դուրս գա:

— Ինչո՞ւ եք այդպես ասում,— հարցնում է նա ու նայում ինձ, ասես վախեցած:

— Նրա համար, որ դեռ կարող եմ սպասել,— ասում եմ ես,— շտապելու ի՞նչ ունեմ, գետը կրակ չի ընկել:

— Ինչո՞ւ սպասել, եթե հիմա նեթ կարելի է:

¹⁵ Տրեֆա — (հրեերեն) զազանից վնասված անասուն, որի ուտելը կրոնն արգելում էր:

— Դա առաջին,— շարունակում եմ ես,— իսկ երկրորդը՝ պարզապես սիրտս ցավում է, մեղք է, կենդանի արարած է...

— Ասացե՛ք խնդրեմ,— ասում է Լեյզեր-Վոլֆը՝ քթի տակ ծիծաղելով,— սրան են ասել՝ աղքատ ու հպարտ: Մի կողմնակի մարդ որ լսի, կմտածի, թե միևնուճար է: Ինձ թվում է, ռեբ Տեվյե, աչքով չտամ, բավականաչափ ունեք...

— Ունենալը, ունենք,— պատասխանում եմ ես,— թող ապրեն իրենց քեֆին: Իսկ ով որ ինձ նախանձում է, թող ինքը գուրկ մնա...

— Նախանձե՛լ,— ասում է,— ի՞նչ նախանձի բան կա: Ընդհակառակ, հենց նրա համար, որ բոլորն էլ շատ հաջողն են, ես կցանկանայի... Դուք, իհարկե, ինձ հասկանում եք: Մի մոռացեք, ռեբ Տեվյե, որքա՛ն կօգտվեք դրանից:

— Այո՛, այո՛,— պատասխանում եմ,— ձեր բարեգործությունից գլուխս կպտտվի... Ձմռանը ձյունը չեք խնայի, կտա՛ք... դա մեզ վաղուցվանից է հայտնի...

— Ա՛խ,— ասում է նա շողոքորթ ձայնով:— Ռեբ Տեվյե, ի՞նչ եք անցյալը համեմատում ներկայի հետ: Այն ժամանակ ուրիշ գործ էինք բռնել, հիմա միանգամայն ուրիշ գործ է: Չե՞՞ որ հիմա պատրաստվում ենք բարեկամանալ, այնպես չէ՞:

— Ո՞նց թե բարեկամանալ:

— Շատ պարզ,— ասում է նա,— բարեկամանալ:

— Թույլ տվեք, ռեբ Լեյզեր-Վոլֆ, ի՛նչ եք կարծում, մենք ինչի՞ մասին ենք խոսում:

— Չե՛, դուք ասացեք, ռեբ Տեվյե, խոսքը ինչի՞ մասին է: Ինչի՞ մասին պիտի,— ասում եմ,— մոխրագույն կովի, որն ուզում էք ինձանից առնել:

— Հա՛, հա՛, հա՛,— կոտորվում է ծիծաղից մսագործը,— էլ ուրիշ բան չգտավ, կով, էն էլ մոխրագույն: Հա՛, հա՛, հա՛...

— Հապա ո՞ւմ մասին է խոսքը, ռեբ Լեյզեր-Վոլֆ: Ասացեք ես էլ ծիծաղեմ:

— Ձեր աղջկա մասին,— պատասխանում է նա:— Ձեր Ցեյտլի մասին էինք խոսում ամբողջ ժամանակ: Դուք գիտեք, որ ձեզանից հեռու լինի, ռեբ Տեվյե, որբեայրի եմ: Դե, ես էլ միտք արեցի, ասացի՝ ինչու բախտս հեռու տեղում փորձեմ, օձիքս տամ ամեն տեսակի խնամախոսների ու միջնորդների, դևերի ու սատանեքի ձեռքը: Մենք երկուսովս էլ նույն տեղումն ենք ապրում, ես ձեզ գիտեմ, դուք ինձ գիտեք, նա ինքն էլ նույնպես ինձ դուր է գալիս, ես նրան տեսնում եմ հինգշաբթի օրերը, իմ խանութում, մի անգամ փորձեցի հետը խոսել, ոչինչ, երևում է խոնարհ է... Իսկ ես էլ, ինչպես գիտեք, ունևոր մարդ եմ, աչքով չտամ, սեփական տուն, զույգ մառան, տնտեսություն, ինքներդ էլ եք տեսնում, եթե դժգոհեմ, մեղք արած կլինեմ, ձեռնահարկումս էլ պահունի կաշի ունեմ, և սնդուկումս էլ որոշ գումար... Ռեբ Տեվյե, գնչուների նման օյիներ սարքելը, պոչ խաղացները, աչքերին թոզ փչելը ինչների՞նչ է պետք: Արի ձեռք ձեռքի խփենք — մե՛կ, երկո՛ւ, երե՛ք և վե՛րջ: Հասկանո՞ւմ եք թե ոչ:

Երբ որ նա այդ ամենն ասաց, ես քար կտրեցի, ինչպես մի մարդ, որ շշմում է հանկարծակի լուրից: Ճիշտ է, մտքովս իսկույն նեթ անցավ — Լեյզեր-Վոլֆ... Ցեյտլ: Նրա երեխաներն արդեն Ցեյտլի չափ են... Բայց թե, տեղնուտեղը ինքս ինձ առարկեցի: Ասացեք խնդրեմ, ինչպիսի՞ երջանկություն,

ինչպիսի՜ երջանկություն: Աղջկաս համար ախր լավ կլինի: Ճիշտ է, Լեյզեր-Վոլֆը այնքան էլ ձեռքը բաց մարդկանցից չէ: Բայց հիմա դա, ընդհակառակը, մեծ առավելություն է: Ինչպես ասում են՝ «Մարդուն ամենից մոտիկը էլի ինքն է», ով ուրիշների համար բարի է, իր համար չար է: Ճիշտ է, լավ չէ, որ նա պակասամիտ է, որ խելքից աղքատ է... Բայց ինչ կարող ես անել: Հո բոլորն էլ գրագետ չեն լինի: Անատոլկայում, Մագեպովկայում կամ հենց Եգուպեցում քի՞չ պատվավոր մարդիկ կան, որոնց համար տպագիր բառը մույթ անտառ է: Բայց և այնպես, թող աստված ինձ այնքան՝ երջանկություն տա, որքան նրանց են հարգանք պատիվ տալիս: Ինչպես սուրբ գրքումն է ասված՝ «Ոչ գոյ հաց, ոչ գոյ գիտութիւն»: Այսինքն՝ ուսումը սնդուկումն է, իմաստությունն էլ՝ գրպանում...

— Դե, ռեք Տեվյե,— ասում է նա,— ի՞նչ եք լռել:

— Իսկ ինչո՞ւ գոռամ,— պատասխանում եմ ես, որպես թե տատանվելով:— Դա, ռեք Լեյզեր-Վոլֆ, հասկանո՞ւմ եք, մի այնպիսի գործ է, որի համար հարկավոր է ինչպես պետքն է ամեն կողմից մտածել: Կատակ բան չի, առաջին զավակս է:

— Հենց դրա համար էլ,— պատասխանում է նա,— հենց դրա համար էլ որ առաջին զավակդ է, պետք չկա հետաձգելու: Հետո էլ, կամոքն աստծո, կարող եք պսակել երկրորդ աղջկադ, հետո՝ երրորդին: Հասկանո՞ւմ եք:

— Ամե՛ն,— պատասխանում եմ:— Ձեզ էլ նույնն եմ ցանկանում: Աղջիկ մարդու տալը դժվար բան չէ, միայն թե ամենաբարձրալը ամենքին իրեն սրտի ուզածը տա...

— Չէ, ես դա չեմ ասում, ռեք Տեվյե,— պատասխանում է,— ես ուրիշ բան եմ ասում: Ես օժիտ չեմ ուզում, այն ամենը, ինչ պահանջվում է աղջկանդ համար, ես վերցնում եմ ինձ վրա, և պետք է կարծել, որ ձեր ձեռքն էլ որոշ բան կընկնի...

— Փիե՛ր,— պատասխանում եմ ես:— Դուք ինձ հետ խոսում եք, ներեցեք, Ճիշտ այնպես, ինչպես կխոսեք մսի կրպակում: Ի՛նչ է նշանակում «կընկնի», փիե՛ր, իմ Ցեյտը, աստված պահի, են տեսակներից չի, որ փողով ծախեն: Փիե՛ր: Փիե՛ր:

— Դե ինչ արած,— ասում է նա,— «փիե» թող լինի՝ «փիե»: Ես, ընդհակառակը, ուզում էի, որ հնարավորին չափ լավ լինի... Բայց եթե դուք ասում եք «փիե», թող լինի «փիե»: Եթե ձեր սրտովն է, ինձ համար էլ լավ է: Գլխավորը սա է, որքան կարելի է շուտ, առանց ձգձգելու տանտիրուհուն, այսպես ասած, դեպի տուն: Հասկանո՞ւմ եք:

— Իմ կողմից,— պատասխանում եմ,— արգելք չկա: Բայց դեռ պառավիս հետ էլ պետք է խոսեմ: Այսպիսի գործերը նա է կարգադրում: Հանաք բան չի՛, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Հոաքել արտասուեր գորդիս իւր», որը նշանակում է — մայրը բարձր է ամեն ինչից: Եվ, վերջապես, վատ չի լինի, որ իրեն՝ Ցեյտին էլ հարցնենք... Ինչպես ասում են, ամբողջ ազգուտակը հարսանիք դրկեցին, իսկ փեսացուին տանը թողեցին...

— Հիմարությո՜ւն,— պատասխանում է նա,— հարցնե՞լս որն է: Պետք է այսպես անել, ռեք Տեվյե: Պետք է գնալ տուն ու ասել — այսպես ու այսպես, և անմիջապես տանել պսակի, մե՛կ, ե՛րկու, ե՛րեք և մաղարի՛չ:

— Մի՛ ասեք, ռեք Լեյզեր-Վոլֆ, մի՛ ասեք: Ջահել աղջիկ է, հո որբևայրի կնիկ չէ...

— Դե, ինչ խոսք,— պատասխանում է նա:— Աղջիկը — աղջիկ է, և ոչ թե այրի... Եվ հենց դրա համար էլ հարկավոր է նախապես ամեն ինչի մասին պայմանավորվել: Հասկանո՞ւմ եք, հագուստ է

պետք, սա է պետք, նա է պետք, ամեն տեսակի ային-օյին... Բայց մինչ այդ, եկեք, ուրք Տեվյե, մի քիչ կոկորդներս թրջենք, հը՞, թե կարիք չկա...

— Ինչո՞ւ կարիք չկա,— ասում եմ ես:— Մեկը մյուսին չի խանգարի: Ինչպես ասում են՝ մարդը մարդ, գինին գինի: Թալմուդում մի այդպիսի ասացվածք կա...

Եվ սկսեցի... ասացվածք է, որ թափում եմ՝ որպես թե թալմուդից... Սա, նա, ամեն ինչ, ինչ խելքիս փչում է, «Երգ-երգոց»-ից, «Զատկական»-ից:

Միով բանիվ, կուլ տվեցինք դառը հաբը, խմեցինք, ինչպես հարկն է աստծու պատվիրանով: Այդ ընթացքում ծուռթանին քարշ տվեց բերեց ինքնատեղը, և մենք մեկական բաժակ էլ պունչ սարքեցինք: Զրույց ենք անում հաշտ ու բարիշ, բարեմաղթություններ անում միմյանց, շատախոսում՝ հարսանիքի մասին, գլուխներիս զոռ տալիս՝ դեսից-դենից և նորից էլի հարսանիքից:

— Բայց դուք գիտե՞ք, ուրք Լեյզեր-Վոլֆ,— ասում եմ ես,— թե ինչ գոհար է:

— Գիտեմ,— ասում է նա,— եթե չիմանայի իսկի խոսք էլ չէի բաց անի:— Եվ այսպես խոսում ենք երկուսով: Ես գոռում եմ.

— Գո՛հար է: Ալմա՛ստ է: Դուք կկարողանա՞ք նրան գնահատել: Մսագործ լինելներդ ձեզ պիտի պահեք...

Իսկ նա.

— Մի անհանգստացեք, ուրք Տեվյե: Այն, ինչ որ իմ տունը լի օրն է ուտելու, իրեն տանը իսկի տոն օրերին էլ վայ թե չի կերել...

— Դատարկ-դատարկ դուրս ես տալիս,— ասում եմ ես,— էլ ո՛նց կլինեք, մե՛ծ բան է... Ուտե՛լ: Ո՛չ հարուստներն են չերվոնեցներ կուլ տալիս, ո՛չ էլ աղքատները՝ քար կրծում: Դուք անգետ մարդ եք, կկարողանա՞ք նրան գնահատել: Նրա արած թխվածքները, նրա եփած ձուկը, ուրք Լեյզեր-Վոլֆ, եթե ուտեք նրա եփած ձուկը: Մարդ պետք է արժանի լինի, որ նրա ձեռքի եփած ձուկն ուտի...

Իսկ նա, թե՛

— Դուք, ուրք Տեվյե, ներող եղեք, արդեն հալից ընկել եք, դուք մարդ չեք ճանաչում, ուրք Տեվյե, ինձ չգիտեք...

Ես էլ իմն եմ պնդում.

— Կշեռքի մի կողմը ոսկի դիր, մյուսում՝ Ցեյտլին: Հավատացնում եմ ձեզ, ուրք Լեյզեր-Վոլֆ, թեկուզ երկու հարյուր հազար էլ ունենաք, մեկ է, նրա ոտնամանի ներբանին էլ չարժեք...

Իսկ նա՝ նորից.

— Հավատացե՛ք, ուրք Տեվյե, դուք շատ ցանցառն եք, չնայած ինձանից մեծ եք...

Մի խոսքով, սկսեցինք իրար օձիքից ձավար հավաքել և դա, պետք է ենթադրել, տևեց բավականին ժամանակ, քանի որ երկուսիս քեֆն էլ տեղն էր, որովհետև երբ արդեն հայտնվեցի տանը, շատ ուշ էր, և ոտքերս էլ չէին ենթարկվում... Կնիկս, աստված նրան ատողջություն տա, իսկույն ներժգաց, որ կատարս տաքացած է, և սկսեց ոնց որ պետքն է շշպռել:

— Սո՛ւս, Գոլդա, մի՛ բարկանա,— ասում եմ ես, ու ոտներս ուրախությունից գետին չեն առնում:— Մի՛ գոռա, հոգիս, մեզ կարելի է շնորհավորել...

— Շնորհավորե՛լ: Ինչի՞ համար,— պատասխանում է նա:— Նրա համար, որ մոխրագույն կովը Լեյզեր-Վոլֆին չուռը տվեցիր եկա՞ր:

— Դրանից էլ վատ,— ասում եմ ես:

— Փոխել ես ուրիշ կովի հե՞տ: Խաբել ես Լեյզեր-Վոլֆին: Լա՛վ էլ արել ես, նրա նմանին խղճալու կարիք չկա:

— Դրանից էլ վատ:

— Դե մի մարդավարի բան ասա, որ իմանամ է՛,— գոռում է կնիկս:— Հալա դրան տեսեք, աստծու խաթեր, խոսքը բերնից աքցանով պիտի քաշես:

— Շնորհավորում եմ, Գոլդա,— ասում եմ ես նորից:— Արի շնորհավորենք միմյանց: Մեր Ցեյտլը նշանվել է:

— Որ եղպես է, ուրեմն՝ իզուր չէ գինին խփել գլուխդ: Անկապ-անկապ դուրս ես տալիս: Երևում է լավ ես կոնծել:

— Ճիշտ է, մի-մի թաս Լեյզեր-Վոլֆի հետ գցեցինք, հետո էլ մի-մի բաժակ պունչ: Բայց թե խելքս հալա գլխիս է: Եվ թող հայտնի լինի քեզ, Գոլդա, ախպերս, որ մեր Ցեյտլը, աստված բարին անի, նշանված է նրա, այսինքն՝ Լեյզեր-Վոլֆի հետ:

Եվ պատմեցի նրան ամբողջ պատմությունը սկզբից մինչև վերջ, թե ոնց, ինչ և ինչեր խոսեցինք ես ու Լեյզեր-Վոլֆը, պատմեցի բաց չթողնելով և ոչ մի մանրամասնություն:

— Գիտե՞ս ինչ, Տեվյե,— ասում է կնիկս,— ախր իսկապես, սիրտս վկայում էր, ասում էի՝ տա աստված, որ Լեյզեր-Վոլֆը ուրիշ մտքով կանչած լինի: Բայց վախենում էի անգամ մտածել, վախենում էի, թե հանկարծ եղ ամենը օճառի փուչիկ է: Շնորհակալ եմ քեզանից, տե՛ր աստված, փա՛ռք քեզ, ամենագութ հայր: Որը բարի է, է՛ն կատարվի: Թո՛ղ մեր Ցեյտլը նրա հետ մի բարձի ծերանա, ապրի պատվով ու հարգանքով, որովհետև Լեյզեր-Վոլֆի կինը, Ֆրոմե-Սորան, աստված հոգին լուսավորի, ոնց որ թե բախտավոր չէր նրա հետ, գիշերով ասված չլինի, հոգի ուտող կնիկ էր, թող ների ինձ, ոչ ոքի հետ յուր չէր գնում, մեր Ցեյտլի հակապատկերն էր. շնորհակալություն, տեր աստված, շնորհակալությո՛ւն: Դե, Տեվյե, ես ի՞նչ էի ասում քեզ, ա՛յ իմ խելոք: Մարդ չպետք է դարդ անի: Ինչ որ ճակատին գրված է, էն կկատարվի:

— Ինչ ասել կուզի,— պատասխանում եմ:— Չէ՞ որ սուրբ գրքում մի այսպիսի տող կա...

— Ի՞նչ օգուտ քո այդ տողերից,— ասում է նա:— Պետք է հարսանիքի պատրաստություն տեսնել: Ամենից առաջ պետք է մի ցուցակ կազմել ու տալ Լեյզեր-Վոլֆին, թե ինչ է հարկավոր մեր Ցեյտլի համար: Ախր նա ոչ մի ձեռք փոխնորդ ունի, ոչ նույնիսկ գուլպա: Հետո դերյաներ. մեկը մետաքսից՝ պսակի համար, մեկը բրդից՝ ամառվա, մեկն էլ ձմեռվա, հետո մի գույգ բամբակյա կտորից, մի գույգ էլ տակի յուրկա, հետո էլ մուշտակ,— ասում է,— կուզեի, որ երկուսն ունենար, մեկը կատվենու բուռնուս՝ ամեն օրվա հագնելու, և մյուսն էլ աղվեսի մորթուց, դա էլ շաբաթ օրերի համար: Հետո բարձրակրունկ կիսակոշիկներ, սեղմիրան, ձեռնոց, թաշկինակներ, հովանոց և զանազան ուրիշ բաներ, որոնք հիմի հագնում են աղջիկները:

— Գոլդա՛, հոգի՛ս,— ասում եմ,— դու որտեղի՞ց գիտես այդ բոլոր զիզի-պիզիները:

— Ինչ է,— ասում է,— ես մարդկանց մեջ չե՞մ եղել: Դու կարծում ես, չե՞մ տեսել, թե ոնց են մեզ մոտ, Կասրիլովկայում հագնվում: Դու դա թող ինձ, ես կխոսեմ նրա հետ: Լեյզեր-Վոլֆը, փառք աստծո, հարուստ մարդ է, կարծում եմ, որ նա ինքն էլ չի ուզենա մարդկանց բերանն ընկնել: Թե որ խոզի միս ես ուտում, թող մորուքիցդ կաթի՛¹⁶:

Մի խոսքով, զրուցում ենք մինչև լուսաբաց:

— Կնիկ,— ասում եմ,— յուզն ու պանիրը հավաքիր, մինչև դես-դեն, ես գնամ Բոյբերիկ: Ճիշտ է, այդ ամենը շատ լավ է, բայց գործն էլ չպետք է բարձիթողի անել: Ինչպես ասված է. «Հոգիս աստծունն է, բայց կոնակս աղայինն է», այսինքն՝ «գործի մասին էլ պետք է հիշել»:

Եվ կանուխ, մութլուսին ձին լծեցի ու ճամփա ընկա Բոյբերիկ: Մտա շուկան և ի՛նչ, օհո՛, միթե մարդս որևէ գաղտնիք կարող է ունենալ, ո՞ւմ բերանը չիր կթրջի, ամեն ինչ արդեն հայտնի է, ամեն կողմից աչքալուսանք է, որ տալիս են:

— Աստված երջանիկ անի, ռեբ Տեվլե: Կամոքն աստծո ե՞րբ է հարսանիքը:

— Շնորհակալ եմ,— պատասխանում եմ,— աստված ձեզ էլ արժանի անի: Ինչպես առածն է ասում՝ հերը հալա չի ծնվել, որդին հասցրել է կտրանը ցցվել:

— Դե անտեղի մի խոսիր,— գոչում են նրանք:— Ոչ մի բան չի փրկի, ռեբ Տեվլե, պիտի խմենք: Էդ տեսակ մի ուրախություն, աչքով չտանք, ոսկու կարա՛ս, ուրիշ ոչինչ:

— Դե,— ասում եմ ես,— մեր տատը դեռ վաղուց էսպես է գուշակել, նա ասել է՝ ոսկին կհալչի, մենակ տակը կմնա... Դե, իհարկե, ընկերների խաթրը չպիտի կոտրել, խոգություն անելու կարիք չկա: Այ, հենց որ գնորդներիս հետ գործս վերջացրի, էն ժամանակ կխմենք էլ, հալա կուտենք էլ... աչքի՛ս վրա: Ինչպես ասված է՝ «Ցնծա՛ն ուրախ լե՛ր»,— քեֆ արեք, քրջոտներ:

Մի խոսքով, ինչպես միշտ, այս անգամ էլ առևտուրս շուտով վերջացրի ու ախպերտանցս հետ մի-մի թաս գցեցինք, իրար հաջողություն մաղթեցինք ինչպես կարգն է, հետո նստեցի սայլն ու ուրախ-զվարթ, գլուխս տաքացած, ճամփա ընկա դեպի տուն:

Գնում եմ անտառով, ամառվա էլ ժամանակ է, արեգակը չնայած նեղում է, բայց երկու կողմից ծառերը շվաք են գցել, սոճու հոտ է գալիս, հոգիդ փառավորվում է: Աղավարի մեկնվեցի սայլի մեջ, սանձերը բաց թողեցի, ձիուս ազատություն տվեցի, ասի՝ բարի եղիր, գնա քեզ ու քեզ, ճանապարհը հո գիտես... Եվ սկսեցի երգել, ձենս գլուխս եմ գցել, գեղգեղում եմ: Հոգուս մեջ տոն է ասես, միտքս են գալիս ապաշխարանքի աղոթքները: Նայում եմ վեր՝ երկնքին, իսկ մտքերս այստեղ են, երկրի վրա:

«Երկինքը, հիշում եմ ես աղոթքի խոսքերը, «երկինք բնակություն աստծո են», «իսկ զերկիր»՝ իսկ երկիրը, նա տվեց «որդուցն Ադամայ», այսինքն մարդկանց, թո՛ղ, այսինքն՝ գլուխները խփեն պատերին, կատուների նման իրար գգեն հանուն «մեծ շքեղության», հանուն մեծարանքների ու ավագության... «Ննջեցեալք ո՛չ փառաբանեն զաստուած». նրանք ի՞նչ են հասկանում, թե ինչպես պիտի շնորհակալություն հայտնել նրան՝ ներքև առաքած շնորհների համար... «Իսկ մեք...», իսկ մենք՝ խեղճ ու կրակներս, հենց որ մի օր մի քիչ տանելի է լինում, փառաբանում ենք աստծուն,

¹⁶ Ըստ հրեական կրոնի, խոզի միս ուտելը արգելված էր: Եթե մեղանչում ես, ապա գոնե մի այնպիսի բանի համար մեղանչես, որ արժենա. այս է առածի իմաստը:

շնորհակալություն հայտնում ու ասում. «Միբեցի՛» — սիրում եմ քեզ, տեր իմ, որ լսեցիր իմ ձայնը, որ լսեցիր աղոթքս, որ ականջդ դեպի ինձ ես պահում, երբ ամեն կողմից վրա են տալիս վիշտն ու թշվառությունը, փորձանքն ու պատուհասը. օրը ցերեկով կամ կովն է սաստկում, կամ սատանեն Մենախեն-Մենդի նման մի քամի կուլ տվող ազգական է Եգուպեցից բերում, որը պոկում է քո վերջին գրոշը, իսկ դու, մի բուրբ անգամ քեզ ժամանակ չտալով, որ մտածես, վճռում ես, որ ամեն ինչ արդեն վերջացած է, որ ամբողջ աշխարհը կործանվում է, որ «ամենայն մարդ խաբեբա է», որ ճշմարտություն չկա աշխարհի երեսին: Իսկ ի՞նչ է անում աստված: Ներշնչում է Լեյզեր-Վոլֆին, որ առնի իմ Ցեյտլին, ինչպես որ կա, առանց օժիտի... Նորից ու նորից փա՛ռք քեզ, տեր աստված, որ աչքդ գցեցիր Տեվեին, օգնության հասար, որոշեցիր զավակիս բախտավորությամբ ուրախացնել ինձ... Հյուր կգնամ աղջկաս, նրան կտեսնեմ խանում-խաթուն տանտիրուհի... Պահարանները տրաքվում են փոխնորդից, մառանները լիքն են սագի ճարպի և մուրաբեքի բանկաներով, իսկ հավ ու ճվի, սագ ու բադի ձեռքից բակի միջով անցնելու ճար չկա:

Հանկարծ ձիս սկսեց վազել դեպի սարալանջը՝ ինչ-որ տեղ, և մինչև կհասցնեի գլուխս բարձրացնել ու հասկանալ, թե որտեղ եմ, ընկա գետին՝ իմ բոլոր դատարկ պուտուկներով ու կճուճներով հանդերձ և սայլն էլ վրաս: Մի կերպ դժվարությամբ դուրս եկա դրանց տակից, ջարդված, հալից ընկած կանգնեցի և սրտիս ամբողջ հերսը թափեցի ձիուս գլխին:

— Գետնի տա՛կն անցնես հա՛: Քեզ ո՞վ էր խնդրել, այ շշմած, որ ցույց տաս, թե սարալանջը վազելու մեջ ուստա ես: Ախր մազ էր մնացել, որ գլխիս փորձանք բերես, այ դե-սատանա:

Ծեծեցի դրան ինչքան ուժս պատեց: Իմ կտրիճը, երևում է, ինքն էլ հասկացավ, որ արածը բանի նման չէր, կանգնել է գլուխը քաշ, ինչպես կովը՝ կթելու ժամանակ:

— Այ գրողը տանի քե՛զ,— ասում եմ ես, բարձրացնում եմ սայլը, հավաքում ամանեղենը և «գնացի՛ առ նախահարս իմ» — շարունակեցինք գնալ:— Վատ նշան է,— ասում եմ ինքս ինձ,— տանը արդյոք որևէ բան չի՞ պատահել:

Եվ այդպես է որ կա, մի երկու վերստ էլ ենք գնում, արդեն տունն էլ հեռու չէ, տեսնեմ ճանապարհով դեպի ինձ է գալիս մի կանացի կերպարանք: Ավելի եմ մոտենում, տեսնեմ Ցեյտլն է: Զգիտեմ ինչու, բայց սիրտս խփեց, երբ որ ես նրան տեսա: Մայլից ցած իջա:

— Ցեյտլ, դո՞ւ ես: Ի՞նչ բան ունես այստեղ:

Իսկ նա հեկեկալով ընկնում է վզովս:

— Ա՛խ,— ասում է,— հայրի՛կ, հայրի՛կ...

Ու լաց է լինում: Աչքերս մթնեցին, սիրտս ճմլվեց:

— Ի՞նչ է պատահել քեզ, աղջիկս, ի՞նչ է պատահել,— ասում եմ ես ու փաթաթվել եմ նրան, գուրգուրում եմ, համբուրում:

Իսկ նա.

— Հայրի՛կ, թանկագինս, սիրելիս: Երեք օրը մեկ մի կտոր հաց կուտեմ... Խղճա՛ ինձ, ափսոս է ջահել կյանքս:— Եվ նորից աղի-արցունք է թափում, և մի խոսք ասել չի կարողանում:

«Վա՛յ ինձ,— մտածում եմ ես:— Արդեն գուշակում եմ, թե բանն ինչումն է: Թե ո՛ր սատանեն էր խելքս մտել, թե գնա՛ Բոյբերիկ»:

— Էլ ինչու ես լալիս,— ասում եմ ես ու շոյում նրա գլուխը:— Հիմա՛ր աղջիկ, էլ ինչու ես լալիս: Դե ի՞նչ արած, չես ուզում, չես ուզում, ոչ ոք գոռով վզիդ չի փաթաթում: Մենք քո լավն էինք ուզում: Իսկ թե սրտովդ չէ, ինչ կարող ես անել: Վիճակված չէ, երևում է:

— Շնորհակա՛լ եմ քեզանից, հայրիկ,— պատասխանում է նա,— աստված քեզ երկար կյանք տա:— Եվ նորից կրծքիս է ընկնում, նորից համբուրում՝ արցունքները շաղ տալով:

— Միայն թե,— ասում եմ,— հերիք է մղկտաս: «Ունայնություն, ունայնութեանց» — ամեն բան ինչ սկիզբ ունի, վերջ էլ ունի: Բարձրացիր սայլը, գնանք տուն: Մորդ մտքով հիմի ինչեր ասես, որ չի անցնում:

Կարճ ասած, նստեցինք, և ես սկսեցի դեսից-դենից խոսել, նրան հանգստացնել:

— Ախր տես, թե ինչն ինչոց է,— ասում եմ ես:— Մենք, իհարկե, քո լավն էինք ուզում: Աստվա՛ծ վկա, մենք ուզում էինք մեր զավակի կյանքը, համենայն դեպս ապահովել, իսկ եթե դա չի լինելու, նշանակում է աստծո կամքն է այդպես: Աղջիկս, քեզ վիճակված չէ, ուրեմն ամեն ինչ պատրաստի վայելել, հարուստ տանտիրուհի դառնալ, իսկ մեզ էլ՝ ծերության օրերում մխիթարություն գտնել՝ մեր տանջանքի չարչարանքի դիմաց. զօր ու գիշեր ասես կպած լինեմ սայլին, ոչ մի ուրախություն կա, ոչ հանգստություն, մենակ աղքատություն ու կարիք, և ինչի որ ձեռք եմ ձգում՝ ձախորդություն, ուրիշ ոչինչ:

— Ախ հայրի՛կ,— պատասխանում է նա ու նորից լալիս:— Ես կգնամ աղախին կմտնեմ, կավ կշաղախեմ, հող կփորեմ...

— Ի՞նչ ես ողբում, հիմար աղջիկ,— ասում եմ ես,— մի՞ թե քեզ վրա եմ բարկանում կամ թե որևէ բան եմ պահանջում քեզանից: Պարզապես մեր կյանքն է դառը, մեր կյանքն է անուրախ, դե ես էլ սիրտս բացում, նրա հետ եմ խոսում, տեր աստծու, թե ոնց է ինձ հետ վարվում: Նա, գրառատ հայրը, խղճում է ինձ, իր ուժով գոռոզանում, թող չպատժի ինձ էս տեսակ խոսքերի համար, հաշիվ է տեսնում ինձ հետ, իսկ դու ինչ կուզես արա, կուզես ձայնդ գլուխդ գցիր, «օգնություն» գոռա: Բայց երևում է, այդպես էլ պետք է լինի: Նա այնտեղ, վերևում, իսկ մենք այստեղ, խոր փոսի մեջ թաղված... Ահա մենք էլ ստիպված ենք ասելու, որ նա միշտ ճշմարիտ է և դատաստանը՝ արդար: Բայց թե մյուս կողմից էլ ախր սարսաղի մեկը չե՞մ ես: Բանն ինչումն է: Ինչո՞ւ եմ տաքացել: Ո՛նց թե, ես ախր գետնի վրա սողացող մի ճիճու եմ, մի թշվառ էակ, որին եթե աստված կամենա, մի թեթև քամի կանի ու գետնի երեսից կմաքրի: Ես իմ տկար խելքով համարձակվում եմ ցույց տալ, թե ոնց պետք է կառավարի աշխարհը: Եթե նա հրամայել է, որ այսպես լինի, և ոչ այլ կերպ, նշանակում է՝ այդպես էլ պիտի լինի, տրտնջալը չի օգնի: Քառասուն օր առաջ, ասում եմ ես, քառասուն օր առաջ՝ նախքան մոր արգանդում մանկան սկիզբ առնելը, թոչում գալիս է հրեշտակը և ասում՝ «Այսինչի աղջիկը՝ այսինչին»: Թո՛ղ Տեվլեի աղջկան առնի, ասենք, Ջորահի տղա Գեցը, իսկ մսագործ Լեյզեր-Վուֆը թող նեղություն քաշի ու իրեն բախտը ուրիշի մոտ փնտրի: Ա՛յն, ինչ սահմանված է, նրանից չի փախչի, իսկ աստված քեզ էլ, աղջիկս, թող քո բախտին արժանացնի, միայն թե կարգին մարդ լինի, ու թեպիտի լինի, շո՛ւտ լինի: Մենակ թե մերդ գոնե քիչ ճվճվա... Օ՛ֆ, գլուխս ինչ օյին կհանի...

Մի խոսքով, հասանք տուն, ձին արձակեցի, նստեցի դռան առաջ, կանաչի վրա ու սկսեցի մտածել ու գուշակել, թե ոնց դուրս գամ դժվար տեղից, ինչ հնարեմ իմ կնկա համար, «Հազար ու մեկ գիշերների» նման ի՞նչ հեքիաթ հորինեմ, որ փորձանքից դուրս պրծնեմ:

Իրիկնամուտ է: Արեգակը մայր է մտնում: Օրը տաքով է: Հեռվում կոկոռում են գորտերը, ձին, երեք ոտները կապած, արածում է, կովերը հենց նոր են վերադարձել արոտից և կովկիթների մոտ

կանգնած սպասում են, որ կթեն. իսկ կանաչը չորս կողմ բուրում է, իսկ և իսկ երկրային դրախտ: Նստել եմ ու նայում եմ այդ ամենին ու մտածում, թե ինչպիսի՜ իմաստությամբ է ստեղծել ամենաբարձրայն իր աշխարհը: Ամեն մի արարած, մարդուց սկսած, ասենք, մինչև կովը, պետք է իր հացը ինքը վաստակի. ձրի ոչինչ չի տրվում: Դու, անուշիկ կովիկ, ուտել ուզո՞ւմ ես, ուրեմն կաթ տուր, կերակրիր տիրոջդ, նրա կնոջը և երեխեքին: Դու, ձիուկ, ծամել ուզո՞ւմ ես, ուրեմն պուտուկները ամեն անգամ Բոյբերիկ տար ու ետ բեր: Այդպես էլ մարդ արարածը. մի կտոր հա՞ց ես ուզում, նեղություն քաշիր աշխատել, կով կթել, կճուճները քարշ տալ, կարագ հարել, պանիր պատրաստել, իսկ հետո՝ ձին լծիր ու մինչև ծեղը ծեղելը հասիր Բոյբերիկի ամառանոցները, խոնարհ գլուխ տուր, մեջքդ ծոիր Եզուպեցի հարուստների առաջ, ժպտա՛, շողոքորթի՛ր ամեն մեկին, սրտները առ, որ քեզանից գոհ լինեն, որ հանկարծ ինչ-որ բանով ինքնասիրությանը չդիպչես... Հարց է առաջանում, ճի՞շտ է, «Ինչո՞ւ է տարբերվում» — ինչո՞ւ համար է այդ տարբերությունը: Այդ որտե՞ղ է ասված, որ Տեվյեն պետք է նրանց համար աշխատի, արթնանա մուրճուսին, երբ դեռ աստված ինքն էլ է քնած: Հանուն ինչի՞: Հանուն նրա, որ առավոտյան սուրճին նրանց թարմ կարագ ու պանիր հասցնի... Այդ որտե՞ղ է ասված, որ Տեվյեն պարտավոր է տանջվել, քրքրվել մի ինչ-որ ջրալի վոիկի համար, մի ինչ-որ խաշիլի համար, իսկ նրանք՝ Եզուպեցի հարուստները, պետք է մեջքներին թիկն տան, մատը մատին չխփեն ուտեն անպայման կարկանդակ, կաթնահունց ու նագուք: Ես էլ այնպիսի մարդ չե՞մ, ինչպիսին նրանք են: Մի՞թե արդարացի չէր լինի, եթե Տեվյեն թեկուզ մեկ ամառ Բոյբերիկում ապրեր: Բայց և նորից հարց է առաջանում — որտեղի՞ց կլինեք յուզն ու պանիրը: Ո՞վ կկթեր կովը: Միգուցե նրանք, Եզուպեցի արիստոկրատները... Եվ սկսեցի քահ-քահ ծիծաղել այդ խելառ մտքից... Մի ասացվածք կա. «Ճիշտ խոսքը խելառից լսիր...»:

— Բարի երեկո՛, ռեբ Տեվյե,— անունս է տալիս ինչ-որ մեկը:

Շրջվում եմ, տեսնում եմ՝ ծանոթ է: Մոտլ Կամզուլը՝ Անատոլկայի դերձակի աշկերտը:

— Քեզ էլ բարի երեկո,— ասում եմ ես,— բարով եկար: Անունը տուր, սուփրեն փոիր: Նստի՛ր, Մոտլ, աստծու հողին: Ո՛նց է, որ երևացիր:

— Ոնց երևացի՞, ոտներովս,— ասում է նա, նստում է մոտս, կանաչի վրա ու նայում այնտեղ, ուր իմ աղջիկները պուտուկներն ու կճուճները ձեռքներին դեսուղեն են գնում:

— Վաղուց էի ուզում գալ, ռեբ Տեվյե,— ասում է նա,— բայց ժամանակ չէի գտնում: Մեկիցը պատվեր եմ վերցնում, մյուսինը՝ հանձնում: Ես հիմա ինքնուրույն եմ աշխատում, գործ շատ կա, փա՛ռք աստծու: Բոլոր դերձակները պատվերների ձեռքից աչք չեն բաց անում. այս ամառը հարսանիքներով սկսվեց. հարսանիք հա՛ հարսանիք: Բերլ Ֆոնֆաչը աղջկան է պսակում, Իոսելե Շեյգեցի տանը՝ հարսանիք: Մենդլ Զայկի տանը՝ հարսանիք, Յանկլ Պիսկաչի տանը՝ հարսանիք, հարսանիք են անում նաև Մոիշե Գորգը, Մեյեր Կրապիվան, Խայիմ Լոշակը, նույնիսկ այրի Տրեգուբիխան:

— Ամբողջ աշխարհը հարսանիք է անում,— ասում եմ,— մենակ իմ բախտը չբերեց: Աստված երևի ինձ արժանի չհամարեց...

— Ո՛չ,— ասում է Մոտլը, նայելով իմ աղջիկներին,— դուք սխալվում եք, ռեբ Տեվյե: Եթե դուք ցանկանաք, հենց հիմա նեթ հարսանիքի պատրաստություն կտեսնեք... Ձեզանից է կախված:

— Այսինքն,— հարցնում եմ ես,— ո՛նց թե: Միգուցե աչքադրած փեսացու ունես իմ Ցեյտլի համար:

— Իսկական չափսով,— պատասխանում է նա:

— Մի բան արժի՞, թե չէ,— հարցնում եմ ես ու մտածում։ Ա՛յ թե մասխարա բան կլինի, հա՛, որ սա մսագործ Լեյզեր-Վուլֆի համար ասի։

— Լավ ձևված է, պինդ էլ կարված,— պատասխանում է նա՝ դերձակի իրենց լեզվով ու նայում էլի իմ աղջիկներին։

— Փեսացուն որտեղացի՞ է,— հարցնում եմ,— ո՞ր կողմերից։ Թե նրանից մսի կրպակի հոտ է փչում, լսել անգամ չեմ ուզում։

— Աստված փրկի ու ազատի,— պատասխանում է նա։— Ոչ մի կրպակի հոտ էլ չի գալիս նրանից։ Դուք, ախար, ռեֆ Տեվյե, նրան լավ եք ճանաչում։

— Իսկ նա մեզ հարմա՞ր է։

— Այն էլ ո՞նց,— պատասխանում է նա։— Հարմար կա, հարմար էլ կա. սա, ինչպես ասում են, իսկ և իսկ չափսովն է, կետ առ կետ։

— Ախր դա ո՞վ է, շատ հետաքրքիր է իմանալ։

— Ո՞վ է,— կրկնում է նա՝ աչքը դեռևս չկտրելով իմ աղջիկներից։— Փեսացուն, հասկանո՞ւմ եք, ռեֆ Տեվյե, հենց ե՛ս եմ որ կամ։

Որ այս խոսքերը չասաց, ոնց որ եռման ջուրը լցնեն գլխիս, վեր թռա տեղիցս, նա էլ իմ ետևից։ Ու կանգնել քարացել ենք դեմ-դիմաց, փետուրները ցցած, կովի պատրաստ աքլորների նման։

— Ցնդվե՛լ ես, թե գժվե՛լ,— ասում եմ ես։— Դու համ հարսնախոս ես, համ խնամախոս, համ էլ փեսացո՞ւ։ Քո սեփական դուդուկի տակ հարսանի՞ք ես անում։ Ոչ մի տեղ լսած չկամ, որ տղեն ինքն իր համար խնամախոս գնա։

— Ինչ վերաբերում է գժվելուն,— պատասխանում է նա,— թող մեր թշնամիները գժվեն։ Ես դեռևս, կարող եք ինձ հավատալ, չեմ գժվել։ Չպետք է խելագարված լինել, որ ցանկություն ունենաս ամուսնանալու ձեր Ցեյտլի հետ։ Նույնիսկ Լեյզեր-Վուլֆը, որ մեր ավանի ամենահարուստ մարդն է. նա էլ է նրան ուզում հենց էնպես, ինչպես որ կա... Գիտեք թե գաղտնի՞ք է։ Ամբողջ ավանն արդեն գիտի։ Իսկ ինչ վերաբերում է նրան, որ ասում եք՝ «դու ինքդ, առանց խնամախոսի», ես, ճիշտն ասած, զարմանում եմ, ռեֆ Տեվյե, դուք, ախար, ինչքան չլինի մի մարդ եք, որի բերանը, ինչպես ասում են՝ մատդ մի տանի — կկծի... Բայց թե ինչ կարիք կա երկար ու բարակ խոսելու։ Բանը նրանումն է, ախար, որ ես ու ձեր աղջիկը՝ Ցեյտլը, վաղուցվանից, ավելի քան մի տարի է խոսք ենք տվել, որ ամուսնանանք...

Լավ էր մի դանակ խփեին սրտիս, քան թե այդ խոսքերը լսեի։ Նախ և առաջ դերձակ Մոտյը ո՞վ է, որ համարձակվի Տեվյեի փեսան դառնալ։ Եվ երկրորդ, դա ի՞նչ բան է՝ «խոսք ենք տվել, որ ամուսնանանք»...

— Հապա ես։ Որտե՞ղ եմ ես, հարց է առաջանում։ Ես էլ, ոնց որ թե ինչ-որ իրավունքներ ունեմ իմ խոսքն ասելու աղջկա։ Թե՞ ինձ արդեն հարցնելու կարիք էլ չկա։

— Ի՞նչ եք ասում, աղաչում եմ,— պատասխանում է նա։— Ախր ես դրա համար էլ եկել եմ, որպեսզի խոսեմ ձեզ հետ։ Հենց որ լսեցի, թե Լեյզեր-Վուլֆը նշանվում է ձեր աղջկա հետ, որին ես արդեն մի տարուց ավելի է սիրում եմ...

— Ասացե՛ք խնդրեմ,— ասում եմ ես,— Տեվյեն աղջիկ ունի՝ Յեյտլ անունով, իսկ քո անունն էլ Մոտլ Կամզոլ է և զբաղվում ես դերձակությամբ, էլ ինչո՞ւ պիտի դեմ լինես, ինչո՞ւ պիտի նրան չսիրես:

— Չէ,— ասում է,— դուք ախր ինձ լավ չհասկացաք: Ես ուզում էի ասել, որ սիրում եմ ձեր աղջկան, որ ձեր աղջիկն էլ ինձ է սիրում, ահա ավելի քան մի տարի, և մենք արդեն խոսք ենք տվել, որ ամուսնանանք. մի քանի անգամ պատրաստվել եմ, որ ձեզ հետ խոսեմ, բայց հետաձգում էի, մինչև որ մի քիչ փող հավաքեի, կարի մեքենա առնեի, հետո էլ մի քիչ հագուստ-կապուստ անեի ինձ համար, ինչպես կարգն է: Քանի որ հիմիկվա ժամանակներում տեղից վերկացող ամեն մի մարդ թեկուզ երկու կոստյում ու մի քանի ժիլետ պետք է ունենա...

— Թո՛ւ, գետնի տակն անցնեք դուք,— ասում եմ ես,— երեխավարի բաներ եք ասում: Իսկ դուք ի՞նչ պիտի անեք հարսանիքից հետո: Բերաններդ առաստաղի՞ն բռնեք, թե՞ ժիլետկաներով պիտի կնոջդ կերակրես:

— Զարմանում եմ ձեզ վրա, ռեբ Տեվյե, մի՞թե ձեզնից պիտի այդպիսի բաներ լսեի: Ես ենթադրում եմ, որ երբ դուք պատրաստվում էիք ամուսնանալու, սեփական քարաշեն տուն չունեիք, բայց և այնպես, ինչպես տեսնում եք... ի՞նչ կա որ, ինչպես ուրիշները, այնպես էլ ես... Իսկ ես, դեռ այսպես թե այնպես ձեռքիս արհեստ էլ ունեմ...

Մի խոսքով, ինչ երկարացնեմ, նա ինձ համոզեց: Եվ ինչու համար ինքս ինձ խաբեմ, հապա ինչպես են բոլոր ջահելները ամուսնանում մեզ մոտ: Եթե հաշվի նստեն այդպիսի բաների հետ, մեր ապրուստի տեր մարդիկ ախր իսկի չպիտի ամուսնանան... Մենակ մի բան շատ էր սրտիս դիպել, և դա ոչ մի կերպ հասկանալ չէի կարողանում — ի՞նչ է նշանակում, թե նրանք միմյանց խոսք են տվել: Տես հալա, թե ի՞նչ օրի հասանք: Տղան հանդիպում է աղջկան և ասում, «Արի խոսք տանք, որ իրար հետ կամուսնանանք...»: Ինչքա՛ն պարզ, ինչքա՛ն հեշտ ու հանգիստ: Միայն թե երբ նայեցի ես իմ Մոտլին, երբ տեսա կանգնած է հանցավորի նման գլուխը քարշ արած և որ խոսում է լուրջ, առանց ետին մտքերի, սկսեցի ուրիշ կերպ մտածել: Ասացի՝ արի այս գործին հալա մյուս կողմից էլ նայիր: Ի՞նչ եմ մի գլուխ կոտրատվում ու ինձ չհասկացողի տեղ դնում: Ես մի շա՛տ նշանավոր տոհմից եմ, ինչ է: Թե՛ աղջկաս բեռ ու բարխանով օժիտ եմ տալիս կամ թե, ներիր ինձ աստված, թանկարժեք հագուստ ու կապուստ: Մոտլ Կամզոլը, իհարկե, ոտքից գլուխ մի դերձակ է, բայց շատ լավ տղա է, լավ աշխատավոր, կնկան քաղցած չի թողնի, մանավանդ որ ազնիվ էլ մարդ է: Էլ ի՞նչ եմ ուզում նրանից: «Տեվյե, ասացի ինքս ինձ, թա՛րկ տուր պարծենկոտությանդ և խոսիր այնպես, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Ներեցից ըստ բանի քում»: «Աստված երջանկություն տա»:

Բայց ինչպե՞ս վարվել իմ պառավի հետ: Ախր նա իմ գլուխը մի օյին կոնի, որ կերածդ հացը կմոռանաս: Ո՞նց ասես նրան, որ նա էլ համաձայնվի:

— Գիտե՞ս ինչ, Մոտլ,— դիմում եմ ես իմ նորահայտ փեսացուին:— Դու գնա տուն, իսկ ես այստեղ, այդ ընթացքում ամեն ինչ կկարգավորեմ, սրա հետ խոսեմ, նրա հետ խոսեմ: Ինչպես Եսթերի ավանդության մեջ ասված է. «Ես ըմպելիս որ ընկալեալ է», այդ բոլորի մասին պետք է մի լավ մտածել, ինչպես պետքն է: Իսկ վաղը, կամոքն աստծո, եթե դու այդ միջոցում միտքդ փոխած չես լինի, մենք հավանաբար կտեսնվենք:

— Միտքս փոխե՞մ,— պատասխանում է նա:— Միտքս փոխեմ: Թո՛ղ ոտքս կոտրվի, մնամ այստեղ: Թո՛ղ քար կտրեմ:

— Ի՞նչ եմ անում քո երդումները,— ասում եմ ես:— Առանց երդումների էլ եմ հավատում քեզ: Ո՛ղջ եղիր, բարի գիշեր, բարի երազներ տեսնես...

Ես ինքս էլ եկա տուն, պառկեցի որ քնեմ, բայց քունը մոտիկ չի գալիս: Գլուխս ուռչում է, մեկ սա եմ հնարում, մեկ նա: Բայց վերջապես հնարը գտա: Լսեցե՛ք, թե Տեվյեի գլխում ինչեր կարող են ծնվել:

Կեսգիշերին մոտ է, տանը բոլորը պինդ քնած են, որը խոնփում է, որը շվշվացնում, իսկ ես հանկարծ ձայնս փոխած որ չեմ գոռում. «Ամա՛ն, հարա՛յ, օգնեցե՛ք»: Եվ, իհարկե, ամբողջ տունը իրար եմ խառնում: Առաջինը վրա է վազում Գոլդան ու սկսում ինձ ցնցել:

— Աստվա՛ծ քեզ հետ, Տեվյե: Արթնացիր: Ի՞նչ է պատահել. Ի՞նչ ես գոռում:

Ես բաց եմ անում աչքերս, նայում շուրջս, ասես փնտրում եմ ինչ-որ մեկին, և կերկերուն ձայնով հարցնում.

— Որտե՞ղ է նա:

— Ո՞վ: Ո՞ւմ ես փնտրում:

— Ֆրումա-Սորային,— պատասխանում եմ,— Ֆրումա-Սորան՝ Լեյզեր-Վոլֆի կնիկը, հենց նոր կանգնած էր էստեղ...

— Դու զառանցում ես, Տեվյե,— ասում է կինս:— Աստված քեզ հետ: Ֆրումա-Սորան՝ Լեյզեր-Վոլֆի կնիկը, հեռու մեզանից, վաղուց արդեն էն աշխարհումն է...

— Գիտեմ,— ասում եմ ես,— որ մեռել է, բայց մեկ է, նա հենց հիմա էստեղ էր, հենց մահճակալիս կողքին կանգնած, ինձ հետ խոսում էր, հետո բռնեց կոկորդիցս ուզում էր խեղդել...

— Ուշքի արի, Տեվյե,— ասում է կնիկս — Ինչե՞ր ես դուրս տալիս: Երևի երազ ես տեսել: Երեք անգամ թքիր ու ինձ պատմիր, թե ինչ է աչքիդ երևացել, ես քեզ տեղը-տեղին կմեկնեմ...

— Աստվա՛ծ քեզ առողջություն տա, Գոլդա, որ ինձ ուշքի բերեցիր,— ասում եմ ես,— թե որ դու չլինեիր, հիմա սիրտս վախից պայթել էր... Մի կում ջուր տուր խմեմ, որ կարողանամ պատմել, թե ինչ տեսա: Մենակ թե չվախենաս, Գոլդա, և ոչ էլ մտքովդ ուրիշ բաներ անցկացնես: Մեր սուրբ գրքերումն ասված է, որ երազի միայն մեկ երրորդը կկատարվի, իսկ մնացածը մաքուր սուտ է, հիմարություն, անհեթեթություն...

— Ամենից առաջ,— սկսեցի ես,— տեսա, որպես թե, մեր տանը ինչ-որ քեֆ-ուրախություն է, թե հարսանիք է, թե նշանդեք, չեմ կարող ասել. կնանիք, տղամարդիկ, ռաբբիներ, մսագործ... Հապա երաժիշտնե՛րը: Ու հանկարծ բացվում է դուռը, ներս է մտնում քո Ցեյտլ տատը, աստվա՛ծ հոգին լուսավորի...

— Լսելով Ցեյտլ տատի անունը, կնիկս սփրթնեց քաթանի նման ու հարցրեց. դեմքը ի՞նչ տեսակ էր, իսկ ի՞նչ էր հագել:

— Դե՛մքը,— պատասխանում եմ ես:— Թշնամուս ցանկանամ էդպիսի դեմք — դեղի՛ն, ոնց որ մեղրամոմ, իսկ հագուստը, իհարկե, սպիտակ էր, պատանք... «Աչքներդ լույս լինի՛, ասում է ինձ Ցեյտլ տատը, ես շատ գոհ եմ, քանի որ ձեր աղջկա՝ Ցեյտլի համար, որին իմ անունն էք դրել, ընտրել էք մի էդպիսի օրինավոր փեսացու: Նրան ասում են Մոտլ-Կամզոլ ի հիշատակ իմ քեռի Մորդիսեի, և չնայած նա դերձակ է, բայց շատ ազնիվ տղա է...»:

— Էդ որտեղի՞ց,— ասում է Գոլդան,— մեզ մոտ խցկվեց մի ինչ-որ դերձակ: Մեր գերդաստանում եղել են մելամեղներ, կանտորներ, սինագոգի ժամկոչներ, գերեզմանափորներ, ուղղակի աղքատներ, բայց դերձակ — չէ, չէ, չէ, աստված հեռու տանի, ո՛չ էլ կոշկակար...

— Ինձ մի ընդհատիր, Գոլդա,— ասում եմ ես:— Երևի քոՅեյտլ տատը ավելի լավ գիտի... Լսելով մի էդպիսի աչքալուսանք, ես ասում եմ նրան՝ «Տատիկ, ինչու եք ասում, թե Յեյտլի փեսացուի անունը Մոտլ է և որ նա դերձակ է: Նրա փեսացուն, մսագործ Լեյզեր-Վոլֆն է»: «Ո՛չ,— պատասխանում է Յեյտլ տատը,— ո՛չ, Տեվյե, քո Յեյտլի փեսացուի անունը Մոտլ է, նա դերձակ է, նրա հետ էլ աղջիկդ կապրի մինչև օր-ծերություն, գոհ ու երջանիկ, շեն ու լի կյանքով», «Դե լավ, ասում եմ, տատիկ, բայց ոնց անենք Լեյզեր-Վոլֆի հետ: Ախր հենց երեկ եմ նրան խոսք տվել»: Չէի հասցրել խոսքս վերջացնել, տեսնեմ Յեյտլ տատը չկա՛, անհետացել է: Իսկ նրա տեղում կանգնած է Ֆրումա-Մորան, Լեյզեր-Վոլֆի կնիկը, որը դիմում է ինձ էս տեսակ խոսքերով: «Ռեբ Տեվյե, ես ձեզ միշտ էլ համարել եմ օրինավոր ու աստվածավախ մարդ... Ո՞նց է պատահել, որ դուք որոշել եք նման բան անել: Դուք ինչպե՞ս կարող էիք ցանկանալ, որ ձեր աղջիկը իմ ունեցվածքի ժառանգորդը դառնա, որ ապրի իմ տանը, տիրապետի իմ բանալիներին, հագնի իմ վերարկուն, զարդեղենս, մարգարիտներս»: «Ես ինչո՞ւ եմ մեղավոր, պատասխանում եմ ես: Ձեր Լեյզեր-Վոլֆն է էդպես ուզել». «Լեյզեր-Վոլֆը, ասում է նա: Լեյզեր-Վոլֆի բանը բուրդ է, իսկ ձեր Յեյտլը... Մե՛ղքս գալիս է, որ ասեմ: Երեք շաբաթից ավելի նրա հետ չի ապրի: Իսկ երբ անցնի երեք շաբաթը, գիշերը կհայտնվեմ նրա մոտ, կբռնեմ կոկորդիցն ու ա՛յ, հենց էսպես...» Էդ միջոցին, ասում եմ ես, Ֆրումա-Մորան բռնեց կոկորդիցս ու սկսեց խեղդել ամբողջ ուժով... Եթե դու ինձ չգարթեցնեիր, ես արդեն վաղուց էի է՛ն... է՛ն... է՛ն...

— Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ,— երեք անգամ թքեց կնիկս:— Թող էս ամենը ջրի տակ սկի, թող գետնի տակն անցնի, թող կտուրներին թափառի, անտառում թաղվի, որ մեզ ու մեր երեխեքին չվնասի: Աշխարհի փորձանքներն ու պատուհասները թափվեն մսագործի գլխին, նրա ձեռքերին, նրա ոտներին: Թող իզն ու թողը կտրվի, նա Մոտլ Կամգոլի մի եղունգն էլ չարժի, չնայած որ Մոտլ Կամգոլը դերձակ է: Եվ եթե նա կրում է իմ քեռի Մորդիսեի անունը, ապա կա-չկա նրա դերձակ լինելը ի ծնե չէ... Եվ եթե Յեյտլ տատը, աստված հոգին լուսավորի, նեղություն է քաշել ու էն աշխարհից եկել հասել է, որպեսզի շնորհավորի, նշանակում է, մենք պետք է ասենք — հե՛նց սա է որ կա, բարով խերով լինի: Ամե՛ն:

Մի խոսքով, ինչ երկարացնեմ: Ես այդ գիշեր երկաթից էլ պինդ էի, որ վերմակի տակին ծիծաղից չտրաքվեցի... Ինչպես աղոթքն է ասում. «Օրհնեալ եղիցիս, գոր ինձ ո՛չ արար կին», կնիկարմատը կնիկարմատ էլ կմնա: Դե, պարզ է, որ հաջորդ օրը մեզ մոտ նշանդրեք եղավ, իսկ շուտով նաև հարսանիք, ինչպես ասում են՝ մի հարվածով: Եվ ջահելները, փառք աստծու, ուրախ են ապրում: Մոտլը դերձակություն է անում, գնում է Բոյբերիկ, շրջում ամառանոցից ամառանոց գործ է հավաքում, իսկ Յեյտլը գոր ու գիշեր բան ու գործից աչք չի բաց անում, եփում է, թխում, մաքրում, լվանում, ջուր կրում: Հագիվիազ մի կտոր հաց են վաստակում: Եթե ես մեկ-մեկ կաթնեղեն կամ թե մի քիչ փող չտանեմ, նրանց վիճակը շատ ավելի վատ կլիներ: Իսկ եթե Յեյտլին հարցնեք, նա կասի, որ շատ լավ է ապրում, որ, փա՛ռք աստծու, դրանից ավելի ի՞նչ է պետք, մենակ ողջ լինի իմ Մոտլը... Ահա՛, խնդրեմ, թե կարող եք գլուխ հանեք հիմիկվա երեխեքից:

Հենց այդպես էլ ստացվեց, ինչպես ես ձեզ սկզբում ասացի. «Աճեցուցի զգավակունս իմ և սնուցի», եզան նման աշխատիր հանուն զավակների, ձկան նման խփվիր սառույցներին,— «Բայց նոքա արհամարհեցին զիս»,— իսկ նրանք ասում են, որ մեզնից ավելի լավ են հասկանում: Չէ, ինչ կուզեք ասեք, մեր երեխեքը շատ են խելացի: Մենակ թե, ինձ թվում է, որ այս անգամ ձեր գլուխը շատ ավելի տարա, քան երբևէ: Ներողամիտ եղեք:

Մաղթում եմ ձեզ առողջություն և ամենայն հաջողություն:

1899

ԳՈՂԼ

Դուք զարմանո՞ւմ եք, պաննե Շոլում-Ալեյխեմ, որ Տեվյեն վաղուց է, ինչ չի երևում: Նիհարել է, ասում եք, ինչ-որ միանգամից ճերմակել: Է՛խ, Է՛խ, Է՛խ: Եթե դուք իմանաք, թե ինչ դարդերով, ինչ ցավերով է քարշ գալիս Տեվյեն աշխարհի երեսին: Ինչպես ասում են մեզ մոտ՝ «Հող էիր և հող դարձցիս», մարդ արարածս ճանճից տկար է և երկաթից ամուր: Ուղիղն ասած, մի գիրք կարելի է գրել իմ մասին: Ո՛չ մի փորձանք, ո՛չ մի չարիք, ո՛չ մի դժբախտություն կողքովս չի անցնում: Ինչի՞ցն է այդպես: Դուք չգիտե՞ք: Միգուցե դա նրանից է, որ ես մի մարդ եմ, որը բնավորությամբ հիմարության աստիճանի դյուրահավատ է, ամենքին ընդունում է խղճի մտոք: Տեվյեն մոռանում է, որ իմաստունները հազար անգամ զգուշացրել են. «Հարգի՛ր գնա և կասկածի՛ր», իսկ հրեերն դա նշանակում է. «Մի՛ հավատա շանը»: Բայց ասացեք խնդրեմ, ի՞նչ կարող եմ անել, բնավորությունս այդպես է: Ես, ինչպես ձեզ հայտնի է, ապրում եմ հույսով և նախահավիտենականից զանգատավոր չեմ, նա ինչ որ անում էր Բարիք է: Որովհետև, մյուս կողմից էլ եթե փորձեք բողոքել, դրանից ձեզ որևէ օգուտ կլինի՞: Եթե մենք աղոթքում ասում ենք. «Քո՛ւ եմ հոգի իմ, և մարմին իմ», ապա ի՞նչ կարող է մարդս իմանալ, և եթե իմացավ ի՞նչ օգուտ դրանից: Ես անվերջ բացատրում եմ նրան՝ պառավիս, այսինքն, ու ասում.

— Գողդա, դու մեղանչում ես: Մեր սուրբ գրքումն ասված է...

— Դե, ինչ եմ անում քո սուրբ գիրքը,— պատասխանում է նա:— Մենք հասած աղջկա տեր ենք: Իսկ էդ աղջկանից հետո, աչքով չտամ, երկունս էլ կան, իսկ էդ երկուսից հետո, ևս՝ երեքը:

— Էհ, ասում եմ ես,— դրանք բոլորը դատարկ բաներ են: Մեր իմաստունները էդ մասին էլ ունեն իրենց խոսքն ասած: Սուրբ գրքումը մի խրատ կա...

Բայց նա չի թողնում բերանս էլ բանամ:

— Մեր հասած աղջիկները,— վրա է բերում նա,— իրենց տեղովը հենց խրատ են որ կան...

Դե արի ու կնիկարմատի հետ լեզու թաթախի:

Մի խոսքով, ձեզ համար պետք է որ պարզ լինի, իմ կատարած ընտրությունը, աչքով չտամ, բավարար է, դե ինչ խոսք «ապրանքն» էլ լավն է, զանգատվելը հանցանք է: Մեկը մյուսից սիրուն են: Դե, իհարկե, ինձ խոսք չի հասնի, որ ինքս գովեմ իմ երեխեքին: Բայց ես լսում եմ, որ մարդիկ ասում են՝ «գեղեցկուհիներ՝ են»: Իսկ ամենից սիրունը մեծն է, անունը Գողլ է, Յեյտլից հետո երկրորդն է, Յեյտլից, որ եթե հիշում եք, սիրակոծիկ եղավ չփլախ դերձակին: Եվ իսկապես, ի՞նչ սիրունն է իմ այդ երկրորդ աղջիկը՝ Գողլը, այսինքն, դե ոնց ասեմ ձեզ: Հենց այնպես է, ինչպես ասված է Եսթերի ավանդությունում. «Ձի գեղեցի՛կ էր հույժ» — ոսկու նման շողշողում է: Եվ հակառակի նման, այդ բոլորի հետ էլ՝ գլխով աղջիկ է. գրում է, կարդում և հրեերեն, և ռուսերեն, իսկ գրքերը, գրքերը կլանում է ինչպես գալուշկաները: Դուք թերևս ասեք, թե Տեվյեի աղջիկն ո՛ւր, գիրք կարդալն ո՛ւր, երբ նրա հայրը ընդամենը յուղ ու պանիր ծախող է: Ահա, հենց ես էլ այդ եմ հարցնում նրանց՝ մեր ջահելներին, որոնց, ներեցեք արտահայտությանս, հագներին փոխան չկա, բայց սովորելու համար խելքները գնում է: Ինչպես զատկական աղոթքումն է ասված. «Մեր ամենեքեան իմաստուն եմք»,

այսինքն՝ բոլորը ցանկանում են սովորել: «Մեք ամենեքեան բանիմացք», այսինքն՝ բոլորը ցանկանում են ուսումնական լինել... Նրանց հարցրեք, ի՞նչ են սովորում: Ինչի՞ համար են սովորում: Այծը որ այծ է, գիտի ինչու է ուրիշի բանջարանոցը մտնում: Ախր դրանց ոչ մի տեղ թույլ չեն տալիս: Ինչպես այնտեղ ասված է. «Մի՛ մեկնիր զձեռս քո», կարագի մոտից հեռու փախիր: Բայց և այնպես՝ մի տեսնեք, թե ո՞նց են սովորում: Եվ ովքե՛ր: Արհեստավորների երեխեքը՝ դերձակների, կոշկակարների, ազնի՛վ խոսք: Գնում են Եգուպեց կամ Օդեսա, քարշ են գալիս ձեղնահարկերում, կերածները դժվարություն է ու նեղություն, ճաշակածները՝ ջերմ ու տենդ, ամիսներով մսի երես չեն տեսնում, վեց հոգով կոպեկ-կոպեկի վրա են դնում՝ մի բովկի ու մի տառեխ են առնում և «Ուրախ լե՛ր յաւուր տօնի քոյ», քե՛ֆ արեք, չփլախներ:

Մի խոսքով, այդ կտրիճներից մեկն էլ մեր անկյուն խցկվեց, դա տեսքով մի աննշմար տղա էր, որ մեր մոտերքումն էր ապրում: Ես ճանաչում էի նրա հորը, ծխախոտավաճառ էր և այնքան աղքատ, թող աստված ինձ ների, որ ճրագով ման գայիր, նրա նմանը չէիր գտնի: Բայց, իհարկե, դա չի կարևորը: Դա ի՞նչ բան է: Եթե մեր մեծ գիտնական ռաբբի Իոխանավ-Գասանդլերի¹⁷ համար ամոթ չի եղել ոտնաման մզակելը, ապա նրա համար առավել ևս ամաչելու հարկ չկա, որ իր հայրը ծխախոտ ծախող է: Մենակ մի բան խելքս չի մտնում, ինչո՞վ բացատրել, որ այդ հացի կարոտը ցանկանում է ուսանել, ցանկանում է դառնալ կրթված մարդ: Ճիշտ է, գլխով տղա է, ա՛յ գրողը չտանի նրան, ուսերի վրա գլո՛ւխ ունի և լա՛վ գլուխ: Անունն էլ Պերչիկ է թշվառականի, իսկ մենք հրեավարի ասում ենք «Ֆեֆերլ»¹⁸: Հենց տեղովն էլ պերչիկ է, որ կա աննշմար, նիհար ու սևուկ, մի իսկական սատանի ճուտ, Բայց խե՛լքը, խե՛լքը ծով է, լեզուն՝ կրակ:

Եվ ահա մեկ անգամ, մի այսպիսի պատմություն եղավ: Տուն եմ վերադառնում Բոյբերիկից, ապրանքս ծախել եմ — մի ահագին բեռ ու բարխան պանիր, յուղ, թթվասեր ու տեսակ-տեսակ կաթնամթերք: Նստած եմ սայլիս և ըստ իմ սովորության միտք եմ անում աշխարհի բանը, մտածում եմ այս, այն, մտածում եմ Եգուպեցի հարուստների մասին, որոնց, աչքով չտամ, գործերը աջ է գնում և ապրում են լի ու բոլ, մտածում եմ ձախորդ Տեվլեի ու նրա ձիու մասին, որ իրենց ամբողջ կյանքում տանջվում-տրորվում են, և նման բաներ...

Ամառ ժամանակ է: Արեգակը խաշում է: Ճանճերը կծում: Իսկ շուրջս արքայություն՝ և: Լեն ու արձակ փոված է աշխարհը, հսկա, անսահման, սիրտդ ասում է՝ բարձրացիր ու թռիր, ձգվիր ու լողա...

Տեսնեմ ավազի վրայով մի տղա է գնում, թնի տակ մի կապոց, քրտնամիսած, հազիվ է շունչ քաշում:

— Կա՛նգ առ, այ մեքենա, — ասում եմ ես նրան: — Արի նստիր, լսո՞ւմ ես, կտանեմ. մեկ է, դատարկ եմ գնում: Ինչպես մեզ մոտ ասում են. «Եթե ընկերոջդ էշին էլ հանդիպես, օգնությունդ չմերժես», էլ ուր մնաց մարդը...

Ժպտաց անիծածը, չստիպեց երկար խնդրել ու բարձրացավ սայլը:

— Խոսքի-օրինակ, որտեղի՞ց է գալիս այս տղան, — հարցնում եմ նրան:

— Եգուպեցից:

— Իսկ ի՞նչ բան ունի, — հարցնում եմ, — քեզ նման տղան Եգուպեցում:

— Ինձ նման տղան, — ասում է, — քննություններ է հանձնում:

¹⁷ Իոխանավ Գասանդլեր (կոշկակար) թալմուդի ստեղծողներից մեկը, ապրել է մ.թ. II դարում:

¹⁸ Ֆեֆերլ — հրեերեն՝ պղպեղ:

— Իսկ ի՞նչ պիտի դառնա,— ասում եմ,— այդ տղան:

— Այդ տղան,— պատասխանում է,— ինքն էլ չգիտի, թե ինչ պիտի դառնա:

— Հապա էլ ինչո՞ւ է այդ տղան,— ասում եմ,— իզուր տեղը գլուխը ուռեցնում:

— Իսկ դուք,— ասում է,— մի՛ անհանգստացեք, ռեբ Տեվյե: Այնպիսի մի տղա, ինչպիսին ես եմ, գիտե՞ թե ինչ է անում:

— Դե որ դու ինձ ճանաչում ես, խոսքի օրինակ, խնդրում եմ ասես, թե ո՞վ ես դու...

— Ով եմ ե՞ս,— ասում է,— մարդ եմ:

— Տեսնում եմ,— ասում եմ,— որ ձի չես: Դու ո՞ւմն ես:

— Ո՞ւմը,— պատասխանում է,— աստծունը:

— Գիտեմ,— ասում եմ,— որ աստծունն ես: Մեզ մոտ հենց այդպես էլ ասված է՝ «Ամենա՛յն գազանք և անասունք...»: Ես հարցնում եմ, ծննդով որտեղի՞ց ես: Ո՞ր կողմերից: Մե՞ր, թե միգուցե Լիտվայից:

— Ծննդով,— ասում է նա,— Ադամից եմ: Իսկ ընդհանրապես այստեղացի եմ: Դուք երևի ինձ գիտեք:

— Քո հայրն ո՞վ է, ապա ասա մի տեսնենք:

— Իմ հոր անունը,— ասում է,— Պերչիկ է:

— Թո՛ւ, փչանաս դու: Էլ ինչ ես գլուխս տանում: Ուրեմն դու ծխախոտավաճառ Պերչիկի տղա՞ն ես:

— Ուրեմն՝ ես ծխախոտավաճառ Պերչիկի տղան եմ:

— Եվ սովորում ես,— ասում եմ,— «դասարաններո՞ւմ»:

— Եվ սովորում եմ,— պատասխանում է,— «դասարաններում»:

— Դե ինչ կա որ. «Յոխիմը մարդ է, Գաբկան էլ՝ ժողովուրդ»: Բայց ասա ինձ, թանկագինս, ինչո՞վ ես, գործիկնակ դու ապրում:

— Ապրում եմ,— ասում է,— նրանով, ինչ ուտում եմ:

— Այ թե ի՛նչ: Շատ լավ է: Իսկ ի՞նչ ես ուտում,— ասում եմ:

— Ինչ որ տալիս են,— պատասխանում է նա:

— Հասկանում եմ,— ասում եմ,— որ դու քմահաճներից չես: Մենակ թե ուտելու բան լինի: Իսկ եթե ոչինչ չկա, պռոշներդ ես լպստում ու սոված փորով պառկում քնում: Եվ այդ ամենը հանուն նրա, որ սովորես «դասարաններո՞ւմ»: Եզուպեցի հարուստների հե՞տ ես ոտ մեկնում, որոնք ինչպես սուրբ գրքումն է ասված. «Ամենեքեան սիրելիք են, ամենեքեան ընտրեալք»:

Այսպես խոսում եմ նրա հետ, օրինակներ բերում, խոսքեր, ասացվածքներ, առակներ, ինչպես որ Տեվյեն գիտե: Բայց կարծում եք նա՝ Պերչիկը տակո՞վն է մնում:

— Թող հարուստները չսպասեն,— ասում է,— որ ես կցանկանամ հավասարվել նրանց: Ես թքել եմ նրանց վրա:

— Դու,— ասում եմ,— երևի հորդ ժառանգությունը բաժանելու ժամանակ ես թարսվել նրանց հետ, որ էդպես փրփրել ես նրանց վրա...

— Թող ձեզ հայտնի լինի,— ասում է,— որ և՛ ես, և՛ դուք, և՛ մենք բոլորս միգուցե շատ մեծ բաժին ունենք նրանց ժառանգության մեջ:

— Գիտես ի՞նչ,— ասում եմ ես:— Լավ կլիներ, որ սուս անեիր... Բայց տեսնում եմ, որ աչքաբաց տղա ես, լեզվի կողմից նեղը չեմ ընկնի... Եթե ժամանակ կունենաս, կարող ես այսօր երեկոյան գալ մեզ մոտ, կգրուցենք միասին, համ էլ, ի միջի այլոց, կընթերս մեզ հետ...

Հասկանալի է, որ տղաս չստիպեց հրավերը կրկնել և ճիշտ ժամին վրա հասավ, երբ կադամբապուրը արդեն սեղանին էր, իսկ կարկանդակներն էլ թավայի մեջ տապակվում էին:

— Երևում է,— ասում եմ,— զոքանչդ քեզ շատ է սիրելու:— Կարող ես գնալ ձեռքերդ լվանալ: Իսկ թե չես ուզում, կարող ես էդպես էլ սեղան նստել: Ես ասածու պաշտոնյաներից չեմ և էն աշխարհում քո պատճառով ինձ չեն ծեծի:

Խոսում եմ նրա հետ այս տեսակ, ոնց որ ասում են, ֆասոններով, և զգում, որ սիրտս քաշում է դեպի այդ պստիկ մարդուկը: Ինչո՞ւ, ինքս էլ չգիտեմ, բայց միայն այն գիտեմ, որ քաշում է: Միրում եմ, հասկանո՞ւմ եք, նրանց, որոնց հետ կարելի է գոնե մի բառ փոխանակել, այս անգամ մի առած, մյուս անգամ՝ առակ կամ թե զանազան բարձր դատողություններ, սա, նա, հինգերորդ, տասներորդ... Տեվյեն այդպես է արդեն:

Այդ ժամանակվանից մեր այդ տղան սկսեց համարյա թե ամեն օր գալ: Դասերը վերջացնում է թե չէ, գալիս է մեզ մոտ հանգստանալու, զրուցելու: Կարո՞ղ էք պատկերացնել, թե դրանք ինչ դասեր էին և թե ինչ էին տալիս նրան, թող աստված ների, եթե ասեմ, որ ամենահարուստ մարդն անգամ ամսական սովոր է վճարել ոչ ավելի, քան մի երեքանոց, և նա էլ անգամ պահանջում է, որպեսզի ուսուցիչը լրացուցիչ կերպով կարդա նաև հեռագրերը, նամակների վրա գրի հասցեները կամ վագ տա այս կամ այն հանձնարարությամբ... Իսկ ինչո՞ւ չպահանջի: Չէ՞ որ պարզորոշ գրված է՝ եթե հաց ես ուտում, ապա «ամենայն հոգով և ամենայն սրտիւ», պարտավոր ես իմանալ, թե ինչու...

Իսկապես ասած, լավ էր, որ նա մեր տանն էր սնվում: Դրա դիմաց, կամաց-կամաց պարապում էր աղջիկներին հետ: Ինչպես ասում են՝ «Ակն ընդ ական...»: Այսպիսով նա դարձավ մեր մարդը: Երեխեքը նրան մի բաժակ կաթ էին հրամցնում, իսկ պառավս էլ հոգ էր տանում, որ հագին բլուզ լինի ու գուլպաները կարկատած: Ահա այդ ժամանակ էլ մենք նրան սկսեցինք անվանել «Ֆեֆերլ», այսինքն՝ անունը հրեական դարձրինք: Եվ կարելի է ասել, որ ամենքս էլ նրան սիրում էինք, ինչպես հարազատի, որովհետև իր բնավորությամբ, իմացած եղեք, իսկապես, հրաշալի տղա էր, ոչ մի կեղծություն չունեք. իմը քոն է, քոնը՝ իմը, և սիրտը բաց...

Միայն մի բանի համար ես նրան տանել չէի կարողանում, մեկ էլ տեսար, կորչում էր: Հանկարծ տեղից վեր կկենա կգնա, և թե կարող, ես՝ գնա դաշտում քամուն բռնիր — չկա Պերչիկը: «Որտե՞ղ էիր, թանկագին իմ թոչնակ»: Լռում է ինչպես ձուկը... Չգիտեմ դուք ինչպես, բայց ես բնավ չեմ սիրում գաղտնապահ մարդկանց: Ես սիրում եմ այնպես, ինչպես ասված է սուրբ գրքում. «Որ ինչնէ, խոսի՛ր հայտնաբար», բայց մյուս կողմից էլ շատ արժանիքներ ուներ. եթե բերանը բացեր, «Ոմն ի վերայ ջրոյ, ոմն ի մէջ հրոյ», կարծես կրակ է թափում: Լեզու եմ ասել հա՛, գրողը տանի նրան: Աստծու դեմ է խոսում և նրա օծյալների դեմ, բայց ամենից շատ օծյալների... Իսկ նրա ծրագրերը

բոլորը ինչ-որ տարօրինակ էին, անհեթեթ, խելագար, և նրա մոտ ամեն ինչ թարս էր, գլխավար: Հարուստը, օրինակ, նրա հիմար խելքով, ընդհանրապես գրոշ չարժե, իսկ աղքատը, ընդհակառակն, մեծ էշի գլուխ է, իսկ արհեստավորներն ու բանվորներն էլ հո երկրի աղն են, որովհետև աշխատանքը, ասում է նա, ամենից գլխավորն է, ամեն բանի հիմքը:

— Բայց և այնպես,— ասում եմ ես նրան,— այդ ամենը փողի հետ չես համեմատի:

Այդտեղ նա բռնկվում է և սկսում ինձ հավատացնել, որ փողը ամբողջ աշխարհի համար դանակի վերք է, որ բոլոր ստորությունները փողի պատճառով են լինում, և ընդհանրապես ինչ-որ կատարվում է աշխարհում, անարդար է: Ու ինձ տասը հազար ապացույցներ ու օրինակներ է բերում, Բայց այդ ամենը ինձ այնպես են դիպչում, ինչպես սիսեռը՝ պատին:

— Հետևաբար, քո խելագար դատողությունների համաձայն դուրս է գալիս, որ կովը կթելը, կամ ձիուն ստիպելը, որ լուծը պարանոցին վազի, նույնպե՞ս անարդարություն է:

Եվ շատ ու շատ թարս ու շիտակ հարցեր եմ տալիս և ամեն քայլափոխում, այսպես ասած, պատին դեմ անում, ինչպես որ Տեվյեն կարողանում է: Բայց թե իմ Ֆեֆերլն էլ կարողանում է տակից դուրս գալ. երանի՜ թե չկարողանար: Իսկ թե սրտումը որևէ բան կա, իսկույն ևեթ ասում է:

Նստած ենք մի անգամ երեկոյան, մեզ մոտ, պատի տակի թմբին և խոսում ենք, փիլիսոփայում... Հանկարծ մեկ էլ նա ինձ ասում է, Ֆեֆերլը, այսինքն:

— Գիտե՞ք ինչ, ռեբ Տեվյե: Ձեր աղջիկները բոլորն էլ շատ հաջողն են:

— Իսկապե՞ս,— ասում եմ:— Շնորհակալ եմ հաճելի նորության համար: Դե, պարզ է, թե ումն են քաշել:

— Իսկ մեծը տեղովը խելք է,— շարունակում է նա:— Մարդ է, խոսքի իսկական իմաստով:

— Առանց քո ասելու էլ գիտեմ,— պատասխանում եմ ես:— Խնձորը ծառից հեռու չի ընկնի:

Ասում եմ ու սիրտս, իհարկե, իրար է գալիս հրճվանքից: Այդ ո՞ր հայրն է, ասացեք խնդրեմ, որ ուրախությունից գլուխը չի կորցնում, երբ նրա երեխեքին գովում են: Բայց դե արի գուշակիր, որ թե այդ գովեստի տակ բորբոքվում է մի այնպիսի բոցավառ սեր, որ աստվա՛ծ հեռու տանի:

Կարճ ասած, «Եւ եղև երեկոյ և եղև վաղորդայն»,— դա իրիկնապահին էր, Բոյբերիկում: Մայլս նստած գնում եմ ամառանոցներով, հանկարծ ինչ-որ մեկը կանգնեցնում է: Տեսնեմ միջնորդ Էֆրաիմն է: Էֆրաիմը, պետք է ձեզ ասել, որ հենց այնպիսի միջնորդ է, ինչպես բոլոր միջնորդները, այսինքն՝ զբաղվում է մոցիկուլությամբ: Ինձ տեսնում է Բոյբերիկում ու կանգնեցնում.

— Ներեցեք, ռեբ Տեվյե, ես ձեզ բան ունեմ ասելու:

— Դե ինչ կա որ, մենակ թե լավ բան ասես,— պատասխանում եմ ես ու ձիս կանգնեցնում:

— Դուք,— ասում է,— ռեբ Տեվյե, աղջիկ ունեք:

— Ես,— ասում եմ,— յոթն ունեմ, աստված նրանց առողջություն տա:

— Ես գիտեմ,— ասում է,— որ յոթն ունեք: Ես էլ յոթն ունեմ:

— Դուրս է գալիս,— ասում եմ,— որ երկուսինս միասին կլոր թվով տասնչո՞քս է:

— Կարճ ասեմ,— վրա է բերում նա,— կատակը մի կողմ թողած, ես, ինչպես զիտեք միջնորդ եմ և ձեզ համար մի փեսացու ունեմ, մի ընտիր փեսացու: Առաջի՛ն սորտի:

— Զորօրինակ, ասում եմ ես,— դուք ո՞ւմ եք համարում «ընտիր փեսացու»: Եթե,— ասում եմ,— դերձակ է կամ կոշկակար, կամ մելամեղ, թող տեղում հանգիստ նստի, իսկ ինձ, ինչպես միդրաշումն է ասված. «Ցնծութին և ազատութին գալոց է այլուստ»¹⁹: Ես ուրիշ տեղ կգտնեմ ինձ հավասարին...

— Դուք մի գլուխ ձեր առականներն եք բերում,— ասում է նա:— Ձեզ հետ խոսողը պետք է գոտին լավ ձգի, հետո խոսի: Սկսում եք թափել բառեր ու ասացվածքներ: Դուք ավելի լավ է լսեք, թե միջնորդ Էֆրաիմը ի՛նչ փեսացու է ուզում առաջարկել: Դուք մենակ թե լսեցեք, ձայն մի հանեք:

Այսպես է ասում նա ինձ, այսինքն՝ Էֆրաիմը և սկսում է շարել... Դե, ինչ ասեմ ձեզ: Իսկապես, փեսացուն ոնց որ սովորական փեսացու չէ: Նախ և առաջ շատ լավ ընտանիքից է, պատվավոր ծնողների զավակ և ոչ թե ինչ-որ պատի ծակից դուրս եկած, իսկ ինձ համար, պետք է ձեզ ասեմ, որ դա ամենից կարևորն է, որովհետև ես ինքս էլ վերջիններից չեմ: Մեր գերդաստանում, ինչպես ասում են. «Եվ բծավոր կա, և խալավոր կա, և նախշուն», հասարակ մարդիկ էլ կան, արհեստավորներ էլ, ինչպես և հարուստներ: Հետո նա, այդ փեսացուն շատ գրագետ է, խելքը լավ հասնում է մանրիկ տառերից, իսկ դա առավել մեծ բան է. տանել չեմ կարող տգետներին: Ինձ համար տգետ լինելը ավելի վատ է, քան անգործ, դատարկապորտ լինելը, կարող եք շրջել անգղակ, թեկուզ գլխիվայր՝ ոտներդ վեր գցած, բայց եթե ձեր խելքը հասնում է Ռաշիից²⁰, գլխիս վրա տեղ ունեք: Ինչ արած, էդպես է Տեվյեն: «Հետո,— ասում է Էֆրաիմը,— նա հարուստ է, փողը՝ բոլ, ման է գալիս կառեթով, կրակի նման ջուխտ ձիերը լծած, որ չի քշո՛ւմ, փռշին այունի նման կանգնում է...». դե ինչ, մտածում եմ, դա էլ մի մեծ պակասություն չէ: Քան թե մի աղքատի մեկը պիտի պատահի, լավն էն է, որ հարուստը լինի: Ինչպես ասված է. «Թշվառութիւնն զարդարե՞լ զԻսրայէլ», աստված ինքն էլ աղքատին չի սիրում: Որովհետև եթե աստված աղքատին սիրեր, աղքատը աղքատ չէր մնա:

— Հետո,— ասում է Էֆրաիմը,— նա ուզում է ձեզ հետ բարեկամանալ, խեղճը մեռնում է, ոտի վրա չորանում է: Այսինքն՝ ոչ թե ձեզ համար, այլ ձեր աղջկա: Նա սիրուն աղջիկ է ուզում:

— Այ թե ի՛նչ,— պատասխանում եմ նրան:— Թող չորանա: Ո՞վ է, ի՞նչ է, ձեր գտած էդ գանձը: Ազապ է: Կնիկը մեռած մարդ է: Դե է, սատանա է:

— Ազապ է,— պատասխանում է:— Ազապ է: Ճիշտ է, տարեց է, բայց ազապ է:

— Ո՞նց է նրա սուրբ անունը:

Չի ասում, թեկուզ մորթես էլ չի ասում:

— Ձեր աղջկան բերեք Բոյբերիկ, այն ժամանակ կասեմ:

— Դա ի՞նչ է նշանակում,— ասում եմ,— աղջկան բերե՞լը որն է: Ձին են բերում տոնավաճառ կամ կովը...

¹⁹ Այս տողը աստվածաշնչի «Եսթեր» գլխից է և թալմուդի ու միդրաշի հետ (սուրբ գրքի մեկնություն, առականների, խրատական զրույցների ժողովածուներ) ոչ մի կապ չունի:

²⁰ Ռաշի — աստվածաշնչի և թալմուդի մեկնություններ:

Մի խոսքով, միջնորդ ասածդ, որ ուզեց, օձը ծակից կհանի: Եվ մենք որոշեցինք, որ եթե աստված կամենա, հաջորդ շաբաթ նրան բերեմ Բոյբերիկ: Եվ անուշ-մեղուշ երազների մեջ եմ ընկնում: Պատկերացնում եմ իմ Գողլին՝ ջուխտ ձիանքը լծած կառերի մեջ նստած: Ամբողջ աշխարհը նախանձում է... ոչ այնքան էդ շքեղ երթին, որքան էն բանին, որ ես շնորհիվ հարուստ աղջկաս, բարերարություն եմ անում, օգնում եմ աղքատներին, պարտք եմ տալիս՝ որին քառասունանոց, որին հիսունանոց, որին էլ մի ամբողջ հարյուրանոց... Ախր չէ՞ որ, ինչպես դուք եք ասում, նրանց հոգին էլ է հոգի և ոչ թե ճիլոպ... նրանց էլ է աստված ստեղծել...

Միտք եմ անում էսպես, երեկոյան տուն վերադառնալիս, մերթ ընդ մերթ մտրակա թափահարում եմ ու խոսում ձիուս հետ, իրենց, ձիերի լեզվով. «Վո՛ր, — ասում եմ: Ապա մի շարժվիր տեսնեմ, ոտներդ հո փայտից չե՞ն, դե՛, քեզ տեսնեմ, մի բաժին վարսակ կստանաս... Քանզի ասված է. «Առանց հացի, ո՛չ գոյ գիտութիւն», ակները չյուղես, ճամփա չես գնա...»

Խոսում եմ էսպես ձիուս հետ և տեսնում եմ, որ երկու հոգի են գալիս անտառով, մեկը երևում է տղամարդ է, մյուսը՝ կին: Գալիս են քիփ կողք-կողքի, տաք-տաք ինչ-որ բանի շուրջը զրուցելով: «Ո՞վ կարող է այստեղ հասնել», մտածում եմ ես ու նայում արեգակի հրեղեն ճիպոտներին: Երդում կուտեմ, որ սա Ֆեֆերլն է, բայց ո՞ւմ հետ է զբոսնում այսպես ուշ ժամանակ: Ձեռքով աչքերիս հովանի եմ անում արեգակից ու ավելի լավ նայում. ո՞վ է հետի կնիկարմատը: Վա՛յ, երևում է Գողլն է: Հա՛, նա է, ազնիվ խոսք, նա՛ է... Ա՛յ թե ի՛նչ: Հալա մի դրանց տես: Դրա համար էին այդպես ջանասիրությամբ զբաղվում քերականություններով ու գրքեր կարդում: «Էիս, Տեվլե, դմբոյի մեկը», մտածում եմ ես: Կանգնեցնում եմ ձին և դիմում իմ զույգին:

— Բարի երեկո՛ւ, — ասում եմ:— Ի՞նչ լուր կա պատերազմից: Ինչպե՞ս եք ընկել էստեղ: Ո՞ւմ եք սպասում: Երեկվա օրվա՞նը:

Լսելով մի այսպիսի ողջագուրանք, մեր զույգը կանգ առավ, ինչպես ասում են՝ երկնքի ու երկրի միջև, այսինքն՝ չիմանալով ինչ անել. շփոթվեցին, կարմրատակեցին... Կանգնեցին լուռ մի քանի րոպե՝ գլուխները կախ: Հետո նայեցին ինձ, ես՝ նրանց, հետո՝ միմյանց:

— Դե, ի՞նչ եք երեսիս նայում, կարծես վաղուց չեք տեսել: Ես, ոնց որ թե նույն Տեվլեն եմ, ինչ որ էի, մի մազ անգամ չեմ փոխվել:

Ասում եմ՝ ոչ ասես բարկանալով, ոչ ասես մասխարա գցելով: Իսկ աղջիկս՝ Գողլը, այսինքն՝ ավելի կարմրատակեց ու ասաց.

— Հայրի՛կ, մեզ պետք է շնորհավորել...

— Շնորհավորո՞ւմ եմ: Աստված ձեզ երջանկություն տա: Բայց ինչի առթիվ: Գա՞նձ եք գտել անտառում,— հարցնում եմ:— Թե հենց հիմա ինչ-որ մի մեծ փորձանքից եք ազատվել:

— Մեզ պետք է շնորհավորել,— ասում է կողքինը:— Մենք նշանվել ենք:

— Ի՞նչ է նշանակում,— հարցնում եմ ես,— նշանվե՛լ:

— Դուք,— պատասխանում է նորից կողքինը,— չգիտե՞ք թե ինչ է նշանակում նշանվել: Դա նշանակում է, որ ես նրա փեսացուն եմ, նա՝ իմ հարսնացուն:

Ֆեֆերլն է ասում այդպես ու նայում ուղիղ աչքերիս: Բայց ես էլ եմ նայում ուղիղ աչքերին ու հարցնում.

— Այդ ե՞րբ է եղել ձեր նշանդրերը: Ինչո՞ւ ինձ չեք կանչել հանդեսին: Ես, ախր, ինչքան չլինի որպես թե նրա հարազատներից եմ... Ճի՞շտ է:

Կատակ եմ անում, հասկանո՞ւմ եք, իսկ ինձ՝ ցեցն ուտում է, մարմինս քրքրվում է: Բայց վնաս չունի: Տեվյեն կնիկարմատ չի՛: Տեվյեն սիրում է մինչև վերջ լսել...

— Չեմ հասկանում,— ասում եմ ես:— Դա ի՞նչ նշանվել է, առանց խնամախոսի, առանց նշանդրերի:

— Իսկ ինչներիս է պետք խնամախոսը,— պատասխանում է Ֆեֆերը:— Մենք վաղուցվանից ենք հարսնացու և փեսացու:

— Այ թե ի՛նչ: Հրաշք, ուրիշ ոչինչ: Հապա ինչո՞ւ,— ասում եմ ես,— մինչև հիմա ձայն չէիք հանում:

— Իսկ ինչ կարիք կար գոռալու,— ասում է Ֆեֆերը:— Մենք այսօր էլ չէինք ասի, բայց քանի որ մենք ստիպված ենք շուտով բաժանվել, որոշեցինք պսակվել:

Այդտեղ ես չհամբերեցի... «Էհա՛ս ջուր ցկոկորդն իմ», հերսերս եկան: Որ ասում է «հարսնացու և փեսացու», դա դեռ ոչինչ... ինչպես ասում են՝ «Եվ սիրեց»,— նա նրան է հավանել, նա՛ նրան... Բայց պսակվե՛լ: Ի՞նչ է նշանակում պսակվել: Խելքս չի հասնում... Փեսացուն, երևում է, հասկացավ, որ այդ պատմությունից շշկվեցի, ասում է:

— Դուք հասկանո՞ւմ եք, ոեք Տեվյե, բանն այն է, որ ես պատրաստվում եմ այստեղից մեկնել:

— Ե՞րբ:

— Շուտով:

— Զորօրինակ ո՞ւր:

— Դա, ասում է նա,— ես ձեզ չեմ ասի, դա գաղտնիք է:

Հասկանո՞ւմ եք: Գաղտնի՛ք: Դե, ինչպես է դա ձեզ դուր գալիս: Լույս է ընկնում ահա մի այսպիսի Ֆեֆեր, մանրմունք, մի սև սատանի ճուտ, իրեն հայտարարում փեսացու, ցանկանում ամուսնանալ, պատրաստվում է մեկնել և չի էլ ասում թե ուր: Քիչ է մնում պայթեմ:

— Դե, ինչ,— ասում եմ ես:— Գաղտնիք է, թող գաղտնիք լինի... Քեզ մոտ ամեն ինչ գաղտնիք է... Միայն թե, ախպերս, ապա մի բացատրիր տեսնեմ, չե՞ որ դու արդարության պաշտպանն ես, դու, ախր, ամբողջովին լցված ես սիրով հանդեպ մարդիկ, այդ ինչպես պատահեց, որ դու հանկարծ, ոչ այս, ոչ այն, խլեցիր Տեվյեի աղջկան ու դարձրիր այրի՝ ամուսնու կենդանությամբ: Դա քո կարծիքով արդա՞ր բան է: Մեր՝ հանդեպ մարդիկ: Լավ է, որ դեռ ինձ չես կողոպտել, տունս կրակ գցել...

— Հայրի՛կ,— ասում է Գողը,— դու չգիտես, թե մենք որքան երջանիկ ենք, որ պատմեցինք այս ամենը: Կարծես քարը սրտներիցս ընկավ: Արի այստեղ, թույլ տուր համբուրել...

Եվ մի պահ մտածելուց հետո երկուսով միասին իրենց մեջ են առնում ինձ, աղջիկս՝ այս կողմից, նա՛ մյուս կողմից, փաթաթվում են ու համբուրում, նրանք ինձ են համբուրում, ես՝ նրանց, իսկ հետո օգտվելով իրարանցումից կամ միգուցե շփոթվելուց, նրանք արդեն սկսում են համբուրել միմյանց: Թամաշա՛, թատրո՞ն...

— Միգուցե բավական համարեք,— ասում եմ,— պաշ ու պռոշտի անելը: Ժամանակն է, որ գործի մասին էլ մտածեք:

— Ո՞ր գործի,— հարցնում են նրանք:

— Օժիտի, հագուստների, հարսանիքի ծախսերի, սրա՛ մասին, նրա՛, հինգերորդի՛, տասներորդի՛:

— Ոչ մի բան էլ մեզ հարկավոր չի,— պատասխանում են նրանք:— Ոչի՛նչ: Ո՛չ հինգերորդ, ո՛չ տասներորդ:

— Հապա ի՞նչ է հարկավոր:

— Մեզ,— ասում են նրանք,— միայն պսակվել է հարկավոր...

— Լսած կա՞ք այսպիսի բան:

Մի խոսքով, էլ ինչ երկարացնեմ: Ոչ մի բան չօգնեց: Ստիպված եղանք նրանց պսակել: Դե, իհարկե, պսակել էլ կա, պսակել էլ: Դա մի ուրիշ բան էր, որ եկավ Տեվյեի գլուխը: Աստվա՛ծ հարսանիք համարեր... Սուսուփուս, անշուք... Դա հերիք չի, կնիկս էլ մի կողմից է հոգիս ուտում, գլխիս քարե կարկուտ մաղում: Տանջում է ինձ, տղի պես կաշում, որ բացատրեմ, թե պատճառն ի՞նչ է, որ այդպես շտապում են: Արի ու կնիկարմատին հասկացրու, ասա թե կրակ է ընկել, այրվում է... Եվ որպեսզի աղմուկ չլինի, ես ստիպված մատիցս ծծած մի պատմություն բատրեցի Եզուպեցում ապրող ինչ-որ հարուստ մորաքրոջ ժառանգության մասին, բատրում եմ, միայն թե ինձ հանգիստ թողնի: Եվ հենց նույն օրը, այդ գովական հարսանիքից մի քանի ժամ հետո, ձին լծեցի, երեքով նստեցինք — ես, աղջիկս և նա, իմ ազիզ, իմ աստծու տված փեսան և հայրա՛ Բոյբերիկ, որ հասնենք գնացքին: Մայլին նստած թաքուն նայում եմ ջահել գույզին և մտածում. մե՛ծ է մեր աստված և ի՛նչ զարմանալիորեն է կառավարում աշխարհը: Ի՛նչ անհեթեթ բաներ, ի՛նչ տեսակի խենթեր ասես, որ նա չունի: Ահա ձեզ մի գույզ, որ հենց նոր է պսակվել. ամուսինը գնում է, աստված գիտի թե ուր, իսկ կինը մնում է այստեղ, և գոնե մի կաթիլ արցունք թափեն, հենց թեկուզ հանուն պատշաճի: Բայց ես լռում եմ: Տեվյեն կնիկարմատ չի՛: Տեվյեն կղիմանա: Սուս եմ անում ու նայում, թե վերջը ինչ է լինելու... Տեսնում եմ հրես ինչ-որ թոկից փախածներ, քրքրված շորերով, կրունկները ծոված ոտնամաններով, եկել են կայարան ճանապարհ դնելու իմ ճնճղուկին: Նրանցից մեկը, որ տեսքով գեղջուկ տղայի նման էր, և փեշերը, ներեցեք, բաց թողած բլուզ ուներ հագին, սկսեց ինչ-որ փսփսալ փեսայիս... «Մտի՛կ արա, Տեվյե, մտածում եմ, արդյոք չե՞ս ընկել ձիու գողերի, գրպանահատների, թալանչիների կամ դրամանենգների մեջ»:

Վերադարձին, երբ Գողլի հետ գալիս էինք Բոյբերիկից, ես չդիմացա ու հենց այդպես էլ ասացի՝ ինչ որ մտածել էի: Իսկ նա ծիծաղում է, և ուզում է ինձ հավատացնել, որ նրանք բոլորն էլ չափազանց ազնիվ, հրաշալի մարդիկ են, իրենց ամբողջ կյանքը գոհում են հանուն ուրիշների և իրենց մասին իսկի մտքներովն էլ չի անցնում մտածել...

— Իսկ նա, որը բլուզով էր,— ասում է Գողլը,— շատ հարուստ ընտանիքից է: Թողել է ծնողներին, հեռացել Եզուպեցից, մի քոռ գրոշ էլ չի ցանկանում վերցնել նրանցից:

— Ասացե՛ք խնդրեմ: Այդպես էլ բա՛ն կլինեք,— ասում եմ ես:— Սքանչելի՛ տղա է, նրա բաց թողած բլուզի ու բաց թողած երկար մազերի հետ, որ ձեռքին էլ հարմոն լինեք, կողքին էլ վզակապով շուն, ա՛յ թամաշա կլինեք հա՛...

Սրտիս հերսը թափում եմ խեղճ Գողլի գլխին, ինչպես և Ֆեֆերլի... Իսկ Գողլը... Հե՛ջ: «Եվ ո՛չ եցոյց Եսթեր», իրեն չհասկացողի տեղ է դնում... Ես նրան ասում եմ՝ «Ֆեֆերլ», նա՛ ինձ — «Բանվորների ընդհանուր բարօրություն»,— հերվա ձյո՛ւն...

— Ի՞նչ օգուտ ունենալ,— ասում եմ,— ձեր ընդհանուր բարօրությունից ու ձեր բանվորությունից, երբ այդ ամենը գաղտնի է արվում: Ասում են՝ «Որտեղ գաղտնիք կա, էնտեղ մաքուր չէ...»: Արի դու ինձ ճիշտն ասա, ինչո՞ւ գնաց Ֆեֆերլը և ո՞ւր գնաց:

— Ինչ ուզում ես կասեմ,— պատասխանում է,— միայն ոչ այդ: Եվ լավ կանես, որ չհարցնես: Հավատա ինձ, որոշ ժամանակից հետո ամեն ինչ կիմանաս: Աստծու կամքով և թերևս՝ շուտով, շատ նորություններ ու բարի լուրեր կլսես:

— Ամե՛ն,— ասում եմ ես,— տա՛ ասոված: Շրթունքներիցդ մեղր է կաթում: Բայց թող մեր թշնամիներն այնքան առողջ լինեն, ինչքան որ բան եմ հասկանում, թե ձեզ մոտ ինչ է կատարվում և թե ինչ է նշանակում այդ ամբողջ գլխացավանքը:

— Հենց ցավն էլ այդ է,— պատասխանում է նա,— որ չես հասկանա:

— Ինչ է, դա, ուրեմն, շա՛տ դժվար բան է: Ես, կարծում եմ, աստծու օգնությամբ շատ ավելի խրթին բաներ եմ հասկանում:

— Դա,— ասում է նա,— միայն խելքով չի հասկացվի, դա պետք է զգալ, սրտո՛վ զգալ...

Այդպես է ասում նա ինձ, Գողլը, այսինքն, իսկ դեմքը այրվում է, աչքերը հուրհրատում: Ի՛նչ ասեմ ես Տեվյեի աղջիկներին: Թե որ նրանց մի բան գրավեց, ապա՝ ամբողջությամբ, ոտքից գլուխ, ամբողջ սրտով, հոգով ու մարմնով:

Ես ձեզ կարճ կասեմ. անցնում է մեկ շաբաթ, երկու, երեքն էլ, չորրորդն էլ, հինգերորդն էլ, վեցերորդն էլ, յոթերորդն էլ, ո՛չ լուր կա, ո՛չ նամակ. «Ձայն բարբառո յանապատի»: Կորավ, ասում եմ, Ֆեֆերլը, ու նայում եմ Գողլին: Դեմքը գունատ է, պատի ծեփ: Ամբողջ օրը տանը գործ է անում, երևի վիշտը դրանով է ուզում ամոքել... Բայց գոնե թեկուզ մի անգամ հիշեր նրան: Հանդա՛րտ, սուսուփուս: Կարծես աշխարհում Պերչիկ ասածը ոչ եղել է, ոչ էլ...

Բայց ահա մեկ անգամ մի այսպիսի պատմություն տեղի ունեցավ: Տուն եմ գալիս, տեսնում եմ ի՛նչ, իմ Գողլը լաց եղած, կոպերը ուռած: Սկսում եմ հարցուփորձ անել ու իմանում եմ, որ մեր տուն է եկել երկար մազերով ինչ-որ մեկը և ինչ-որ բաներ փսփսացել նրան, այսինքն՝ Գողլին: «Ըհը՛, մտածում եմ: Դա հենց նա է, որ փախել է ծնողների մոտից և որ բաց թողած փեշերով բլուզ է հագնում...»: Եվ մի քիչ մտածելուց հետո կանչում եմ Գողլին և նեղը գցում:

— Հապա մի ասա տեսնեմ, աղջիկս, դու նրանից որևէ լուր ստացե՞լ ես:

— Այո:

— Որտեղ է նա, քո այդ սրտի սիրելին:

— Հեռո՛ւ,— ասում է:

— Ինչ է անում:

— Նստած է:

— Նստա՞ծ:

— Նստած:

— Որտե՞ղ է նստած: Ինչի՞ համար:

Լոռում է: Նայում է ինձ, ուղիղ աչքերիս ու լոռում:

— Հապա ասա ինձ, աղջիկս,— ասում եմ,— որքանով ես հասկանում եմ, նա նստած է ոչ գողության համար: Բայց այդ դեպքում խելքիս չի նստում. եթե ո՛չ գող է, ո՛չ էլ խաբեբա, հապա ինչի՞ համար է նստած, իր ո՞ր մեղքի համար:

Լոռում է: «Չե՞ս ասում, մտածում եմ ես, իսկի պետքս էլ չէ: Քո գանձն է, իմը չէ: Հե՛րն էլ անիծած: Բայց սիրտս ցավում է: Ախր ինչքան չլինի հայր եմ: Իզուր չի աղոթքում ասված. «Որպես հայրն գրայ գաւակաց իւրոց», հայրը, հայր էլ կմնա:

Կարճ ասած, դա «Տաղավարների»²¹ տոնի յոթերորդ օրն էր, երեկոյան: Ինձ մոտ այդպես է, տոներին ես էլ եմ հանգստանում և ձիուս էլ եմ հանգիստ տալիս, ինչպես ասված է սուրբ գրքում. «Հանգչեա և դո՛ւ, և եզն, և էջն քո՛յ, և կին քոյ և ձի...»: Հա՛, այն էլ ասեմ, որ Բոյբերիկում այլևս գործ չունեի անելու, դեռ աշունը չեկած, ամառանոցավորները քաղցած առնետների նման սկսում են փախչել դեսուղեն, և Բոյբերիկը ամայանում է: Այդ օրերին սիրում եմ մնալ տանը ու նստել պատի տակի թմբին: Դա ինձ համար ամենահաճելի ժամանակն է: Ամեն մի լավ օր աստծու շնորհն է: Արևն այլևս չի նեղում, այլ փաղաքշում է մեղմորեն ու հոգիդ փառավորում: Անտառը դեռ կանաչ է, կեչիներից առաջվա նման խեժի հոտ է գալիս, և թվում է ինձ, որ անտառը կարծես աստծո տաղավարը լինի՝ տոնականորեն զարդարված: Ա՛յ այստեղ է աստված իր տունը տոնում, մտածում եմ ես: Այստե՛ղ, և ոչ թե քաղաքում, որտեղ աղմուկ է, իրարանցում, որտեղ մարդիկ խելագարների նման վազվզում են և մի կտոր հացի ետևից ընկած՝ տանջվում, չարչարվում, որ փողից բացի ոչինչ չես լսի, փո՛ղ, փո՛ղ, հա փո՛ղ: Իսկ երեկոյան, և այն էլ այսպիսի տոն օրով, մեզ մոտ հո երկրային դրա՛խտ է. երկինքը կապույտ է, աստղերը պլպլում են, ցոլցում, աչքով անում, իսկական մարդկային աչքերի նման: Մեկ էլ տեսնում ես, նետի պես սլացավ աստղը, իրենից հետո մի պահ թողնելով կանաչավուն հետք. դա ինչ-որ մեկի աստղը հանգավ, ինչ-որ մեկի բախտը խավարեց: Չե՞ որ ամեն մի մարդ, մի բախտ ունի, մի աստղ ունի երկնքում... «Միայն թե ոչ իմ թշվառ բախտը», մտածում եմ ես ու հիշում Գողլին: Մի քանի օր կլինի, որ նա ինչ-որ աշխուժացել է, վերակենդանացել, միանգամից փոխվել: Ինչ-որ մեկը նրան նամակ է բերել, կա-չկա Պերչիկից է: Ուզում եմ, շատ եմ ուզում իմանալ, թե ինչ է գրում նա, բայց հարցնել չեմ ուզում: Դու որ լոռում ես, ե՛ս էլ կլռեմ: Կարծես բերանս ջուր եմ ամել: Տեվյեն կնիկարմատ չի՛, Տեվյեն կարող է և սպասել:

Այդ միջոցին դուրս է գալիս ինքը՝ Գողլը և նստում կողքիս, թմբի վրա, նայում է շուրջը և կամացուկ ասում.

— Գիտես ինչ, հայրիկ: Ես քեզ բան ունեմ ասելու: Այսօր ես հրաժեշտ եմ տալու քեզ... ընդմիշտ...

Նա խոսում է կամացուկ, հազիվ լսելի և նայում է այնպես տաքօրինակ, որ այդ հայացքը հավիտյանս չեմ մոռանա: «Ուզում է խեղդվել», փայլատակում է գլխումս: Որտեղի՞ց է այդ տոկալի միտքը ինձ մոտ: Բանն այն է, որ վերջերս մեր հարևանության մեջ մի այսպիսի բան պատահեց: Մի հրեա աղջիկ սիրահարվում է գյուղից եկած մի տղայի և հանուն նրա... հասկանում եք, իհարկե: Մայրը նրա դարդից հիվանդացավ ու մեռավ, հայրը քամուն տվեց ունեցած-չունեցածը, դարձավ մուրացկան: Իսկ տղան միտքը փոխում է, ամուսնանում ուրիշի հետ: Այդ ժամանակ աղջիկը գնում է գետը, իրեն զցում ջուրը, խեղդվում...

²¹ Կուշչի, կամ Տաղավարների տոն, որ նշվում է աշնանը. տների մոտ ծառերի ճյուղերից տաղավարներ են պատրաստում, ուր և աղոթում են:

— Ինչ է նշանակում՝ դու հրաժեշտ ես տալիս ինձ հավիտյան,— հարցնում եմ ես ու գլուխս կախում, որ նա չտեսնի, թե դեմքս ինչպես մեռելային կերպարանք ստացավ:

— Դա նշանակում է,— պատասխանում է նա,— որ վաղը լուսաբացին ես մեկնում եմ... Մենք այլևս երբեք չենք տեսնելու միմյանց... Երբեք:

Մի քիչ սիրտս թեթևացավ. «Դրա համար էլ եմ գոհ, փա՛ռք քեզ, տեր աստված, մտածում եմ ես: Դրա համար էլ եմ գոհ, կարող էր դրանից վատն էլ լինել, իսկ լավի համար, իհարկե, սահման չկա...»:

— Ո՞ր ես գնում, գործրինակ,— ասում եմ ես,— եթե արժանի եմ իմանալու այդ մասին:

— Գնում եմ նրա մոտ:

— Նրա մո՞տ: Իսկ որտե՞ղ է նա հիմա:

— Դեռևս նստած է,— պատասխանում է նա,— Բայց շուտով արթոթելու են:

— Նշանակում է, գնում ես նրա հետ մնաս բարո՞վ անես:

— Ո՛չ,— պատասխանում է,— գնում եմ նրա հետ այնտեղ:

— Այնտեղ: Ախար որտե՞ղ: Ո՞նց է կոչվում այդ տեղը:

— Դեռևս,— ասում է,— տեղի անունը ճիշտը հայտնի չէ, Բայց շա՛տ հեռու է, սուկալի հեռու...

Խոսում է նա՝ Գողը, և թվում է ինձ, որ բառերը արտասանում է հպարտությամբ, որպես թե մի ինչ-որ բան է արել, որի համար պետք է նրան պարգևատրել փթանոց մեղալով... Ինչ կարելի էր պատասխանել դրան: Այդպիսի խոսքերի համար հայրը պարտավոր է զայրանալ, թշերին մի երկու հատ հասցնել, հայիոյել: Բայց Տեվյեն կնիկարմատ չի՛... Զայրանալ, նշանակում է սատանի սրտով գնալ, ես այդպես եմ հաշվում: Եվ ես, ինչպես միշտ, տողեր եմ ասում սուրբ գրքից:

— Տեսնում եմ ես, աղջիկս, որ դու կատարում ես աստծո կամքը. «Եւ վասն այդօրիկ լքանէ...»: Հանուն Պերչիկի սիրուն թողնում ես հորդ ու մորդ, ճամփա ընկնում անհայտ երկրները, ամայի անապատները, չսառչող ծովերը, այնտեղ, որտեղ նավով ճամփորդել է Ալեքսանդր Մակեդոնացին և ընկել հեռավոր մի կղզի, վայրենիների մեջ, ինչպես որ կարդացել եմ մի ժամանակ ինչ-որ գրքում...

Ասում եմ կիսակատակ, կիսաբարկացած, իսկ սիրտս մղկտում է: Բայց Տեվյեն կնիկարմատ չի՛: Տեվյեն դիմանո՞ւմ է: Եվ ինքը, այսինքն՝ Գողլն էլ նույնպես չի ընկճվում: Պատասխանում է ինձ հանգամանորեն, չշտապելով, մտածված. Տեվյեի աղջիկները գիտե՞ն խոսել:

Եվ չնայած նստած եմ գլուխս՝ քարշ, և աչքերս՝ փակ, ինձ թվում է, որ տեսնում եմ նրան: Տեսնում եմ նրա դեմքը հոգնած ու գունատ, ինչպես լուսին, և թվում է, որ ձայնը խզված է ու դողում է... ընկնեմ վզովը, աղաչեմ, պաղատեմ, որ չգնա՞: Բայց ես գիտեմ, որ դրանից բան դուրս չի գա: Ա՛խ, ինչ ասեմ իմ աղջիկներին: Թե որ սրտները կպավ ինչ-որ մեկին, կնվիրվեն ամբողջ սրտով, ամբողջ հոգով, առանց մնացորդի:

Մի խոսքով, երկա՛ր-երկար նստած էինք թմբին, համարյա ամբողջ գիշեր: Ավելի շատ լռում էինք, քան խոսում, և խոսելիս էլ ակնարկներով... Թե որ նա խոսում էր, ես էլ էի խոսում... Միայն մի բան հարցրեցի, ասացի, այդ որտե՞ղ է լսված, որ աղջիկը պսակվի միայն նրա համար, որ մարդու հետևից գնա ինչ-որ տեղ, ջհաննամի տակը: Իսկ նա, թե՛

— Նրա հետ թեկուզև ջհաննամի տակը:

Ես, իհարկե, աշխատում եմ նրան ապացուցել, թե դա որքան անմիտ բան է: Իսկ նա իրեն ձևով բացատրում է, թե դա ես չեմ կարող հասկանալ: Այդ ժամանակ ես նրան մի օրինակ եմ բերում: Հավի տակը բադի ձվեր են դնում, բադիկները հենց ոտի են ելնում թե չէ, վազում են գետակն ու թափվում ջուրը, իսկ խեղճ թխսամերը ո՛նց է կռկռում:

— Հը, սրա՞ն ինչ կասես, աղջիկս:

— Ինչ պիտի ասեմ, ինչ խոսք, թուխսը մեղք է: Բայց մի՞թե հենց նրա համար, որ նա կռկռում է, բադիկները չպիտի լողան:

Հասկանո՞ւմ եք, թե ինչ է ասում: Տեվյեի աղջիկը անմիտ բան չի՛ ասի...

Մինչդեռ ժամանակն անցնում է: Արդեն սկսում է լուսանալ: Պառավա քրթմնջում է: Նա արդեն մի քանի անգամ իմաց է արել, որ ներս գնանք: Տեսնելով, որ օգուտ չունի, գլուխը դուրս է հանում պատուհանից և շշպոռում ինչպես պետքն է:

— Տեվյե, մի ասա տեսնեմ, թե ինչ ես քեզուքեզ մտածում:

— Սուս արա, Գոլդա,— ասում եմ,— ինչպես սուրբ գրքումն ասված է. «Վասն է՞ր աղմկեք»: Դու երևի մոռացել ես, թե այսօր ինչպիսի՛ տոն է: Այս գիշեր երկնքում վճռվում է մեր բախտը²²: Այս գիշեր քնել չի կարելի: Ի՛նձ լսիր, Գոլդա, ապա մի նեղություն քաշիր, ինքնաեռը տաքացրու, մի լավ թեյ խմենք, իսկ ես այդ միջոցին ձին լծեմ: Գողլի հետ կայարան ենք գնալու:

Եվ արդեն սովորությանս համեմատ հենց տեղնուտեղը մի նոր հեքիաթ եմ թխում, պատմում եմ, որպես թե, Գողլը գնում է Եգուպեց, իսկ այնտեղից՝ ավելի հեռու, էլի նույն գործով, ժառանգության հարցով, այսինքն, և պետք է կարծել, որ նա այնտեղ կմնա ամբողջ ձմեռը և միգուցե և ամառը և մի ձմեռ ևս: Այնպես որ, ասում եմ, պետք է ճանապարհի համար ամեն ինչ պատրաստել, ինչպես որ կարգն է: Մի քիչ փոխնորդ, բարձ, բարձի երես, հագուստ, սա, նա, մյուսը...

Կարգադրում եմ էս ձևով ու հրամայում, որ ոչ մի արցունք չլինի: Այսօր տոն է արար-աշխարհում: «Այսօր, ասում եմ, լաց լինելը արգելված է: Օրենքի մեջ հենց այդպես էլ ասված է»: Կարծում եք լսեցի՞ն, օրենքից վախեցա՞ն: Ո՛ւր: Աղի արցունք են թափում, իսկ երբ եկավ հրաժեշտի ժամը, ձենները գլուխները գցեցին, ողբում են, կոծում, թե մայրը, թե երեխեքը և հենց ինքն էլ, Գողլն էլ է լալիս ու հեկեկում: Ամենից դժվարը մեծ աղջկա՝ Ցեյտլին հրաժեշտ տալն էր (նա տոներին մեզ մոտ է գալիս ամուսնու՝ Մոտլ-Կամգոլի հետ): Քույրերը որ չփաթաթվեցին ու իրար վզով ընկան, հազիվ բաժանեցինք: Եվ միայն ես էի, որ ինձ բուռս հավաքեցի, դիմացա, ինչպես կայծքար: Դե, այսինքն, իհարկե, այդպես ասվում է միայն... Ներսս եռում էր ինքնաեռի նման, բայց ես, պարզ է, ցույց չեմ տալիս: Տեվյեն կնիկարմատ չի՛... Մինչև Բոյբերիկ ամբողջ ճանապարհին լուռ էինք և միայն կայարանին մոտենալիս վերջին անգամ խնդրեցի նրան բացատրել, թե, համենայն դեպս, ի՞նչ հանցանք է գործել նա՝ Ֆեֆերը այսինքն: «Ախր ամեն ինչ, ասում եմ, պետք է մի որևէ իմաստ ունենա»: Նա բռնկվում է և սկսում երդվել աշխարհում եղած բոլոր երդումներով, որ նա մաքուր է ինչպես ապակին:

²² Կրոնական հավատալիք այն մասին, որ տվյալ գիշերը, երկնքում ստորագրվում է յուրաքանչյուր մարդու ճակատագիրը՝ համաձայն «դատաստանի օրվա» որոշման:

— Նա,— ասում է,— մի մարդ է, որը ամենից քիչ իր մասին է մտածում: Նրա ամբողջ հոգսը ուրիշների բարօրությունն է, ընդհանուրի բարօրությունը, և ամենագլխավորը՝ բանվորների, աշխատավոր մարդու բարօրությունը:

— Միգուցե,— ասում էմ ես,— նա աշխարհում բոլոր մարդկանց մասին էլ մտածում է: Հապա ինչո՞ւ աշխարհն էլ նրա մասին չի մտածում, թե որ նա այդքան լավ մարդ է: Դե, բարև արա նրան իմ կողմից, նրա՛ն, քո այդ Ալեքսանդր Մակեդոնացուն, ասա, որ ես վստահ եմ, որ նա կարգին մարդ է, չէ՞ որ նրա ուղնուծուծը ճշմարտությամբ է ծծված, և կարծում եմ, որ նա չի խաբի աղջկաս և ինձ՝ ծերունի հորը մի օր չէ մի օր նամակ կգրի:

Ասում եմ այսպես, իսկ նա հանկարծ ընկնում է վզովս ու ո՛նց է հեկեկում:

— Դե, մնաս բարև,— ասում է:— Ո՛ղջ եղիր, հայրիկ: Աստված գիտի, թե երբ կտեսնվենք...

Դե, իհարկե: Այստեղ ես այլևս չդիմացա...

Հիշեցի, հասկանում եք, որ հենց այդ Գողը, երբ հալա փոքր էր, թիզուկեա... գրկանոց... թներիս վրա էի պահում... թների՛ս... Դուք ներեցեք ինձ, որ ես... կնկա նման... Բայց եթե դուք իմանայիք, թե դա ի՛նչ Գող է: Եթե իմանայի՛ք: Եթե կարդայիք նրա բոլոր նամակները: Ահա թե որտեղ է նա... այստեղ, հոգուս մեջ՝ խորը, խորը... Ո՛չ, չեմ կարող այդ բոլորն ասել...

Գիտեք ինչ, պանե Շուրմ-Ալեյխեմ: Եկեք ավելի ուրախ բաներից խոսենք: Ի՞նչ են ասում Օդեսայի խոլերայից...

1904.

ԽԱՎԱ

«Փառաւորեցե՛ք զաստուած, զի բարեգութ է», ինչպես որ տերը որոշում է, այդպես էլ պետք է լինի, այսինքն՝ ստիպված ես ասել — այդպես էլ պետք է լինի, որովհետև ճարդ ինչ, կարո՞ղ ես իմաստուն դառնալ ու նրանից ավելի լավը անել: Ահա գործինակ ես, ես ուզում էի լինել խելացի, ուզում էի մեկնաբանել սուրբ գրքի ասացվածքները... Իսկ երբ տեսա չի օգնում, ձեռքս թափ տվեցի ու ինքս ինձ ասացի. «Տե՛լյե, դու հիմար ես, դու հո չե՛ս կարող աշխարհը քանդել ու նորից շինել: Ամենաբարձրյալը մեզ առաքել է «գտանջա՛նս սնուցանելոյ զգաւականս», որ կնշանակի — զավակները դառնություն են պատճառում, բայց դա պիտի ընդունես որպես բարիք»: Զորօրինակ, իմ անդրանիկ դուստրը՝ Յեյտը, սիրահարվեց աղքատ դերձակին՝ Մոտլ-Կամզոլին: Դե, նրա դեմ ես բան չունեմ: Ընչու է, պարզամիտ մարդ է, գրաճանաչության մեջ էլ տկար: Բայց ի՞նչ կարող ես անել: Ոնց որ դուք եք ասում, հո բոլորը գիտնական չե՞ն լինի: Բայց վնաս չունի, կարգին մարդ է, լավ աշխատավոր, իր ճակատի քրտինքով հաց է վաստակում: Մի տեսնեք նրանց երեխեքին, աչքով չտամ, մի լիքը տուն, փոխանն ի՞նչ է, հագներին չկա, ու տանջվում, տրորվում են երկուսով՝ «ի մեջ հարստութեան և պատույ»... Բայց հապա փորձեցեք խոսել աղջկաս հետ, նա ձեզ կասի՝ լա՞վ է ապրում, շա՛տ լավ է ապրում, հրաշալի՛... Միայն թե մի բան այնքան էլ լավ չի, հացի փողը չի հերիքում: Ահա ձեզ, այսպես ասած՝ համար առաջին:

Երկրորդ աղջկաս՝ Գողի մասին ձեզ պատմելու հարկ չկա, դուք ինքներդ էլ գիտեք: Ես նրան տանուլ տվեցի, կորցրի՛ հավիտյան: Աստված գիտի, արդյոք աչքերս նրան մեկ էլ կտեսնե՞ն, թերևս

այն աշխարհում, հարյուր քսան տարի հետո²³... Չնայած խոսում եմ նրա մասին, բայց մինչև օրս ուշքս գլուխս չի գալիս, կյանքս խավարեց: Ասում եք՝ մոռանալ: Ախր ո՞նց կարելի է կենդանի մարդուն մոռանալ: Այն էլ այնպիսի գավակին, ինչպիսին Գողլն է: Թե որ կարդաք նրա նամակները, որ գրում է ինձ — մեռնել կարելի է: Գրում է, որ շատ լավ է ապրում այնտեղ: Նա նստած է, իսկ ինքը փող է աշխատում: Փոխնորդ է լվանում, գրքեր է կարդում և շաբաթը մեկ անգամ տեսնվում նրա հետ: Եվ հույս ունի, գրում է նա, որ այստեղ, մեզ մոտ ամեն ինչ տակնուվրա կլինի, որ արև կծագի, լույս կբացվի, այն ժամանակ իր բանտարկյալը, ինչպես և նրա նմանները ազատ կարձակվեն, ահա այն ժամանակ իրենք կսկսեն ձեռք զարկել իսկական գործի և գլխիվայր կշրջեն կյանքը: Դե, ինչպես է դուր գալիս ձեզ: Լավ է, այնպես չէ՞: Իսկ ի՞նչ է անում ամենակալն աստված: Չէ՞ որ նա, ինչպես ասում եք, բարեգութ է, ողորմա՛ծ... Եվ ահա նա ասում է ինձ. «Հալա սպասիր, Տեվլե, ես այնպես կանեմ, որ դու բոլոր քաջածնեղ մոռանաս...»: Եվ իսկապես, արժե որ լսեք, ուրիշին երբեք չէի պատմի, որովհետև ցավս մեծ է, իսկ խայտառակությունս դրանից էլ մեծ: Բայց ինչպես այնտեղ ասված է. «Մի՞թե թաքուցանեմ ինչ յԱբրահամե» — ես ձեզնից գաղտնիք չունեմ: Ամեն բան ինչպես որ կա, այնպես էլ ասում եմ: Մենակ մի բան եմ խնդրում, թող սա մնա մեր մեջ: Որովհետև, կրկնում եմ, ցավս մեծ է, խայտառակությունս դրանից էլ մեծ:

Մի խոսքով, ինչպես ասված է «Խրատք հարցն» գլխում, «Կամեցաւ աստուած մաքրել զհոգին», ցանկացավ աստված բարերարություն անել Տեվլեին և բախտավորեցրեց ընտանիքը՝ դուստրերով — մեկը մյուսից լավը, ինչացի, սիրուն, դալար, ոնց որ նոճի: Ա՛խ, երանի թե այլանդակ, տգեղ լինեին, այդպես թե իրենց և թե մեզ համար միգուցե ավելի լավ լիներ: Որովհետև, ասացեք խնդրեմ, ի՞նչ օգուտ այն նծույզից, եթե կանգնած է ախոռում: Ի՞նչ օգուտ քո սիրուն աղջիկներից, երբ քարշ ես գալիս նրանց հետ խուլ, ետ ընկած տեղերում և մի կենդանի արարած չես տեսնում, բացի Անտոն Պոպերիից՝ գյուղի տանուտերից կամ գրագիր Ֆեդկա Գալագանից, որ մի անձոռնու մեկն է, գլխին մի խուրձ մազ, երկարաճիտք կոշիկներով, մեկ էլ տերտերից, այ իզն ու թոզը վերանա աշխարհից: Անունը լսել չեմ կարող, ոչ թե նրա համար, որ ես հրեա եմ, իսկ նա՝ տերտեր: Ընդհակառակը, մենք տարիներ շարունակ լավ ծանոթներ ենք, այսինքն՝ մեկմեկու տուն հյուր չենք գնում, բայց պատահելիս բարևում ենք, գրուցում դեսից-դենից... Նրա հետ երկար խոսք ու գրույցի մեջ մտնել չեմ սիրում, որովհետև հենց որ մի բան լինում է թե չէ, անիծածը սկսում է՝ մեր աստվածը, ձեր աստվածը... Ես, իհարկե, տակը չեմ մնում և խոսքը մի որևէ առածով կտրում եմ, ասում եմ՝ մենք էլ ունենք այդպիսի մի ասացվածք... Բայց թե նա էլ իմ խոսքն է կտրում ու վրա բերում, թե ասացվածքներ ինքն էլ գիտի և ոչ վատ, քան ես, ու միգուցե՝ ավելի լավ: Եվ սկսում է բերանացի շարել մեր Հնգեմատյանից և այն էլ երբաբեր, բայց ինչ-որ իրենց հանգի՝ «Բերեշիտ բարա էրզիմ...»²⁴: Ամեն անգամ նույն բանը: Ես նորից եմ նրան ընդհատում և ասում, որ մենք ունենք «միդրաշ»... «Միդրաշը, ասում է նա, դա արդեն թալմուդն է», իսկ թալմուդը չի սիրում, որովհետև թալմուդը, նրա ասելով մաքուր խաբեություն է... Այստեղ ես այլևս չեմ դիմանում, ինձ կորցնում եմ և սկսում իրար ետևից շարել ամենը, ինչ միտքս գալիս է: Կարծում եք, թե դա նրա սրտին դիպչո՞ւմ է: Բնա՛վ երբեք: Նայում է ինձ, քմծիծաղ տալիս ու մորուքը սղալում: Բայց աշխարհում դրանից ավելի վատ բան չկա, երբ մեկին հայհոյում ես, ցեխը խրում, իսկ սա տազ է անում: Դուք մաղձոտել եք, փորներդ եփ է գալիս, իսկ նա հանգիստ քմծիծաղ է տալիս: Ես այն ժամանակ չէի հասկանում, իսկ հիմա ինձ համար պարզ է, թե ինչ էր նշանակում նրա քմծիծաղը...

Մի անգամ տուն եմ վերադառնում իրիկնամուտին և գրագիր Ֆեդկային տեսնում եմ փողոցում, իմ Խավայի, այսինքն՝ Գողլից հետո երրորդ աղջկաս հետ: Ինձ տեսնելով, տղան երեսը շրջեց իմ կողմը, գլխարկը հանեց ու գնաց: Ես Խավային հարցնում եմ.

²³ Երկարակեցության մաղթանք:

²⁴ Աստվածաշնչի առաջին տողը — «Ի սկզբանէ արար աստուած...»:

— Ի՞նչ էր անում Ֆեդկան էստեղ:

— Ոչինչ,— ասում է:

— Ի՞նչ է նշանակում՝ «ոչինչ»:

— Մենք զրուցում էինք,— պատասխանում է նա:

— Իսկ ի՞նչ ընդհանուր բան ունեք դու և Ֆեդկան,— հարցնում եմ ես:

— Մենք,— ասում է նա,— վաղուցվա ծանոթներ ենք:

— Շնորհավորում եմ նման ծանոթության համար,— ասում եմ ես:— Ախր Ֆեդկան քո ի՞նչ թայն է:

— Դու մի թե նրան ճանաչում ես,— պատասխանում է Խավան:— Դու գիտե՞ս, թե ով է նա:

— Թե ով է նա, ես չգիտեմ,— ասում եմ ես,— նախնիներին չեմ տեսել: Բայց հասկանալը՝ հասկանում եմ, որ պետք է մի շատ նշանավոր տոհմից լինի. հայրը երևի հոտաղ է եղել կամ պահակ, կամ, պարզապես, արբեցողի մեկը...

Այդ ժամանակ աղջիկս հայտարարում է.

— Թե ով է եղել նրա հայրը, ես չգիտեմ և չեմ էլ ուզում գիտենալ, ինձ համար բոլոր մարդիկ հավասար են: Իսկ այն, որ նա սովորական մարդ չէ, ես դա հաստատ գիտեմ...

— Այսինքն,— հարցնում եմ ես:— Ի՛նչ մարդ է, ի՛նչ է ներկայացնում նա իրենից: Հապա մի ասա լսենք...

— Ես կասեի, բայց դու չես հասկանա: Ֆեդկան, դա երկրորդ Գորկի է:

— Երկրորդ Գորկի՞: Իսկ ո՞վ է առաջին Գորկին:

— Գորկին,— պատասխանում է նա,— հիմա գրեթե առաջին մարդն է ամբողջ աշխարհում...

— Որտե՞ղ է գտնվում,— ասում եմ ես,— քո այդ իմաստունը, ինչո՞վ է զբաղվում և ի՞նչ է քարոզում:

— Գորկին,— պատասխանում է Խավան,— նշանավոր գրող է, հեղինակ, այսինքն՝ գրքեր է գրում, բացի այդ, հազվագյուտ մարդ է, նշանավոր մարդ, և հասարակ ժողովրդից դուրս եկած, ոչ մի տեղ ուսում չի առել, ամեն ինչ ինքնուրույն է սովորել... Ահա՛ նրա պատկերը:

Այդ խոսքի վրա Խավան գրպանից հանում է մի լուսանկար և ցույց տալիս ինձ:

— Սա՞ է քո քարոզիչը,— ասում եմ ես,— քո ռեբ Գորկին: Երդում կուտեմ, որ նրան ինչ-որ տեղ տեսել եմ. կայարանում պարկեր էր բարձում, թե անտառում գերան էր կտրում...

— Ի՞նչ անենք. քո կարծիքով եթե մարդ իր սեփական ձեռքերով է իր հացը վաստակում, դա թերությունն է: Իսկ դու ինքդ չե՞ս աշխատում: Մենք բոլորս չե՞նք աշխատում:

— Հա՛, հա՛,— ասում եմ: Իհարկե, դու իրավացի ես: Մուրբ գրքում հենց այդպես էլ ասված է. «Աշխատութեամբ ձեռաց քոց պարտ ես կերակրիլ», իսկ եթե չաշխատես, չես ուտի: Մի բան մենակ չեմ հասկանում, Ֆեդկան ի՞նչ բան ունի այստեղ: Իմ կարծիքով լավ կլինեք, որքան կարելի է հեռու մնայիր նրանից: Դու չպետք է մոռանաս, ասում եմ, «Ուստի՞՞ գաս և յո՞ւ երթաս» — ո՞վ էս դու, ո՞վ է նա:

— Աստված,— ասում է Խավան,— բոլոր մարդկանց հավասար է ստեղծել:

— Այո՛, այո՛: Աստված Ադամին ստեղծել է իր նման և իր կերպարանքով: Բայց չպետք է մոռանալ և այն, որ ամեն մեկը պարտավոր է փնտրել իր հավասարին, ինչպես սուրբ գրքումն է ասված.
«Ամենայն ոք ըստ ունեցուածոյ իւրոյ»:

— Զարմանալի բան է,— ընդհատում է նա ինձ:— Ամեն բանի համար քեզ մոտ պատրաստի ասացվածք կա: Իսկ այն մասին էլ ասացվածք չկա՞, որ մարդիկ իրենք են իրենց բաժանել հրեաների և ոչ հրեաների, տերերի ու ստրուկների, հարուստների ու աղքատների:

— Պա՛, պա՛, պա՛,— ասում եմ,— դու շատ հեռուն գնացիր, աղջիկս:

Եվ սկսում եմ բացատրել, որ երկրի վրա այդպես է հաստատված աշխարհի ստեղծման առաջին իսկ օրից է:

— Իսկ ինչո՞ւ է այդպես:

— Որովհետև աստված այդպես է աշխարհն ստեղծել:

— Իսկ ինչո՞ւ է այդպես ստեղծել:

— Գիտե՞ս ինչ,— պատասխանում եմ նրան:— Եթե մենք սկսենք ասել ինչու, ինչի համար, ինչ պատճառով, հարցերին տուտ ու տակ չի լինի:

— Հենց դրա համար էլ աստված խելք է տվել,— ասում է,— որ հարցեր տանք...

Իսկ ես նրան ասում եմ.

— Մեզ մոտ մի սովորություն կա, եթե հավը սկսում է աքլորի նման ծուղրուղու կանչել, նրան իսկույն մորթում են, ինչպես աղոթքումն է ասված՝ «զմիտս աքաղաղին պարգևողն...»:

— Հերիք չեղա՞վ լեզվներիդ տաք,— մեջ է խառնվում իմ Գոլդան, դուրս գալով տնից:— Արդեն մի ժամ է, կաղամբապուրը սեղանի վրա է, իսկ ես մարդու բլբլոցին վերջ չկա:

— Այ դու բարով եկա՛ր: Իգուր չեն իմաստուններն ասել: «Կնկա լեզվին յոթը սնդուկը հերիք չի արել»: Էստեղ կարևոր բաներ են խոսում, իսկ սա կպել է իր կաղամբապուրից:

— Կաղամբապուրը,— պատասխանում է Գոլդան,— միգուցե նույնքան կարևոր բան է, որքան քո բոլոր կարևոր բաները...

— Շնորհավորո՞ւմ եմ,— ասում եմ ես:— Էս նոր փիլիսոփան որտեղի՞ց լույս ընկավ, չլինի՞ թե հենց ուղղակի վառարանի տակից: Հերիք չի աղջիկները ամեն մեկը՝ գլխիս մի-մի իմաստուն են դարձել, Տեվլեի կնիկն էլ սկսել է ծխնելույզով երկինք թռչել:

— Որ երկնքի անունը տվեցիր, դու էլ տեսնեմ՝ գետնի տակն անցնես...

Ո՞նց է դուր գալիս ձեզ էս տեսակ շշպոռցը, էն էլ ասված փոքրիկ:

Մի խոսքով, եկեք, ինչպես գրքերումն է ասվում, թագուհուն թողնենք էստեղ, հիմի էլ թագավորագնից ասենք, այսինքն՝ տերտերից...

Մի անգամ, իրիկնամուտին տուն եմ դառնում դատարկ կճուճներով ու հենց գյուղի մոտ հանդիպում եմ նրան։ Նստած է փառահեղ սայլին, ինքն էլ հենց քշում է ձիերը, իսկ սանրած մորուքն էլ քամին ծածանում է։ «Այ, գրողի ծոցը գնաս դու, ասում եմ ես, հենց այքս քեզ էր մնում»։

— Բարի իրիկո՛ւն,— ասում է նա։— Չճանաչեցի՞ր, ինչ է։

— Շուտով հարստանալու եք, տեր-հայր,— ասում եմ, հանում գլխարկս և ուզում եմ ճամփես շարունակել։

— Մի քիչ կաց, Տեվե,— ասում է նա,— ո՞ր ես էդպես վռագում։ Մի երկու խոսք պիտի ասեմ քեզ։

— Դե, ինչ կա որ,— պատասխանում եմ։— Թե լավ բան ես ասելու, խնդրեմ։ Իսկ թե դրա հակառակն է, կարելի է հետաձգել մյուս անգամ։

— Իսկ դա ի՞նչ է նշանակում քեզ մոտ՝ «մյուս անգամ»։

— Մյուս անգամ,— պատասխանում եմ ես,— մինչև մեսիայի²⁵

գալը։

— Մեսիան,— ասում է նա,— արդեն եկել է...

— Դա արդեն առաջին անգամը չէ, որ լսում ենք։ Դուք։ տեր-հայր, մի ուրիշ նոր բան հորինեիք...

— Ես հենց պատրաստվում եմ,— պատասխանում է նա։— Ուզում եմ քեզ հետ խոսել հենց քո մասին, այսինքն՝ քո աղջկա մասին...

Մի րոտ խփեց, ի՞նչ գործ ունի իմ աղջկա հետ։

— Իմ աղջիկները,— ասում եմ ես,— աստված պահի, էն տեսակները չեն, որ նրանց տեղակ հարկ լինեի խոսել. նրանք իրենք էլ կարող են իրենց պաշտպանել։

— Բայց սա այնպիսի գործ է, որ նա ինքը չի կարող խոսել։ Պետք է, որ ուրիշը խոսի, որովհետև հարցը վերաբերում է մի չափազանց կարևոր խնդրի, այսպես ասած՝ նրա բախտին...

— Իսկ ո՞ւմ գործն է իմ զավակի բախտը։ Ինձ թվում է, թե որ խոսք բացվեց նրա բախտի մասին, ապա ես եմ այդ աղջկա հայրը՝ մինչև հարյուր քսան տարի, ճիշտ չէ՞։

— Իհարկե,— պատասխանում է նա,— դու հայրն ես։ Բայց թե, դու կույր ես, չես տեսնում, որ քո զավակը ձգտում է մի ուրիշ աշխարհ, իսկ դու նրան չես հասկանում կամ էլ հասկանալ չես ցանկանում...

— Թե չեմ հասկանում կամ թե հասկանալ չեմ ցանկանում, այդ մասին կարելի է մտածել։ Բայց ձեր ի՞նչ գործն է, տեր-հայր։

— Հենց լավ էլ իմ գործն է,— ասում է,— որովհետև ձեր աղջիկը հիմա իմ տնօրինության տակ է...

— Ի՞նչ է նշանակում — ձեր տնօրինության տակ է։

— Հենց այն է նշանակում, որ իմ խնամակալության տակ է,— պատասխանում է տերտերը, նայելով ուղիղ աչքերիս ու սղալելով իր փառահեղ, լայնանիստ մորուքը։

²⁵ Հրեաների միջնադարյան փրկիչը։

— Ո՛նց թե,— վեր թռա ես:— Իմ զավակը ձեր խնամակալության տա՛կ: Ո՞ր իրավունքով,— ասում եմ ես ու զգում որ ներսս եփ է գալիս:

— Միայն թե մի տաքացիր, Տեվլ,— պատասխանում է նա սառնասրտորեն ու քմծիծաղ տալով:— Արի ավելի լավ է հանգիստ խոսենք այդ գործի մասին: Դու հո գիտես, աստված մի արասցե, որ քո վատը չեմ կամենում, չնայած որ հրեա ես. դու,— ասում է,— գիտես, որ ես հրեաներին հարգում եմ, և սիրտս ցավում է, որ նրանք այդքան համառ են, կամակոր և չեն ուզում հասկանալ, որ նրանց բարիք են կամենում:

— Բարյացականության մասին,— պատասխանում եմ ես,— լավ կանեք չխոսեք, որովհետև ձեր ամեն մի բառը հիմա ինձ համար մահացու թույնի կաթիլ է, մի գնդակ է սրտիս: Եթե դուք իսկապես իմ բարեկամն եք, ապա ձեզնից միայն մի բան եմ խնդրում, իմ աղջկան հանգիստ թողեք...

— Դու անխելք մարդ ես,— ասում է նա:— Ձեր աղջկան, աստված մի արասցե, ոչ մի վատ բան չի պատահի: Նրան սպասում է երջանկություն. նա ամուսնանում է մի լավ մարդու հետ, թող աստված հենց այդպիսի կյանք տա ինձ...

— Ամե՛ն,— պատասխանում եմ ես, որպես թե կատակով, բայց հոգուս մեջ դժոխք է:— Եվ ո՛վ է նա, զորօրինակ ձեր այդ փեսացուն, եթե արժանի եմ իմանալու:

— Դու նրան հավանաբար գիտես: Դա մի ազնիվ, մի սքանչելի մարդ է, կրթված, չնայած ինքնուս է. նա սիրահարված է ձեր աղջկան և ցանկանում է նրա հետ ամուսնանալ, բայց չի կարող, որովհետև հրեա չէ...

«Ֆե՛դկան է», մտածեցի ես և այդ միտքը կարծես կրակի նման դաղեց ինձ և հետո մի անտանելի սառը քրտինք վրա տվեց, որ հազիվ էի մնում սայլի մեջ: Բայց որ զգացնել տամ իմ դրությունը, դա արդեն, ներեցեք, թող հույս չունենա: Սանձը քաշեցի և նույնիսկ առանց մնաս բարև ասելու մտրակեցի ձիս և հայդա՛ դեպի տուն...

Տուն եմ գալիս, տե՛ր աստված, տունը իրարով է անցել: Երեխեքը երեսները թաղել են բարձերի մեջ ու ողբում են: Գոլդան էլ ոչ մեռած է, ոչ կենդանի... Խավային եմ փնտրում: Ո՞ւր է Խավան: Չկա՛ Խավան: Հարցնել թե ուր է, չեմ ցանկանում: Էլ ինչ հարցնեմ, վա՛յ իմ գլխին: Դժոխային տանջանքների մեջ եմ, զայրությանց եփ եմ գալիս, իսկ ո՞ւմ դեմ, ինքս էլ չգիտեմ... Մտրակը կվերցնեի և ոնց որ պետքն է մի լավ կձաղկեի ինձ: Վրա եմ պրծնում երեխեքին, սրտիս դառնությունը թափում եմ կնկանս վրա: Տեղս չեմ գտնում: Գնում եմ ձիու մոտ, կեր եմ տալիս, տեսնում եմ ոտքը զգել է կապին, խճճվել ու կանգնել մտրի մոտին: Փրփրեցի, վերցրի փայտն ու սկսեցի խփել, տո՛ւր որ կտաս, բայց թե իզուր: «Տեսնեմ վառվես, փոթոթվես, մոխիր դառնաս, ա՛յ քաֆթառ: Վարսակ ես ուզում հա՞: Քեզ համար վարսակ եմ թոփ արել, ո՛նց չէ: Տեսնեմ իմ օրն ընկնես: Վա՛յ իմ քամբախտ գլխին, եթե ուզում ես դարդերս ու ցավերս, փորձանքներս կտամ քեզ»:

Հայհոյում եմ թշվառականին, բայց թե հանկարծ ինձ վրա եմ հավաքում, իսկ նրա մեղքը ո՛րն է: Ինչու եմ վրա պրծել դրան: Մի քիչ կոտորած ծղոտ եմ լցնում առաջը՝ թեփի հետ խառնած, «իսկ շաբաթ օրն էլ, թե աստված կամեցավ, խոտ էլ կտամ...»: Գնում եմ տուն ու պառկում, զլուխս թաղում բարձի մեջ. սրտիցս արյուն է գնում, գլուխս պտտվում է մտքերից ու հարցերից: «Ի՞նչ է նշանակում այս ամենը: Ո՛րն է իմ հանցանքը և մեղքը: Տեվլե՛, ինչ է, դո՞ւ ես աշխարհի ամենամեծ մեղսագործը: Ինչո՞ւ եմ ինձ ամենից ավելի խստագույն պատիժը տալիս: Ախ, տե՛ր իմ աստված, տե՛ր իմ աստված, տիեզերքի տիրակալ: Ինչ ենք մենք և ինչ է մեր կյանքը: Ախր ով եմ ես, որ ամբողջ

Ժամանակ մտքիցդ չես գցում, աչքդ վրայիցս չես հեռացնում և չկա մի փորձանք, մի չարիք ու զուլում, որ իմ գլխին չբերես»:

Պառկած եմ ահա այդպես, ոնց որ կեծացած ածուխների վրա, միտք եմ անում ու երբ լսում եմ խեղճ կնկաս ձենը, թե ոնց է ախ ու օֆ քաշում, սիրտս մղկտում է:

— Գոլդա,— ասում եմ,— քնա՞ծ ես:

— Չէ,— պատասխանում է,— ի՞նչ ես ասում:

— Ոչինչ,— ասում եմ,— անտանելի է, Գոլդա՛... մարդ ուզում է գետինը պատովի ու մեջը մտնի: Միգուցե խորհուրդ կտաս, թե ինչ անենք:

— Ինձնի՞ց ես,— պատասխանում է,— խորհուրդ հարցնում: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Առավոտը շուտ զավակս վեր է կենում, ողջ ու առողջ, հագնվում է ու հանկարծ ընկնում է վզովս, համբուրում, փաթաթվում և ոչ մի բան չի ասում: Ես կարծում եմ, թե, աստված մի արասցե, գծվել է: Հարցնում եմ. «Ի՞նչ է պատահել, աղջիկս»: Չի պատասխանում: Մի րոպեով դուրս է վազում կովերի մոտ ու չկա: Սպասում եմ մի ժամ, երկու ժամ, երեք ժամ. որտե՞ղ է Խավան: Չկա՛ Խավան: Այդ ժամանակ երեխեքին ասում եմ, ապա մի վազ տվեք տերտերի մոտ...»:

— Ինչպե՞ս իմացար, Գոլդա,— ասում եմ ես,— թե նա տերտերի մոտ է:

— Ինչպե՞ս իմացա,— պատասխանում է:— Ա՛յ քեզ բան: Ինչ է, աչքեր չունե՞մ, թե ես մայր չեմ:

— Եթե դու աչքեր ունես,— ասում եմ ես,— և եթե դու մայր ես, ինչո՞ւ էիր բերանդ ջուր առել, ինչո՞ւ ինձ ոչինչ չէիր ասում:

— Քե՞զ ասեի: Իսկ ե՞րբ ես տանը լինում: Թեկուզ ասեի էլ, դու շա՞տ պիտի ականջ կախեիր: Հենց որ քեզ մի բան են ասում, իսկույն ևեթ սկսում ես ասացվածքներով պատասխանել: Գլուխս տանում ես քո ասացվածքներով, հենց դրանով էլ ամեն ինչից քեզ պրծեցնում ես:

Այսպես է ասում նա՝ Գոլդան այսինքն, և ես լսում եմ, թե ո՞նց է լալիս խավարի մեջ... Նա մասամբ է ճիշտ, որովհետև կնիկարմատն ի՞նչ կարող է հասկանալ: Եվ սիրտս մղկտում է նրա համար, չեմ կարողանում լսել, թե ոնց է լալիս ու հառաչում:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, Գոլդա,— դիմում եմ ես նրան,— դու դժգոհ ես, որ ես ամեն մի դեպքի համար ասացվածք ունեմ: Դրան էլ պիտի ասացվածքով պատասխանեմ: Ասում են՝ «որպես հայրն գթա ի վերայ որդւոց», ինչու, ասում եմ ես, չի ասված «որպես մայրն գթա ի վերայ որդւոց»: Որովհետև մայրը, դա հայր չէ. Հայրը ուրիշ ձևով է կարողանում խոսել զավակների հետ: Ա՛յ, կտեսնես, վաղը աստծու կամքով կտեսնեմ նրան...

— Տա՛ աստված,— պատասխանում է նա,— որ դու կարողանաս աղջկադ էլ տեսնել, նրան էլ: Նա վատ մարդ չի, չնայած որ տերտեր է: Բարի է մարդկանց հանդեպ: Կխնդրես, մինչև գետին գլուխ կտաս, միգուցե խղճա:

— Ո՞ւմ,— ասում եմ ես,— տերտերի՞ն: Ես նրան մինչև գետին գլուխ տա՛մ: Ցնդել ե՛ս, խելագարվե՛լ ես: «Մի՛ բանայր զշրթունս քոյ, առաջի սատանայի»: Իմ թշնամիները թող դրան չսպասե՛ն:

— Դե տեսնո՞ւմ ես,— ասում է նա,— նորից քո էշն ես քշում...

— Հապա ի՞նչ էիր կարծում,— ասում եմ,— ես պետք է կնիկարմատի խելքով շարժվեմ, որ կողմը սանձը ձգի, էն կո՞ղմը գնամ:

Հենց էս ասեկոսեի մեջ էլ գիշերը լուսացավ: Հագիվ դիմացա մինչև առաջին աքլորականչը, վեր կացա, աղոթք արեցի, մտրակս վերցրի ու մտա տերտերի բակ... Դե ճիշտ է, կնիկարմատը, կնիկարմատ է, բայց դե էլ ո՞ր պիտի գնայի: Գերեզմա՞ն...

Կարճ ասած, մտնում եմ տերտերի բակը, և էստեղ շները հանդիսավոր դիմավորում են և ուզում են կարգի բերել իմ կապան, փորձել սրունքներս, արդյոք իրենց ասամներին հարմար չե՞ն...

Լավ էր, որ մտրակս վերցրել էի, որով և նրանց բացատրեցի ասացվածքը. «Թող շունն ո՛չ սրեսցե՛ գատամունս»... այսինքն՝ «թող շունը ռեխը իզուր բաց չանի...»: Աղմուկի վրա դուրս եկան տերտերն ու տերտերակինը, որոնք դժվարությամբ քշեցին շների ուրախ ռհմակը և հրավիրեցին տուն: Ինձ ընդունեցին որպես պատվավոր հյուրի, նույնիսկ ուզեցին ինքնաեռը գցել: Ես ասացի, որ ինքնաեռի պետք չկա, ինձ հարկավոր է խոսել իրեն հետ, այսինքն՝ քահանայի հետ երես առ երես: Նա, իհարկե, գլխի ընկավ, թե ինչի համար եմ եկել, աչքով արեց կնկան, որ սա նեղություն քաշեր ու դուռն իր ետևից ծածկեր: Իսկ ես ուղղակի գործի անցա, առանց նախաբանի. թող նա ամենից առաջ ասի, հավատո՞ւմ է ասածուն: Հետո թող պատասխանի, հասկանո՞ւմ է, թե ինչ է նշանակում՝ զավակին խլել հարազատ հորից: Իսկ հետո ասի, թե ո՞րն է աստվածահաճո գործը, և որը՝ հանցանքը: Եվ հետո մի բան էլ կուզեի իմանալ, ի՞նչ կարծիք ունի այն մարդու մասին, որը խցկվում է ուրիշի տունը և ուզում է տակնուվրա անել, տեղափոխել աթոռները, սեղանները, մահճակալները...

Նա, իհարկե, վախեցավ ու ասաց.

— Տե՛վ, դու խելացի մարդ ես ախր, ո՞նց ես միանգամից այդքան հարցեր տալիս և ցանկանում, որ իսկույն նեթ պատասխանեմ: Մի քիչ համբերիր, ես քո բոլոր հարցերին էլ հերթով կպատասխանեմ:

— Չե՛, — ասում եմ ես: — Դու, թանկագին տեր-հայր, ոչ մի կերպ ինձ պատասխան չես կարող տալ: Գիտե՞ս ինչու: Որովհետև քո բոլոր մտքերը նախապես գիտեմ: Դու ավելի լավ կանես, որ ասես, թե կարո՞ղ եմ հույս ունենալ, որ մեկ էլ կտեսնեմ իմ զավակին, թե՞ ոչ:

— Ինչ է նշանակում՝ «մեկ էլ», — իրար խառնվեց նա: — Քո աղջկա հետ ոչ մի վատ բան տեղի չի ունենա: Ընդհակառակը...

— Գիտեմ, — ընդհատում եմ նրան: — Գիտեմ, դուք ուզում եք նրան երջանկացնել: Բայց ես այդ մասին չեմ ասում: Ես ուզում եմ իմանալ, որտեղ է նա և կարո՞ղ եմ նրան տեսնել:

— Ամեն ինչ, ինչ ցանկանաք, միայն ոչ այդ:

— Դե ահա՛, հենց այդպես էլ ասացեք: Կարճ և հստակ: Ողջ եղեք և թող աստված դրա հարյուրապատիկը ձեզ տա... Եկա տուն և իմ Գոլդային գտա անկողնում, պառկել է կծկված, ոնց որ մի սև կծիկ լինի, ու լաց լինել էլ արդեն չի կարողանում:

— Վեր կաց, — ասում եմ, — ա՛յ կնիկ, ոտներդ հանիր, նստենք հատակին, աստծու պատվիրանով սուգ անենք»: «Աստված ետ, աստված էառ», — ո՛չ առաջինն ենք, ո՛չ էլ վերջինը կլինենք: Թող մեզ թվա, որ Խավային իսկի չենք էլ ունեցել... Կամ գործրինակ վերցնենք Գողլին, որը հեռացավ գնաց մեզանից, անհայտ է, թե ուր և աստված գիտի, մեկ էլ կտեսնե՞նք նրան երբևէ: Ամենաբարձրյալն աստված ողորմած է, նա գիտե, թե ինչ է անում:

Վիշտա էսպես թափում եմ և զգում, որ արցունքները խեղդում են ինձ, գունդ-գունդ դեպի կոկորդոս են գնում: Բայց Տեվյեն կնիկարմատ չի՝ Տեվյեն զսպում է: Ենթադրենք, թե դա միայն այդպես ասվում է. «զսպում է», որովհետև նախ և առաջ՝ ապա մի մտածեցեք, թե դա ի՞նչ խայտառակություն է... իսկ երկրորդ՝ ինչպես կարող ես քեզ զսպել, երբ կորցնում ես մի այդպիսի զավակ, մի այդպիսի գոհար, մի այդպիսի աղջիկ, որը համարյա բոլոր զավակներից ավելի է թանկ իմ սրտին ու մոր սրտին: Ինչո՞ւ, ես ինքս էլ չգիտեմ: Միգուցե նրա համար, որ փոքր ժամանակ հաճախ երկարատև հիվանդանում էր, և ի՞նչ տանջանքներ ասես, որ խեղճը չքաշեց: Գիշերները բաց աչքով նստում էինք մոտը և քանի՜-քանի՜ անգամ դուրս ենք կորզել մահվան ճանկերից, խնամում էինք այնպես, որպես կխնամեն ճիւլված, ոտքի տակ ընկած հավի ճտին, քանզի եթե տերը կամենա, մեռածին հարություն կտա, ինչպես աղոթքումն է ասված. «Ո՛չ մեռանիմ, այլ կեցցեմ» — եթե ճակատին գրված է, որ կենդանի պիտի մնա, կենդանի կմնա: Թե նրա համար էինք սիրում, որ շատ փափուկ սիրտ ուներ, որ նվիրված էր մեզ ամբողջ սրտով և ամբողջ հոգով սիրում էր մեզ՝ երկուսիս: Հարց է առաջանում, հապա ինչպե՞ս կարողացավ մի այդպիսի վիշտ պատճառել մեզ: Բայց երևում է, այդպես է մեր ճակատագիրը: Զգիտեմ դուք ինչպես, բայց ես հավատում եմ ճակատագրին: Եվ երկրորդ, ձախորդություններն ու վնասները կախարդանքի պես բան են, կարող եք ծիծաղել ինձ վրա, բայց հավատացնում եմ ձեզ, ես բնավ էլ այն անհուսալի հիմարներից չեմ, որ հավատամ սատանեքին, տնային ոգիներին և մյուս պղծություններին: Իսկ կախարդությանը, հասկանում եք, հավատում եմ, որովհետև ախր դա ի՞նչ է, եթե ոչ կախարդություն: Հապա լսեցեք, թե ինչ եղավ հետո, և դուք ինձ հետ լիովին կհամաձայնեք...

Մի խոսքով, եթե մեր սուրբ գրքերումն ասված է, որ «Մարդ ո՛չ կեցցե կամօքն իւրով» — մարդը ինքը չէ իրեն զրկում կյանքից, իզուր չեն ասել՝ չկա աշխարհում մի վերք, որ չբուժվի, չկա մի վիշտ, որ չմոռացվի: Այսինքն, մոռանալը՝ չեմ մոռանում, բայց ի՞նչ կարող ես անել, «մարդ անասնոյ է նման», մարդս պետք է աշխատի, չարչարվի, տանջվի, տրորվի մի կտոր հացի համար: Եվ գիտե՞ք ինչ, բոլորով միասին կպանք գործի. կինս ու երեխեքս՝ կճուճներին, ես՝ սայլին ու ձիուն և — «յայսմ աշխարհի ամենայն ինչ ընդ օրինօք է»: — Կյանքը հոսում է իր հունով. տանը հրամայեցի, որ ոչ ոք չհամարձակվի հիշել Խավայի անունը — Խավան չկա: Անունը ջնջված է, և վե՛րջ: Մի քիչ թարմ մթերք հավաքեցի և ճամփա ընկա Բոյբերիկ, գնորդներիս մոտ:

Հասա Բոյբերիկ, ինձ որ տեսան, բոլորը ուրախացան.

— Ոնց եք, ոնց չեք, ոեք Տեվյե: Էս ինչ բան է, չեք երևում:

— Ոնց պիտի լինեմ, — պատասխանում եմ: — Ասում է. «Նորոգեա զաւուրս իմ, զի ծեր եմ»: Նույն ձախորդն եմ որ կամ: Կովս սատկեց...

— Էս ինչ բան է, — ասում են նրանք, — էլ հրաշք չմնաց, որ ձեր գլխին չկատարվի: Եվ ամեն մեկը ջոկ-ջոկ հարցուփորձ է անում, թե որ կովն է սատկել, որքան արժեր և քանի կով է մնացել... հետո էլ մասխարա են գցում, զվարճանում... Դե, պարզ է, հարուստ մարդիկ սիրում են աղքատ ու ձախորդ մարդկանց ծաղրել, մանավանդ ճաշից հետո, երբ հոգին խաղաղ է, երբ դրսում շոգ է, չորս կողմը կանաչ և քունն էլ վրա է տալիս... Բայց Տեվյեն նրանցից չէ, որ թույլ տա մորուքին ծիծաղեն: Այ հարիֆնե՛ր, մտածում եմ, հենց էդ է էլի, հենց ճիշտ էլ իմացաք, թե հոգուս մեջ ինչ է կատարվում:

Գործս գնորդների հետ վերջացնելով, դատարկ սայլով վերադառնում եմ տուն, գնում եմ անտառով, ձիուս ազատ արձակեցի, թող իրեն քեֆով գնա ու դնչի տակով մի քիչ խոտ կրծոտի... Իսկ ինքս ընկա մտքի ծովը. մտածում եմ կյանքի մասին, այս աշխարհի ու հանդերձյալ կյանքի մասին, և թե ինչ բան է աստծո աշխարհը և ինչի համար է մարդս ապրում... Տալիս եմ ու առնում, աշխատում եմ մտքերս ցրել ուրիշ կողմ, որ չմտածեմ նրա մասին, այսինքն՝ Խավայի մասին... Բայց ի՞նչ կասեք, որ

հակառակի նման հենց գլխիս մեջ նա՛ է, միայն նա՛: Մեկ նրան տեսնում եմ բարձր բոյով, սիրուն տեսքով, սլացիկ, ինչպես նոճի, մեկ էլ, ընդհակառակը, պատկերանում է ինձ որպես թե՛ ձեռքերիս վրա է փոքրիկ, հիվանդ, լղար՝ չոփ, և ճտի նման գլուխը թեքած ուսիս. «Ի՞նչ ես ուզում Խավելե: Մի կտոր հա՞ց տամ թե կաթ»: Եվ մի բուպե մոռանում եմ այն ամենը, ինչ արել է, ու սիրտս քաշում է նրան, նրա մոտ, հոգիս ցավում է, կարոտո՞ւմ... Բայց հենց որ հիշում եմ եղածը, արյունս եփ է գալիս, գայրույթս կրակի նման բորբոքվում է. և՛ նրա վրա, և՛ նրա վրա, ում հետ գնացել է, և՛ հենց ինձ վրա, թե ինչու ոչ մի բուպե մոռանալ չեմ կարողանում նրան, ինչու չեմ կարողանում սրտիցս ջնջել, դուրս գցել: Մի՞ թե հենց դրան չէ արժանի: Մի՞ թե Տեվյեն իր ամբողջ կյանքում նրա համար է տանջվում, կյանքը մաշում, քթով հողը քանդում՝ երեխա մեծացնում, որ հետո հանկարծ նրանք կտրվեն ու ընկնեն, ինչպես ծառի կոներ, որպեսզի քամին տանի աստված գիտի թե ուր: Ձորօրինակ, մտածում եմ ես, անտառում աճում է մի ծառ, կաղնի... Կացինն առած գալիս է մարդը կտրտում ճյուղը, երկրորդը, երրորդը... Իսկ ի՞նչ է ծառը առանց ճյուղերի: Լավն այն կլինեք, ա՛յ մարդ, վերցնե՛իր ու հենց արմատից կտրե՛իր ու վե՛րջ: Մերկ ծառն ինչո՞ւ ցցվի մնա անտառում...

Միտք եմ անում էսպես ու հանկարծ զգում եմ, որ ձիս կանգ առավ: Էս ինչ բան է: Գլուխս բարձրացնում եմ, տեսնում՝ Խավան: Նույն Խավան, իսկի չի փոխվել, նույնիսկ հագի շորն էլ է նույնը... Առաջին իսկ միտքը, որ գալիս է գլուխս, սա է՝ ցած թռչեմ սայլից, գրկեմ, համբուրեմ... Բայց իսկույն նեթ ինձ վրա եմ հավաքում. «Տեվյե, ինչ է: Կնիկարմա՞տ ես»: Քաշում եմ սանձերը: «Նո՛, ա՛յ անկյալ», և շրջում՝ աջ: Նայում եմ — նա էլ է դեպի աջ գալիս ու ձեռքը փափահարում. կարծես ասում է. «Մի բուպե սպասիր, կարևոր բան ունեմ քեզ ասելու...»: Եվ ինչ-որ մի բան ասես կտրվում է ներսումս, ոտքս ու ձեռքս թուլանում են... Ահա՛, ահա՛, սայլից կթռչեմ: Բայց զսպում եմ ինձ ու սայլը թեքում՝ ձախ: Նա էլ՝ ձախ, նայում է ինձ վայրի աչքերով, դեմքը մեռելային գույն է ստացել...

«Ի՞նչ անեմ,— մտածում եմ:— Կանգ առնեմ, թե շարունակեմ գնալ»: Բայց չեմ էլ հասցնում շուրջս նայել, որ նա արդեն բռնել է ձիու սանձը և ասում է.

— Հայրի՛կ: Եթե տեղիցդ շարժվես, թող ինձ մեռած տեսնես: Աղաչում եմ, նախ լսիր ինձ, հայրի՛կ, թանկագին հայրի՛կ:

«Էհե՛, մտածեցի ես. ինձ գոռով ես ուզում հաղթել հա՞: Ո՛չ, հոգի ջան: Երևում է չես ճանաչում, քո հորը...»: Եվ տուր թե կտաս ձիուն, ինչքան ուժս կպատի: Ձին տեղից պոկվեց, ցատկեց, բայց գլուխը անվերջ ետ է շրջում ու ականջները խլշում:

— Նո՛, նո՛,— ասում եմ ես: «Մի հայեցես յանօթն» — մի՛ նայիր, այ խելացի, այնտեղ, ուր պետք չէ:

Իսկ ես, կարծում եք չե՞մ ուզում շուտ գալ ու թեկուզ աչքիս ծայրով նայել է՛ն տեղին, ուր որ թողեցի: Բայց ո՛չ, Տեվյեն կնիկարմատ չէ, Տեվյեն գիտե, թե ոնց վերաբերվի սատանայական հմայությամբ...

Մի խոսքով, չեմ երկարացնի, ափսոս է ձեր ժամանակը: Եթե ինձ վիճակվելու են անդրշիրիմյան տանջանքներ, ապա ես անկասկած արդեն դրանք ճաշակել եմ, իսկ թե ինչ է նշանակում դժոխք, հրեղեն գեհեն և տեսակ-տեսակ սարսափներ, որոնք նկարագրվում են մեր սուրբ գրքերում, այդ մասին ինձ հարցրեք, ես ձեզ կարող եմ պատմել: Ամբողջ ճանապարհին ինձ թվում էր, որ նա վազում է ետևիցս ու գոչում. «Լսի՛ր ինձ, հայրիկ, չե՞ որ դու իմ ծնողն ես»: Եվ այդ ժամանակ գլխովս մի միտք անցավ:— Տեվյե, արդյոք չափից ավելի չե՞ս վերցնում քեզ վրա: Արդյոք քեզ ի՞նչ կլինի, եթե դու մի պահ կանգ առնես և լսես, թե ինչ է ուզում: Միգուցե նա այնպիսի բան է ասում, որի մասին պարտավոր ես իմանալ: Միգուցե նրա կյանքը անտանելի է և խնդրում է օգնել իրեն՝ դուրս պրծնելու դժոխքից... Միգուցե՝ սա, միգուցե՝ նա, ու զանազան նման «միգուցեններ» խցկվում են

գլուխս, և ես նորից տեսնում եմ նրան մանուկ օրերում, հիշում ասացվածքը. «Որպես հայրն զքա ի վերայ որդւոց», այսինքն՝ բոլոր զավակները հավասար են, հոր համար վատ զավակ չկա, և տանջվում եմ ու ինքս իմ մասին ասում. «Ո՛չ ես արժան կարեկցանքի» — արժանի չեմ, որ հողը համբերում է ինձ, որ ապրում եմ աշխարհի երեսին: Բանն ինչո՞ւմն է, ինչո՞ւ ես տաքացել, խելագար, ի՞նչ ես կողիդ ընկել: Ի՞նչ ես աղմկում: Ետ դարձիր, ա՛յ հրեշ, ա՛յ հաստակող, հաշտվիր նրա հետ, չե՞ որ նա քո զավակն է և ոչ այլ ոք... Եվ գլուխս են գալիս զանազան տարօրինակ, անսովոր մտքեր. «Իսկ ինչ կնշանակի հրեա և ոչ հրեա: Եվ ինչու է աստված ստեղծել հրեաներ և ոչ հրեաներ: Եվ եթե ստեղծել է և՛ սրանց, և՛ մյուսներին, ապա ինչո՞ւ պիտի նրանք այդպես առանձնացած լինեն և ինչո՞ւ պիտի առեն միմյանց, որպես թե ոմանք լինեին աստծուց, ոմանք՝ ոչ-աստծուց»: Եվ սիրտս նեղվում է, թե ինչո՞ւ այնքան բանիմաց չեմ գրքերից, ինչպես ոմանք, ինչո՞ւ այնպես գիտուն չեմ, որ խելացի պատասխան գտնեի այս բոլոր հարցերին:

Եվ որպեսզի մտքերս ցրեմ, ես սկսում եմ իրիկնամուտի աղոթքը. «Երանելի՛ են նոքա, որք ի բնակությունս քոյ են և ոյք փառաւորեն զքեզ յավիտեան»: Աղոթում եմ, ինչպես կարգն է՝ բարձրաձայն և երգելով:

Բայց ի՞նչ օգուտ իմ աղոթքից, իմ երգից, երբ հոգուս խորքում հնչում է մի բոլորովին ուրիշ բան. «Խա՛-վա»: «Խա՛-վա»: Եվ որքան բարձր եմ երգում «Երանելի են», նույնքան բարձր է հոգուս մեջ հնչում՝ «Խա՛-վա» և որքան շատ եմ ցանկանում մոռանալ նրան, այնքան շատ և այնքան ավելի վառ է կանգնում աչքիս առաջ, և ինձ թվում է, որ ես լսում եմ նրա ձայնը, որը ասում է. «Լսիր ինձ, հայրի՛կ»: Փակում եմ ականջներս, որպեսզի չլսեմ, փակում աչքերս, որպեսզի չտեսնեմ, աղոթք եմ անում և չեմ լսում, թե ինչ են ասում շրթունքներս, խփում եմ կրծքիս և չգիտեմ ինչու... Ամբողջ կյանքս տակնուվրա է եղած, և ինքս նույնպես, բայց ո՛չ որի չեմ ասում այդ հանդիպման մասին, ո՛չ որի չեմ հարցնում նրա մասին, չնայած գիտեմ որտեղ է նա, որտեղ է ամուսինը և թե ինչ են անում նրանք... Բայց երբեք և ոչ մի մարդ ինձնից ոչինչ չի իմանա: Թո՛ղ իմ թշնամիները չսպասեն, որ ես որևէ մեկին կգանգատվեմ: Այ թե ի՛նչ մարդ է Տեվյեն:

Կցանկանայի իմանալ, արդյոք բոլո՞ր տղամարդիկ էլ այդպես են, թե մենակ ես եմ այդպես խելագար: Ա՛յ, օրինակի համար, երբեմն պատահում է... Հո չե՞ք ծիծաղի վրաս: Վախենում եմ, թե ծիծաղեք... Երբեմն պատահում է, հագնում եմ շաբաթօրյա արխալուղս և ճանապարհ ընկնում կայարան... Պատրաստ եմ արդեն նստել գնացք ու գնալ նրանց մոտ, ես գիտեմ, թե նրանք որտեղ են ապրում: Մոտենում եմ գանձապահին և խնդրում տոմս տալ: «Ո՞ւր», հարցնում է նա: «Եզուպեց», պատասխանում եմ: «Այդպիսի քաղաք չկա...», ասում է նա: «Այդ դեպքում ես մեղավոր չեմ...», ասում եմ ես ու վերադառնում տուն: Հանում եմ արխալուղս և նորից անցնում աշխատանքի... Ինչպես այնտեղ ասված է. «Ամենայն մարդ ի գործս իւրեանց» — դերձակն՝ իր մկրատին, կոշկակարն՝ իր դագախին... Ծիծաղում եք ինձ վրա: Այդպես էլ գիտեի: Ես նույնիսկ զգում եմ, թե ինչ եք մտածում: Դուք մտածում եք. «Տեվյեի մի տախտակը հո պակաս չի՞...»:

Դրա համար էլ, կարծում եմ, որ այս անգամ հերիք է այսքանը: Ողջ եղեք և նամակ գրեցեք: Բայց աստծու սիրուն, հո չե՞ք մոռացել, թե ձեզ ինչ էի խնդրել: Այդ մասին ո՛չ մի խոսք: Այսինքն՝ դրանից զիրք չսարքեք: Իսկ բան է, թե ստիպված եք գրել, գրեցեք մի որևէ մեկի մասին և ոչ թե իմ: Ինձ մոռացեք: Ինչպես սուրբ գրքումն է ասված՝ «եւ մոռացաւ զնա», — չկա այլևս կաթնավաճառ Տեվյեն:

1906.

ՇՊՐԻՆՑԱ

Խորին և սրտազին ողջուն՝ ձեզ, պանե Շուրմ-Ալեյխեմ: Խաղաղություն ձեզ, ձեզ էլ, ձեր զավակներին էլ: Հարյուր տարի է չենք տեսնվել: Տե՛ր աստված: Որքա՛ն ջրեր են հոսել այդ օրից: Որքա՛ն վիշտ ենք տեսել մենք երկուսս և հենց ամբողջ ժողովուրդը մեր: Քիշինյով, «կոսնետուցիա», ջարդեր, փորձանքներ ու չարիքներ²⁶, ա՛խ, տեր իմ, երկնային թագավոր: Ես նույնիսկ ձեզ նայելով զարմանում եմ, ներեցեք, որ հենց ուղղակի ասեմ, դուք, ախր, մի այսքա՛ն էլ չեք փոխվել, թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, աչքով չտամ: Իսկ հապա ինձ նայեցեք. հալա վաթսունս չի թամամել, բայց ո՛նց է Տեվյեն ճերմակել: Հանաք հո չի՞. «Զտանջանս սնուցանելոյ զգաւականս», ինչե՛ր ասես, որ չես քաշում նրանց երեսից: Էլ ո՞ւմ է վիճակվել երեխեքի պատճառով այսքան վիշտ ու տառապանք քաշել, որքան՝ ինձ: Մի նոր դժբախտություն պատահեց ինձ, աղջկաս՝ Շպրինցայի հետ, այնպիսի՛ դժբախտություն, որ համեմատել չի կարելի այն ամենի հետ, ինչ եղել էր դրանից առաջ: Այդուհանդերձ, ինչպես տեսնում եք երեսս պինդ է, ապրում եմ... Ինչպես է այնտեղ ասված. «կամօքն քոյ ոչ կեցցես», այսինքն՝ թեկուզ կաշվիցդ էլ դուրս արի, բայց երգ ասա.

*Ի՛նչ եմ անում ամբողջ կյանքս,
Կամ էլ արձակ ողջ աշխարհս
Եթե չունենմ ոչ բախտ, ոչ փող...*

Մի խոսքով, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Եւ կամեցաւ ամենաբարձրեալն արժանի առնել ողորմութեան իւրոյ», աստված ցանկացավ ողորմալ իր հրեաներին և մեր գլխին մի նոր կրակ ու պատիժ բերեց, մի նոր դժբախտություն — կոսնետուցիա. էն էլ ի՛նչ կոսնետուցիա: Հանկարծ իրարանցում ընկավ մեր հարուստների մեջ: Սկսեցին Եգուպեցից փախչել արտասահման, գնում են որպես թե տաք ջրերը՝ ջղային հողի վրա, աղի լոգանքներ, երեկվա օրը, հերվա ձյո՛ւն... Դե, եթե Եգուպեցից սկսեցին հեռանալ, ապա Բոյբերիկն իր օդով, անտառով ու ամառանոցներով հաշվից դուրս եկավ... Բայց մեծ է մեր աստված, ում աչքը արթուն ու զգոն հետևում է, որպեսզի չլինի թե հանկարծ աղքատները արար աշխարհում դադարեն տանջվելուց, և մի ամառ արեց ա՛յ, ա՛յ, ա՛յ: Ամեն կողմից Բոյբերիկ թափվեցին հազարավոր հարուստներ, քսակները տռուզ փողատերեր, միլիոնատերեր եկան Օդեսայից, Ռոստովից, Եկատերինսլավից, Մոզիլյովից, Քիշինյովից: Երևում է էդ կոսնետուցիա ասածդ նրանց կողմերում ավելի կատաղի է եղել, քան մեզ մոտ՝ Եգուպեցում, որովհետև փախչում գալիս են անդադար, առանց ետ նայելու, երկու ոտք ունեն, երկուսն էլ փոխ առած: Դուք թերևս հարցնեք, թե ինչո՞ւ են փախչում մեզ մոտ: Դրան կա մի պատասխան. մերոնք ինչո՞ւ են փախչում նրանց մոտ: Այդպես է, փառք ասածու, վիճակված. հենց որ սկսում են խոսել ջարդերի մասին, հրեան սկսում է թափառել մի քաղաքից մյուս քաղաքը, ինչպես ասվում է սուրբ գրքում. «Երթային և վերստին հանգստանային, հանգստանային և վերստին երթային», որը նշանակում է. մենք՝ ձեզ մոտ, դուք՝ մեզ մոտ... Այդ ընթացքում Բոյբերիկը, կարո՞ղ եք երևակայել, դարձավ մի մեծ քաղաք, լիքը ժողովուրդ, կանայք, երեխեք: Իսկ երեխեքը սիրում են ուտել, դու մի գլուխ նրանց կաթ ու կարագ տուր... Իսկ որտեղի՞ց, եթե ոչ Տեվյեից: Կարճ ասած, Տեվյեն մոդա ընկավ: Ամեն կողմից Տեվյե հա՛ Տեվյե: Ռեբ Տեվյե, խնդրում եմ եկեք այստեղ: Ռեբ Տեվյե, անցեք ինձ մոտ: Հանաք բան հո չի՞... Երբ որ աստված կամենում է...

Մի անգամ մի այսպիսի բան պատահեց: Դա հոգեգալստյան նախօրյակին էր: Ես իմ ապրանքով ժամանեցի գնորդներիցս մեկի տունը, դա մի ջահել ու հարուստ այրի էր, որ եկել էր

²⁶ Քիշինյով, «կոսնետուցիա», ջարդերը... — նկատի ունի ցարական կառավարության կողմից 1903 թվականի ապրիլին Քիշինյովում կազմակերպված հրեական ջարդերը, 1905 թվականի «կոնստիտուցիան», որը ցարական կառավարությունը ստիպված էր տալ՝ հեղափոխական փոթորիկը խաղաղացնելու համար և մի շարք հրեական ջարդեր, որ տեղի ունեցան 1905 — 6 թվականներին, հակահեղափոխական սևհարյուրակային բանդաների օգնությամբ:

Եկատերինոսլավից: Նա իր տղայի՝ Արոնչիկի հետ, այդ ամառ տեղափոխվել էր Բոյբերիկ և, ինքներդ էլ եք հասկանում, որ առաջին գործը եղել էր ինձ հետ ծանոթանալը:

— Ինձ ասել են,— ասում է նա,— որ ամենալավ կաթնամթերքը ձերն է:

— Հապա ո՞նց,— պատասխանում եմ:— Իզուր չի Սողոմոն թագավորն ասել, թե բարի անունը դրդողում է ամբողջ աշխարհում որպես փողի որոտ: Իսկ եթե կցանկանայի՞ք,— ասում եմ ես,— ձեզ կարող եմ պատմել, թե ոնց է այդ տեղը մեկնաբանում միդրաշը...

Բայց նա՝ այրին այսինքն, ընդհատում է ինձ և ասում, որ ինքը մի այրի է և նման բաներից քիչ է հասկանում, գլխի չի ընկնում, թե դա ինչի հետ են ուտում... Գլխավորն այն է, որ յուրը լինի թարմ, իսկ շոռը՝ համեղ... Դե գնա ու խոսիր կնիկարմատի հետ:

Մի խոսքով, Եկատերինոսլավից եկած այրու մոտ շաբաթական լինում էի երկու անգամ՝ երկուշաբթի և հինգշաբթի օրերը, ճշտապահորեն, ոնց որ օրացույց: Տանում եմ ապրանքը ու իսկի չեմ էլ հարցնում, պետք է, թե պետք չէ: Իսկական յուրային էի դարձել և, բնավորությանս համաձայն, սկսեցի աչք ածել տան կարգ ու կանոնին, քիթս խոթել խոհանոց, սա էի ասում, նա էի ասում, ինչ որ հարկավոր էի համարում ասել: Սկզբում, ինչպես սպասելի էր, ծառան խեթեց, որ քիթս մտցնում եմ ամեն տեղ, նայում ուրիշի կճուճների մեջ: Մի անգամ էլ դարձյալ նույնը, բայց արդեն սկսեցին ականջ կախել ասածներիս, իսկ հետո՝ նույնիսկ խորհուրդ հարցնել: Այրին հասկացավ, թե ով է Տեվյեն: Իսկ կամաց-կամաց ավելի հեռու գնաց և ահա մի անգամ սիրտը բացեց իմ առջև: Արոնչիկը հոգին ուտում է: Ասացե՛ք խնդրեմ: Քսան տարին թամամել, դեռ մի բան էլ անցել է, իսկ նրա գլխում միայն ձի է ու «լիսապեղ», մեկ էլ ձկնորսություն, իսկ դրանցից բացի, ասում է, ոչ մի բան լսել չի ուզում: Ո՛չ գործի մասին, ո՛չ հողի մասին: Հայրը մի պատկառելի ժառանգություն է թողել, համարյա միլիոն, իսկ նա նույնիսկ չի էլ հետաքրքրվում: Միայն գիտի ցնցիլել, նրա ձեռքերը, ասում է, ծակ են:

— Որտե՞ղ է նա,— հարցնում եմ,— ձեր որդին: Ապա կանչեցեք նրան մոտս, ես նրա հետ մի քիչ կխոսեմ, խելք ու խրատ կսովորեցնեմ, ասացվածքներ կբերեմ...

Այրին ծիծաղում է.

— Ի՞նչ եք ասում: Դուք նրան ձի տվեցեք և ոչ թե ասացվածքներ:

Խոսում ենք եղպես, և հանկարծ խոսքի կեսին «Հայտնեցաւ մանուկն» — շնորհ բերեց ինքը՝ Արոնչիկը... Առողջ պարթև մի հսկա երեխա, բոյ ու բուսով, ոնց որ չինար, թշերից արյուն է կաթում: Գոտին լայն, կապած ուղղակի, ներեցեք, վարտիքին, զրպանում՝ ժամացույց, թևքերը քշտած արմունկներից վեր:

— Որտե՞ղ էիր,— հարցնում է մայրը:

— Նավակով զբոսնում էի,— պատասխանում է,— ձուկ էի որսում...

— Հրաշալի զբաղմունք է,— ասում եմ ես,— մի այնպիսի տղայի համար, ինչպիսին դու ես: Այստեղ կարող են տունը մաքուր սրբել տանել, իսկ դուք այնտեղ ձո՞ւկ պիտի որսաք:

Մտիկ արեցի ես իմ այրիին, կարմրել, կարմիր պուտ է դարձել, նույնիսկ դեմքը փոխվել է: Երևի մտածում է, հիմա ուր-որ է, տղան կրոնի օձիքիցս ու քոթակ կտա քեֆը ուզածին չափ ու ջարդած կճուճի նման կշարտի դուրս... Սարսա՛ղ բաներ, Տեվյեն այդպիսի բաներից վախեցողը չի՛: Ինչ որ Տեվյեի մտքինն է, այն էլ լեզվին է:

Եվ ի՛նչ էք կարծում: Լսելով այդ խոսքերը, տղան մի քայլ ետ գնաց, ձեռքերը դրեց մեջքին, ինչ-որ իր հանգի շվկացրեց, ոտքից գլուխ ինձ չափեց ու որ չսկսեց քրքջալ... Մենք նույնիսկ վախեցանք,— միգուցե խելքը գցեց: Եվ գիտեք ինչ կասեմ ձեզ, այդ օրվանից մենք մոտիկացանք և լավ բարեկամներ դարձանք: Պետք է խոստովանեմ, տղան օրըստօրե ինձ դուր էր գալիս: Ճիշտ է, վատնող էր, անպիտանի մեկը, փողի հաշիվ չիմացող, դրա հետ էլ խենթ ու խելառ: Ջորջիանակ, կպատահեր մի մուրացկանի, ձեռքը կտաներ գրպանն ու կտար առանց հաշվելու: Դե, ով կանի այդպես: Կամ էլ թե չէ հազից կհանի նոփ-նոր վերարկուն, որ կասես հենց հիմա է դերձակի մոտից բերված, ու կտա առաջին իսկ հանդիպած մարդուն... Դե, ինչ կարող ես ասել այդ տեսակ տղին, որի մոտ ինչ-որ մի բանը տեղումը չէ: Խեղճ մորը սրտանց ցավում էի: Պատահում էր, լաց էր լինում ու ասում, թե ինչ անի: Խնդրում էր, որ ես նրա հետ խոսեմ: Ես, իհարկե, պատրաստ եմ. ինչ է, հո չե՞մ ափսոսում: Թե՞ փող արժի: Սկսեցի տղային պատմություններ անել, օրինակներ բերել, ասացվածքներ, առակներ, ինչպես որ Տեվյեն կարողանում է: Իսկ տղան էլ արի ու տես, որ սիրում էր ինձ լսել ու երբեմն էլ հարցեր էր տալիս իմ կյանքից ու ապրուստից, թե իմ տան կարգ ու կանոնը ո՞նց է, և այլն:

— Ես կցանկանայի,— ասում է Արոնչիկը, մի անգամ լինել ձեզ մոտ, ռեբ Տեվյե, բայց չգիտեմ ինչպես:

— Ա՛յ քեզ բան: Ցանկանում եք լինել Տեվյեի մոտ, մեկ անգամ զբոսնելով՝ եկեք ինձ մոտ, ավան: Փառք ասածու, որքան ուզեք ձի ու լիսապեղ ունեք: Իսկ ծայրահեղ դեպքում: կարող եք ոտքով էլ գալ, մի՛ վախեցեք, ոտքներդ չի կոտրվի: Հեռու չի, միայն պիտի անտառը կտրեք անցնեք...

— Իսկ ե՞րբ եք տանը լինում,— հարցնում է նա:

— Ինձ կարող եք տանը գտնել միայն շաբաթ օրը կամ էլ տոներին: Սպասեցեք, գիտե՞ք ինչ: Հաջորդ ուրբաթ հոգեգալստյան տոնն է: Եթե ցանկանում եք, զբոսնելով եկեք մեզ մոտ, ավան, իմ կինը ձեզ կհյուրասիրի այնպիսի կաթնահունց կարկանդակներով, որ...— և ավելացնում եմ հին հրեերեն,— ինչպիսիք, որ մեր պապերը Եգիպտոսում էլ չեն կերել...

— Դա ի՞նչ է նշանակում,— հարցնում է նա:— Դուք չե՞ք որ գիտեք, որ ես հին հրեերենից այնքան էլ ուժեղ չեմ:

— Գիտեմ,— ասում եմ,— որ այնքան էլ ուժեղ չեք: Եթե դուք սովորեիք, ինչպես ես եմ սովորել մի ժամանակ, ձեր խելքն էլ որոշ բան կհասներ...

Նա ծիծաղեց և ասաց.

— Դե լա՛վ: Ձեզ հյուր կգամ, հենց տոների առաջին օրը, կգամ, ռեբ Տեվյե, ձեզ մոտ կարկանդակ ուտելու և ծանոթներիցս էլ հետս կվերցնեմ, միայն թե դուք,— ասում է,— տեսեք, որ տաք լինեն:

— Հենց տաք-տաք, հենց գոլորշու միջից: Թավայի միջից ուղղակի՝ բերանը:

Գալիս եմ տուն և պառավիս ասում.

— Գոլդա, տոնին մեզ մոտ հյուրեր են գալու:

— Աչքս լո՛ւյս,— պատասխանում է,— եղ ո՞վքեր են:

— Հետո կիմանաս,— ասում էմ:— Որքան կարող ես ձու շատ հավաքիր. յուղ ու պանիր էլ բավականաչափ կա: Կարկանդակ կթխես երեք անձանց համար, բայց այնպիսի անձանց, որոնք ուտելու մեջ վարպետ են, բայց սուրբ գրքից՝ բռնիկ:

— Դա անպայման որևէ սոված նահանգից եկած մի շշմածի մեկն է շնորհի բերելու:

— Դու հիմար ես, Գոլդա: Նախ և առաջ,— ասում էմ,— մեծ փորձանք չի լինի, եթե տոնական կարկանդակով կշտացնենք մի սոված մարդու: Եվ երկրորդ, թող հայտնի լինի քեզ, թանկագին իմ կողակից, աստվածավախ և հնազանդ տիկին Գոլդա, որ մեր հյուրերից մեկը լինելու և այրու տղան, նույն ինքը՝ Արոնչիկը, որի մասին քեզ պատմել էմ:

— Ի՛նչ ես ասում,— պատասխանում է նա,— դա բոլորովին ուրիշ բան է:

Ահա՛, համեցեք տեսեք միլիոնի ուժը: Նույնիսկ իմ Գոլդան էլ, հենց որ փողի հոտ է առնում, միանգամայն ուրիշ մարդ է դառնում: Այդպես է աշխարհիս բանը, ի՞նչ կարող ես ասել: Ոնց որ աղոթքումն է ասված՝ «Արձաթ և ոսկի են գործք ձեռաց մարդկան»,— փողը կործանում է մարդուն...

Կարճ ասած, հասավ հրճվալից, կանաչ տոնը: Այն մասին, թե ինչպիսի գեղեցկություն էր այդ ժամանակ ինձ մոտ, ավանում, թե ինչպես կանաչ էր, ինչպես պայծառ ու տաք, ձեզ պատմելու կարիք չկա: Ձեր քաղաքի ամենահարուստն էլ անգամ կցանկանար ունենալ այդպիսի կապույտ երկինք, այդպիսի կանաչ անտառ, այդպիսի բուրավետ սոճիներ, այդպիսի հրաշալի խոտ՝ կովերի համար, որոնք կանգնած որոճում են ու նայում աչքերիդ, կարծես ուզենալով ասել. «Դուք միշտ այդպիսի խոտով կերակրեք մեզ, իսկ մենք էլ կաթը չենք խնայի»:

Ո՛չ, ինչ կուզեք ասացեք, առաջարկեք ինձ ամենաշահավետ գործը, բայց եթե դրա համար պետք է գյուղից տեղափոխվել քաղաք, չեմ համաձայնվի: Ձեր քաղաքում ո՞ւր է այդպիսի երկինք: Ինչպես աղոթքն է ասում. «Երկինք բնակություն աստծոյ են»։ միայն աստծուն է վայել այդպիսի երկինք: Քաղաքում եթե զլուխդ բարձրացնես, ի՞նչ կտեսնես: Տուն, տանիք, ծխնելույզ: Այնտեղ ո՞ւր են այսպիսի ծառեր: Իսկ եթե մի ծառ էլ պատահում է, դուք վրան ինչ-որ պատմուճան եք փռում:

Մի խոսքով, իմ հյուրերը նայելուց չէին կշտանում, երբ եկան ինձ մոտ, ավան: Նրանք ժամանեցին չորսով, չորս կտրիճներ, ձիերը հեծած: Ձիերն էլ մեկը մյուսից լավը: Իսկ Արոնչիկի ձին... հովատակ էր, կոտած նժույգ: Երեք հարյուր ռուբլով չեն տա:

— Շնո՛րհ արեք, թանկագին հյուրեր,— ասում էմ ես:— Ինչ է, տոնի առթիվ որոշել եք ձիո՞վ զբոսնել²⁷: Դե լա՛վ, վնաս չունի: Տեվյեն այնքան էլ մոլեռանդներից չէ, բայց եթե, կամոքն աստծու, էն աշխարհում դրա համար ձեզ ծեծի քաշեն, իմ ջանը չի ցավելու... Է՛յ, Գոլդա: Տես, որ կարկանդակները պատրաստ լինեն, և թող սեղանը դուրս բերեն էստեղ, բակը, տանը հյուրերիս առաջ պարծենալու բան չունեն... Է՛յ, Շպրինցա, Թայբլ, Բեյլկա: Ո՞ւր եք կորել: Շարժվեցե՛ք:

Կարգադրություններ եմ անում էսպես, և ահա դուրս բերեցին սեղան, աթոռներ, սփռոց, ափսե, գդալ, պատառաքաղ, աղ և հենց նույն բոպեին էլ հայտնվեց իմ Գոլդան կարկանդակներով հանդերձ — տաք-տաք, կրակի կտոր, ուղղակի թավալի միջից, համեղ, յուղաթաթախ կարկանդակներ, մատներդ էլ հետը կուտես: Հյուրերս գովելուց չեն դադարում...

— Ի՞նչ ես կանգնել,— ասում էմ ես Գոլդային:— Տոնի առթիվ հարկավոր է կրկնել: Այսօր հոգեզալստյան տոնն է, ուստի և «Գովեն զբեզ»-ը պետք է արտասանել երկու անգամ:

²⁷ Այստեղ Տեվյեն պախարակում է երիտասարդներին, որ տոն օրով ձի էին հեծել, որովհետև ըստ հրեական կրոնի, շաբաթ և տոն օրերը արգելվում է ձիով որևէ տեղ գնալ:

Գոլդան առանց այլևայլության, նորից լիքը լցնում է լայն ամանը, իսկ Շաքինցան մատուցում է սեղանին: Հանկարծ ես մտիկ եմ անում Արոնչիկին և տեսնում, որ աչքը գցել է իմ Շաքինցային ու մնացել է պլշած: Էդ ինչ տարօրինակ բան էր տեսել նրա վրա:

— Անո՛ւշ արեք,— ասում եմ ես նրան:— Ինչո՞ւ չեք ուտում:

— Հապա ի՞նչ եմ անում ձեր կարծիքով,— հարցնում է նա:

— Դուք,— ասում եմ,— նայում եք իմ Շաքինցային...

Բարձրացավ քրքիջ, բոլորը ծիծաղում են, ծիծաղում է և Շաքինցան: Բոլորը ուրախ են, բոլորը հրճվում են... Հրաշալի՛, փառահե՛ղ տոն... Որտեղի՞ց իմանայի, որ էդ ուրախությունը իմ գլխին պիտի դառնար սև ու սուգ: Դժբախտություն, վիշտ, աստծու պատիժ է... Բայց թե ինչ ասես: Մարդս հիմար է: Խելացի մարդը չպիտի ամեն ինչ սրտին մոտիկ ընդունի, պետք է հասկանալ, որ ամեն բան ինչպես որ կա, էդպես էլ պիտի լինի: Որովհետև, եթե լինեք ուրիշ կերպ, էսպես չէր լինի՝ ինչպես որ է: Մի՞թե սուրբ գրքումը չենք կարդում, թե «Ապավինեա առ աստուած»,— դու այսինքն, հույսդ դիր աստծու վրա, իսկ նա կաշխատի, որ քեզ երեք տակ կռացնի... հապա՛, իսկ դու հալա կասես էլ թե՝ «Փա՛ռք աստծու, սրանից էլ եմ գոհ»: Լսեցեք, թե ինչեր կարող են պատահել աշխարհիս երեսին, բայց խնդրում եմ ձեզ, ուշադիր լսեցեք, քանի որ հենց հիմա է սկսվում իսկական պատմությունը:

«Եւ եղև երեկոյ եւ եղև վաղորդայն». մեկ անգամ իրիկնամուտին Բոյբերիկի ամառանոցներում վազվզելուց տուն եմ գալիս շոգից խաշված, հոգնած ու տանջված և բակում, տան մոտ տեսնում եմ դռնից կապված է մի նժույգ, որ ծանոթ է թվում: Երդում կուտեմ, որ դա Արոնչիկի նժույգն է, հենց նույնը, որը ես երեք հարյուր ռուբլի գնահատեցի: Մոտեցա նրան, թփթփացրի կողը, քորեցի վիզը, թափահարեցի բաշը, «բարեկա՛մա, ասացի, հոգի՛ս, ի՞նչ բան ունես այստեղ»: Իսկ նա ինձ է անում իր փառահեղ դունչը և նայում ինչացի աչքերով, կարծես ուզում է ասել՝ «ի՞նչ ես ինձ հարցնում: Տիրոջս հարցրո՛ւ»: Տուն եմ մտնում և կաշում կնոջս օձիքից:

— Ասա ինձ, Գոլդա, հոգի՛ս, ինչ է անում Արոնչիկն էստեղ:

— Ես ինչ իմանամ,— պատասխանում է:— Նա չէ՞ որ քո դոստերից է:

— Իսկ որտե՞ղ է նա:

— Գնացել է զբոսանքի,— ասում է,— երեխեքի հետ պուրակը զբոսանքի:

— Հանկարծ ինչ զբոսանք է ընկել միտքը,— ասում եմ նրան ու պատվիրում սեղանը գցել:

Հաց եմ ուտում ու մտածում «ինչու ես անհանգստացել, Տեմյե: Մարդը քեզ մոտ հյուր է եկել, ի՞նչ կարիք կա դրանից իրար խառնվել: Ընդհակառակը...»:

Ու տեսնում եմ, հրես գալիս են երեխեքս էդ կտրիճի հետ, ձեռներին ծաղկեփնջեր, առջևից երկու փոքրիկները՝ Թայբլն ու Բեյլկան, իսկ ետևից՝ Շաքինցան ու Արոնչիկը:

— Բարի երեկո:

— Բարև:

Արոնչիկը մոտեցավ ինձ, ինչ-որ տարօրինակ տեսքով, շոյում է ձիուն ու ատամներով խոտ կրծոտում:

— Ռեբ Տեվլե,— ասում է նա,— ձեզ հետ ուզում եմ մի գործ բռնել, եկեք ձիերս փոխենք:

— Էլ ուրիշ մարդ չգտա՞ք, որ վրան ծիծաղեք:

— Ոչ,— ասում է,— լուրջ եմ ասում:

— Ահա թե ինչ: Ուրեմն՝ լո՞ւրջ: Որքան արժե, մոտավորապես, ձեր ձին:

— Իսկ դուք որքան եք գնահատում:

— Ես գնահատում եմ, վախենում եմ ասել, երեք հարյուր ռուբլի և միգուցե մի բան էլ ավելի:

— Իսկ նա ծիծաղում է և ասում, որ ձին երեք անգամ ավելի արժի. Եվ նորից կրկնում:

— Դե ինչպես, փոխո՞ւմ ենք:

Ինձ դուր չեկավ եղ խոսակցությունը: Դա ի՞նչ կնշանակի, որ ուզում է իր նժույզը փոխել իմ ավերակի հետ: Ես նրան առաջարկեցի այդ գործը հետաձգել ուրիշ անգամվա և կատակով հարցրի, մի՞թե հատուկ հենց դրա համար է եկել: «Եթե այդպես է, ասում եմ, ապա իզուր եք նեղություն քաշել...»: Իսկ նա լրջորեն ասում է.

— Ես ձեզ մոտ, ճիշտն ասած, եկել եմ մի ուրիշ գործով: Եթե կցանկանաք, գնանք մի քիչ զբոսնենք:

«Դա ինչ զբոսանք է», մտածեցի ես և նրա հետ ուղևորվեցի պուրակը: Արեգակը վաղուց մայր էր մտել: Պուրակում մութն էր, գորտերը ամբարտակի մոտ կոկոռում էին, խոտերից մի անուշ բույր էր բարձրանում. արքայություն՝ և: Արոնչիկը գնում է, ես էլ եմ գնում, նա լռում է, ես էլ եմ լռում: Վերջապես նա կանգ է առնում, հազում և ասում.

— Դուք ի՞նչ կասեիք, ռեբ Տեվլե, եթե ես, օրինակի համար, ձեզ հաղորդեի, թե՝ սիրում եմ ձեր աղջկան, Շպրինցային և ցանկանում եմ ամուսնանալ նրա հետ:

— Ես ինչ կասեի՞,— պատասխանում եմ:— Ես կասեի, որ երկու գժերից մեկի անունը պետք է ջնջել և ձերը գրել... Նա նայում է ինձ ու հարցնում է.

— Դա ի՞նչ է նշանակում:

— Հենց այդ էլ նշանակում է:

— Չեմ հասկանում:

— Նշանակում է այն, որ մի տախտակը պակաս է: Ինչպես սուրբ գրքումն է ասված. «Աչք իմաստնոյ ի վերայ գլխոյ իւրոյ են...»: Դա պետք է հասկանալ էսպես — խելացի մարդուն ակնարկի, իսկ հաստազլխի գագաթին դազանակով հասցրու...

— Ես ձեզ հետ խոսում եմ պարզորոշ,— պատասխանում է նա վիրավորված,— իսկ դուք անվերջ կատակներով ու ասացվածքներով խոսքը կտուրն եք գցում:

— Դե ինչ կա որ,— ասում եմ,— ամեն մի կանտոր իր հանգով է երգում, և ամեն մի քարոզիչ իր համար է քարոզում... Եթե ցանկանում եք իմանալ, թե դուք ինչ եք քարոզում, նախ և առաջ խոսեցեք ձեր մայրիկի հետ, նա ամեն ինչ ոնց որ կարգն է կբացատրի...

— Ինչ է, ձեր կարծիքով ես երեխա՞ եմ, որ պետք է մորս հարցնեմ:

— Բհարկէ,— ասում եմ,— դուք պետք է հարցնեք ձեր մորը: Իսկ ձեր մայրը կասի, որ դուք խելքներդ գցել եք, և ճիշտ էլ կասի:

— Ճիշտ էլ կասի՞:

— Բհարկէ,— ասում եմ,— ճիշտ էլ կասի: Հապա մի մտածեցեք, դուք իմ Շպրինցայի համար ի՞նչ փեսացու: Մի՞թէ նա ձեր թայն է: Իսկ գլխավորը՝ մի՞թէ ձեր մայրը կցանկանա բարեկամանալ ինձ հետ:

— Դե որ այդպես է,— պատասխանում է նա,— ուրեմն դուք, ռեբ Տեվլէ, չարաչար սխալվում եք: Ես տասնութ տարեկան տղա եմ և բնավ մտահոգված չեմ, որ մորս համար համապատասխան ազգականներ ճարեմ: Ես գիտեմ, թե դուք ով եք և թե ով է ձեր աղջիկը... Նա ինձ դուր է գալիս, ես այդպես եմ ցանկանում և հենց այդպէ՛ս էլ կլինի:

— Ներեցեք,— ասում եմ,— որ ձեզ ընդհատում եմ:— Ինչպես տեսնում եմ, դուք արդեն գործը մի կողմից գլուխ եք բերել: Իսկ ինչպէ՞ս է գործը մյուս կողմից:

— Չեմ հասկանում, թե ինչի մասին եք ասում:

— Ես նկատի ունեմ,— ասում եմ,— իմ աղջկան՝ Շպրինցային... դուք նրա հետ խոսե՞լ եք: Նա ձեզ ի՞նչ է ասել:

Իսկ նա կարծես վիրավորվեց ու ժպտալով ասում է:

— Դա ի՞նչ հարց է: Բհարկէ խոսել եմ և այն էլ ոչ թե մեկ անգամ, այլ մի քանի: Չե՞ որ ամեն օր գալիս եմ այստեղ:

— Հասկանո՞ւմ եք: Նա ամեն օր գալիս է այստե՛ղ, իսկ ես այդ մասին նույնիսկ չգիտեմ էլ: Է՛իս, Տեվլէ: Հայվանի գլուխ: Ախր հարկավոր է առաջդ դարման լցնել: Եթե դու թույլ ես տալիս քթիցդ բռնած ման ածել, ապա քեզ ով ուզենա կառնի-կծախի, ա՛յ էշի գլուխ:

Մտածեցի այսպես ու Արոնչիկի հետ դարձանք դեպի տուն: Նա հրաժեշտ տվեց մերոնց, թռավ ձին ու մարշ՝ Բոյբերիկ:

Հիմա թողնենք արքայազնին, ինչպես դուք գրում եք ձեր գրքերում, և ասենք արքայադստեր մասին, Շպրինցայից այսինքն...

— Հապա ինձ ասա, աղջիկս, ցանկանում եմ քեզ հարցնել,— ասում եմ ես նրան,— խնդրեմ ինձ պատմես, թե ինչի՞ մասին է պայմանավորվել Արոնչիկը առանց իմ գիտության:

Բայց կարելի՞ է արդյոք պատասխան ստանալ ծառից: Այդպես էլ նրանից: Կարմրատակեց, հայացքը խոնարհեց հարսի նման, բերանը լիքը ջուր հավաքեց ու ծպտուն չկա: Դե լավ, մտածում եմ, հիմա չես ուզում խոսել, հետո կխոսես... Տեվլեն կնիկարմատ չի՛: Տեվլեն կարող է սպասել: Սպասեցի որոշ ժամանակ, հետո մի հարմար բոպե որսացի, երբ ես և նա մենակ էինք, ասացի.

— Ասա ինձ, Շպրինցա, ցանկանում եմ քեզ հարցնել, դու գոնե ճանաչո՞ւմ ես էդ Արոնչիկին:

— Բհարկէ, ճանաչում եմ,— պատասխանում է նա:

— Դու գիտե՞ս, որ նա փուչ է:

— Ինչ է նշանակում փուչ:

— Փուչ ընկույզ, որ սուլում է:

— Մխավում ես,— պատասխանում է նա:— Արնոլդը լավ մարդ է:

— Քեզ մոտ նա արդեն Արնոլդ է կոչվում,— ասում եմ,— և ո՞չ խաբեբա Արոնչիկ:

— Արնոլդը,— պատասխանում է,— խաբեբա չէ, նա բարի սիրտ ունի, բայց ապրում է ստոր մարդկանց մեջ, որոնք փողից բացի, ոչինչ չգիտեն:

— Այ թե ի՞նչ,— ասում եմ:— Դո՞ւ էլ արդեն սկսեցիր փիլիսոփայել: Դո՞ւ էլ սկսեցիր փողը ատել:

Կարճ ասած, խոսակցությունից զգում եմ, որ գործը բավականին հեռու է գնացել, ես ուշ եմ խելքի եկել, և եղածը այլևս ետ չես դարձնի: Ես իմ ժողովրդին գիտեմ: Ես ձեզ արդեն ինչ-որ մի անգամ ասել եմ, որ Տեվյեի աղջիկները, ա՛յ խ, ինչ ասեմ նրանց, թե որ մեկին մտքում դրին, ապա ամբո՛ղջ հոգով, ամբո՛ղջ սրտով: Եվ ինքս ինձ ասացի. «Հիմա՛ր, ասացի, աշխարհի մեջ դո՞ւ ես ամենից իմաստունը: Միգուցե աստված է այդպես կամենում: Միգուցե այդպես է սահմանված, որ հենց քո այդ սուսիկ-փուսիկ Շալիսցայի շնորհիվ աստված հատուցի քո քաջած բոլոր տեսակի հարվածների ու տառապանքների փոխարեն: Միգուցե վիճակված է ծերությանդ օրերում անդորր ունենալ ու զգաս, թե ինչ է նշանակում աշխարհում ապրել: Միգուցե քեզ վիճակված է ունենալ միլիոնատեր աղջիկ: Ինչ է, չի՞ սազի: Որտե՞ղ է ասված, որ Տեվյեն պարտավոր է ամբողջ կյանքում չարքաշ ապրել, ձիու հետ քարշ գալ, յուղ ու պանիր հասցնել Եգուպեցի հարուստներին, հոգալ, որ նրանք խժոճելու բան ունենան: Ո՞վ է իմանում, միգուցե վերուստ սահմանված էր որ ծերությանս օրերում մի որևէ լավ գործ կատարեմ, դառնամ բարեբար, բարեգործ, մի հյուրասեր տնատեր, և թերևս ժամանակս անցկացնեմ գիտուն մարդկանց հետ, զբաղվեմ սուրբ գրքերով»: Ահա այսպիսի հրաշալի, ոսկեղեն երազներ են մտնում գլուխս... Ինչպես աղոթքումն է ասված. «Բազում խորհուրդք են ի սրտի մարդոյ»,— կամ ինչպես մեր շինականներն են ասում. «Քաղցած հավը երազում կորեկ է տեսնում...»: Մտնում եմ տուն, մի կողմ եմ կանչում պառավիս և նրա հետ խոսում:

— Ի՞նչ կլինի,— ասում եմ,— եթե մեր Շալիսցան, օրինակի համար, դառնար միլիոնատիրուհի:

— Իսկ ի՞նչ կնշանակի «միլիոնատիրուհի»:

— Միլիոնատիրուհի նշանակում է միլիոնատիրոջ կին:

— Իսկ ինչ կնշանակի միլիոնատեր:

— Միլիոնատեր,— ասում եմ,— այն մարդն է, որն ունի միլիոն...

— Իսկ ինչքան է միլիոնը:

— Հիմա՛ր,— ասում եմ,— եթե դու չգիտես, թե ինչքան է միլիոնը, էլ ինչ խոսեմ քեզ հետ:

— Իսկ քեզ ո՞վ է խնդրել, որ խոսես,— պատասխանում է նա:

Եվ ճիշտ է ասում: Կարճ ասած, անցնում է մի օր, երեկոյան տուն եմ վերադառնում:

— Արոնչիկը եկե՞լ է:

— Չէ՛, չի եկել:

Մի օր էլ է անցնում:

— Տղան եկե՞լ է:

— Չէ՛, չի եկել...

Թե մի որևէ պատրվակ բռնե՛մ, վեր կենամ գնամ այրիի մոտ, անհարմար է, կմտածի, թե Տեվյեն խնամի-խնամի է խաղում... Բացի դրանից, ես զգում էի, որ նրա՝ այրիի համար, դա կլինի «որպես վարդն ի միջի փշոց», որ դա նրան այնքան է պետք, որքան սայլին՝ հինգերորդ անիվը: Չնայած չեմ հասկանում, թե ինչու: Որովհետև ես միլիոն չունե՞մ: Բայց չէ՞ որ ես էլ միլիոնատեր ազգականուհի ունեմ: Իսկ նրա ազգականն ո՞վ է, մի թշվառական, մի աղքատ՝ կաթնավաճառ Տեվյեն: Պարծենալու իրավունքն ո՞ւմն է, ի՞նչ թե նրանը: Ես ձեզ անկեղծ կասեմ, ես ցանկանում էի այդ ամուսնությունը, և դա ո՛չ այնքան հանուն ամուսնության, այլ որքան հանուն նրա, որպեսզի ինձ զգայի հաղթող: «Գրողը առնի Եզուպեցի հարուստների հոր հոգին, հալա մորն էլ վրան, թող իմանան, ո՛վ է Տեվյեն: Մինչև հիմա ականջներս ուռեց Բրոդսկի հա՛ Բրոդսկի լսելուց, կարծես մնացածները մարդ չեն»:

Ու մի օր էլ էսպես մտածելով տուն եմ դառնում Բոյբերիկից: Տուն եմ հասնում թե չէ, պառավս դեմս է գալիս ուրախ լուրով: Հենց նոր մի մարդ է եկել Բոյբերիկից, այրիի մոտից, որպեսզի ես հենց հիմա անպայման գնամ այնտեղ, թեկուզ լինի կեսգիշեր: «Թեկուզ ինչ էլ որ լինի, սայլը լծիր ու գնա, դու նրան շատ պետք ես»:

— Էդ ինչ է, հո կրակը չեն ընկել,— ասում եմ,— ինչ են էդպես շտապում:

Նայում եմ Շպրինցային: Ձայն չի հանում, բայց նրա աչքերը խոսում են, և ինչպես են խոսում: Ոչ ոք չէր հասկանում նրա սիրտը, ինչպես ես... Ես միշտ վախենում էի, դե ով գիտի, ի՞նչ ասես, որ չի պատահում — հանկարծ այս ամբողջ պատմությունը վերջանա՝ ոչնչով ոչինչ: Եվ սկսեցի հայիռել Արոնչիկին, ինչպես կարող էի, որ նա այսպե՛ս է, այնպե՛ս է: Բայց տեսա, որ գուր բան է, ոնց որ սիսեռը խփես պատին — Շպրինցան հավում է մոմի պես:

Իրիկնամուտ էր արդեն, որ նորից լծեցի ձին և ճամփա ընկա Բոյբերիկ: Իսկ ճանապարհին անվերջ մտածում եմ. «Ինչո՞ւ են նրանք ինձ շտապ կանչում: Երևի խոսք առնելու համար է կամ թե նշանդրեքի: Էդ դեպքում երիտասարդը, թվում է, ինքը կարող էր գալ ինձ մոտ: Չէ՞ որ ես, ինչքան չլինի, հարսնացուի հայրն եմ»: Բայց իսկույն ևեթ ծիծաղեցի, աշխարհի երեսին որտե՞ղ է տեսնված, որ հարուստը առաջինն ինքը գնա աղքատի դուռը: Աշխարհի վերջն է, ի՛նչ է: Թե մեսիայի գալու ժամանակն է, և ահա, ժամանակակից կտրիճներն ուզում են ինձ համոզել, թե շուտով կգան, որպես թե այն ժամանակները, երբ հարուստ ու աղքատ կհավասարվեն իմը՝ քոնն է, քոնը՝ իմը: Է՛, բոլորը փչոց է: Աշխարհը կարծես թե, իսկի էլ այդքան հիմար չէ, որովհետև մինչև օրս այդպիսի հիմարներ չեն ծնվել: Է՛իս-իսե՛ իսե՛»:

Այսպիսի մտքերով ահա հասա Բոյբերիկ և ուղղակի քշեցի ամառանոց, այրիի մոտ: Ձին կապեցի, որտե՞ղ է այրին: Այրին չկա: Տղա՞ն ուր է: Տղան չկա: Հապա ո՞վ է ինձ կանչել:

— Ես եմ ձեզ կանչել,— ասում է կլոր, ամրակազմ, ցանցառ մորուքով, ոսկե հաստ շղթան փոքրին մի մարդ:

— Դուք ո՞վ եք,— հարցնում եմ ես:

— Ես,— ասում է նա,— այրիի եղբայրն եմ, Արոնչիկի քեռին: Ինձ հեռագրով են կանչել Եկատերինոսլավից, հենց հիմա եմ ժամանել...

— Որ այդպես է,— ասում եմ,— բարո՛վ եք եկել:

Նստում եմ, իսկ նա տեսնելով, որ նստեցի, ասում է.

— Նստեցեք:

— Շնորհակալ եմ,— ասում եմ,— ես արդեն նստել եմ: Ո՛նց եք, ո՛նց չեք, ինչ կա ձեր կողմերում՝ կոսնետուցիայից:

Բայց դրան նա ոչինչ չպատասխանեց, փլվեց ճոճաթոռի մեջ, ձեռքերը խրեց գրպանը, ոսկե շղթայով փորը դուրս գցեց ու դիմեց ինձ.

— Կարծեմ ձեր անունը Տեվյե է:

— Այո,— ասում եմ,— երբ ինձ կանչում են թորան²⁸ կարդալու, ապա հայտարարում են. «Եկե՛ք, ռեբ Տեվյե, որդի Շներ-Ջելմանի...»:

— Լսեցեք,— սկսեց նա,— ռեբ Տեվյե, թե ինչ կասեմ ձեզ, ի՞նչ կարիք կա, որ երկար ու բարակ խոսենք: Եկեք ուղղակի գործից սկսենք:

— Դե, ինչ կա որ,— ասում եմ,— դեռևս Սողոմոն իմաստունն է ասել. «Ամենայն ինչ՝ ի ժամանակի իւրում»: Եթե պետք է խոսել գործից, եկեք խոսենք գործից, ես գործնական մարդ եմ...

— Դա երևում է,— ասում է նա,— որ դուք գործնական մարդ եք... Ահա ես էլ ուզում եմ ձեզ հետ խոսել այնպես, ինչպես կխոսի վաճառականը: Ուզում եմ, որ դուք ինձ ասեիք, միանգամից անկեղծորեն, թե ինչ կնստի մեզ վրա այս ամբողջ պատմությունը: Միայն թե անկեղծորեն:

— Եթե ասեմ անկեղծորեն,— պատասխանում եմ,— ես չգիտեմ, թե դուք ինչի մասին եք հարցնում:

— Ռեբ Տեվյե,— դիմում է նա ինձ նորից՝ ձեռքերը չհանելով գրպաններից:— Ես հարցնում եմ, ի՞նչ կնստի մեզ վրա այս ամբողջ դիոլ-գուռնան:

— Դա,— ասում եմ,— կախված է նրանից, թե ինչպիսի հարսանիք եք ցանկանում: Եթե դուք նկատի ունեք շքեղ հարսանիք, ապա ես ի վիճակի չեմ:

Նա աչքերը չռում է վրաս և ասում.

— Կամ ձեզ հաստագլխի տեղ եք դնում, կամ էլ իսկապես... Չնայած ինչ ձեզ եմ տեսնում, հիմար չեք երևում: Կարողացել եք իմ ազգականին քաշել ճահիճը, հա՞... Հրավիրել եք որպես թե տոնական կարկանդակների, թուշ եք արել սիրուն աղջկա. ձեր աղջիկն է, թե ձեր աղջիկը չէ, այդպիսի նրբությունների մեջ չեմ մտնում... Իսկ աղջիկը նրան դուր է եկել, տղային այսինքն... Իսկ թե տղան դուր եկե՞լ է աղջկան, խոսելու կարիք էլ չկա, դա ինքնըստինքյան հասկանալի է... Ես ոչինչ չունեմ ասելու, շատ հավանական է, որ նա մաքուր աղջիկ է, և խեղճը այդ ամենը լուրջ է ընդունում... Ես այդպիսի նրբությունների մեջ չեմ մտնում... Բայց դուք չպետք է մոռանաք, ասում է նա, թե ո՛վ եք դուք և ո՛վ ենք մենք: Դուք չե՞՞ որ խելահաս մարդ եք, դուք ինչպե՞ս կարող եք թույլ տալ, որ կաթնավաճառ Տեվյեն, որը մեզ յուր ու պանիր է բերում, դառնա մեր ազգականը: Իսկ այն, որ նրանք միմյանց խոսք են տվել, է՛հ, ինչ անենք, թող հետո էլ միմյանց ետ տան: Մե՛ծ փորձանք չէ: Եթե հարկավոր կլինի մի որևէ բան վճարել, որպեսզի աղջիկը տղային ազատի այդ երդումից, խնդրե՛մ:

²⁸ Թորա — Հնգեմատյան, աստվածաշնչի առաջին մասը:

Մենք դեմ չենք: Աղջիկը աղջիկ է, իհարկե,— ասում է նա,— և ոչ տղա, թե ձեր դուստրն է, թե ուրիշի, այդպիսի մանրությունների մեջ ես չեմ մտնում...

«Տե՛ր իմ աստված,— մտածում եմ ես:— Ի՛նչ է ուզում ինձնից այս մարդը»:

Իսկ նա չի դադարում խոսելուց, գլխիս վերևում թմբկահարում է: Թող քո մտքովն անգամ չանցնի,— ասում է,— սկանդալ սարքել, ամեն տեղ հայտարարել, թե իմ քրոջ տղան, այսինքն՝ Արոնչիկը ամուսնացել է Տեվյեի աղջկա հետ... Մտքովս էլ չանցնի, թե իր քույրը այնպիսի մեկն է, որից կարելի է փողեր կորզել... Հաշտությամբ, ասում է, թերևս կարելի է իրենից մի քանի ռուբլի ստանալ, դա դեռ ոչինչ, որպես նվիրատվություն... Դե, բոլորս էլ մարդ ենք, երբեմն էլ պետք է ուրիշներին օգնել...

Դուք ցանկանում եք իմանալ, թե ես նրան ինչ պատասխանեցի: Վա՛յ ինձ: Ոչինչ էլ չպատասխանեցի: Ինչպես ասում են՝ «լեզու իմ, կպավ ի քիմս իմ»,— լեզուս բռնվեց: Վեր կացա, շուռ եկա դուռը և չկա՛մ: Փախա ինչպես հրդեհից, ինչպես բանտից: Գլուխս դժժում էր, աչքերիս առաջ ինչ-որ փայլատակում, ականջներումս անվերջ լսվում էին՝ «անկեղծ ասած...», «ձեր աղջիկն է, թե աղջիկը չէ...», «փողեր կորզել», «որպես նվիրատվություն...»:

Մոտեցա ձիուս, երեսս դեմ արի սայլին և հո չե՞ք ծիծաղի վրաս, լաց եղա: Լալիս եմ ու լալիս... Երբ որ մի կուշտ լաց եղա և նստեցի, թշվառ ձիուս գլխին թափեցի ամենը, ինչ կար սրտումս, այսինքն՝ Հոբի²⁹ օրինակով, աստծուն դիմեցի հարցմունքով. «Տե՛ր աստված, դու էդ ինչ ես գտել ծեր Տեվյեի մեջ: Ինչու հանգիստ չես տալիս նրան և ոչ մի բոպե: Մի՞թե աչքդ ինձնից բացի ուրիշի չի տեսնում»:

Գալիս եմ տուն, գերդաստանս, աչքով չտամ, ուրախ, գվարթ նստած է ընթրիքի: Շաքրինցան չկա:

— Որտե՞ղ է Շաքրինցան,— հարցնում եմ:

Իսկ նրանք թե՛

— Ի՞նչ լուր, ինչո՞ւ էին կանչել:

— Որտե՞ղ է Շաքրինցան,— հարցնում եմ:

Իսկ նրանք՝ նորից

— Ի՞նչ լուր:

— Առանձնապես,— ասում եմ,— ոչինչ: Խաղաղություն է, փառք աստծու: Ջարդերի մասին ձեն-ձուն չկա...

Այդ միջոցին գալիս է Շաքրինցան: Նայում է աչքերիս և նստում սեղանի մոտ, կարծես ոչինչ չի եղել, կարծես խոսքը իրեն չի վերաբերում: Դեմքից ոչինչ չես իմանա, միայն թե հանդարտ է չափից ավելի: Եվ հետո, դուր չի գալիս ինձ նրա մտախոհությունը և կույր հնազանդությունը: Ասես նայիր՝ կնայի, ասես՝ կեր, կուտի, ասես՝ մոտեցիր, կմոտենա: Կանչում ես, վեր է թռչում... Նայում եմ նրան, սիրտս ճմլվում է, բարկությունը բարձրանում է կոկորդս, բայց ո՞ւմ դեմ, ինքս էլ չգիտեմ... Ա՛խ աստված, մեր տեր ու տիրական: Ինչի համար ես ինձ պատժում, ո՞ւմ մեղքերի դիմաց:

²⁹ Հոբ — աստվածաշնչի կերպարներից, որի նվիրվածությունը փորձելու համար, աստված զանազան փորձանքներ ուղարկեց նրան:

Կարճ ասած, դուք ուզում եք իմանալ, թե ինչով վերջացավ: Այդպիսի վախճան, ես իմ ամենաերդյուլ թշնամուս էլ չեմ ցանկանա, և չի էլ կարելի դա որևէ մեկին ցանկանալ, որովհետև զավակների վիշտը ծնողների համար ամենամեծ անեծքն է և աստծու պատիժը:

Ո՞վ է իմանում, միգուցե և որևէ մեկը ինձ անիծել է: Դուք չե՞ք հավատում այդպիսի բաների: Դե, հապա՛ ձեր կարծիքով ինչ է դա: Սասցեք՝ իմանանք... Բայց թե ի՞նչ կարիք կա երկար ու բարակ դատողությունների, կպատմեմ, թե ինչով վերջացավ:

Մեկ անգամ, իրիկնադեմին տուն եմ դառնում: Ինքներդ էլ հասկանում եք, թե հոգուս մեջ ինչ էր կատարվում, ախր մտածեցեք, թե դա ինչպիսի՜ վիրավորանք էր, ինչպիսի՜ խայտառակություն: Հապա զավակս որքան էր մեղք: Դուք կհարցնեք՝ հապա այրի՞ն: Հապա նրա տղա՞ն: Ո՛ւր է այրի: Ո՛ւր է տղա: Քոչել էին և նույնիսկ առանց մնաս բարով ասելու: Ամաչում եմ ասել, նույնիսկ յուղի ու պանրի համար չվճարելով ինձ... Բայց թե ինչ ասեմ: Մոռացել էին երևի... Ես այն եմ ասում, որ նույնիսկ մնաս բարով էլ չարեցին ու այդպես գնացին: Թե դա ինչպես տարավ Շաքինցան, այդ մասին ոչ ոք չգիտե, բացի ինձանից, որովհետև ես հայր եմ, իսկ հայրական սիրտը զգում է... Նրա բերանից, կարծում եք, որևէ խո՞սք է դուրս եկել... Գանգատվե՞լ է: Լա՞ց է եղել: Է՛, այդ դեպքում չեք ճանաչում Տեվլեի աղջիկներին. լո՛ւտ, ինքնամիտփ, հալվում էր, մաշվում, ինչպես մոմ: Երբեմն թաք մի հառաչանք էր թռչում կրծքից, ասես սիրտն էլ հետն էր դուրս գալիս:

Մի խոսքով գնում եմ էդպես՝ խորասուզված տխուր մտքերիս մեջ, հարցեր եմ տալիս աստծուն և ինքս նրանց պատասխանում: Եվ աստված այլևս այնքան չէր վրդովում ինձ, նրա հետ մի կերպ յուլա էի գնում, որքան՝ մարդիկ: Մի՞թե նրանք չեն կարող բարիք գործել, նրանց ինչի՞ն է պետք իրենց, և ուրիշների կյանքն աղճատելը, երբ որ կարող էին ապրել և լավ, և երջանիկ: Մի՞թե աստված մարդուն ստեղծել է նրա համար, որ տանջվի աշխարհի երեսին: Նրա ինչի՞ն է հարկավոր այդ:

Էսպես մտածելով գալիս եմ ագարակ և հեռվից տեսնում եմ, որ գետի ամբարտակի մոտ մարդիկ են հավաքված. գյուղացիներ, գեղջկուհիներ, աղջիկներ, տղաներ ու մանր երեխեք: Ի՞նչ կարող է պատահած լինել. հրդեհ չկա: Հավանաբար մարդ է խեղդվել: Երևի ինչ-որ մեկը լողացել է ամբարտակի մոտ ու խեղդվել: Ոչ ոք չգիտի, որտեղ է մահը դարան մտած սպասում, ինչպես ասում ենք աղոթքում...

Եվ հանկարծ տեսնում եմ վագում է իմ Գուլթան, շալը քամուն տված, ձեռքերը տարածած... Իսկ առջևում երեխեքս Թայբլն ու Բեյլկան ձայները գլուխները գցած, սրտապատառ ողբալով ու կոծելով:

— Աղջի՛կս: Քույրի՛կս: Շաքինցա՛...

Ինչ էի ուզում ձեզ հարցնել: Հա՛: Դուք երբևէ ջրահեղձ տեսած կա՞ք: Երբե՞ք: Երբ մարդ մեռնում է, նրա աչքերը համարյա միշտ փակ են լինում... Ջրահեղձների աչքերը բաց են... Չգիտե՞ք ինչիցն է էդպես:

Ներեցեք ինձ, ես ձեզնից շատ ժամանակ խլեցի: Եվ ես ինքս էլ գործ ունեմ, պետք է գնամ ձիուս մոտ, սայլով ապրանք պիտի տանեմ բաժանեմ. կյանքն իրենը պահանջում է: Պետք է ապրուստի մասին մտածել և այն մասին, որ մոռացության տաս եղածը: Որովհետև ինչ որ երկրային է, պետք է մոռանալ, բայց քանի կենդանի ես, հոգիդ չես կարող հանել դուրս գցել: Ո՛չ մի հնարամտություն չի օգնի, ուզես թե չուզես, ստիպված նորից պետք է կրկնես էս հին ճշմարտությունը՝ որքան ժամանակ հոգիդ մարմնումդ է, շարունակի՛ր քայլել, Տեվլե՛:

Ո՛ղջ եղեք, իսկ եթե ինձ կհիշեք, բարի հիշեցեք:

ՏԵՎՅԵՆ ԳՆՈՒՄ Է ՊԱՂԵՍԻՆ

(Պատմել է Տեվյեն, գնացքում)

Տե՛ր աստված, այս ո՞ւմ եմ տեսնում: Ինչպե՞ս եք, ռեթ Շոլում-Ալեյխեմ: Ա՛յ քեզ հանդիպում: Մտքովս անգամ չէր անցնում: Դե՛, ողջուն ձեզ: Խաղաղություն ձեզ: Իսկ ես, հասկանո՞ւմ եք, անվերջ միտք էի անում ու գուշակում, թե ի՞նչ հանելուկ է սա: Սա ի՞նչ բան է, որ այսքան ժամանակ ձեզ չեմ հանդիպում, ո՛չ Բոյբերիկում, ո՛չ Եգուպեցում, դե, ինչ ասես չի պատահում, մտածում եմ, միգուցե հոգին ավանդել է և տեղափոխվել այնտեղ, ուր բողկը խոզի ճարպով չեն ուտում: Բայց մյուս կողմից էլ մտածում եմ, մի՞թե նա այդպիսի հիմարություն կաներ: Չէ՞ որ ինչքան չլինի խելացի մարդ էր: Բայց փա՛ռք քեզ, տեր աստված, որ վիճակվեց տեսնել ձեզ ողջ և առողջ. ինչպես այնտեղ ասված է. «Մարը սարին չի պատահի, մարդը մարդուն կպատահի»... Այնպես եք նայում ինձ, կարծես ինձ չեք ճանաչում: Ախր դա ձեր հին բարեկամն է, Տեվյեն. «Մի՛ հայեցես յանօթն»³⁰, դուք մի նայեք, որ հագինս նոր արխալուղ է: Դա նույն ինքը՝ ձախորդ Տեվյեն է որ կա, ոչնչով չի փոխվել: Երբ հագնվում ես շաբաթ օրվա նման, շենք ու շնորհք է գալիս վրադ, քեզ թվում է, թե հարուստ ես, դե, որովհետև ճանապարհ ես գնում, մարդկանց առաջ այլ կերպ չի էլ կարելի, մանավանդ որ գնում ես մի այնպիսի հեռու երկիր, ինչպիսին Պաղեստինն է,

1

հանա՞ք բան է: Միգուցե կգարմանաք, թե որտեղի՞ց այս փոքր մարդուն, ինչպիսին Տեվյեն է, որ ամբողջ կյանքում պանիր ու յուղ է ծախել, հանկարծ այդպիսի հովեր: Չէ՞ որ միայն մի ինչ-որ Բրոդսկի կարող է թույլ տալ իրեն օր ծերության նման հեռավոր ճամփորդություն: «Համակ գաղտնիք է», պանե Շոլում-Ալեյխեմ, բայց ամեն ինչ պարզ է, ինչպես ձեռքիս ավր, հավատացե՛ք ինձ: Դուք միայն բարի եղեք ձեր ճամպրուկը մի քիչ դեն տանել, իսկ ես կնստեմ ձեզ մոտ և մի պատմություն կպատմեմ: Ահա՛, լսեցեք, թե աստված ինչեր կարող է խաղալ մեր գլխին:

Նախ և առաջ՝ պետք է հաղորդեմ, ձեզանից հեռու լինի, կնամբի դարձա: Մահացավ իմ Գուդան, աստված հոգին լուսավորի: Նա պարզ կին էր, առանց հետին մտքերի, բայց ի՛նչ աստվածապաշտն էր, թող նա այնտեղ իր զավակների համար բարեխոս լինի, որոնց պատճառով քիչ չտանջվեց և թերևս հենց նրանց պատճառով էլ աշխարհից հեռացավ, չկարողացավ դիմանալ, որ մեկը նալին խփեց, մեկը մեխին ու ցիրուցան եղան մեկը՝ դես, մյուսը՝ դեն: «Սա ի՞նչ կյանք է, ներքի ինձ տեր իմ աստված, ասում էր նա, ոչ որդի կա, ոչ հորթիկ կա: Կովը որ կով է, նա էլ է տխրում, երբ հորթը հեռացնում են մոտից...»:

Այսպես էր ասում երբեմն նա, Գուդան այսինքն, և լալիս՝ տաք արցունքներ թափելով: Եվ տեսնում էի, որ նա աչքիս առաջ մոմի նման օրեցօր հալվում է, սիրտս ճմլվում էր խղճահարությունից, սկսում էի խոսել, սրտիս դառնությունը թափել:

³⁰ Թալմուդի ասացվածքներից:

— Էիս, Գոլդա, հոգիս, մեզ մոտ ասված է. «Կամ որպէս զմանուկս, կամ որպէս զստրուկս»³¹: Երեխեքը քեզ մոտ լինեն թե չլինեն, միևնույն բանն է... Մենք ունենք աստված՝ մեծ, գթառատ և ամենակարող... Համենայն դեպս,— ասում եմ ես,— թող այնքան երջանկություն ունենայի, որքան որ գլխիս փորձանքներ են եկել, մեկ էլ տեսար ամենակալն աստված այնպիսի օյին է հանում գլխիդ, որ թշնամուս միայն կցանկանամ...

Բայց նա՝ Գոլդան միայն և միայն կնիկարմատ է, չնայած լավ չէ, որ այդպէս եմ ասում... Նա էլ ահա պատասխան է տալիս ինձ:

— Մեղք ես գործում, Տեվյէ: Մեղսապարտ մի եղիր...

— Այ քեզ բա՛ն: Մի՞ թե ես որևէ վատ բան ասացի: Քո կարծիքով ես աստծու դեմ ապստամբվո՞ւմ եմ, ինչ է: Ախր, եթե աստված աշխարհն ստեղծել է այնքան հրաշալի, որ երեխեքը երեխեք չեն և ծնողներն էլ նրանց համար հեշ բաներ են, ուրեմն նա գիտե, թե ինչ է անում...

Բայց նա չի հասկանում, թե ես ինչ եմ ասում և խոսում է անկապ-անկապ:

— Ես մեռնում եմ, Տեվյէ, ո՛վ պիտի քեզ համար ընթրիք պատրաստի:

Ասում է և նայում ինձ այնպիսի հայացքով, որ քարն անգամ չի դիմանա: Բայց Տեվյէն կնիկարմատ չէ՛, պատասխանում եմ նրան մի որևէ խոսքով, ասացվածքով և դարձյալ ասացվածքով:

— Գո՛լդա,— ասում եմ,— դու այսքան ժամանակ ինձ հավատարիմ ես եղել, մի՞ թե այս ծեր հասակումս ինձ հիմար դրության մեջ կդնես:

Նայեցի նրան. ձեռքից գնում է:

— Ի՛նչ է պատահել քեզ, Գոլդա,— ասում եմ:

— Ոչի՛նչ,— ասում է՝ հազիվ լսելի ձայնով:

Է՛հ, տեսնում եմ բանը բուրդ է, ձին լծեցի, գնացի քաղաք, բժիշկ բերեցի, ամենալավ բժիշկին: Հասնում եմ տուն, և ի՛նչ: Պառկած է իմ Գոլդան հատակի վրա, մոմը գլխավերևում՝ սև շորը վրան քաշած, կարծես կիտած հող լինի: Կանգնում եմ ու միտք անում. «Ահա թե ինչ է մարդը: Ա՛խ, երկնային թագավոր: Այս ինչ զուլումներ ես բերում Տեվյէի գլխին: Ի՛նչ պիտի անեմ օր-ծերության, վա՛յ ինձ, վա՛յ ինձ»: Եվ խոտի խուրձի նման ընկա գետին... Բայց թե ինչքան ուզում ես գոռա՝ օգուտ չունի: Գիտե՞ք, թե ձեզ ինչ կասեմ: Երբ քո առաջ մահ ես տեսնում, կամա-ակամա սկսում ես մտածել, թե «ի՞նչ ենք մեք, և ի՞նչ է կեանք մեր». ինչ բան է մեր այս աշխարհը՝ իր մոլորակներով, որ պտտվում են, ինչ են գնացքները, որ խելագար սլանում են աղմուկով ու շոինդով և թե ի՛նչ է հենց ինքը՝ Բրոդսկին իր միլիոններով հանդերձ: «Ունայնություն ունայնութեանց», ոչնչությո՛ւն, անհեթեթությո՛ւն:

³¹ Նոր տարվա աղոթքից (այդ օրը աստված դատաստան է տեսնում երկրի վրա ապրողների նկատմամբ), որի շարունակությունն այսպես է. «Եթե դու (աստված) մեզ համարում ես մանուկներ, ապա մեր հայացքը ուղղված է քեզ, որպեսզի ողորմայիր և արդար դատաստան տեսնեիր»: Այս տողերը Տեվյէն մեկնաբանում է յուրովի, բայց և իսկույն զուգորդելով, ասում է մեծ և գթառատ աստծու մասին... որը երբեմն «այսպիսի օյիններ է հանում նրա (Տեվյէի) գլխին»:

Մի խոսքով, ես մի մարդ վարձեցի, որպեսզի Գոլդայի համար «կադեշ»³² կարդա և նախապես մեկ տարի առաջ վճարեցի: Ի՞նչ էր մնում ինձ անել, երբ տերը պատժել էր ինձ և արու գավակ չէր տվել կնանիքից բացի, աղջիկ հա աղջիկ, ա՛խ, ինչ ասեմ նրանց: Չգիտեմ, բոլո՞րն են այդպես տանջվում իրենց աղջիկների համար, թե մենակ ես եմ թշվառ ու ձախորդ: Այսինքն՝ նրանց դեմ ես բան չունեմ, չէ՞ որ բախտը աստծուց է տրվում: Որքան նրանք են ինձ ցավում ու իմ լավը կամենում, թո՛ղ աստված հենց դրա կեսը տար: Ընդհակառակը, նրանք չափից դուրս նվիրված են ինձ, իսկ ամեն բան, ինչ չափից դուրս է, վնաս է: Հենց խոսքի օրինակ, վերցնենք կրտսեր աղջկաս, որի անունը Բեյլկա է: Եթե դուք իմանաք, թե նա ինչպիսի՜ մարդ է: Դուք ինձ առաջին օրը չէ, որ ճանաչում եք, մի տարի է, դեռ մի բան էլ ավելի, և գիտե՞ք ինչ, ես այն հայրերից չեմ, որոնք սիրում են տեղի-անտեղի իրենց գավակներին գովաբանել. բայց քանի որ խոսք ընկավ Բեյլկայի մասին, ապա ես ձեզ պետք է մի երկու խոսքով ասեմ — այն օրվանից, ինչ աստված բեյլկաների արտադրությամբ է զբաղվում, նրա նմանը դեռ չի ստեղծել: Գեղեցկության մասին որ խոսք չկա: Տեվեի աղջիկները, դուք ինքներդ էլ գիտեք, որ ամբողջ աշխարհում ճանաչված են որպես առաջնակարգ գեղեցկուհիներ: Բայց նա՝ Բեյլկան նրանց բոլորին ծնկի կբերի, ի՛նչ ասել կուզի գեղեցկուհիների գեղեցկուհի՛: Ահա նրա մասին կարելի է ասել առակի խոսքերով. «Գեղեցկությունը խաբուսիկ է», — կարևորը գեղեցկությունը չէ, այլ բնավորությունը: Ոսկի՛ է, զուտ ոսկի, բան եմ ասում ձեզ: Ես նրա համար միշտ էլ առաջին մարդն էի ընտանիքում, բայց այն օրվանից, ինչ իմ Գոլդան, թող հողը փափուկ լինի նրա համար, մահացավ, հայրը դարձավ նրա աչքի լույսը: Չի թողնում որ վրաս փոշի նստի: Ես ինքս ինձ ասում էի, ինչպես աղոթքում է ասված, «Գթասրտությիւն իւր նախորդէ բարկութեան իւրոյ». աստված ուղարկում է ապաքինում, դեռևս վերքը տալուց առաջ: Միայն թե դժվար է գուշակել, թե որն է ավելի վատթար՝ ապաքինո՞ւմը թե վերքը... Մարգարե եղիր և գուշակիր, որ Բեյլկան հանուն ինձ փողով կվաճառի իրեն և իր ծերացած հորը կուղարկի Պաղեստին: Ենթադրենք, թե դա այդպես միայն ասվում է — կուղարկի: Հավատացե՛ք, նա դրանում մեղավոր է այնքան, որքան, օրինակ, դուք: Մեղավորը ոտքից գլուխ նա՛ է, նրա ընտրյա՛լը. անիծել չեմ ուզում, թող զորանոցը փուլ գա, մնա տակը: Եվ միգուցե, եթե լավ մտածենք և խորքերը գնանք, այդ բանում ամենից մեղավորը ես ինքս եմ, որովհետև մեզ մոտ, թալմուդում այդպես էլ ասված է. «Մարդս մեղուցեալ է...»: Բայց մի՞թե ինձ է մնացել ձեզ ասել, թե ինչ է թալմուդում ասված:

Կարճ կկտրեմ: Երկար չեմ զբաղեցնի: Անցավ մի տարի, ապա ևս մի տարի: Իմ Բեյլկան մեծացավ, դարձավ, աչքով չտամ, մարդու գնալու աղջիկ: Իսկ Տեվեն էլ իր գործն էր անում, սայլով յուր ու պանիր էր տանում, ամառը՝ Բոյբերիկ, ձմեռը՝ Եգուպեց, ա՛յ տեսնեմ Եգուպեցը ջրհեղեղի փայ դառնա հա՛, ինչպես Սողոմոն: Տեսնե՛լ չեմ կարող այդ քաղաքը, այնքան քաղաքը չէ, ինչքան բնակիչներին, բայց ոչ բոլոր բնակիչներին, այլ միայն մի մարդու, խնամի Էֆրաիմին, ա՛յ գետինը մտնի հա՛:

Ահա լսեցեք, թե ինչ բողկեր կարող է ուտել միջնորդ մոցիկովը:

«Եւ եղև օր»... մեկ անգամ, սեպտեմբերի կեսերին գնում եմ Եգուպեց՝ ապրանքով: Տեսնեմ, «Եւ եկ Աման», գալիս է խնամի Էֆրաիմը: Ես նրա մասին ինչ-որ մի անգամ ձեզ պատմել եմ: Նա չնայած դառը մարդ է, բայց հենց որ նրան տեսնում ես, ակամա կանգ ես առնում, այդպիսի ուժ ունի ոչուփուչը...

— Լսի՛ր, խելոքս,— ասում եմ իմ պառավ յաբուին,— ապա, մի քիչ կաց էստեղ, ես քեզ խժռելու բան կտամ:

³² Հրեական կրոնի համաձայն ծնողի մահից հետո տղաները պարտավոր են տասնմեկ ամիս շարունակ, ամեն օր պատարագից հետո սինագոգում փառաբանություն (կադեշ) կարդալ աստծուն ի պատիվ հանգուցյալի: Արու ժառանգի բացակայության դեպքում ընդունված է վարձել մի որևէ աստվածապաշտ մարդ:

Եվ կանգնեցնում եմ Էֆրաիմին, ողջունում և խոսք բացում՝ հեռվից:

— Ո՞նց են գործերդ:

— Անտանելի,— պատասխանում է նա՝ թառանչելով:

— Բանն ինչումն է:

— Գործ չկա:

— Իսկի՞:

— Իսկի:

— Պատճառն ինչ է,— հարցնում եմ:

— Պատճառն,— ասում է նա,— էն է, որ հիմա տանը չեն պսակվում:

— Հապա որտե՞ղ են պսակվում:

— Ինչ-որ տեղ, արտասահմանում...

— Իսկ ի՞նչ անի,— ասում եմ,— ինձ նման մարդը, որի պապի տատն էլ արտասահմանում չի եղել...

— Ձեզ համար,— պատասխանում է նա ու մեկնում ծխախոտատուփը,— ձեզ համար, ռեբ Տեվյե, ես մի ապրանք ունեմ հենց էստեղ, տեղում...

— Այսինքն՝ ինչ:

— Այրի,— պատասխանում է,— երեխաներ չունի, հարյուր հիսուն ռուբլի օժիտ ունի, խոհարար է աշխատել լավ տներում...

Նայում եմ նրան ու հարցնում.

— Ռեբ Էֆրաիմ, դուք այդ ո՞ւմ համար եք ասում:

— Էլ ո՞ւմ համար,— ասում է,— եթե ոչ ձեզ:

— Թո՛ւ, գետինը մտնես հա: Ցնդվել ե՛ս, ինչ է՛,— պատասխանում եմ ես, ձիուս մտրակով հյուրասիրում և ուզում եմ ճամփես շարունակել:

Այդ ժամանակ Էֆրաիմն ասում է.

— Ներեցեք ինձ, ռեբ Տեվյե, եթե ես ձեզ վիրավորել եմ: Ասացեք, իսկ դուք ո՞ւմ նկատի ունեք:

— Ո՞ւմ պիտի,— ասում եմ,— նկատի ունենայի, եթե իմ կրտսերին:

Այդտեղ նա նույնիսկ ֆռոաց տեղում և խփեց ճակատին.

— Հապա սպասեցե՛ք: Լա՛վ որ հիշեցրիք ինձ, ռեբ Տեվյե, աստված ձեզ երկար կյանք տա:

— Ամե՛ն,— պատասխանում եմ:— Ձեզ էլ ցանկանում եմ՝ ապրեք մինչև մեսիայի գալստյան օրը: Բայց ի՞նչ պատահեց, որ ձեր սրտին հանկարծ վարդեր բացվեցին:

— Շա՛տ լավ է,— բացականչում է նա:— Հրաշալի է, դրանից լավը չկա:

— Ախր բանն ինչումն է:

— Ես,— ասում է,— ձեր կրտսեր աղջկա համար մի փեսացու ունեմ աչքադրած, մի աննման փեսացու, բախտավորություն, շահած գումար, փողի քսակ, միլիոնատեր, Բրոդսկի: Ինքը կապալառու է, անունը՝ Պեդոցուր:

— Պեդոցո՞ւր,— ասում եմ ես,— ծանոթ անուն է, Հնգեմատյանից...

— Հնգեմատյանս որն է: Հնգեմատյանը էստեղ ի՞նչ գործ ունի: Նա կապալառու է, այսինքն՝ Պեդոցուրը, տներ է սարքում, կամուրջներ, պատերազմի ժամանակ եղել է ճապոնիայում, սարի չափ փող է բերել, ման է գալիս հրեղեն ձիեր լծած կառերով, դռներին էլ ծառաները կանգնած, տանը հատուկ բաղնիք ունի, Փարիզից բերած կահավորություն, մատին ադամանդե մատանի, դեռ էնքան էլ ծեր չի, ազապ է, իսկական ամուրի, պրիմա: Եվ փնտրում է սիրուն աղջիկ, թեկուզ ինչ էլ լինի՝ տկլոր չփլաղ, մենակ թե սիրուն...

— Տպր-րո՛ւ,— ասում եմ ես:— Եթե դուք այդպես առանց շունչ առնելու պիտի վազեք, ապա մենք, ռեբ Էֆրաիմ, աստված գիտի, թե ուր կհասնենք: Եթե չեմ սխալվում, հենց այդ նույն փեսացուին դուք արդեն մեկ անգամ նշանել եք իմ մեծ աղջկա՝ Գոդլի հետ:

Այդ լսելով, իմ խնամախոսը կողքերը բռնեց ու ծիծաղից թուլացավ, ես կարծեցի կաթված ստացավ...

— Էհե՛,— ասում է,— Էն էլ չե՞ք հիշում, թե իմ տատը առաջին անգամ երբ է ազատվել... Էն քո ասածը դեռ պատերազմից առաջ կոտր ընկավ ու ճղեց Ամերիկա:

— Աստվա՛ծ հոգին լուսավորի,— պատասխանում եմ:— Ի՞նչ գիտես, որ սա էլ չի ճղի...

Այստեղ իմ խնամախոսը ուղղակի իրենից դուրս եկավ.

— Ախր ի՞նչ եք ասում, ռեբ Տեվլե: Էն մյուսը դատարկապորտի մեկն էր, շառլատան, ցնցխող, իսկ սա կապալառու է դեռ պատերազմի օրերից, մեծ գործեր է տեսնում, գրասենյակ ունի, ծառայողներ և... և... և...

Մի խոսքով իմ Էֆրաիմը էնպես տաքացավ, որ ինձ նույնիսկ ցած քաշեց սայլից, բռնեց սերթուկիս մերակներից և սկսեց էնպես ցնցել, որ մոտեցավ մի ոստիկան և ուզեց երկուսիս էլ ուղարկել քաղաքամաս: Դեռ լավ էր, հիշեցի, որ սուրբ գրքումը գրված է. «Առ յօտարէ»,— ոստիկանի հետ պետք է կարողանաս լեզու գտնել...

Կարճ ասած, էլ ինչ երկարացնեմ: Պեդոցուրը դարձավ իմ կրտսեր դստեր՝ Բեյլկայի փեսացուն, և «ո՛չ տնեաց երկար»: Այսինքն՝ ես ուզում եմ ասել, որ համենայն դեպս, անցավ բավականին ժամանակ, մինչև մենք նրանց պսակեցինք: Ինչո՛ւ անցավ բավականին ժամանակ: Որովհետև նա՝ Բեյլկան այսինքն, չէր ուզում նրա հետ ամուսնանալ, ինչպես որ մարդ չի ցանկանում մեռնել: Որքան այդ Պեդոցուրը դեմ էր ընկնում իր նվերներով՝ ոսկի ժամացույցներով, ադամանդե, ալմաստե մատանիներով, այնքան զզվելի էր դառնում նրա համար: Գիտեք ինչ, ես խամ չեմ, ես դա շատ լավ տեսնում ու հասկանում էի: Բեյլկայի դեմքին նայելով տեսնում էի նրա արցունքները, որ ծածուկ թափում էր: Օրերից մի օր էլ միտք արեցի, ու որպես թե, ի միջի այլոց, ասում եմ.

— Լսիր ինձ, Բեյլկա, վայ թե քո այդ Պեդոցուրը քեզ համար այնքան է սիրելի ու պատվելի, որքան որ ինձ համար...

Իսկ նա ամբողջովին կարմրատակեց ու պատասխանեց.

— Քեզ ո՞վ ասաց:

— Հապա ինչո՞ւ ես ամբողջ գիշեր լալիս:

— Ո՞վ է լալիս:

— Ո՛չ, չեմ լալիս,— ասում եմ,— հեկեկում ես: Դու կարծում ես, որ գլուխդ խրում ես բարձի տակ, ուրեմն արցունքներդ ինձնից թաքցրի՞ր: Կարծում ես հորդ խելքը չի՞ հասնում կամ թե ուղեղը ցամաքե՞լ է, և նա չի՞ հասկանում, որ դու ուզում ես ամուսնանալ հանուն ծերունի հորդ: Դու ցանկանում ես, որ նրա ծերության օրերը ապահով լինեն, որ գլուխը դնելու մի տեղ ունենա, որպեսզի նա, աստված հեռու տանի, մուրացկան չդառնա: Եթե դու այդպես ես մտածում, ասում եմ, ուրեմն շատ հիմարն ես, հոգի՛ս: Աստված մեծ է, մի՛ վախենա, իսկ Տեվեն էլ ձրիակեր չի, որ ուրիշները խղճան ու մի կտոր հաց տան: Իսկ փողը դատարկ բան է՝ ինչպես սուրբ գրքումն է ասված: Վերցրու գործրինակ, քո քրոջը՝ Գողլին: Որքա՛ն աղքատ է: Բայց հապա նայիր, թե ինչեր է գրում՝ աստված գիտի, թե որ հեռավոր երկրից, և թե որքան երջանիկ է նա այնտեղ, աշխարհի ծայրին՝ իր նաչար Պերչիկի հետ...

Ապա, իմաստուն եղիր ու գուշակիր, թե ինչ պատասխանեց դրան Բեյլկան:

— Դու ինձ Գողլի հետ մի՛ համեմատիր,— ասում է նա,— Գողլը մեծացավ մի այնպիսի ժամանակ, երբ աշխարհը երերվում էր, քիչ էր մնում հիմնիվեր շուռ գար: Այն ժամանակ մտածում էին աշխարհի մասին, իսկ իրենց՝ մոռանում: Բայց հիմա, երբ աշխարհը հանդարտ է ու իր տեղում կանգնած, ամեն մարդ մտածում է իր մասին, աշխարհը մոռացել են...

Այսպես է պատասխանում ինձ Բեյլկան, ու եկեք ու գուշակեք, թե նա ինչ է հասկանում դրա տակ:

— Դե, ինչ կասեք դուք Տեվլեի աղջիկների մասին:

Դուք նրան տեսնեիք պսակադրության ժամանակ, տեղով մի իշխանուհի էր որ կար: Նայում էի նրան, հիանում ու միտք անում. «Սա Բեյլկան է, Տեվլեի աղջիկը: Այդ որտե՞ղ է նա սովորել այդպես կանգնել, այդպես քայլել, գլուխն այդպես բռնել, այդպես հագնվել, որպեսզի ամեն ինչ սազի, վայելի, որ ամեն ինչ այդպես վրան նստած լինի»: Բայց թե նրանով հիանալ շատ չթողեցին, որովհետև հենց նույն օրը, պսակադրությունից հետո, երեկոյան վեցին մոտ, ջահելները վեր կացան և փոստային գնացքով սլացան, սաստանան գիտի թե ուր, ինչ-որ Նատալիա³³, դեպի հանքային ջրերը, ինչպես ընդունված է հարուստների մոտ, և վերադարձան, երբ արդեն ձմեռ էր, ու իսկույն նեթ մարդ ուղարկեցին Ետնիցս, որպեսզի ես, անմիջապես, թեկուզ ինչ էլ լինի, անհապաղ գնամ Եգուպեց: Ինքս ինձ ասացի: Սրա տակը մի բան կա: Սա ի՞նչ է նշանակում: Եթե նրանց պարզապես ցանկալի էր, որ ես գնայի, հենց այդպես էլ եկողին կպատվիրեին, արի, այսինքն, և վե՛րջ: Ինչի համար է՝ «թեկուզ ինչ էլ լինի» և «անհապաղ» խոսքերը: Նշանակում է այստեղ մի ինչ-որ բան կա թաքնված: Ասացեք խնդրեմ, իսկ ի՞նչ կարող է դա լինել: Եվ գլուխս են սողոսկում ամեն տեսակի մտքեր ու ենթադրություններ՝ և՛ լավ, և՛ վատ: Միգուցե ջահելները արդեն հասցրել են կռվել, ինչպես երկու կատուններ և բանը հասել է բաժանման: Բայց այդտեղ ես առարկում եմ ինձ. «Դու անխե՛ղ ես, Տեվլե: Ինչու ես ամեն ինչում վատը տեսնում: Որտեղի՞ց գիտես, թե ինչի համար են քեզ կանչում: Միգուցե տխուր են և ուզում են քեզ տեսնել: Կամ միգուցե Բեյլկան ցանկանում է, որ դու ընդհանրապես իրենց մոտ ապրես: Կամ հանկարծ ու այդ Պեդոցուրը որոշել է քեզ վերցնել իրեն մոտ աշխատանքի

³³ Իտալիա:

ու դարձնել իր կառավարիչը: Դե ինչ էլ ուզում է լինի, պետք է գնալ»: Եվ ահա նստում եմ սայլս «Եւ անկա ճանապարհս ի Խարրան», գնում դեպի Եգուպեց: Ճանապարհին երևակայությունս թն է առնում և ինձ ներկայանում է իբրև թողել եմ գյուղը, ծախել կովը, ծախել ձին ու սայլը ամբողջ ային-օյինով և տեղափոխվել քաղաք, այնտեղ ապրելու: Սկզբում իմ Պեդոցուրի մոտ դառնում եմ հավատարմատար, հետո՝ զանձապահ, իսկ հետագայում սկսում եմ դեկավարել նրա բոլոր կապալները և դառնում եմ լիիրավ կոմպանիոն — մեզ մոտ ամեն ինչ հավասար է, և ես, ինչպես և նա, ման եմ գալիս կառեթով, որին լծված են հրեղեն ձիեր՝ մեկը դեղին, մյուսը՝ գորշ, և ինքս ինձ զարմանում. «Ձի՞նչ է սա, և զի՞նչ է սա». ի՞նչ է իրենից ներկայացնում ինձ պես մի փոքրիկ մարդը, որ նման խոշոր գործեր վարի: Ախր ի՞նչ եմ անում այս ամբողջ գլխացավանքը, այս հարայ-հրոցը, իրարանցումը: Ինչի՞նչ է պետք, ինչպես դուք եք ասում՝ «Խորհրդի նստելը ազնվատոհմ մեծատունների հետ», միլիոնատերերի արանքը խցկվելը: Թողե՛ք ինձ, ես ուզում եմ խաղաղ ծերություն, ուզում եմ երբեմն ձեռքս առնել սուրբ գիրքը, մի գլուխ կարդալ Սաղմոսից, ախր վերջապես հարկավոր է, որ մարդս հոգու մասին էլ մտածի, այնպես չէ՞: Ինչպես Սողոմոն իմաստունն է ասում, մարդը նույնն է, ինչ անասունը, մոռանում է, թե որքան էլ թեկուզ ապրի, մահվանից չի խուսափի...

Ահա այսպիսի մտքերով ու խոհերով, ասածու խոհերով, ասածու կամքով հասա Եգուպեց և գնացի ուղիղ Պեդոցուրի տունը: Ձեր առաջ պարծենալ ու պատմել «վասն նորա մեծութեան և նորա հարստութեան», այսինքն՝ նկարագրել նրա բնակարանը և կահավորանքը, պարզապես անկարող եմ: Կյանքիս մեջ չեմ արժանացել Բրողսկու տանը լինելու պատվին, Բայց որքան կարող եմ պատկերացնել, Պեդոցուրի տնից ավելի գեղեցիկ ու շքեղ չէր կարող լինել: Հաշվեցեք, որ դա արքայական պալատ էր, հենց թեկուզ նրա համար, որ դռների առջև կանգնած արծաթե կոճակներով լողլողը ոչ մի կերպ ներս չէր թողնում, կուգես գլխին ցցով հասցրու: Սա ի՞նչ բան է: Դռները ապակուց են, տեսնում եմ, թե ինչպես էդ լողլողը, գետնի տակն անցնի նա, կանգնել ու հագուստն է մաքրում: Ես նրան գլխով եմ անում, ձեռքով եմ անում, նշաններով հասկացնում, որ ներս թողնի, քանի որ տանտիրոջ կինն իմ հարազատ աղջիկն է... Բայց նա, սարսաղի գլուխը, բան չի հասկանում և նույնպես ձեռքերով հասկացնում է, որ ես գնամ կորչեմ սատանի ծոցը: Ահա թե որքան ցավալի էր: Հարազատ աղջկադ մոտ գալու համար էլ է կաշառք հարկավոր: «Վա՛յ քեզ, Տեմյե, վա՛յ քո ճերմակած գլխին, այս օրն էլ տեսար», մտածում եմ ես և նայում ապակյա դռան միջից: Տեսնում եմ այնտեղ մի ինչ-որ աղջիկ է ֆոֆոռում: «Կա-չկա աղախին է», մտածում եմ ես, որովհետև նրա աչքերը գողի աչքեր են: Բոլոր աղախիները այդպիսի աչքեր ունեն: Ես, գիտեք ինչ, բոլոր հարուստների տները ելումուտ ունեն և բոլոր աղախիներին գիտեմ... Աչքով արեցի նրան, այսինքն՝ «Բաց արա աղունակս»: Սա բաց արեց դուռը ու հարցնում է, պատկերացրե՞ք՝ հրեերեն.

— Ո՞ւմ եք ուզում:

— Այստե՞ղ է ապրում Պեդոցուրը:

— Բայց ձեզ ո՞վ է պետք,— հարցնում է նա ձայնը բարձրացնելով:

Իսկ ես՝ նրանից ավելի բարձր:

— Քեզ որ բան են հարցնում, կարգին պատասխան տո՛ւր: Այստե՞ղ է ապրում Պեդոցուրը:

— Այստե՛ղ:

— Դե որ այդպես է, ուրեմն ես և դու յուրայիններ ենք: Գնա տիկին Պեդոցուրին ասա, որ նրա մոտ հյուր է եկել և ահա այսքան ժամանակ փողոցում, դռների առաջ կանգնած է մուրացկանի նման,

որովհետև նրա բախտը չբերեց այդ լողլողի մոտ, հասկանում ես, չարժանացավ նրա սիրուն ու ողորմածությանը, ահա՛, այն արձաթե կոճակներով լողլողի, թող գետնի տա՛կն անցնի նա, որ քո եղունգն անգամ չարժի:

Լսելով այսպիսի խոսքեր, աղջիկը, որ երևում է անզգամի մեկն էր, քրքջաց, քթիս առաջ շրխկացրեց դուռը, վազեց վերև, հետո վազեց ցած, ներս առավ ինձ ու տարավ մի այնպիսի պալատ, որ պապերիս պապերն էլ երագներում չէին տեսել: Մետա՛քս, թավի՛շ, ոսկի՛, բյուրեղապակի՛, գնում էք ու ձեր ոտնաձայնն անգամ չեք լսում, որովհետև ձեր մեղսալի ոտքերով քայլում եք թանկագին գորգերի վրայով, որ փափուկ են ձյան նման: Հապա ժամացույցնե՛րը, ժամացույցնե՛րը: Պատերին՝ ժամացույց, սեղաններին՝ ժամացույց, թիվ ու համար չկա: «Տե՛ր իմ, բարերար աստված, աշխարհում սրա նմաններից շա՛տ ունես: Մարդուս ինչի՞ն է պետք այսքան ժամացույցը», մտածում եմ ես և ձեռքերս մեջքիս դրած, շարունակում եմ գնալ: Մեկ էլ տեսնեք, մի քանի Տեվլե ամեն կողմից գալիս են, մեկն այստեղ, մեկն այնտեղ, մեկը գալիս է դեպի ինձ, մյուսը գնում հեռանում է... Թո՛ւ, գրողը տանի: Ամեն կողմում հայելի կա... Մենակ այսպիսի ցանցառը, ինչպիսին այս կապալառուն է, կարող է իրեն թույլ տալ այսքան ժամացույցներ ու այսքան հայելիներ... Եվ մտքիս մեջ պատկերանում է Պեդոցուրը՝ հաստավիզ, գունդ ու կլոր, գլուխը քաչալ, խոսում է բարձրաձայն, ծիծաղում՝ կտկտալով... Եվ միտքս է գալիս, թե առաջին անգամ ինչպես եկավ գյուղ, ինձ մոտ, կրակ կտրած ձիերով և տեղավորվեց մեզ մոտ, ինչպես սեփական տանը: Ծանոթացավ իմ Բեյլկայի հետ, հենց տեղնուտեղը կանչեց ինձ մի կողմ և ծածուկ ասաց ականջիս, բայց այնպես, որ լսելի կլիներ Եզուպեցի այն կողմում, որ իմ աղջիկը իրեն դուր է եկել և որ ցանկանում է մե՛կ-երկու-երեք և հարսանիք: Այն, որ իմ աղջիկը նրան դուր էր եկել, դա դժվար չէր հասկանալ, բայց այդ՝ «մեկ-երկու-երեքը» որպես «սուր երկսայրի», ասես գուլ դանակով սիրտս թիքա-թիքա արեց: Ինչ է նշանակում «մե՛կ-երկու-երեք և հարսանի՛ք»: Իսկ ես որտեղ եմ հապա: Իսկ Բեյլկան որտեղ է: Ա՛խ, ուզում էի մի երկու ասացվածք ասել, մի լավ դաղել, որ կյանքում ինձ երբեք չմոռանար: Բայց մյուս կողմից էլ մտածեցի՝ «քո ինչ բանն է, որ խառնվում ես: Մյուս աղջիկներիդ մոտ քո խոսքը շա՛տ բանի տեղ անցավ, երբ փորձեցիր նրանց խորհուրդ տալ: Խոսեցիր հա՛խոսեցիր յոթը փութ, ամբողջ գիտությունդ թափեցիր նրանց առաջ, ինչի՞ տեղ անցավ, ո՞վ մնաց էշացած: Տեվլեն»:

Կարճ ասած, թողնենք արքայորդուն այստեղ, ինչպես ձեր գրքերում գրում են, հիմի էլ ասենք արքայադստրից: Այսպես ուրեմն, կատարեցի նրանց խնդիրքը և գնացի Եզուպեց: «Բարիաջողո՛ւմ: Բարիաջողո՛ւմ: Ո՛նց եք, ո՛նց չեք: Գործերը ոնց են: Նստեցե՛ք»: «Շնորհակալ եմ, կարելի է և կանգնել», դե մյուս բոլոր ձևականություններն էլ իր կարգին, ինչպես սովորաբար ընդունված է:

Թե մեջ ընկնեմ ու հարցնեմ, «ի՞նչ գանազանի օրն այս լայլոց աուրց», այսինքն՝ ի՞նչ կնշանակի ձեր այս կանչելը, ինչո՞ւ եմ հանկարծ պետք եկել ձեզ, անհարմար է: Տեվլեն կնիկարմատ չէ՛, նա կարող է և համբերել: Այդ միջոցին ներս է գալիս մեծ, սպիտակ ձեռնոցներով մի ինչ-որ մարդ և հայտարարում, որ ճաշը պատրաստ է: Վեր ենք կենում երեքով և գնում մի ուրիշ սենյակ ամբողջովին կաղնու փայտից. սեղանը՝ կաղնուց, աթոռները՝ կաղնուց, պատերը՝ կաղնուց, առաստաղը՝ կաղնուց և այդ ամենը չարխաքաշ, զարդարած, ներկոտած... Իսկ սեղանին՝ արքայական շքեղություն: Թեյ, և սուրճ, և շոկոլադ, և թխվածք, և կոնյակ, աղով բռնած ամենալավ բաներից, տեսակ-տեսակ ճաշեր, մրգեր, և բանջարեղեն, և այնպիսի բաներ, որ իմ Բեյլկան, ամաչում եմ խոստովանել, իր հոր տանը ոչ թե կերել, այլ իսկի չէր էլ տեսել: Լցնում են իմ գավաթը, մի գավաթը ևս, իսկ ես խմում եմ, նայում նրան՝ իմ Բեյլկային և մտածում՝ «Տեվլեի աղջիկը հասավ նպատակին, ինչպես ասված է. «Ի՛ հողոյ բարձրացուցանէ գաղթատն», թե որ աստված աղքատին օգնեց, նրան անգամ ճանաչել էլ չես կարողանա: Դա Բեյլկան էր, բայց թվում էր, թե Բեյլկան չէր»: Ու միտքս եմ բերում նախկին Բեյլկային ու համեմատում սրա հետ և վիրավորանք ու ցավ եմ զգում, կարծես թե մի սխալմունք եմ գործել, հիմարություն արել, վնասով գործարք կնքել,

գործընկերակ, իմ աշխատավոր ձիուն վերցրել ու փոխել եմ մի քուռակի հետ, որից չգիտես ինչ կստացվի, նժույգ թե մի քոթունկ:

«Ա՛խ Բեյլկա, Բեյլկա, մտածում եմ, այս ի՞նչ կատարվեց քեզ հետ: Հիշո՞ւմ ես, թե ինչպես էիր երբեմն երեկոները նստում ծխացող ճրագի տակ ու երգ ասելով կար անում, աչքս չեմ թարթում, մեկ էլ արդեն երկու կովը կթել ես ու թևքերդ քշտած ինձ համար կաթնապուր ես եփում կամ սխեռով գալուշկա, կամ պանրով կարկանդակ, կամ խաշխաշով ուշկի և ասում՝ «Հայրի՛կ, արի ձեռքերդ լվա»: Չէ՞ որ այդ ամեն տեսակի երգից էլ քաղցր էր»: Իսկ հիմա նստած է նա իր Պեդոցուրի հետ սեղանի շուրջը, որպես մի թագուհի, երկու հոգի մատուցում են՝ ամանեղենը չխկչխկացնելով... Իսկ Բեյլկան: Գոնե մի խոսք էլ է ասի: Բայց նա, Պեդոցուրը, այսինքն, երկու հոգու չափ վրա է տալիս, բերանը չի փակվում: Կյանքումս առաջին անգամն էի տեսնում, մի մարդ, որ այդքան շատախոսեր, այդքան գլխից դուրս տար, աստված գիտի ինչ, և հետոն էլ անվերջ հատ-հատ ծիծաղեր: Մեզ մոտ դրան ասում են՝ ինքը ասեց, ինքը ծիծաղեց... Բացի մեր երեքից, սեղանի շուրջը նստած է նաև թշերը ծայրից ծայր կարմիր մի ինչ-որ արարած: Չեմ իմանում ով է, բայց երևում է լավ ուտող է, որովհետև ամբողջ ընթացքում, ինչ Պեդոցուրը խոսում էր ու ծիծաղում, սա թշերը ուռցրել էր, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Երեքեան զոր ուտին...» — ուտում էր երեքի փոխարեն... Սա ուտում էր, իսկ Պեդոցուրը չախչախի նման վրա տալիս և այն էլ այնպիսի ցանցառություններ, որ սիրտդ խառնում էր. կապալ, գավառական վարչություն, կալվածքի պատկանելիություն, արքունի գանձատուն, Ճապոնիա... Այս ամենից ինձ բոլորից շատ հետաքրքրեց միայն Ճապոնիան, որովհետև ես Ճապոնիայի հետ որոշ հաշիվներ ունեի: Պատերազմի ժամանակ, գիտեք անկասկած, որ ձիերը շատ հարգի էին, օրը ցերեկով ճրագով էին փնտրում... Ինձ վրա նույնպես հարձակվեցին, վերցրին ձիս, որ տանեն. չափեցին արշինով, մի քանի անգամ ետ ու առաջ քշեցին և սպիտակ տոմս տվեցին: Ես հենց այսպես էլ ասացի նրանց, ասացի՝ «Ես նախապես գիտեի, որ իզուր եք չարչարվում, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Մարգարե գիտե՛ գիտե՛ զհոգի հօտի իւրոյ» — Տեվլեի ձիով պատերազմ չես գնա...»: Բայց, ներեցեք ինձ, պանե Շոլում-Ալեյխեմ, մեկը մյուսին խառնեցի, այսպես ճամփիցն էլ կշեղվենք: Եկեք ավելի լավ է, ինչպես դուք եք ասում, «վերադառնանք գործին», շարունակենք մեր պատմությունը:

Մի խոսքով, մի լավ խմեցինք, կերանք, ոնց որ պետքն էր, իսկ երբ վեր կացանք սեղանից, նա՝ Պեդոցուրը մտավ թևս և ինձ տարավ իր առանձնասենյակը, որ թագավորին վայել կահավորանք ուներ — թվանքներն ու սրերը պատերից կախ, սեղանին՝ թնդանոթներ... նա ինձ նստեցրեց մի հրաշք օթոցի, փափուկ, ոնց որ յուր, ոսկե տուփից հանեց երկու հատ երկար, հաստ, հոտավետ սիգարեթ — մեկը՝ իրեն, մեկը՝ ինձ, ծուխը ներս քաշեց, նստեց դիմացս, ոտները մեկնեց ու ասաց.

— Գիտե՞ք ինչի համար եմ ձեզ կանչել:

— «Ըհը,— մտածում եմ,— երևի ուզում է հենց էն մասին խոսել»: Ես ինձ չհասկացողի տեղ եմ դնում և ասում.

— «...Մատիցս հո՞տ եմ քաշել, ինչ է»:— Որտեղի՞ց պիտի իմանամ:

— Ես,— պատասխանում է նա,— ցանկանում եմ խոսել ձեզ հետ հենց ձեր մասին:

«Կա-չկա ծառայության մասին է», մտածում եմ ես ու պատասխանում.

— Դե, ինչ կա որ, եթե մի որևէ լավ բան եք ասելու խնդրեմ, կլսեմ:

Այդ ժամանակ, սիգարեթը հանում է բերանից և դիմում ինձ այսպիսի խոսքերով.

— Դուք,— ասում է,— հիմար մարդ չեք և չեք վիրավորվի, եթե ես ձեզ հետ անկեղծ խոսեմ: Դուք պետք է իմանաք, որ ես խոշոր գործեր եմ վարում: Իսկ երբ վարում ես այդպիսի խոշոր գործեր...

«Այո,— մտածում եմ ես:— Հենց ինձ ունի աչքի առաջ»: Խոսքը կտրում եմ ու ասում.

— Մեր թալմուդում ասված է. «Որչափ բազում են ինչք, այնչափ բազում են հոգք»: Գիտե՞ք, թե դա ինչպես պետք է հասկանալ...

Նա ինձ պատասխանում է բավականին անկեղծորեն.

— Ես ձեզ մաքուր խղճով կարող եմ ասել, որ երբեք թալմուդ չեմ ուսումնասիրել և նույնիսկ չգիտեմ էլ, թե ինչ տեսակ է:

Եվ ծիծաղեց հատ-հատ: Դե, ինչ կասեք դուք սրան: Կարելի էր կարծել, որ եթե աստված քեզ պատժել է և դու մնացել ես տգետ, անուս, դե, զոնե ոչ ոքի մի ասի: Բա՛ն է գտել պարծենալու:

— Ես այլ կերպ էլ չէի կարծում,— ասում եմ:— Գիտեմ, որ դուք այդ տեսակ բաների հետ գործ չունեք... Բայց լսենք, թե հետո ինչ եք ասելու...

— Հետո,— ասում է նա,— ես ցանկանում եմ ձեզ ասել, որ իմ գործերին, իմ կոչմանը և դրությանը սազական չէ, որ ձեզ անվանում են «Կաթնավաճառ Տեվյե»: Մի՛ մոռացեք, որ ես անձնապես ծանոթ եմ քաղաքագլխի հետ, որ այստեղ մեկ էլ տեսար կարող է վրա հասնել, խոսքի օրինակ ինքը՝ Բրոդսկին, կամ Պոլյակովը³⁴

և միգուցե հենց Ռոտշիլդը: Սատանան ինչե՛ր ասես որ չի անի...

Այդ ինձ ասում է նա՝ Պեդրոցուրը այսինքն, իսկ ես նստած նայում եմ նրա պլպլան ճաղատին և մտածում՝ «Հատ հավանական է, որ դու անձնապես ծանոթ լինես քաղաքագլխի հետ, որ Ռոտշիլդը կարող է քո տունը գալ, բայց դու խոսում ես ինչպես քոսոտ շունը»: Եվ դիմում եմ նրան ոչ առանց վիրավորանքի:

— Բա ո՞նց կանեմ, եթե Ռոտշիլդը իսկապես, մեկ էլ տեսար վրա հասնի:

Դուք կարծում եք հասկացա՞վ իմ մասիսարա գցելը: Իսկի՛, «Ո՛չ էլոնց, ոչ բելոնց»: Գլուխն էլ չի մտնում:

— Ես կցանկանայի,— ասում է նա,— որ դուք թողնեիք ձեր այդ կաթնամթերքի առևտուրը և ուրիշ բանով զբաղվեիք:

— Իսկ ինչով:

— Ինչ ցանկանում եք,— պատասխանում է նա:— Աշխարհում քի՞չ փեշակ կա: Ես ձեզ փողով կօգնեի, որքան որ պահանջվեր, միայն թե դուք այլևս կաթնավաճառ Տեվյե չլինեիք: Կամ... սպասեցեք, գիտե՞ք ինչ: Միգուցե դուք բոլորովին — մեկ-երկու-երեք — հո՛ւ պ և մեկնեիք Ամերիկա: Հը՞:

Ասում է եղպես, սիգարը առնում ատամների մեջ և նայում ուղիղ աչքերիս, իսկ ճաղատը պսպղում է... Դե, ինչ կարելի է պատասխանել մի էդ տեսակ անտաշին: Սկզբում մտածեցի. «Ի՞նչ ես նստել,

³⁴ Կապիտալիստ, երկաթուղիների շինարարության կապալառու:

Տեվյե, արձանի նման: Վե՛ր կաց, դուռը շրխկացրու և գնա առանց մի խոսք ասելու, առանց մնաս բարև անելու», այնքան որ հոգուս էր հասել: Ա՛յ թե ինչի է ընդունակ կապալառուն: Ի՛նչ ստորություն: Սա ի՞նչ բան է, դու կարգադրում ես ինձ թողնել ազնիվ և պատվավոր աշխատանքս և գնալ Ամե՛րիկա: Հապա ինչպե՛ս, նրա տունը կարող է շնորհ բերել Ռոտշիլդը, և այդ առթիվ կաթնավաճառ Տեվյեն պարտավոր է փախչել աստված գիտի թե ուր»:

Ներսս կաթսայի պես եռում է. նախքան էդ էլ մի քիչ բարկացած էի և այժմ զայրույթս գալիս է նրա վրա, Բեյլկայի: «Ի՞նչ ես նստել իշխանուհու նման՝ հարյուրավոր ժամացույցների ու հազարավոր հայելիների մեջ, երբ քո հորը քշում են շարքի միջով՝ շիկացրած ածուխների վրայով. «Թող ինձ այնքան ուրախություն լինի, որքան որ լավ վարվեց քո քույրը՝ Գողլը. դե, իհարկե, ինչ որ ճիշտ է, ճիշտ է, նա չունի այդպիսի տուն և այդպիսի զիզի-պիզիներ, ինչպես դու, բայց նա ունի այնպիսի ամուսին, ինչպիսին Պերչիկն է... Նա մի մարդ է, որ իր մասին չի մտածում, ամբողջ աշխարհի մասին է մտածում... Նա գլուխ ունի ուսերի վրա և ոչ թե քեզ նման մի մեյմուն է պլպլան ճաղատով... Իսկ այդ Պերչիկի լեզուն զուտ ոսկի է, նրան մի ասացվածք ես ասում, նա եռակի է վերադարձնում: Հալա սպասիր, ա՛յ կապալառու, ես քեզ հրես մի այնպիսի ասացվածք կասեմ, որ աչքերդ կմթնեն»:

— Այն, որ թալմուդը ձեզ համար յոթը կնիքով փակված գիրք է, դա դեռ ոչինչ. երբ մարդ ապրում է Եգուպեցում, կոչվում է Պեդոցուր և զբաղվում է կապալառությամբ, ապա թալմուդը կարող է հանգիստ ընկած մնալ ձեղնահարկում: Բայց հասարակ առակը չէ՞ որ տրեխավոր գեղջուկն էլ է հասկանում: Դուք հավանաբար կզիտենաք, թե մեր սուրբ գրքում ինչ է ասված Լավան Արամեացու մասին. «Խոզի պոչից գդակ չես կարի»:

Իսկ նա նայում է ինձ ինչպես ոչխարը՝ անծանոթ դռանը և հարցնում.

— Դա ի՞նչ կնշանակի:

— Այն, ինչ ասացի:

— Դա, այսպես ասած, ո՞ւմ է վերաբերում:

— Վերաբերում է այն բանին, որ դուք առաջարկում եք ինձ գնալ Ամերիկա:

Նա հատ-հատ ծիծաղեց և ասաց.

— Ամերիկա չէ՞ք ցանկանում: Այդ ժամանակ՝ միգուցե Պաղեստին³⁵: Բոլոր ծերացած հրեաները գնում են Պաղեստին...

Ասաց-չասաց, կարծես գլխիս մեջ մեխվեց: «Հապա սպասիր, միգուցե դա այնքան էլ հիմար միտք չէ, Տեվյե, հը՞, ինչ ես կարծում: Իսկապես... Մի՞թե հայրական այդ ուրախությունները, որպիսիք տվել է աստված, ավելի արժեն, քան Պաղեստինը: Հիմար: Ինչի՞ վրա ես հույսդ դնում և ո՞ւմ ես թողնում դու այստեղ, քո Գոլդան, աստված հոգին լուսավորի, թեկուզ ինչ էլ որ անես, արդեն գերեզմանումն է, և դու ինքդ էլ, թող աստված ների, ինչքան տանջվեցիր, բավական է: Մինչև ե՞րբ պիտի քարշ գաս աշխարհի երեսին»:

Եվ բացի դրանից, իմացած եղեք, պանե Շոլում-Ալեյխեմ, որ սիրտս վաղուց էր քաշում և շատ էի ուզում այցի գնալ «արցունքի պարիսպներին», մեր նախնիների դամբարաններին, նախամայրն

³⁵ Աստվածապաշտ հրեաների մոտ պատվավոր, աստվածահաճո առաքելություն էր համարվում գնալ Պաղեստին, մեռնել և թաղվել «սուրբ հողում», ուստի միայնակ ծերունիները գնում էին այնտեղ մեռնելու:

Ռաքելի գերեզմանին, աչքովս տեսնելու Հորդանանը, Սինա լեռը, Սև ծովը, Պիտոմն ու Ռամզեսը³⁶ և մյուս սուրբ վայրերը... Եվ մտքերս թռչում են հեռու, քանանացիների օրհնյալ հողը «Որ բղիժ գկաթն և զմեղր...»:

Բայց Պեղոցուրը ընդհատում է իմ մտքերը.

— Դե՛: Ինչ կա այդտեղ երկար ու բարակ մտածելու: Մեկ-երկու-երեք...

— Ձեզ մոտ,— ասում եմ ես,— ամեն ինչ «մեկ-երկու-երեք» է, ինչպես սուրբ գրքումն է ասված՝ «Ամենայն ինչ մեկ է, թեկուզև հաց, թեկուզև խզուզ...»: Իսկ ինձ համար դա, գիտե՞ք ինչ, այնքան էլ հեշտ չէ, որովհետև Պաղեստին գնալու համար փող է հարկավոր...

Ծիծաղեց նա իր կտկտան ծիծաղով, մոտեցավ սեղանին, բացեց դարակը, հանեց քսակը և տվեց ինձ, կարո՞ղ եք պատկերացնել, մի կարգին գումար, իսկ ես ինձ չստիպեցի, որ էլի խնդրեմ, փողերը հավաքեցի (ահա թե ինչ է փողի ուժը) և որքան կարող էի խոր խրեցի գրպանս: Ուզում եմ նրան գոնե մի երկու ասացվածք ասեմ այդ դեպքին վայել, բայց նա լսել անգամ չի ցանկանում:

— Այդքանը,— ասում է մինչև տեղ հասնելը հերիք է, դեռ մի բան էլ ավել է, իսկ երբ կհասնեք և փողի կարիք կունենաք, գրեցեք, և մեկ-երկու-երեք, իսկույն նեթ կուղարկեմ: Իսկ մի ավելորդ անգամ ձեզ հիշեցնել մեկնելու մասին, կարծում եմ կարիք չի լինի, չէ՞ որ դուք ազնիվ և խղճմտանքի տեր մարդ եք...

Այդ ինձ ասում էր նա, Պեղոցուրը և ծիծաղում իր կտկտան ծիծաղով, որից սիրտս շուտ էր գալիս: Իմ գլխում մի միտք ծագեց. «Արդյոք փողերը չչարտե՞մ նրա դնչին և չասե՞մ, որ Տեվյեին փողով չես առնի, և որ Տեվյեի հետ խղճմտանքից ու արդարությունից չեն խոսում»:

Բայց չէի հասցրել բերանս էլ բացել, որ նա զանգը տվեց, կանչեց Բեյլկային և ասաց.

— Գիտես ինչ, հոգյակս: Ախր հայրդ մեզ թողնում է. ծախում է ունեցած-չունեցածն ու մե՛կերկո՛ւ-երե՛ք — գնում է Պաղեստին:

«Երազ տեսի, բայց ոչ իմանամ... մտածում եմ ես: Բայց չէ՞ որ սա իսկությունն է, ոչ երազումն է եկել և ոչ հարթմնի երևացել...»: Նայում եմ Բեյլկային, իսկ նա գոնե նոթերն էլ կիտի, կանգնած է ոնց որ փայտացած, երեսին գույն չկա, նայում է մեկ ինձ, մեկ նրան, և ոչ մի խոսք: Նրան նայելով, ես էլ եմ լռում, լռում ենք երկուսով, միգուցե հենց այնպես, ինչպես Սողոմոնն է ասում. «Լեզու իմ կպաւ ի քիմս իմ». համրացել էինք: Իմ գլուխը պտտվում է, քներակներս պայթում, ինչպես ծխահարությունից: «Ինչի՞ց է սա, մտածում եմ: Երևի սիգարեթից, որ ինձ հյուրասիրեց»: Բայց չէ՞ որ ինքը, Պեղոցուրն էլ է ծխում: Ծխում է ու խոսում, խոսում է, բերանը չի փակում, չնայած բզով ծակած աչքերը կաշում են, երևում է նինջը եկել է:

— Դուք,— ասում է նա,— այստեղից ճեպընթացով կգնաք մինչև Օդեսա, իսկ Օդեսայից՝ ծովով մինչև Յաֆֆա: Հիմա ծովով գնալու ամենալավ ժամանակն է, որովհետև եթե ուշը մնաք, կսկսվեն քամիները, ձյունը, փոթորիկները և... և...:

Նրա լեզուն կապ է ընկնում, այն մարդու նման, որի քունը տանում է, բայց անվերջ լեզվին է տալիս:

— Իսկ երբ արդեն պատրաստ կլինեք մեկնելու, մեզ իմաց արեք, երկուսով էլ կգանք կայարան մնաս բարով ասելու, քանի որ օրերից մի օր դեռ էլի պիտի հանդիպենք:

³⁶ Հին եգիպտական քաղաքներ, որ հիշվում են աստվածաշնչում:

Այդ ասելիս, ներեցեք, նա քաղցր հորանջեց և Բեյլկային ասաց.

— Հոգյակս, դու մի քիչ նստիր, իսկ ես գնամ պառկեմ:

«Դու, մտածեցի ես, երբեք դրանից ավելի խելացի բան չես ասել, ազնիվ խոսք: Հիմա սիրտս կթեթևացնեմ»: Եվ ուզեցի ամեն ինչ ասել նրան՝ Բեյլկային այսինքն, այն ամենը, ինչ սրտումս հավաքվել էր այդ ամբողջ օրը, բայց այդտեղ որ չի ընկնում վզովս ու հեկեկում... Իմ աղջիկները, ի՛նչ ասեմ նրանց, բոլորն էլ հենց այդպես են. դիմանում են, դիմանում, իրենց գոռոզ պահում, իսկ երբ հոգուն է հասնում, արցունք են թափում, ինչպես լացող ուռենին: Զորօրինակ, իմ ավագ դուստրը՝ Գողլը, քի՜չ մղկտաց վերջին րոպեին, նախքան մեկնելը, երբ գնում էր աքսոր, Պերչիկի մոտ, ցուրտ, սառնամանիք վայրեր: Բայց ի՞նչ համեմատություն: Սա ո՛ւր, նա ո՛ւր:

Ասեմ նաև մաքուր խղճով, որ ես, ինչպես դուք գիտեք, այն մարդկանցից չեմ, որոնց լացը քթի ծերին է: Իսկականից ես լաց եղել եմ միայն մի անգամ, երբ իմ Գողլան, աստված հոգին լուսավորի, պառկած էր հատակին: Մի անգամ էլ մի կուշտ լաց եղա, երբ Գողլը գնաց, իսկ ես մնացի կայարանում՝ շշմած կանգնած իմ յարույի հետ, և ինչ-որ մի անգամ էլ եմ ողբացել, ոնց որ ասում են... Իսկ ընդհանրապես ինչ-որ չեմ հիշում, որ նրանցից եղած լինեմ, որոնց լացը քթի ծերին է: Բայց երբ Բեյլկան լաց եղավ, սիրտս այնպես ճմլվեց, որ ինձ պահելու ուժ չունեցա և սիրտ էլ չարի, որ բարկանամ: Ինձ հետ շատ խոսել պետք չէ, ինձ Տեվյե կասեն: Ես իսկույն հասկացա նրա արցունքները: Նա չէր լալիս, նա պարզապես զոջում էր, որ հորը չէր լսել... Եվ փոխանակ ինչպես պետքն է կշտամբեի և հերսերս թափեի Պեդոցուրի գլխին, սկսեցի Բեյլկային մխիթարել և մեկը մյուսի հետևից օրինակներ բերել, ինչպես Տեվյեն կարողանում է: Նա լսեց ինձ և ասաց.

— Ո՛չ, հայրիկ, դրա համար չեմ լալիս: Ես ոչ ոքի հանդեպ որևէ դժգոհություն չունեմ: Բայց այն, որ դու հեռանում ես իմ պատճառով, և ես ոչնչով չեմ կարող քեզ օգնել, այ դա է ինձ կրակի նման փոթորթում:

— Դե թո՛ղ,— պատասխանում եմ:— Դու երեխու պես ես մտածում: Մոռացե՛լ ես, որ մենք ունենք մեծ աստված և որ հորդ խելքը դեռևս գլուխն է: Կարծում ես քո հոր համար մե՞ծ բան է Պաղեստին գնալն ու վերադառնալը, ինչպես սուրբ գրքումն է ասված. «Երթային և վերստին հանգստանային, հանգստանային և վերստին երթային». կգնամ էլ, կվերադառնամ էլ...

Ասում եմ ես էդպես և ինքս ինձ մտածում. «Ստում ես, Տեվյե: Եթե բան է, գնացիր, այլևս՝ վերջ: Տեվյեն այլևս չկա՛:

Եվ նա կարծես միտքս գուշակելով, ասում է.

— Չէ՛, հայրիկ, այդպես հանգստացնում են փոքր երեխային: Մի տիկնիկ են տալիս, մի խաղալիք, հեքիաթ են ասում սպիտակ այծիկի մասին... Եթե պետք է հեքիաթ ասել, ապա ես պիտի ասեմ քեզ և ոչ թե դու ինձ: Միայն թե այդ հեքիաթը, հայրիկ, ավելի շուտ տխուր է, քան հետաքրքիր:

Այդպես է ասում նա՝ Բեյլկան այսինքն: Տեվյեի աղջիկները անտեղի շատախոսել չգիտեն: Եվ մի հեքիաթ պատմեց ինձ՝ «Հազար ու մեկ գիշերներից», այն մասին, թե ինչպես էր այդ Պեդոցուրը սեփական խելքով դուրս պրծել ցեխի միջից, ինչպես ասում են բոշայից դարձել փաշա, հասել բարձր դրության, իսկ հիմա էլ ձգտում է այն բանին, որպեսզի Բրոդսկին ելումուտ ունենա իր տունը և դրա համար հազարներ է, որ աջ ու ձախ շարտում է, մեծ նվիրատվություններ է կատարում, բայց այնքանով, որքանով որ միայն փողը բավական չէ, դրա հետ միաժամանակ պետք է ունենալ և տոհմաբանություն, ապա Պեդոցուրը կաշվից դուրս է գալիս, որպեսզի ապացուցի, որ նա ինչ-որ

պատի ծակից դուրս եկածներից չէ, այլ ծագում է Պեդոցուրների նշանավոր տոհմից, որ հայրը եղել է խոշոր կապալառու...

— Չնայած հրաշալի գիտե,— ասում է Բեյլկան,— որ ինձ հայտնի է, թե ով է եղել նրա հայրը. պարզապես հարսանիքներում նվագող: Հետո էլ բոլորին պատմում է, որ իր կնոջ հայրը միլիոնատեր է եղել:

— Նա այդ ո՞ւմ նկատի ունի,— ասում եմ ես:— Ի՞նչ: Եթե տերը ինձ սահմանել է, որ ես երբևէ ունենամ միլիոններ, ապա այնպես հաշվենք, որ արդեն այդ պատիժը կրել եմ:

— Բայց դու գիտե՞ս, հայրիկ,— ասում է Բեյլկան,— թե ինչպես է դեմքս կրակվում, երբ նա ինձ ներկայացնում է իր ծանոթներին և սկսում խոսել իմ հոր, իմ քեռիների և իմ ամբողջ տոհմի նշանավոր լինելու մասին: Այնպիսի՝ բաներ է փչում, որ ոչ ոք երագումն անգամ չի տեսել: Իսկ ինձ մնում է միայն լսել ու լռել, որովհետև այդ հարցում նա շատ ինքնասաճն է...

— Ըստ քեզ,— պատասխանում եմ,— ինքնասածություն է, ըստ մեզ, պարզապես ստորություն և այլանդակություն:

— Ո՛չ, հայրիկ,— պատասխանում է նա,— դու նրան չգիտես: Նա բնավ այդպես անտանելի չէ, ինչպես կարծում ես: Բայց նա վայրկյանի մարդ է: Նա ունի կարեկից սիրտ և շռայլ ձեռք: Հերիք է նրա մոտ ընկնես տրամադրության լավ ժամանակը և գուրջը շարժես, որ հոգին էլ չխնայի, իսկ ինձ համար, որ ասելու հարկ չկա, երկնքից աստղեր ցած կբերի: Դու կարծում ես, ես նրա վրա իշխանություն չունե՞մ: Այ հենց վերջերս ես հասա այն բանին, որ խոստացավ հեռավոր նահանգից ազատել Գողլին և նրա ամուսնուն: Նա երդվեց, որ դրա համար փող չի խնայի, բայց մի պայմանով, որ նրանք այնտեղից գնան Ճապոնիա:

— Ինչո՞ւ Ճապոնիա,— հարցնում եմ,— ինչու ոչ Հնդկաստան կամ, գործրինակ, Պադան-Արամ³⁷, Սավա³⁸

թագուհու մոտ:

— Որովհետև Ճապոնիայում,— պատասխանում է Գողլը,— նա գործեր ունի: Ամբողջ աշխարհով մեկ գործեր ունի: Թե ինչ են նստում միայն մեկ օրվա հեռագրերը, կես տարի հերիք կաներ մեզ: Բայց ինձ ի՞նչ օգուտ դրանից, երբ ես՝ ես չեմ:

— Դուրս է գալիս,— ասում եմ,— ինչպես մեր սուրբ գրքումն է գրված. «Եթե ոչ ես, ապա ո՞ւր պաշտպանիցե՞ղիս»...

Ասում եմ էսպես, կատակում, ասացվածքներ ասելով խոսքը կտուրը գցում, բայց սիրտս կտոր-կտոր է լինում, տեսնելով, թե ինչպես է զավակս տանջվում «Ի մեջ հարստության և պատույ»:

— Քո քույրը, Գողլը,— ասում եմ ես,— այդպես չէր վարվի:

— Ես քեզ արդեն ասել եմ,— պատասխանում է նա,— որ Գողլի հետ ինձ չհամեմատես: Գողլը ապրել է իր ժամանակում, իսկ Բեյլկան էլ ապրում է իր ժամանակում... Իսկ Գողլի ժամանակից մինչև Բեյլկայի ժամանակը այնքան հեռու է, ինչպես այստեղից՝ Ճապոնիա...

Հասկանո՞ւմ եք, ինչ են նշանակում այդ տարօրինակ խոսքերը:

³⁷ Վայր, որ հիշատակվում է աստվածաշնչում:

³⁸ Սավա — լեգենդար կերպար աստվածաշնչից:

Բայց տեսնում եմ, որ դուք շտապում եք: Մի երկու վայրկյան էլ, և վերջ բոլոր պատմություններին: Երջանիկ աղջկաս դարդերով ու ցավերով մինչև կոկորդս կշտանալով, ջարդված ու փշրված դուրս եկա այնտեղից: Գետին շարտեցի սիգարեթը, որից գլխացավ էի կպել և դիմում եմ դրան, այսինքն՝ սիգարեթին:

— Ա՛յ չքվես, գետնի տակն անցնես հա՛, գրողի փայ դառնաս:

— Այդ ո՞ւմ հետ եք, ուրք Տեվյե,— լսում եմ ետևիցս:

Շուտ եմ գալիս, տեսնեմ նա ինքն է, խնամի Էֆրաիմը, ա՛յ ոչ ու փուչ լինի հա՛:

— Բարի գալուստ,— ասում եմ:— Ի՞նչ բան ունես էստեղ:

— Հապա դո՞ւ ինչ ես անում:

— Զավակներիս հյուր էի գնացել:

— Ո՞նց են ապրում:

— Ոնց պիտի ապրեն: Թող աստված ինձ ու քեզ դրանից պակաս չտա:

— Որքանով որ հասկանում եմ,— պատասխանում է նա:— Դուք իմ ապրանքից շատ գոհ եք:

— Էն էլ ո՞նց: Թող աստված դրա հարյուրապատիկը քեզ տա:

— Շնորհակալ եմ,— ասում է,— բարի խոսքերիդ համար: Միգուցե դրանց հետո էլ մի որևէ նվեր կտա՛յիր:

— Իսկ մի՞թե,— հարցնում եմ,— դուք չեք ստացել, ինչ ձեզ հասնում է նշանադրության համար:

— Թող նա, ինքը ունենա այդքան, նա՛, ձեր Պեդոցուրը,— պատասխանում է նա:

— Իսկ ինչումն է բանը: Քի՞չ էր:

— Փեշքեշ ձիու ատամներին չեն նայում:

— Ախր որքա՞ն:

— Որքա՞ն... Արդեն մի գրոշ էլ չի մնացել:

— Ո՞ւր կորան:

— Աղջկաս,— ասում է,— մարդու տվեցի:

— Շնորհավո՛ր լինի,— ասում եմ,— աստված նրան երջանկություն, ուրախություն տա:

— Լա՛վ ուրախություն է,— պատասխանում է նա,— մի խաբեբա փեսա հանդիպեց: Ծեծեց, տանջեց աղջկաս, հետո էլ փողերը հավաքեց, փախավ Ամերիկա:

— Իսկ ինչու,— ասում եմ ես,— թույլ տվեցիք, որ էդքան հեռու փախչի:

— Ի՞նչ կարող էի անել:

— Ադ,— ասում եմ,— ցանեիք պոչի տակ...

— Ձեր սրտին,— ասում է,— ռեբ Տեվյե, վարդեր են բացվել:

— Թող գոնե դրա կեսն էլ ձեր սրտին բացվի...

— Ո՛նց թե,— զարմացավ նա:— Իսկ ես ենթադրում էի, որ դուք հարուստ եք... Այդ դեպքում մի պտղունց բռնոթի վերցրեք...

Վերցրի մի պտղունց բռնոթին և նրանից բաժանվեցի:

Տուն վերադարձա, սկսեցի ունեցած-չունեցածս ծախծխել, այն ամենը, ինչ ձեռք էի բերել այդքան տարիների ընթացքում: Համաձայնվեցեք, որ գործը այնպես արագ չի արվում, ինչպես որ հեքիաթն է պատմվում: Ամեն մի խեցի, ամեն մի չնչին բան առողջությանս գնով է եղել: Մի իր ինձ հիշեցնում էր Գոլդային, աստված հոգին լուսավորի, մյուսը՝ երեխեքին... Բայց ոչ մի բան հոգիս այնքան չխտովեց, որքան ձիւ: Նրա առջև ես ինձ մեղավոր էի զգում... Ապա մտածեցեք, այսքան տարի միասին էինք դառը դատել, միասին տառապել, դարդ ու ցավ քաշել և հանկարծ վերցրի ու ծախեցի: Ծախեցի նրան մի ջրկիրի, քանի որ կառապաններից խեղ չէր տեսնի, բացի ծաղր ու ծիծաղից: Գնում եմ նրանց մոտ ձիւ ծախելու, իսկ նրանք թե.

— Աստված սիրես, ռեբ Տեվյե, բա դա ձի՞ է:

— Հապա ինչ է, ձեր ասելով՝ եթե ձի չէ: Մոմակա՞լ է:

— Ո՛չ,— պատասխանում են,— մոմակալ չէ, ճգնավոր է:

— Ինչո՞ւ ճգնավոր:

— Դե որովհետև ձիդ համարյա թե քառասուն տարեկանէ, ատամի նշույլ չկա, շրթունքները սևացել են, կողերն էլ էնպես են դողում, ինչպես կնիկարմատը՝ սառնամանիքին: Դուր գալի՞ս է ձեզ կառապանային էս ձևի խոսակցությունը: Երդում կուտեմ, որ խեղճ ձիւ հասկանում էր նրանց ամեն մի բառը, ինչպես սուրբ գրքումն է ասված՝ «եզն ճանաչէ զիր գնողն»։ անասունը զգում է, որ ուր որ է իրեն պիտի ծախեն... Իսկ որպես ապացույց կասեմ, որ երբ ես ու ջրկիրը միմյանց ձեռք խփեցինք և ես նրան ասացի. «Հաջողություն եմ ցանկանում» ձին հանկարծ ինձ դարձրեց իր դուրեկան դունչը և այնպե՛ս նայեց, կարծես ուզում էր ասել. «Ահա իմ վարձատրությունը աշխատանքիս դիմաց, այսպե՛ս ես վարձահատույց լինում ծառայությանս համար...» Մի վերջին անգամ նայեցի իմ ձիուն, երբ ջրկիրը վերցրեց սանձը և սկսեց նրան խելք ու խրատ սովորեցնել, ու մնացի մենակ կանգնած ու միտք արեցի. «տե՛ր իմ երկնային թագավոր: Ինչպիսի՜ իմաստությամբ ես կառավարում դու քո աշխարհը: Ահա դու ստեղծել ես Տեվյեին և ստեղծել ես, զորօրինակ, ձի, և երկուսն էլ աշխարհում նույն ճակատագիրն ունեն... Միայն թե մարդուս լեզու է տրված, նա կարող է սիրտը բացել, իսկ ձին, ձին ի՞նչ կարող է անել: Անբարբառ արարած, անլեզու հայվան... Ինչպես դուք եք ասում. «Ահա առաւելութիւն մարդոյ ընդ անասնոյ...»³⁹:

Դուք զարմանում եք, պանե Շուրմ-Ալեյխեմ, որ աչքերումս արցունքներ երևացին, և միգուցե մտածում եք, Տեվյեն, երևում է, ձիուն կարոտել է, բայց ինչու ձիուն, ա՛յ իմ խենթ գլուխ: Ամենին էլ կարոտում եմ, ամեն ինչին էլ ափսոսում եմ: Պիտի կարոտեմ և՛ ձիուս, և՛ գյուղին, և՛ տանուտերին, և՛ ուրյադնիկին, և՛ Բոյբերիկի ամառանոցավորներին, և՛ Եգուպեցի հարուստներին, և՛ նույնիսկ խնամի Էֆրայիմին, ա՛յ չոռն ու ցավը տանի նրան հա՛... Թեև մյուս կողմից էլ եթե միտք անելու

³⁹ Տեվյեն չի վերջացնում աստվածաշնչի այս տողը, որպեսզի ընդգծի, թե անասունը (իր ձին) տարբերվում է մարդուց միայն նրանով, որ խոսել չի կարող:

լինենք, ախր նա էլ ոտից գլուխ մի չփլախի մեկն է, որ ապրուստի ետևից ընկած, ուզում է փող աշխատել:

Տա՛ աստված տեղ հասնեն բարեհաջող, չնայած դեռ չգիտեմ, թե ինչ պիտի անեմ այնտեղ, բայց մի բան պարզ է աստծու օրվա նման, որ առաջին պարտքս նախամայր Ռաքելի գերեզմանին այցելելու կլինի: Կաղոթեմ զավակներին համար, որոնց հավանաբար այլևս երբեք չեմ տեսնի, կաղոթեմ և խնամի էֆրամի համար, կհիշեմ ձեզ և բոլոր հրեաներին: Խոստանում եմ, ահա ձեզ իմ ձեռքը: Ո՛ղջ և առողջ եղեք, բարի՛ ճանապարհ, բարև արեք բոլորին առանձին առանձին:

1908

ԵԼՔ

Խորին և ջերմագին ողջույն ձեզ, պանե Շոլոմ-Ալեյխեմ: Խաղաղություն՝ ան ձեզ, ինչպես և ձեր զավակներին: Վաղուց է ինչ ցանկանում եմ ձեզ տեսնել: Մոտոս բավականին «ապրանք» է հավաքվել՝ ասելիք շատ ունեմ: Ամբողջ ժամանակ հարցուփորձ էի անում: «Ո՛ւր գտանի» — ինչու չեք երևում: Ինձ պատասխանում են, թե շրջում եք ինչ-որ տեղ աշխարհում, զանազան հեռավոր երկրներ, ինչպես որ «Եսթերի» ասքումն է ասված. «Հարիւր քսան և եւթն կուսակալացն...»: Բայց թե ինչ-որ տարօրինակ եք նայում ինձ... Միգուցե կասկածի մեջ եք ընկնում — նա՞ է, թե նա չէ: Նա է, պանե Շոլոմ-Ալեյխեմ, նա է որ կա: Ձեր վաղեմի բարեկամը, կաթնավաճառ Տեվյեն, հենց նույն Տեվյեն, բայց այլևս ոչ թե կաթնավաճառ, այլ պարզապես մարդ, այնպիսի մարդ, ինչպիսիք բոլորն են, մի ծերուկ, չնայած տարիքով այնքան էլ մեծ չէ, ինչպես զատկական ասքում է ասված. «Ահա ես եւթնևտասան ամայ եմ» — յոթանասունս դեռ հեռու է: Ինչ է, մագերս ճերմակե՞լ են: Հավատացե՛ք, ուրախությունից չէ, սիրելի բարեկամս... Քո ցավն ու դարդը հերիք չէ, դեռ մեր ժողովրդի գլխից էլ փորձանքներն են անպակաս... Անտանելի ժամանակներ են: Մոռյալ տարիներ են մեզ համար: Բայց ես գիտեմ, թե հիմա ձեր մտքում ինչ է: Դուք ուրիշ բան եք մտածում: Երևի հիշեցիք, թե ինչպես մի անգամ եսն դուք մնաս բարև արեցինք, երբ ես պետք է գնայի Պաղեստին, իսկ հիմա, հավանաբար, մտածում եք, որ արդեն վերադարձել եմ, և սպասում եք, իհարկե, որ նորություններ ասեմ այնտեղից, ցանկանում եք թարմ ողջույն ստանալ նախամայր Ռաքելի դամբարանից, սրբազան քարայրից և մյուս սրբություններից: Ձեզ պետք է հանգստացնեմ: Եթե դուք ժամանակ ունեք և եթե կցանկանաք լսել, թե աշխարհումս ինչպիսի հրաշքներ են կատարվում, ուշադիր լսեցեք ինձ, այն ժամանակ ինքներդ էլ կասեք, որ մարդ ասածդ անբան անասուն է, որ մեծ է մեր աստված և որ նրա կամքովն է աշխարհը կառավարվում:

Հնգեմատյանի ո՞ր բաժինն են կարդում այժմ. «Եւ կոչեա՞ց»: Իսկ ինձ մոտ հերթը բոլորովին ուրիշ բաժնի է «Ելք»⁴⁰: «Ելի՛ր», ասացին ինձ: Կորսվի՛ր, Տեվյեն «քո երկրից, քո ծննդավայրից», գյուղից, ուր ծնվել ես ու ապրել ամբողջ կյանքդ, «Երկիրն այն, որ ցուցանեմ զքեզ» ուր աչքդ կտրի: Եվ այդ տողերը կարդացին ինձ այն ժամանակ, երբ Տեվյեն արդեն ծեր է և տկար և մենակ, ինչպես կարդում ենք աղոթքում՝ «մի թողնիր աւուր ծերութեանս իմոյ»:

Բայց ես առաջ վազեցի և քիչ մնաց մոռանամ, որ դեռ չեմ հասել պատմության սկիզբը, չե՞ որ դեռ ձեզ չեմ պատմել Պաղեստինի մասին: Կցանկանա՞ք լսել, թանկագին բարեկամս, թե ինչ կա, ինչ չկա այնտեղ: Լավ երկիր է, խոսք չկա: «Երկիրն որ բոխե գկաթն և զմեղր», ասվում է մեր սուրբ գրքում:

⁴⁰ «Ելք» — Հնգեմատյանի բաժիններից մեկի վերնագիրը. այս բաժինը, որը կարդում են աշնանը, վերաբերում է հետևյալին. աստված ասաց հայր Աբրահամին՝ «Ելիր քո երկրից, քո ծննդավայրից»: «Ելիր» — Լեխ-լեխո» (հին հրեերեն) դարձել է հրեաների մոտ թափառումների և արտաքսման հոմանիշ:

Բայց վատն այն է, որ Պաղեստինը Պաղեստինումն է, իսկ ես, ինչպես տեսնում եք, դեռ այստեղ եմ... դա հավանաբար իմ մասին է ասված «Եսթերի» ասքում: «Վիճակեալ է ինձ կործանիլ, կործանիմ», ձախորդ ծնվել եմ, ձախորդ էլ կմեռնեմ: Թվում էր, թե արդեն մի ոտքով այնտեղ եմ, ավետյաց երկրում, այսինքն՝ մնացել է միայն տոմս առնել, նստել նավ և՝ հայդա: Բայց մարդը ենթադրում է, աստված՝ կարգադրում: Դուք հալա լավ լսեք: Հենց ճիշտ ժամանակ իմ մեծ փեսայի, Մուտլ Կամգուլի դերձակի խելքին հանկարծ փչեց, ձեզանից հեռու լինի, մեռնել: Ողջ առողջ պառկում է քնում և այլևս տեղից վեր չի կենում: Դե այսինքն, ճիշտ է, երբեք էլ իր ուժով ու թիկունքով աչքի չի ընկել... Եվ որտեղի՞ց առողջություն լինեք. արհեստավոր էր, գիշեր ու ցերեկ, ինչպես ասված է «Կամ իմաստություն էր վերձանում, կամ աստծուն աղոթք առաքում», ասեղը ձեռքին, ներող եղեք, փոխան էր շուլալում: Կարեց, կարեց, մինչև ճլերք ընկավ, սկսեց հազալ, դիսկաց, դիսկա՛ց, մինչև դրիսկաց: Էլ օգուտ չարեց, ոչ բժիշկը, ոչ հեքիմը, ոչ այծի կաթը, ոչ մեղրով շոկոլադը: Անմահն սողա էր, չնայած պարզամիտ էր, ուսյալ չէր, բայց հո ազնիվ էր, հետին մտքեր չունեք, իսկ աղջկաս էլ հոգու չափ սիրում էր: Իրեն զոհեց հանուն զավակների, էլ չեմ ասում, որ ինձ համար պատրաստ էր թեկուզ ջուրն ընկնել, թեկուզ կրակը:

Մի խոսքով, ինչպես աստվածաշնչում է ասված՝ «եւ մեռաւ Մովսէս» — մեռավ Մուտլը և ինձ բավականին մեծ բեռ թողեց: Այլևս Պաղեստինի մասին մտածողն ո՞վ էր: Տունս հենց Պաղեստին էր որ կար: Ինչպես կարող էի, ինքներդ դատեցեք, այրիացած աղջկաս որբացած երեխեքի հետ թողնել առանց մի կտոր հացի: Չնայած մյուս կողմից էլ ինչո՞վ կարող եմ աղջկանս օգնել: Ծակ ջվալը ո՞նց կարող ես լցնել: Մահացած ամուսնուն չեմ կարող հարություն տալ, ոչ էլ երեխաների հորը այն աշխարհից ետ բերել... Եվ հենց ինքս էլ, ցավոք սրտի, ոչ այլ ինչ եմ, քան մարդ, ուզում եմ ծերությանս օրերում ոսկորներս ուղղել, զգալ ինձ բանական արարած և ոչ անասուն: Մի քիչ աղմկեցի, այդքանն էլ բավական է: Ինչքան որ ապրեցի, հերիք է, ժամանակն է, որ այն աշխարհի մասին էլ մտածեմ: Մանավանդ որ տնտեսությանս արդեն վերջ եմ տվել, և ինչպես ձեզ հայտնի է, վաղուց է ինչ կովերը ռադ եմ արել, ծախծխել մինչև վերջինը, մնացել է միայն մի գույգ արջառ, որ եթե լավ խնամվեն, մի բան կստացվի — և հանկարծ, համեցե՛ք, օր ծերության դարձիր որբերի հայր, կաթնակեր խոխեքի խնամատար: Կարծում եք դա՞ է բոլորը: Մի՛ շտապեք: Ամենից գլխավորը առջևումն է, որովհետև եթե Տեվլեին մի որևէ փորձանք է պատահում, ապա ինքներդ էլ գիտեք, նրա պոչից մի ուրիշն էլ է ճամփա ընկնում: Երբ մեկ անգամ, զորօրինակ, դժբախտություն պատահեց, կովս սատկեց, նրա ետևից երկրորդը սատկեց... Աստված արդեն այդպես է ստեղծել իր աշխարհը, այդպես էլ պետք է լինի, ոչինչ չես փոխի:

Կարճ ասած, իմ կրտսեր աղջկա՝ Բեյլկայի պատմությունը դուք, իհարկե, հիշում եք: Հիշո՞ւմ եք, թե գլխին ու արևին ինչ երջանկություն թափվեց, թե ինչ լոքո բռնեց՝ թուշ եղավ Պեդոցուրին, թեթևսուլիկին, զինվորական կապալառուին, որը տոռուկ տոպրակներով եկավ Եգուպեց, ձուր ու պինդ եղավ աղջկաս, ուզեց գեղեցկուհի կնիկ ունենալ, մոտս ուղարկեց գրողի տարած խնամի Էֆրաիմին, քթով գետինը քանդեց, կաշվից դուրս եկավ, վերցրեց աղջկաս՝ ինչպես մորից ծնվել էր, ոտքից գլուխ նվերներ թափեց, ադամանդ ու ալմաստ... Կասեիր երջանկությունն էլ ո՞նց է լինում՝ պոչով ու պոզո՞վ, ճիշտ չէ՞: Բայց տես, որ այդ գովական երջանկությունը հօդս ցնդեց: Այն էլ ո՞նց ցնդեց: Տրաքոցո՞վ, տե՛ր աստված, դու փրկես ու ողորմաս: Որովհետև, եթե աստված ցանկանա, որ անիվը պտտվի հակառակ կողմը, ապա ամեն ինչ գրողի ծոցը կգնա՝ ինչպես աղոթքումն է ասեա գրած, «Ի հողոյ բարձրացուցանէ զաղբատն», բայց չես հասցնում շուրջդ նայել, որ դրա ետևից վրա է հասնում՝ «որ հայի ի բարձրանց յերկինս և յերկիր», — այսինքն թրմփ փոսի մեջ՝ լծափոկերով հանդերձ... Աստված սիրում է մարդկանց հետ խաղ անել, էն էլ ո՞նց: Քանի-քանի անգամ է այդպես խաղացել Տեվլեի հետ, «Մեկ ծագում է, մեկ մայր մտնում», մեկ վեր, մեկ վար: Այդպես եղավ և իմ կապալառուի՝ Պեդոցուրի հետ: Հիշում եք, իհարկե, Եգուպեցի նրա տունը՝ մի բոլուկ ծառաներով,

հայելիներով ու ժամացույցներով, զիզի-պիզիներով: Ֆի՛, ֆի՛, ֆի՛: Հիշո՞ւմ եք, ես կարծեմ ձեզ պատմել եմ, որ այն ժամանակ ես համոզում էի Բեյլկային ու խնդրում, որ Պեդրոցուրը առներ այդ տունը և անպայման կնոջ՝ Բեյլկայի անունով: Ինձ, իհարկե, չլսեցին, դե ես ինչ: Միթե հայրը մի որևէ բան հասկանում է: Հայրը ոչինչ էլ չի հասկանում: Դե, և ինչ եք կարծում, այդ ամենը ինչով վերջացավ: Թշնամիս այդ օրը չտեսնի: Կարծես քիչ էր, որ Պեդրոցուրը նախկին փայլից ու հարալ հրոցից հետո կոտր ընկավ և ծախծխեց բոլոր հայելիները, և բոլոր ժամացույցները, և կնոջ գոհարներն ու ավաստները, դրան էլ ավելացրած, խրվեց մի զզվելի պատմության մեջ, և պետք է ձդեր այնտեղ, որտեղ Մակարը հորթերին չի քշել, այսինքն՝ Ամերիկա: Այնտեղ են գնում, ախր, բոլոր փշրված սրտերը, նրանք էլ ահա այնտեղ գնացին: Սկզբում ոնց որ պետքն է, տանջվել էին, մի փոքր գումար որ ունեին, կերել էին, իսկ երբ ուտելու բան չէին ունեցել, խեղճերն ստիպված սկսել էին աշխատել: Աշխատել էին տաժանելի, ինչպես մեր պապերը՝ Եգիպտոսում⁴¹, երկուսով էլ, մարդն էլ, կինն էլ: Հիմա աղջիկս գրում է, որպես թե մի քիչ լավ են՝ մեքենայով գուլպա են գործում և «կյանք անում», դա այդպես է կոչվում նրանց մոտ՝ Ամերիկայում: Իսկ թե մեզ կհարցնես, դա նշանակում է՝ հաց ու կվասով յուր գնալ: Դեռ լավ է, որ երկուսով են, շատվոր չեն, գրում է աղջիկս, ոչ հորթիկ ունեն, ոչ որդի ունեն, դրա համար էլ պետք է փառք տանք ասածուն:

Եվ ես էլ հրես հարց եմ տալիս, գրողի ծոցը չգնա՞ նրա քեռու հորքուրը: Այսինքն՝ ես նկատի ունեմ Էֆրաիմին... իրեն արևով փեսացու գտավ աղջկա համար, ինձ լավ քաշեց ճահիճը, խոսք չկա, ասացեք խնդրեմ, ինչո՞վ վատ կլիներ, որ աղջիկս պսակվեր մի արհեստավորի հետ, ինչպես Ցեյտլն էր կամ վարժապետի, ինչպես Գոդլն է:

Ճիշտ է, նրանց բախտն էլ չբերեց... մեկը ջահել այրիացավ, մյուսն էլ մարդու հետ գնաց աքսոր, սատանան գիտե թե ուր, յոթը սարի հետև... Բայց թե ասածու կամքն է: Մարդ արարածը ի՞նչ կարող է գուշակել: Գիտե՞ք, թե ձեզ ինչ կասեմ: Իմ Գոդլան իմաստուն էր, աստված հոգին լուսավորի, ժամանակին գլխի ընկավ, հրաժեշտ տվեց աշխարհին, գնաց նախահայրերի մոտ: Որովհետև, դե ինքներդ ասացեք, նա իրավացի չէ՞ր, եթե այսքան դարդ ու ցավ պիտի տեսնես երեխեքիդ երեսից, հազար անգամ լավ չէ՞ հանգիստ պառկես գերեզմանում: Բայց ինչպես որ այնտեղ ասված է՝ «Մարդ ոչ կեցցե կամօքն իւրով», քո բախտը քո ձեռքին չէ, ապա փորձիր ձեռքդ առնել, կստանա՞ս, ոնց չէ:

Բայց մենք շեղվեցինք ուղիղ ճամփից, եկեք վերադառնանք բուն նյութին: Եկեք մի առժամանակ թողնենք արքայազնին, ինչպես գրվում է ձեր գրքերում, և գանք արքայադստերը: Որտե՞ղ կանգ առանք մենք: «Ելք» բաժնում: Բայց նախքան սկսելը, ես ձեզ կխնդրեի նեղություն քաշելիք, մեկ րոպեով կանգ առնենք մի ուրիշ գլխում: Ճիշտ է, դա կարդում են ոչ թե «Ելք»-ից հետո, այլ առաջ, բայց ինձ, այդ բաժինները կարդացել են հակառակ կարգով: Հետաքրքիր պատմություն է, կարող եք լսել, ո՞վ է իմանում, մեկ էլ տեսար ձեզ պետք եկավ նույնիսկ:

Դա պատահել է վաղուց, պատերազմից անմիջապես հետո, կոսնետուցիայի ամենաթեժ օրերին, երբ հրեաների գլխին ինչպիսի «բարերարություններ» ասես որ չէին թափվում: Սկզբում խոշոր քաղաքներում, հետո՝ գավառներում... Բայց թե բանը ինձ չհասավ և հասնել էլ չէր կարող ոչ մի դեպքում: Ինչո՞ւ: Շատ պարզ: Այդքան տարի ապրում ես գյուղացիների շրջանում, բոլոր հարևաններիդ հետ մտերմություն անում: «Միբելի՛ բարեկամ, ողորմա՛ծ հայր», «պարո՛ն Տեվլ», ամենքի մոտ էլ մեծ պատիվ ունեի, գյուղում առաջին մարդն էի: Խորհուրդ է պետք՝ «Տեվլը կասի»։ դողերոցքի դարման՝ «Տեվլը կտա», մի քանի ռուբլի պարտք, նորից Տեվլը... Դեհ, կարո՞ղ էի վախենալ ջարդից: Հիմարությո՞ւն: Իսկի մտքովս էլ չի անցել: Հենց իրենք գյուղացիներն էլ քանի-

⁴¹ Ըստ աստվածաշնչի առասպելի, Իսրայելի ժողովուրդը, հրեաների նախորդները հին Եգիպտոսում ենթարկվել են կեղեքման և հարկադրաբար կառուցել քաղաքներ ու բերդեր:

քանի անգամ ասել են, որ ես վախենալու բնավ տեղիք չունեմ, իրենք թույլ չեն տա: Եվ իսկապես... Ահա լսեցեք:

Մի անգամ Բոյբերիկից տուն վերադարձա: Այն ժամանակ դեռ ուժերս տեղն էին, կաթնամթերքի առևտուր էի անում, պանիր, յուղ և նման բաներ: Ձին լծից արձակեցի, խոտ ու վարսակ տվեցի, չէի հասցրել նույնիսկ ձեռքերս լվալ, տեսնեմ բակս լիքն է գյուղացիներով, մի ամբողջ խումբ, ամենապատվավոր տերերը, գյուղի տանուտեր Իվան Պոպերիլոից սկսած մինչև հոտաղ Տրոխիմը: Եվ բոլորն էլ մի տեսակ են, բոլորը տոնական տեսքով... Սկզբում սիրտս դողաց, սա ի՞նչ տոն է՝ ոչ դես, ոչ դեն: Արդյոք չե՞ն եկել... Բայց իսկույն մտածեցի. «Ա՛յ Տեվյե, ախր ինքդ քեզանից ամաչիր. այսքան տարի ապրել ես գյուղում, եղած-չեղած միակ հրեան ես և միշտ էլ ամենքի հետ հաշտ ու բարիչ ես եղել, ոչ ոք մատով քեզ չի դիպել»:

Ընդառաջ գնացի, բարևեցի ոնց որ կարգն է.

— Բարիաջողում, — ասում եմ, — թանկագին տերեր: Ինչո՞ւ եք շնորհ բերել: Ի՞նչ լավ բան կասեք: Ի՞նչ նոր բան կպատմեք:

Տանուտերը՝ Իվան Պոպերիլոն այսինքն, պարզորոշ, առանց որևէ նախաբանի, ուղղակի ասում է.

— Եկել ենք քեզ մոտ, Տեվլ... ուզում ենք ջարդել:

Ձեզ դուր գալի՞ս է նման խոսակցությունը: Մեզ մոտ դա նշանակում է ակնարկ անել, երկդիմի խոսել... Կարո՞ղ եք պատկերացնել, թե հոգուս մեջ ինչ էր կատարվում: Բայց ցույց տալ, ո՞նց չէ. ընդհակառակը... Տեվյեն խոխա չէ...

— Շնորհավորո՞ւմ եմ, — պատասխանում եմ նրանց, ասես ոչինչ էլ չի եղել: — Բայց այդ ի՞նչ է, գավակներս, ինչու եք ուշ գլխի ընկել: Ուրիշ տեղերում այդ մասին արդեն մոռացել են:

— Այդ ժամանակ Իվան Պոպերիլոն, տանուտերը այսինքն ամենալուրջ տեսքով ասում է.

— Հասկանո՞ւմ ես, Տեվլ, ամբողջ ժամանակ մենք մտածում էինք հա՛ մտածում, թե քեզ ջարդե՞նք թե չջարդենք: Մյուս վայրերում ամեն տեղ ձերոնց ջարդում են, մենք ո՞նց աչքաթող անենք քեզ: Հրես ժողովն էլ որոշել է, որ քեզ պետք է ջարդել... Մենակ թե, տեսնում ես էլի, ինքներս էլ հալա չենք իմանում քեզ ինչ անենք, Տեվլ. թե մենակ ապակիներդ ջարդենք, բարձերդ ու ներքնակներդ պատառոտենք, փետուրը թափենք, թե՞ խրճիթդ վառենք, ամբարդ ու ային-օյինը...

Այդտեղ արդեն սիրտս իսպառ սևացավ: Նայում եմ իմ հյուրերին, կանգնել են իրենց երկար գավազաններին հենված, և ինչ-որ փսփսում են: Ամեն ինչից երևում է, որ հանաք բան չի: «Այդ դեպքում, մտածում եմ ինքս ինձ, դուրս է գալիս այնպես, ինչպես սաղմոսն է ասում. «Էհաս ջուր ցկոկորդն իմ», օձիքդ լա՛վ են բռնել, Տեվյե, լա՛վ են գործի մեջ քաշել: Ախր եթե, աստված ոչ անի... Դե ինչ ասես՝ չի պատահում: Ով է հասկանում դրանց.. Չէ՛, ախպերս, մահվան հետ հանաք չեն անի: Պետք է դրանց մի բան ասել»:

Դե, էլ ինչ հարկ կա խոսքս երկարացնելու, թանկագին բարեկամս, վիճակված էր, երևում է, որպեսզի հրաշք տեղի ունենար... Աստված ինձ ներշնչեց, որ ինձ չկորցնեմ, չհուսահատվեմ: Միտա առա և դիմեցի գյուղացիներին.

— Ի՛նձ լսեցեք, իմ թանկագին տերեր: Թե որ ժողովն էդպես է որոշել, ուրեմն էլ մտածելու կարիք չկա: Դուք ամենից լավ գիտեք, թե Տեվյեն արժանի՞ է, որ նրա ամբողջ տնտեսությունը կործանեք... Դուք արդյոք գիտե՞ք, որ աշխարհում կա ինչ-որ մեկը, որ ձեր ժողովից բարձր է կանգնած: Դուք

գիտենք, որ աշխարհում կա աստված: Ես չեմ ասում՝ իմ աստվածը կամ ձեր աստվածը, ես ասում եմ էն աստծու մասին, մեր ընդհանուր աստծու մասին, որ վերևում նստած, տեսնում է էն բոլոր անկարգությունները, որ կատարվում են էստեղ՝ ցածում... Շատ հնարավոր է, որ նա ինքն է էդպես որոշել, որ ես առանց որևէ հանցանք կատարելու, առանց որևէ մեղք գործելու, ձեր ձեռքով, իմ ամենալավ բարեկամների ձեռքով պատժվեմ, և միգուցե, ասում եմ, ընդհակառակը, հնարավոր է, որ նա ոչ մի դեպքում չի ցանկանում, որ Տեվյեին չարիք պատճառեն... Ո՞վ կարող է իմանալ, ինչ է կամենում աստված: Ապա, գուցե ձեր մեջ գտնվի որևէ մեկը, որը կփորձի հասկանալ:

Մի խոսքով, պետք է ենթադրել, որ դրանք տեսան, որ իրենք չեն կարող Տեվյեին վեճի մեջ հաղթել: Էդ ժամանակ տանուտերը՝ Իվան Պոպերիլոն այսինքն, ասում է.

— Տեսնո՞ւմ ես, էլի, թե բանն ինչումն է: Մենք, ճիշտն ասած, Տեվլ, քո դեմ ոչինչ չունենք: Դու, չնայած ջիւղ ես, բայց վատ մարդ չես: Սակայն դրանք իրարից անկախ բաներ են, քեզ պետք է ջարդել: Ժողովը էդպես է որոշել, և եթե որոշել է, նշանակում է՝ վերջ: Մենք գոնե քո ապակիները պիտի ջարդենք, դա արդեն անպայմա՛ն պետք է անենք, թե չէ,— ասում է,— վատ ժամանակներ են, եթե մեկնումեկը անց կենա տանդ մոտով, թող ուրեմն, տեսնի, որ քեզ ջարդել են, թե չէ կարող են մեզ տուգանել...

Հենց այդպես էլ ասաց, ինչպես ես եմ ձեզ ասում, և թող աստված միշտ նույն ձևով օգնի իմ բոլոր գործերում:

Դե, ես էլ ահա, հարցնում եմ ձեզ, պանե Շուլում-Ալեյխեմ, դուք ախր աշխարհի տեսած մարդ եք, ճիշտ չէ՞ Տեվյեն, երբ ասում է աստված մեծ է...

Եվ այսպես, մենք վերջացրինք մեր մի պատմությունը: Այժմ վերադառնանք աստվածաշնչի «Ելքը» բաժնին: Այդ բաժինը ինձ հետ անցել են բոլորովին վերջերս և այն էլ ոնց որ պետքն է: Այս անգամ չօգնեց, հասկանո՞ւմ եք, և ոչ մի ճառ, և ոչ մի քարոզ: Իսկ բանն այսպես էր: Հարկավոր է դա պատմել իր բոլոր մանրամասնություններով, ինչպես որ դուք սիրում եք:

Եւ «եղև յաւուրս» Բեյլիսի⁴², դա հենց այն օրերին էր, երբ Մենդել Բեյլիսը, մեր անմեղ նահատակը, ուրիշի մեղքով տանջվում էր, տառապում, իսկ ամբողջ աշխարհը տակնուվրա էր լինում: Նստած եմ մի անգամ տան մոտի թմբի վրա, ծանրաբեռնված խոհերով: Բակում ամառ է: Արևն այրում է, իսկ գլուխս պայթում է մտքերից: Ո՞նց թե: Հնարավո՞ր բան է: Հիմիկվա ժամանակներո՞ւմ, երբ թվում է, այնպես իմաստուն է դարձել աշխարհը: Երբ կան այնպիսի մե՛ծ մարդիկ: Եվ ո՞ր է այդ աստվածը: Հրեից վաղեմի աստվածը: Ինչո՞ւ է լռում: Ինչպես է թույլ տալիս այդպիսի բան: Դա ի՞նչ է նշանակում, և էլի նորից — ո՞նց կարելի է այդպես: Եվ աստծու մասին խորհելով, ակամա խորանում ես խրթին հարցերում, սկսում ես դատել, թե ի՞նչ է կյանքը և ի՞նչ է հանդերձյալ կյանքը: Եվ ինչու չի գալիս մեսիան:

«Ա՛խ, մտածում եմ, այ թե ինչ իմաստուն բան արած կլիներ, եթե խելքին փչեր հենց հիմա իր սպիտակ նժույզը նստած սլանալ այստեղ: Այ թե ինչքա՛ն լավ կլիներ: Թվում էր երբեք, նա այդպես անհրաժեշտ չէր եղել մեզ, ինչպես հիմա: Չգիտեմ ոնց են իրենց զգում հարուստները, գործրինակ, բրդոսկիները Եգուպեցում կամ ռոտշիլդները Փարիզում: Միգուցե մեսիան նրանց իսկի պետքն էլ չէ, և նրա մասին իսկի չեն էլ ուզում մտածել: Բայց մենք՝ Կասրիլովկայի, Ջլոդենկայի և նույնիսկ Օդեսայի և Եգուպեցի չքավորներս, օ՛հ, այնպես ենք սպասում նրան, որ էլ համբերություն չի

⁴² Հրեա Մենդել Բեյլիսը 1911 թվականին կեղծիքով դատապարտված էր մի քրիստոնյա տղայի, Անդրեյ Յուշչինսկու սպանության գործով, որին սպանել էր որպես թե կրոնական ծիսակատարության պատճառով: Բեյլիսի գործը բուռն վրդովմունք առաջացրեց ամբողջ Ռուսաստանում, ի վերջո Բեյլիսն արդարացվեց:

մնացել, աչքներս ջուր կտրեց սպասելուց: Մեր ամբողջ հույսն ու ապավենը հիմա այն է, որ աստծու հրաշքով մենիան գա»:

Եվ ահա, միտք անելով այդպես, հանկարծ տեսնում եմ ինչ-որ մեկը սպիտակ ձի հեծած, ուղիղ դեպի իմ տան դարպասն է գալիս: Տպրո՜ւ: Կանգ առավ, իջավ, ձին կապեց ու գալիս է դեպի ինձ:

— Բարիաջողում, Տեվլե:

— Բարիաջողում, ողջ լերուք, ձերդ գերազանցություն,— պատասխանում եմ ես սրտաբաց, բայց ինքս ինձ մտածում եմ. «Շան անունը տուր, փետը վերցրու»:

Մեսիային ես սպասում, ուրյադնիկն է գալիս:

Վեր եմ կենում, գնում ընդառաջ.

— Շնո՛րհ արեք, թանկագին հյուրս: Ի՞նչ կա-չկա աշխարհում, ի՞նչ բարի լուր կասեք, պարոն ուրյադնիկ:

Իսկ սիրտս քիչ է մնում դուրս թռչի, ուզում եմ իմանալ բանն ինչումն է: Բայց նա, ուրյադնիկն այսինքն, չի շտապում: Հանգիստ ծխախոտ է ծխում, ծուխը փչում է, թքում ու հարցնում.

— Քեզ որքա՞ն ժամանակ է պետք, Տեվլ, որպեսզի ծախեիր խրճիթդ ու եղած-չեղած ային-օյինդ:

Տարակուսած նայում եմ նրան.

— Իսկ ինչու ծախեմ,— ասում եմ,— իմ խրճիթը: Ումն է, գործրինակ, խանգարում:

— Խանգարելը,— ասում է նա,— ոչ ոքի չի խանգարում: Մենակ թե, ես եկել եմ որ քեզ գյուղից աքսորեմ:

— Հենց այդքա՞նը,— ասում եմ ես,— իսկ արածս ո՞ր բարիքների համար: Ինչո՞վ եմ ձեզ մոտ արժանացել այդպիսի պատվի:

— Ես հո չեմ աքսորում,— պատասխանում է նա,— նահանգն է աքսորում:— Նահա՞նգը. ո՞ր հանցանքիս համար:

— Դե ոչ միայն քեզ,— պատասխանում է,— և ոչ միայն այստեղից, այլ շրջակա բոլոր գյուղերից՝ Զլոդենկայից, Գրաբիլովկայից, Կոստոլոմովկայից և նույնիսկ Անատովկայից, որը առաջ ավան էր հաշվվում... Հիմա նա էլ է գյուղ դառնում, և քշում են այնտեղից ձերոնց բոլորին, բոլորին...

— Մսավաճառ Լեյզեր-Վոլֆի՞ն էլ: Եվ Նաֆտոլե Գերցի՞ն: Եվ անասուն մորթողի՞ն էլ: Այնտեղի ռաբբիի՞ն էլ:

— Բոլորի՛ն, բոլորի՛ն,— պատասխանում է, և նույնիսկ ձեռքը թափահարում, ասես դանակով կտրում է...

Ասես սիրտս մի քիչ թեթևացավ, երբ վիշտը մենակ քոնը չէ, շատերինն է, այսպես թե այնպես կես-մխիթարանք է: Բայց բարկությունս բռնում է, սիրտս եփ է գալիս, և ասում եմ նրան՝ ուրյադնիկին այսինքն.

— Ասացե՛ք հապա, ձերդ բարեծննդություն, իսկ դու արդյոք գիտե՞ս, որ ես այստեղ ապրում եմ շատ ավելի վաղուց, քան դու: Արդյոք դու գիտե՞ս, որ այս անկյունում ապրել է իմ հանգուցյալ հայրը, և իմ պապը, և տատը, աստված հոգին լուսավորի:

Ես չծուլացա և մեր ամբողջ ազգուտակը թվեցի, բոլորին մեկ-մեկ, անուններն ասացի, պատմեցի, թե ով որտեղ է ապրել, ով որտեղ մեռել... Նա լսեց ուշադրությամբ, իսկ երբ վերջացրի, ասում է.

— Արն՝ս վկա, դու խելառ ես, Տեվլ, չես մտածում, թե ինչ ես խոսում: Ախր ինձ ի՞նչ օգուտ,— ասում է նա,— քո տատերից ու պապերից: Աստված նրանց հոգին լուսավորի: Դու, Տեվլ, լավ կանես, որ հավաքես ունեցած-չունեցածդ ու հայդա՝ «ֆուր-ֆուր՝ Բերդիչև»:

Դա որ ինձ իսպառ կատաղեցրեց. հերիք չի, որ մի այդպիսի բարի լուր ես բերել, հալա ծաղրում էլ ես հա՞. «ֆուր- ֆուր՝ Բերդիչև»: Արի, ասում եմ Տեվլե, գոնե սրտումդ եղածը թափիր դրա գլխին:

— Ձերդ,— ասում եմ,— գերազանցություն: Արդեն այսքան ժամանակ է, ինչ դու մեզ մոտ նաչալնիկ ես նշանակված, դու երբևէ լսած կա՞ս, որ հարևաններիցս մեկն ու մեկը ինձ վրա գանգատ տա, որ ես նրանից գողություն եմ արել, որ նրան թալանել եմ կամ խաբել, կամ պարզապես վերցրել որևէ բան: Հապա շինականներին հարցրու, թե ես նրանց հետ մշտական հաշտ ու բարի չե՞մ ապրել: Իսկ քանի-քանի անգամ, պարոն նաչալնիկ, պատահել է, եկել եմ ձեզ մոտ ուրիշների համար բարեխոսել, որ դու նրանց չնեղացնես...

Դա երևում է, նրան դուր չեկավ: Վեր կացավ, ծխախոտը մատներով տրորեց հանգրեց, շաքտեց ու ասաց.

— Քեզ հետ շատախոսելու և դատարկ-դատարկ լեզվիս տալու ժամանակ չունեմ: Թո՛ւղթ է եկել, իսկ մնացածը ինձ չի վերաբերում: Ապա արի ստորագրիր: Իսկ մեկնելու համար քեզ տալիս են երեք օր, որպեսզի կարողանաս ամեն ինչ ծախծխել ու ճանապարհ ընկնելու համար պատրաստվել:

Տեսնելով, որ արդեն բանս բուրդ է, ասում եմ.

— Երեք օ՞ր եք տալիս ինձ: Թող աստված դրա դիմաց ձեզ երեք տարի տա, ապրեք լիության ու շենության մեջ՝ պատվով հարգանքով: Թող աստված ձեզ հարյուրապատիկը հատուցի այն բարի լուրի համար, որ բերեցիք ինձ...

Մի խոսքով, զորս դու պատվիրեցեր, հերսս թափեցի դրա գլխին, ինչպես որ Տեվլեն կարող է: Եվ իսկապես, ինչու պիտի քաշվեի: «Ինչ ունեմ կորցնելու», մտածեցի ես: Դե, իհարկե, եթե մի քանի տարով թեկուզ ջախել լինեի, կենդանի լինեի իմ Գոլդան, լինեի նախկին Տեվլեն, ինչ որ էի, ես այդպես շուտ անձնատուր չէի լինի: Կայաքարեի մինչև արյանս վերջին կաթիլը: Իսկ հիմա, էլ ի՞նչ: «Ի՞նչ եմք մեք և ի՞նչ է կեանք մեր», ո՞վ եմ ես և ինչ եմ ես: Դիակ, ջարդված կճուճ, անպետք խեցի: «Ա՛խ, տեր իմ, մտածում եմ, երկնային թագավոր: Ինչ ես այդպես կպել Տեվլեին: Ինչո՞ւ մի անգամ էլ գոնե կատակի համար խաղ չխաղաս, զորօրինակ, Բրոդսկու կամ Ռոտշիլդի գլխին: Ինչո՞ւ «Ելք» գլուխը նրանց համար ոչ ոք չի կարդում: Դա նրանց շատ տեղին կլինեի: Նախ, որ ինչպես պետքն է կզգային, թե ինչ կնշանակի հրեա լինել, և երկրորդ՝ թող նրանք էլ տեսնեն, որ մենք ունենք ամենակարող աստված...»:

Բայց թե այս բոլորը դատարկ խոսակցություններ են: Աստծու հետ վեճի բռնվելը իզուր բան է, և մեզնից խորհուրդի ոչ ոք չի հարցնում: Եթե նա ասում է. «Իմ են երկինք և իմ է երկիր», նշանակում է նա է տերը և պետք է նրան լսել: Ինչպես աստված կասի, այնպես էլ պետք է լինի... Ներս մտա տուն և ասացի այրիացած աղջկաս.

— Յեյտլ, մենք տեղափոխվում ենք քաղաք: Ինչքան որ գյուղում ապրեցինք, հերիք է: Տեղը փոխել, նշանակում է բախտը փոխել. Գործի անցիր, ասում եմ, սկսիր վաղօրոք ճամփի պատրաստություն տեսնել, հավաքիր անկողինը, ինքնատեղը և մյուս ային-օյինը, իսկ ես գնամ խրճիթը ծախեմ: Թուղթ է եկել, որ մենք այստեղից մաքրվենք, որպեսզի երեք օրից հետո իզներս ու թոզներս չերևա:

Լսելով այդ բանը, Յեյտլը ողբն ու կոծը քոթեց, իսկ երեխեքն էլ նրան նայելով, հանկարծ իրենք էլ ձենները գլուխները գցեցին, և տունը լցվեց լացով, ախ ու վախով, կարծես մարդ էր մեռել: Ես, իհարկե, բարկացա և ինչ որ հավաքվել էր սրտումս սկսեցի թափել խեղճ աղջկաս գլխին: Ի՞նչ եք ուզում ինձանից, ասում եմ: Ի՞նչ եք հեծկլտում իզուր տեղը ոնց որ պառաված կանտորը ապաշխարանքի օրերին: Աստված մենակ ի՞նչ է ստեղծել: Մենակ ե՞ս եմ, ինչ է, քի՞չ հրեաներ կան հիմա, որոնց գյուղից քշում են: Գնա՛ լսիր, թե ինչ է ասում ուրյադնիկը: Նույնիսկ քո Անատովկան էլ, որ մինչև հիմա ավան էր հաշվվում, նա էլ է աստծու կամքով գյուղ համարվում՝ այնտեղի հրեաների խաթեր համար, որպեսզի հնարավոր լինի նրանց բոլորին վռնել. . . Իսկ եթե այդպես է, ապա ես ինչո՞վ եմ նրանցից վատ:

Իրար ետևից ասում եմ այս ամենը, բայց թե ախր ոտքից գլուխ մի կնիկարմատ է, ուրիշ ոչինչ. . .

— Ախր,— ասում եմ,— ուր պիտի գնանք, ուր պիտի գնանք օթևան փնտրենք:

— Հիմա՛ ի,— ասում եմ ես,— և երբ որ աստված երևաց մեր նախահայր Աբրահամին և նրան ասաց. «Ե՛լ յերկրե քումմե՛», Աբրահամը չհարցրեց, թե՛ ուր: Աստված նրան ասաց. «Երկիրն այն, զոր ցուցանեմ քեզ. . . »: Իսկ դա նշանակում է — աշխարհի չորս կողմը. . . ուր աչքներս կտրի, ուր գնում են բոլորը: Ինչ որ ուրիշներին կատառի, նույնն էլ թող ինձ պատահի: Իսկ դու ինչո՞վ ես լավ քո հարուստ քրոջից՝ Բեյլկայից: Ասացե՛ք խնդրեմ, նրան վայել է, որ իր Պեդոցուրի հոսից ընկած հասնի մինչև Ամերիկա և «կյանք դասավորի», իսկ քեզ վայել չէ՞: Դեռ փառք աստծո, որ մենք մի բան ունենք տեղներիցս շարժվելու: Քիչ ու միչ մնացել է նախկին ունեցվածքից, մի քիչ անասուններից, որոնք ծախեցինք, մի բան էլ խրճիթից կստանանք: Մի քիչ այստեղից, մի քիչ այնտեղից, մեկ էլ տեսար թասը լցվեց: Սրանով էլ գոհ ենք: Եվ թեկուզ ոչինչ էլ չունենանք, մեկ է, համենայն դեպս, մենք ավելի լավ օրի ենք, քան Մենդել Բեյլիսը:

Կարճ ասած, մի կերպ համոզեցի, որ շատ դեմ չընկնի: Բացատրեցի, որ եթե ուրյադնիկը եկել է, թուղթ բերել և կարգադրել հեռանալ, ապա խոգություն անել պետք չէ, հարկավոր է հեռանալ. . . Իսկ ինքս գնացի գյուղամեջ, խրճիթի գործը տեսնելու: Գնում եմ Իվան Պոպերիլոյի մոտ, տանուտերի այսինքն, նա լավ կարողություն ունի և վաղուց է աչք դրել խրճիթիս: Ես նրան ոչինչ չպատմեցի, թե ոնց, ինչու, ինչ պատճառով, այլ ուղղակի ասացի.

— Թող հայտնի լինի քեզ, Իվան, սրտիս հատոր, որ ես թողնում եմ ձեզ. . .

— Ի՞նչ, ի՞նչ,— հարցնում է նա:

— Քաղաք եմ տեղափոխվում,— ասում եմ:— Ուզում եմ մերոնց մեջ ապրեմ: Արդեն տարիքս առած մարդ եմ, մեկ էլ տեսար, աստված չանի, ստիպված եղանք մեռնել. . .

— Ի՛նչ է,— պատասխանում է նա,— այստեղ մեռնել չե՞ս կարող: Քեզ ո՞վ է արգելում:

— Շնորհակալ եմ,— ասում եմ,— քեզ համար այստեղ մեռնելը ավելի հարմար է: Իսկ ես ավելի լավ է կգնամ մերոնց մոտ. . . Գնի՛ր, Իվանե, իմ խրճիթը բանջարանոցիս հետ: Ուրիշի չեմ ուզում ծախել, իսկ քեզ կծախեմ:

— Ինչքա՞ն ես ուզում խրճիթի համար:

— Ինչքա՞ն կտաս:

Մի խոսքով սկսեցինք դնել ու վերցնել՝ «ինչքան ես ուզում», «ինչքան կտաս», սկսեցինք սակարկել, ձեռք խփել իրար, տասով ավելի, տասով պակաս, մինչև որ գնի շուրջը համաձայնության եկանք: Ես նրանից մի կարգին գրավական վերցրի, որ հետո չհրաժարվեր և մի օրվա ընթացքում, դե պարզ է, էժան էժան ծախսեցի ամբողջ կարողությունս, փողը ոսկու վերածեցի և գնացի սայլ վարձելու, որ մնացած ային-օյինն էլ տանեմ:

Սակայն լսեցեք, թե Տեվլեի հետ ինչեր կարող են պատահել: Դուք միայն ուշադիր լսեցեք, ես ձեզ երկար չեմ զբաղեցնի, երկու խոսքով կվերջացնեմ:

Մեկնելուց առաջ տուն եմ գալիս, իսկ տանն այլևս ոչինչ չկա — ավերածություն: Դատարկ պատերը թվում է, արցունք թափելով լաց են լինում: Հատակի վրա կապոցներ, կապոցներ, կապոցներ: Վառարանի առջևի մասում որբի նման տխուր-տրտում նստել է խեղճ կատուն, սիրտս շուտ եկավ, աչքերս թրջվեցին. . . թե որ չամաչեի աղջկանիցս, կնստեի մի կուշտ լաց կլինեի, ինչ կուզեք ասեք, համենայն դեպս, հայրական տուն է. . . Այդտեղ եմ մեծացել, ամբողջ կյանքումս այդտեղ տառապել և հանկարծ, համեցեք, ելե՛ք: Ինչ ուզում եք ասեք, շա՛տ ցավալի է: Բայց Տեվլեն կնիկարմատ չե՛, ինձ զսպում եմ և զվարթ ձայնով աղջկաս կանչում:

— Արի այստեղ, Ցեյտլ, ո՞ւր ես կորել:

Դուրս է գալիս նա, Ցեյտլը այսինքն, հարևան սենյակից, կարմրած աչքերով, ուռած քթով: «Էհե՛, մտածում եմ, աղջիկս ողբացել է, ինչպես կնանիքը դատաստանի օրը»: Կանայք որ կան, ասեմ ձեզ, տեղով փորձանք են. հենց մի բան է լինում թե չէ, դրանց ողբը պատրաստ է: Լացները քթի ծերին է. . .

— Հիմա՛ ր,— ասում եմ ես,— ինչ ես էլի լաց լինում: Դե ինքդ դատիր, թե ինչքա՛ն տարբերություն կա մեր և Մենդել Բեյլիսի միջև. . .

Բայց նա լսել անգամ չի ուզում:

— Հայրի՛կ,— ասում է,— դու չգիտես, թե ինչու եմ լալիս. . .

— Շատ էլ լավ գիտեմ,— ասում եմ,— ինչո՞ւ պիտի չգիտենամ: Լաց ես լինում, որովհետև ափսոսում ես տնից բաժանվես. . . Չե՞ որ դու այստեղ ես ծնվել, այստեղ հասակ առել, դե, իհարկե, սրտիդ ցավ կտա: Հավանաբար, եթե Տեվլեն չլինեի, ուրիշ մարդ լինեի, կհամբուրեի այս մերկպատերը, դատարկ դարակները. . . Ես ինքս էլ կընկնեի հողին. . . Ինչպես քո, ախր իմ ափսոսն էլ է գալիս, հիմար աղջիկ, ամեն մի փուչ բանի, համար: Կատուն որ կատու է նա էլ է ահա որբի նման վառարանի առջևում նստել: Անբան արարած է, անասուն, բայց մեղք է, անտեր պիտի մնա. . .

— Ենթադրենք, թե մեկն էլ կա, որին պիտի խղճալ,— ասում է Ցեյտլը:

— Զորօրինակ:

— Զորօրինակ: Ահա մենք գնում ենք և թողնում ենք այստեղ մի մարդու, մեն ու մենակ, չոր գլուխ, ինչպես քարը. . .

Չեմ հասկանում, թե ում համար է ասում և հարցնում եմ:

— Ինչ ես գլխիցդ դուրս տալիս: Ո՞ւմ մասին ես ասում, Ի՞նչ մարդ: Ի՞նչ քար:

— Հայրի՛կ,— պատասխանում է նա,— գլխիցս դուրս չեմ տալիս, ես հասկանում եմ, թե ինչ եմ ասում: Ես մեր Խավայի մասին եմ ասում. . .

Որ չասեց, երդվում եմ ձեզ, կարծես եռման ջրով ինձ խաշեցին կամ փայտով գլխիս շրխկացրին:

Հարձակվեցի վրան և սկսեցի նախատել.

— Սա ի՛նչ բան է, ոչ այս ոչ այն՝ Խավայից սկսեցիր: Քանի անգամ եմ ասել: Խավայի անունը չլսվի:

Կարծում եք վախեցա՞մ: Իսկի: Տեվյեի աղջիկները ուրի՛շ բան են:

— Հայրի՛կ,— ասում է,— միայն թե մի՛ բարկանա: Ավելի լավ է միտքդ բերես, միթե դու չես քանի-քանի անգամ ասել, թե սուրբ գրքում ասված է, որ մարդը մարդուն պետք է խղճա, ինչպես հայրը՝ զավակին. . .

— Լսեցի՞ք: Ես, իհարկե, տաքացա և ըստ արժանվույն մեկիկ-մեկիկ առաջը բերեցի:

— Խղճալու մասի՞ն ես ինձ ասում: Իսկ որտե՞ղ էր նրա խիղճը, երբ ես ինչպես շուն թավալ էի տալիս տեր-հոր ոտների տակ, աղաչում էի, պաղատում, իսկ իմ աղջիկը միգուցե հենց կողքի սենյակումն էր և միգուցե լսում էր իմ ամեն մի խոսքը: Կամ որտե՞ղ էր նրա խիղճը, երբ հանգուցյալ մայրը, աստված հոգին լուսավորի, պառկած էր, ա՛յ, այստեղ, հատակի վրա, սև շորը վրան քաշած: Որտե՞ղ էր նաայն ժամանակ: Հապա անքուն գիշերնե՛րը, ասում եմ, որ աչքս բաց լուսացրել եմ: Իսկ ցավը, որը մինչև այսօր ճմլում է սիրտս, երբ հիշում եմ, թե ի՛նչ արեց նա մեզ, թե ո՛ւմ հետ փոխեց մեզ: Որտե՞ղ էր, ասում եմ, նրա խղճմտանքը:

Եվ այնպես է սիրտս մղկտում, որ էլ չեմ կարողանում մի խոսք անգամ ասել. . . Բայց դուք կարծում եք, Տեվյեի աղջիկը իրեն կորցրե՞ց:

— Չե՞ որ դու ինքդ ես ասել,— պատասխանում է նա,— ինքդ ես ասել, հայրի՛կ, թե այն մարդը, որը զոջում է իր արածը, նրան նույնիսկ աստվածն էլ է ներում. . .

— Զոջո՞ւմ է,— ասում եմ,— շա՛տ ուշ է: Ուստի որ մի անգամ կտրվել ընկել է ծառից, պե՛տք է չորանա: Տերևը, որ ընկել է, պե՛տք է փտի: Եվ այլևս չխոսես ինձ հետ այդ մասին: Հերի՛ք է:

Տեսնելով, որ խոսելով ոչինչ չի դուրս գա, որ Տեվյեին համոզելով չես հաղթի, նա փաթաթվեց ինձ, սկսեց ձեռքերս համբուրել:

— Հայրի՛կ: Թող հենց այստեղ մեռնեմ, եթե դու այս անգամ էլ նրան վանես, ինչպես այն ժամանակ անտառում, երբ քեզ ձեռք մեկնեց, իսկ դու ձին շրջեցիր ու փախար:

— Ի՛նչ ես ասում, ի՛նչ ես կպել ինձ,— ասում եմ,— սա ի՞նչ փորձանք է դարձել գլխիս:

Բայց նա բաց չի թողնում ձեռքս, բռնել է ու իրենն է պնդում:

— Հայրի՛կ: Ես հենց այստեղ կմեռնեմ, եթե դու չներես նրան: Չե՞ որ նա էլ է քո աղջիկը, ինչպես ես:

— Դու ի՞նչ ես ուզում ինձանից,— ասում եմ:— Նա այլևս իմ աղջիկը չէ: Նա վաղուց է մեռել. . .

— Ո՛չ,— ասում է Ցեյտլը,— նա չի մեռել, նա դարձյալ քո աղջիկն է, ինչպես որ եղել է, որովհետև հենց առաջին րոպեից, երբ իմացավ, որ մեզ աքսորում են, նա ինքն իրեն ասել է, որ աքսորում են

մեզ բոլորիս, այսինքն իրեն էլ: Որտեղ մենք, այդպես էլ ասել ինձ Խավան, այնտեղ էլ ինքը: Մեր արտաքսվելը, իրեն արտաքսվելն է. . . Ահա, նույնիսկ նրա կապոցն էլ է այստեղ. . .

Այս բոլորը ասում է հապճեպ, մի շնչով, թույլ չտալով որևէ խոսք ասել և ցույց է տալիս ինչ-որ կապոց, փաթաթված կարմիր թաշկինակով. . . Եվ ապա բաց է անում մյուս սենյակը տանող դուռը և կանչում. «Խավա՛ն»: Ազնիվ խոսք: Եվ ինչ ասեմ քեզ, թանկագին բարեկամս: Ճիշտ այնպես, ինչպես ձեր գրքերումն է նկարագրվում՝ դռների մեջ երևում է Խավան, ողջ և առողջ, սիրուն, ինչպես որ էր, իսկի չի փոխվել, միայն դեմքը մի քիչ հուզված է և աչքերը մի քիչ պղտորված: Գլուխը պահել է ուղիղ, հպարտ: Կանգ է առնում մի պահ, նայում ինձ, ես էլ իրեն: Հետո զույգ ձեռքերը մեկնում է ինձ և միայն մի բառ է կարողանում ասել, մի հատիկ խոսք՝ հազիվ լսելի.

— Հայրի՛կ. . .

Ներեցեք ինձ: Հենց որ հիշում եմ, անմիջապես արցունքները բռնում են աչքերս: Բայց թե մի կարծեք, որ Տեվյեն, աստված չանի, լաց եղավ, արցունքներին ազատություն տվեց, չէ՛: Դե, այսինքն, ինչ խոսք, այն ամենը, ինչ ես այն ժամանակ ապրել եմ ու զգացել, դա իր հերթին. . . Չէ որ դուք էլ հայր եք և ինքներդ էլ ինձնից ոչ պակաս գիտեք՝ թե ինչ բան է երեխեքին խղճալը. . . Երեխադ ինչպիսի հանցանք էլ թեկուզ կատարած լինի, երբ ուղղակի մտնում է հոգուդ մեջ ու ասում «հայրի՛կ», դե, ասացեք, հնարավո՞ր է նրան վանել: Հապա փորձեցե՛ք. . . Բայց մյուս կողմից գլուխս պտտվում է և միտքս են գալիս այն բոլոր չարիքները, որ նա պատճառել է ինձ. . . Ֆեդկա Գալազանը. . . Տերտերը. . . Իմ արցունքները. . . Գուդայի մահը. . . Չէ՛, ինքներդ ասացեք, միթե կարելի է այդ ամենը մոռանալ: Ո՞նց մոռանալ: Բայց ինչ արած, ինչքան չլինի հարազատ զավակդ է. . . «Որպես հայրն գթա զաւակաց իւրոց»: Մի՞թե մարդը իրավունք ունի լինելու այնքան դաժան, երբ ինքը, աստված, ասում է իր մասին — ողորմա՛ծ աստված: Մանավանդ որ զավակդ զոջում է արածը և ուզում է վերադառնալ դեպի հայրական գիրկը, դեպի յուր աստվածը: Դուք ի՞նչ կասեք, պանե Շուլում-Ալեյխեմ: Չէ՞ որ դուք մի մարդ եք, որը գրքեր է հորինում և աշխարհին խորհուրդներ տալիս. ինքներդ ասացեք, ինչպե՞ս վարվել Տեվյեն: Գրկեր նրան, որպես հարազատ զավակի, համբուրեր և ասեր, ինչպես աղոթքումն է ասված. «Ներեցից ըստ բանի քում» — արի ինձ մոտ, դու իմ զավակն ես: Կամ շրջեր լծափայտը, ինչպես արեցի մի ժամանակ և ասել. «Գնա՛ այնտեղ, որտեղից եկել ես»: Չէ՛, լուրջ եմ ասում, ենթադրենք, թե դուք իմ տեղն եք. . . Դուք ինձ անկեղծորեն ասացեք, որպես ձեր բարեկամին, դուք ինչպես կվարվեիք: Թե հիմա չեք կարող ասել, ձեզ ժամանակ եմ տալիս, մտածեցեք. . . Իսկ այժմ պետք է գնալ, թոռներս սպասում են պապիկին, աչքները հիմի ջուր կտրեց: Պետք է ձեզ ասեմ, որ թոռները հազար անգամ թանկ են զավակներից: «Զորդիս քո և որդիք որդուց քոյ»: Հանա՞ք բան է: Ո՛ղջ եղեք և ներողամիտ, որ գլուխներդ տարա: Բայց հո բան կունենաք, որի մասին կգրեք: Իսկ եթե աստված կամենա, մենք հավանաբար նորից կհանդիպենք: Մնաք բարո՛ւ: Հաջողությո՛ւն:

1914.

Մենախոսությունների շարքը, որն ընդգրկում է «Կաթնավաճառ Տեվյեն» ստեղծագործությունը, հեղինակի կողմից գրվել և պարբերաբար տպագրվել է քսան տարիների ընթացքում՝ 1894 — 1914 թվականներին:

«Կաթնավաճառ Տեվյեն» Շուլում-Ալեյխեմի մյուս ստեղծագործություններից ամենից ավելի է առատ «սուրբ գրոց» մեջբերումներով, աղոթքներով, ասացվածքներով, բայց այդ ոչ այն պատճառով, որ Տեվյեն մի տիրացու է, որ անվերջ սուրբ գրքեր է կարդում և «գոց անում», այլ որովհետև իր Տեվյեի միջոցով Շուլում-Ալեյխեմը ծաղրի է ենթարկել, պսակազերծ է արել տիրացուներին և տիրացությունը:

Հրեերեն բնագրում բոլոր այդ մեջբերումները Տեվյեն ասում է հին հրեերեն, այսինքն աստվածաշնչի, թալմուդի կամ ադոքսների բնալեզվով և թարգմանում ժամանակակից հրեերեն՝ (իդիշ), ըստ իր հայեցողության, այսինքն փոխում է նրանց միտքը, բայց ոչ այն պատճառով, որ նա չի հասկանում, թե ինչ է նշանակում, այլ որ դրանով ցանկանում է ցույց տալ այն անհամապատասխանությունը, որ կա «սուրբ գրոց» և իրական կյանքի միջև:

Միտք չունի բացատրելու այդ բոլոր մեջբերումները և նրանց կրած փոփոխությունները, քանի որ տեքստից էլ հասկանալի է: